

ՀՀ ԳԱԱ ՀԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
Առաքելյան Կ., Բարսեղյան Ա., Թելյան Լ., Ղամոյան Լ.,
Պապիկյան Ս., Սարգսյան Ն.

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(գիտական հոդվածների ժողովածու)

ՊՐԱԿ Գ

ԵՐԵՎԱՆ
ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2025

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.51

Ա 858

Հրապարակման է երաշխավորել ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
գիտական խորհուրդը:

Պատասխանատու խմբագիր՝ Թ. Ասոյան
բան. գիտ. թեկնածու, դոցենտ
Կազմող՝ Լ. Ղամոյան
բան. գիտ. թեկնածու

Արդի հայերենի հետազոտություններ (գիտական հոդվածների ժողովածու).-

Ա 858 Եր.: ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2025.
Պրակ Գ. - 180 էջ:

Գրքում ներկայացված են ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի արդի
հայերենի բաժնի աշխատակիցների աշխատանքները, որոնք 2015-16թթ. հրապարակվել են
տարբեր հանդեսներում: Պրակում ընդգրկված նյութերը վերաբերում են ժամանակակից
հայերենի ուսումնասիրության տարբեր խնդիրների: Ժողովածուն կարող է օգտակար լինել
մասնագետներին և առհասարակ ժամանակակից հայոց լեզվի հարցերով հետաքրքրվողներին:

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.51

ISBN 978-9939-970-19-6
© ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, 2025

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի արդի հայերենի բաժնի գիտաշխատակիցները գիտահետազոտական աշխատանքներ են կատարել ժամանակակից հայոց լեզվի բնագավառում: Դրանք վերաբերել են հայերենի բառապաշարին, քերականական, խոսքային, լեզվաոճական իրողություններին: Կարդացվել են զեկուցումներ, գրվել հոդվածներ, որոնք հրապարակվել են տարբեր պարբերականներում: Այժմ էլ լեզվի ինստիտուտի արդի հայերենի բաժնում ուսումնասիրություններ են կատարվում ժամանակակից հայերենի լեզվական տարբեր երևույթների ուղղությամբ: Քննվում են բառապաշարին, բառակազմությանը, ոլորտային տերմինագիտությանը, ձևաբանական և շարահյուսական նորմավորմանը, շարահյուսական կապակցման միջոցներին ու եղանակներին, հատկական փոխառություններին, լեզվաոճական իրողություններին, ուսուցման խնդիրներին, խոսքային տարածված սխալներին վերաբերող բազմաթիվ հարցեր: Հետազոտությունները կատարվում են ինչպես նկարագրական, այնպես էլ պատմական եղանակներով: Իր գիտական արդյունքները ի մի բերելու, հանրությանը և ժամանակակից հայոց լեզվի հարցերով հետաքրքրվող ներկա ու հաջորդ սերունդներին ամփոփ կերպով ներկայացնելու նպատակով ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի արդի հայերենի բաժինը սկսել է հրապարակել աշխատակիցների հոդվածներն ու զեկուցումները պարունակող «Արդի հայերենի հետազոտություններ» գիտական հոդվածների ժողովածուների շարք՝ ըստ տարիների: Նյութերը քաղվում են լույս տեսած տարբեր ամսագրերից ու ժողովածուներից՝ առանց հեղինակային կամ խմբագրական միջամտության:

Շարքի երրորդ պրակում ներկայացված են բաժնի աշխատակիցներ Կ. Առաքելյանի, Ա. Բարսեղյանի, Լ. Թելյանի, Լ. Ղամոյանի, Ս. Պապիկյանի, Ն. Սարգսյանի աշխատանքները, որոնք վերաբերում են արդի հայերենի շարահյուսական իրողություններին, լեզվի և հասարակության փոխհարաբերության խնդիրներին, առանձին բառերի և հասկացությունների մեկնաբանման, լեզվաոճական հարցերի: Դրանք 2015-16 թվականներին հրապարակվել են տարբեր հանդեսներում, ժողովածուներում:

Թ. Ասոյան

ԳԵՎՈՐԳ ԶԱՀՈՒԿՅԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀԸ¹

Առաքելյան Կարինե

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
ավագ գիտաշխատող, Բ.գ.թ.

Գևորգ Զահուկյանի գիտամանկավարժական գործունեության մասին շատ է խոսվել ու դեռ պիտի խոսվի: Փորձենք ներկայացնել մեծ գիտնականի տաղանդի մեկ այլ կողմը՝ նրա բանաստեղծական աշխարհը: Ինչպես նշել է Գ. Զահուկյանը, իր կյանքում ի թիվս այլոց կա մի արժանահիշատակ տարեթիվ ևս՝ 1935 թվականը, «երբ,- գրում է նա,- սկսվել է իմ բանաստեղծական կյանքը: Ճիշտ է, եղել են ավելի վաղ (7-8 տարեկանից) փորձեր, բայց 1935 թվականից ես պարբերաբար բանաստեղծություններ եմ գրել՝ առանց դրանք հրատարակելու: Իսկ ինչո՞ւ չեմ հրատարակել: Կյանքիս երիտասարդ տարիները համընկել են ստալինյան բռնապետության շրջանին, երբ իմ գրած բանաստեղծությունները կարող էին որակվել որպես անկուսակցի տրամադրությունների արտահայտություններ», և երբ իշխում էր ինձ համար ատելի ջատագովական պոեզիան, որին տուրք են տվել նույնիսկ մեր նշանավոր բանաստեղծները: Որպեսզի խուսափեմ դրանից և խճիս դեմ չգնամ, ես այդպես էլ չտպագրվեցի»²: Թեև կային մարդիկ, որոնք փորձում էին համոզել:

«Առաքյալ» թերթը 1997 թ. առաջին համարում տպագրում է հարցազրույց իր՝ Զահուկյանի հետ և ընթերցողին խոստանում նոր «գրական» հանդիպում: Լրագրողի այն հարցին, թե «գեղարվեստական գրվածքներ ունե՞ք...», Զահուկյանը պատասխանում է. «Այո՛, բանաստեղծություններ, որոնք թերևս կարելի է և հրատարակել առանձին գրքով»³:

Գիրքը լույս տեսավ 2001 թ. «Բանաստեղծական գիրք» խորագրով և անմիջապես իր վրա սևեռեց բազմաթիվ մտավորականների ուշադրությունը: Իր քնարերգության առաջին անաչառ քննդատը եղավ ինքը՝ Գևորգ Զահուկյանը և գրքի առաջաբանում նշեց. «Ընդառաջելով իմ բարեկամներին՝ ես որոշեցի ընթերցողի դատին հանձնել տարիների իմ բանաստեղծական վաստակը, հաճախ անթվակիր, խուսացած թերթերի վրա գրված,

¹ Հոդվածը տպագրվել է «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրում, Ե., 2016, հ. 1, էջ 249-257:

² Գևորգ Զահուկյան, *Բանաստեղծական գիրք*, Ե., 2001, էջ 3: Այսուհետև այս գրքից կատարվող մեջբերումների էջերը կնշվեն շարադրանքում՝ փակագծերի մեջ:

³ Մարդկային ոչինչ խորթ չէ ինձ, «Առաքյալ», Ե., 1997, N 1:

տարբեր ժամանակների հետաքրքրությունների կնիքը կրող, լավ և, գուցե, ոչ այնքան լավ, բայց ոչ վատ: Տարիների հեռվից ես ավելի քննադատաբար եմ նայում իմ վաստակին, բայց դրանով հանդերձ գտնում, որ դրանց կորուստն, այնուամենայնիվ, ինձ համար (թերևս, ոչ միայն ինձ համար) ցավալի կլինեք: Անթվակիր այն բանաստեղծությունները, որոնց ժամանակը ես գոնե մոտավորապես կռահում էի, դրված են մոտավոր ճշգրտությամբ, մնացածը զետեղված է վերջին էջերում: Ես իմ կյանքում ծանոթացել եմ արևմտյան և արևելյան ամենատարբեր երկրների պոեզիային և այս կամ այն չափով կրել դրանց ազդեցությունը, բայց իմ պոեզիան, այնուամենայնիվ իմ պոեզիան է: Դա նույնպես եղել է իմ կյանքը, և, երևի, առանց դրա իմ կյանքի պատկերը թերի կլինեք» (4):

Ջահուկյանի քնարերգության մեջ կարելի է առանձնացնել թեմատիկ մի քանի հիմնական ուղղություններ՝ հայրենասիրական, քաղաքացիական, խոհափիլիսոփայական, մայրերագրության, սակայն ճնշող մեծամասնությամբ Ջահուկյանի քնարերգության հիմքն ու առանցքը սիրերգությունն է: Բանաստեղծական իր բոլոր դրսևորումներում, սակայն, տեսանելի է Ջահուկյան անհատը՝ իր խորը մարդկային և, ինչու չէ, խորը դրամատիկ նկարագրով: Նա իր դարաշրջանի մարդն է՝ իր ժամանակի, սերնդի, հողի ծնունդը, նախնյաց արժեհամակարգի կրողը: Իբրև այդպիսին, նրան անշուշտ խիստ հարագատ են հայրենասիրական զգացումները, որոնք իրենց վառ արտահայտությունն են գտել «Հեռավոր երկնքում շողացող ոսկի ամպ» տողով սկսվող բանաստեղծության մեջ, որտեղ Հայրենիքը և մանկության երազ ու լուսեղեն հեքիաթ է և նոր հույսերի ու տենչերի մարմնացում, սակայն միշտ սրբազան ու նվիրական:

Դու որպես վառ փարոս ինձ կանչում ես հիմա
Երգերով մեղմօրոր, քարերով հնամյա,
Ու ծխում է նորից ծխանին քո հին տան,
Իմ պայծա՛ռ հայրենիք, իմ անո՛ւշ Հայաստան... (167)

Հայրենասիրական զգացումներին միահյուսվում է քաղաքացիական պարտքի խորը գիտակցումը և ծնունդ տալիս «Քառասունհինգի սերունդը» բանաստեղծությանը: Այն գրվել է 1990 թ., և յոթանասունամյա հեղինակը փորձում է հետադարձ հայացք նետել և արժևորել իր ու նաև իր՝ քառասունհինգի սերնդի անցած ուղին, գնահատել նվաճումները, ձեռքբերումներն ու կորուստները. ստեղծվում է զարմանալի հակադրություն: Որքան մեծ է նվաճումը, որքան մեծ է աշխարհին, հայրենիքին ու մարդկությանը մատուցած

ծառայությունը, այնքան չգնահատված ու անտեսված է անհատը ու նաև սերունդը, որն իր մխիթարությունն է գտնում գործի անմահության և ապագայում գնահատված լինելու վստահության գաղափարի մեջ.

Հաղթանակ տարած, բայց պարտված կյանքում,
Հարվածներ կրած, բայց չեկած ծնկի՝
Կվարձատրվենք միայն գալիքում
Մենք՝ զավակներս քառասունհինգի: (184)

Ջահուկյան բանաստեղծի քնարական հերոսը երբեք չի մոռանում իր ծնողական հարկը և որդիական ամենաջերմ սիրով ու քնքշությամբ է հիշում մորը.

Ինչքա՛ն ցավեր տարար քո մայրական սրտում,
Ների՛ր, մա՛յր իմ, ների՛ր քո մեղավոր որդուն: (176)

Ինչպես արդեն նշեցինք, Ջահուկյանի քնարերգության մեջ իշխող թեման սերն է: Թեմա, որ հին է ու միշտ նոր, արվեստագետի համար միշտ արդիական: «Մարդկային ոչինչ խորթ չէ ինձ», - մի առիթով ասել է Ջահուկյանը. նույնն է պարագան Ջահուկյանի հերոսի համար: Եվ հեղինակը նրբորեն նկարագրում է նրա հոգեվիճակի փոփոխությունները, ուրախությունն ու տրտմությունը, երջանկության հույսն ու սպասումը, կորստի ցավը, հուսահատությունն ու տառապանքը, սերն ու նույնիսկ ատելությունը: Միրո մեծ զգացմունքի մասին հեղինակը երբեմն խոսում է շատ պարզ, իրերը կոչելով իրենց անուններով, ինչից, սակայն, ամեննին չեն տուժում արտահայտչականությունն ու հուզականությունը, ինչպես.

Մեկի հետ անկեղծ լինել եմ ուզում,
Մեկին իմ բոլոր վշտերը պատմել,
Մեկի հետ շնչել կյանքի երազում,
Մեկի հետ խնդալ, մեկի հետ տրտմել... (112)

Երբեմն խոսքը տեղափոխում է իրականի սահմանագծից այն կողմ, համեմունք այսպես կոչված «բանաստեղծական» բառերով, որոնք ինքնին ոճաստեղծ են, ինչպես.

Ծովում խավար, և սիրավառ փերիներ
Կանչում են հուր, լուսափրփուր հեռուներ:

- Ծովը մտնեմ, այնտեղ գտնեմ իմ փերուն,

Իմ ոսկեծամ հավերժական սիրուհուն... (11)

Երբեմ էլ գաղափարն արտահայտում է պատկերավորման որևէ լեզվական միջոցով՝ փոխաբերության, շրջասության և այլն՝ առանց բառը հիշատակելու, ինչպես.

Դու քեզնով զբաղված

Չտեսար ներքևում,

Որ իմ սիրտն էր թաղված

Քո ոտքի հետքերում: (167)

Երբեմն բանաստեղծը *սերը* գրում է մեծատառերով՝ սրանով ավելի ընդգծելով նրա դերն ու կարևորությունը բառաշղթայում, ինչպես. «Մի՞թե չի հասկանալու այդ աղջիկը, որ սուտ են բոլոր խոսքերը, և իրական է միայն Սերը՝ հավերժական Սերը, որ երգն է երգում կյանքի բոլոր ուղիների վրա... (155):

Ուրիշ դեպքում, բացի մեծատառով գրելուց, բառն առնում է չակերտների մեջ՝ ստեղծելով վերնագիր խոսքաշարում. «Ա՛խ, անցած է հավետ այն լուսեղեն երգը, որ հյուսեցինք ես ու դու մեր ամենադյուրիշ ներշնչման ժամին և անվանեցինք «Սեր» (146):

Մեկ այլ դեպքում դարձյալ մեծատառով է գրում սերը, սա, կարելի է ասել, ձոն է սիրուն, սիրո ջահուկյանական ըմբռնման կիզակետը. «փա՛ռք քեզ, հավերժական Սեր, փա՛ռք քեզ, խորհո՛ւրդ բերկրաշող տանջանքի»: (110)

*
* *

Չափածո խոսքում այս և այլ թեմաների արծարծման համար հեղինակը դիմում է ձևի բազմազանության՝ նախընտրելով բանաստեղծության ինչպես նաև բանատան միանգամայն տարբեր տեսակներ: Իհարկե ճնշող մեծամասնությամբ նա նախապատվությունը տվել է բանաստեղծական ամենից հաճախակի կիրառություն ունեցող քառատող տանը, այստեղ էլ, սակայն, գրելով տարբեր երկարության՝ երեքից մինչև տասնվեց վանկանի, ինչպես նաև անհավասար տողերով ու հանգավորման տարբեր եղանակներով: Քնարերգության մեջ լայն տարածում գտած խաչաձև, օղակաձև, կից և այլ հանգավորումների կողքին Ջահուկյանը գրել է նաև այլ սկզբունքներով: «Այս անլույս աշխարհի հեքիաթում» տողով սկսվող բանաստեղծության մեջ նա դիմել է տողի կրկնության ոճական հնարան-քին: Բանատների առաջին երեք տողերը միմյանց հետ հանգ են կազմում, իսկ չորրորդը, որ անհանգ է, նույնն է բոլորի համար և իր մեջ է խտացնում հիմնական ասելիքը, ինչպես.

Այս անլույս աշխարհի հեքիաթում
Իմ սրտից ալ արյուն է կաթում,
Իմ հոգին դեպի մահ է թռչում,
Ախ ինչո՞ւ, չգիտեմ, թե ինչո՞ւ... (164)

Հայ քնարերգության մեջ բանաստեղծական քառատող տան բոլոր տողերը հիմնականում հավասար վանկեր են ունենում, և հակառակը քիչ է հանդիպում: Այսպիսի դեպքեր նույնպես առկա են բանաստեղծական գրքում, ինչպես «Արցունքով է լցված հավետ» տողով սկսվող բանաստեղծության մեջ, որտեղ տողերն անհավասար են, բայց բանատունը ռիթմական ամբողջություն է՝ շնորհիվ խաչաձև հանգավորման և ութ ու հինգ վանկանի տողերի հավասար հաջորդականության.

Արցունքով է լցված հավետ
Իմ անլույս հոգին,
Իմ մաքրափայլ սերը դավեց
Սևաշյա մի կին: (132)

Քառատողը կարող է լինել ինքնուրույն բանաստեղծություն, որի վառ օրինակը քառյակն է: Ջահուկյանը գրել է քառյակ խաչաձև, սովորական հանգավորմամբ, տասներկու վանկանի տողերով.

Նա՝ ցնորք անցավոր, նա՝ հեքիաթ մոռացված,
Նա՝ հավերժ խավարած իմ կյանքի գիշերում,
Նրա լուրթ աչքերում ողջ աշխարհն էր բացված,
Բայց անուրջ է հիմա միմիայն հուշերում: (79)

Ջահուկյանը գրել է բանաստեղծություններ երկտող, վեցտողանի, ութտողանի, նաև տարբեր մեծության տներով: Վերջիններից է «Պատրանք» ոտանավորը, որն սկսվում է քառատող տնով, սրան հաջորդում է, եթե կարելի է այդպես ասել, տասնչորս տողանի տուն, ապա դարձյալ քառատող: Ջահուկյանը գրել է արձակ բանաստեղծություններ, որոնք մեծավ մասամբ սիրային բովանդակություն ունեն: Գրել է նաև ազատ ոտանավորի սկզբունքով: Ինչպես հայտնի է «ազատ ոտանավորի մեջ մեծ մասամբ չի պահպանվում ռիթմի՝ մեզ հայտնի պայմաններից (վանկերի և շեշտերի քանակը, նրանց դասավորությունը) և ո՛չ մեկը: Ոտանավորը կառուցված է շատ ազատ՝ զգալիորեն մոտենալով արձակ խոսքին... այստեղ զգալիորեն մեծանում է յուրաքանչյուր տողի շարահյուսական և

արտասանական ինքնուրույնությունը: Ամեն մի տող դառնում է մի առանձին շարահյուսական միավոր (հաճախ՝ ավարտված միտք-նախադասություն), որն ընդգծված դադարով բաժանվում է մյուսներից»⁴:

Ջահուկյանի ազատ ոտանավորները հիմնականում խոհափիլիսոփայական գործեր են, որոնք արտահայտում են ինչպես հեղինակի, այնպես էլ հեղինակին քաջաձանոթ զանազան իմաստասիրական ուսմունքներում առկա մտքեր ու ճշմարտություններ, ինչպես. «Մի՛ տա երկու պատիժ նույն հանցանքի համար, Անհիշաչար եղի՛ր մայր բնության նման», «Քեզ առաջնորդ ընտրի՛ր խղճի արևն արթուն, Որ ժանգ չապրի երբեք քո ոսկեփայլ սրտում», «Բարի նախանձով միայն նախանձի՛ր, Ոչ թե կործանի՛ր, այլ գերազանցի՛ր» (78) և այլն:

Ազատ ոտանավորի սկզբունքով են գրված նաև Դամբանագրերն ու Հյուսիսգերմանական դամբանագրերն, ինչպես. «Այս հողի տակ հանգչում է մի անհաշտ ոգի: Մահից առաջ ընդդեմ մահվան նա մաքառեց, Մահից հետո՝ հանուն անմահության» (82) կամ «Նա մարտում ընկավ հերոսի մահով, Ու թեպետ մարմինն անզգա է հար, Բայց նրա հոգին Վալհալլայի մեջ Իր հավերժական խնջույքն է անում» (83) և այլն:

Այստեղ առկա է անդրադարձ սկանդինավյան դիցաբանությանը և միջին Վալհալլայի դոյակի մասին, որտեղ, համաձայն հավատալիքի, վալկիրիաներն ուղեկցում էին ռազմի դաշտում զոհված հերոսների հոգիները:

Ջահուկյանի բանաստեղծական գրքում հանդիպում ենք նաև գազելների: Ահա մի օրինակ.

Դու լուսեղեն վառ անուն, բայց ի՞նչ օգուտ ինձ համար,

Դու սիրո ծով մի անհուն, բայց ի՞նչ օգուտ ինձ համար:

Դու աշխարհը լցրեցիր քո հրաշքով դյուրական,

Մեր կա ամեն անկյունում, բայց ի՞նչ օգուտ ինձ համար... (136)

Հայ գրականության մեջ գազելներ գրել են աշուղ-բանաստեղծները՝ Սայաթ Նովան, Ջիվանին, նաև Վահան Տերյանը, Եղիշե Չարենցը և ուրիշներ: Հետաքրքրական է, որ ինչպես մեծ բանաստեղծ Եղիշե Չարենցն է գազել նվիրել մորը՝ այն անվանելով «Մորս համար գազել», այնպես էլ Ջահուկյանը, որն իր բանաստեղծությունն անվանել է «Գազել մայրական»:

⁴ Էդ. Ջրբաշյան, *Գրականության տեսություն*, Ե., 1980, էջ 303:

Ջահուկյանն արել է տրիոլետի մի քանի բավական հաջողված փորձեր: Հայ գրականության պատմության մեջ տրիոլետի անգուգական վարպետ էր Վահան Տերյանը: «Տրիոլետը բաղկացած է ութ տողից: Առաջին տողը նույնությամբ կրկնվում է իբրև չորրորդ և յոթերորդ տողեր, իսկ երկրորդ տողը՝ իբրև ութարորդ տող»⁵, ինչպես.

Ես քեզ եմ սիրում, իսկ դու՝ ուրիշին,
Եվ գիտեմ՝ հոգուս փրկություն չկա,
Ես իզուր այս խենթ աշխարհը եկա,
Ես քեզ եմ սիրում, իսկ դու ուրիշին:
Խենթ է աշխարհը՝ երկուսի բաժին
Ստեղծել է նա լոկ մի աղջկա.
Ես քեզ եմ սիրում, իսկ դու՝ ուրիշին,
Եվ գիտեմ՝ հոգուս փրկություն չկա: (81)

Ջահուկյանը գրել է նաև բանաստեղծական հազվագյուտ հանդիպող կայուն ձևերով՝ ռոնդել և վիլանել: Սրանց հազվագյուտ լինելու մասին խոսում է թեկուզ այն, որ հայկական գրականագիտական դասագրքերում և բառարաններում վկայված չեն: Հայ քնարերգության պատմության մեջ վիլանելներ մեզ գոնե անծանոթ են, ռուս գրականության մեջ վիլանելի փորձեր արել է Վալերի Բրյուսովը, ռոնդելը հանդիպում է հիմնականում թարգմանական գրականության մեջ:

«Ռոնդելը հնագույն ձև է, այն տրիոլետի յուրօրինակ տարբերակ է, ավարտուն բանաստեղծություն բաղկացած տասներեք տողից: Առաջին երկու տողերը կրկնվում են որպես յոթերորդ և ութերորդ, իսկ առաջինը՝ նաև որպես տասներեքերորդ, վերջին տող»⁶:

Ջահուկյանի ռոնդելը կառուցված է դասական սկզբունքով, համաձայն որի «այն ներկայացնում է հորինվածքային պարուրագիծ՝ կանոնականացված հատուկ ձևափոխություններով... Այստեղ անհրաժեշտ է ընդգծված շարահյուսաւան դադար չորրորդ և ութերորդ տողերից հետո՝ նշելու բանատան սահմանները, քանի որ բանաստեղծության բոլոր երեք մասերը ագուցված են նույնանման հանգերով»⁷:

⁵ Էդ. Զրբաշյան, Հ. Մախչանյան, *Գրականագիտական բառարան*, Ե., 1972:

⁶ Г.А. Шенгели, *Техника стиха*, М., 1960, стр. 296.

⁷ В.М. Жирмунский, *Теория стиха*, Л., 1975, стр. 527.

Ջահուկյանի ռոնդելն ունի մեկ տարբերություն. բանաստեղծությունն ավարտվում է ոչ թե առաջին տողով, այլ երկտողով՝ դրանով շատ ավելի ընդգրկուն ու ամբողջական դարձնելով ասելիքը.

Ես ապրեցի դյութական

Ցնորքների աշխարհում: (81)

«Վիլանելը հնագույն իտալական ձև է, «գեղջկական» երգ (*վիլան* նշանակում է ճորտ), որը ներմուծվել ու տարածվել է հնագույն ֆրանսիական քնարերգության մեջ՝ վերագտնվելով XIX դարավերջում, իսկ ռուս գրականության մեջ արտացոլված է թարգմանությունների ու նմանակումների միջոցով: Այն կազմված է անսահմանափակ թվով եռատողերից, որոնց բոլորի երկրորդ՝ մեջտեղի տողերը միմյանց հետ հանգ են կազմում: Առաջին եռատողի առաջին և երրորդ տողերը միմյանց հետ հանգ են կազմում, հետո հաջորդաբար ավարտում յուրաքանչյուր նոր եռատող՝ պահանջելով առաջին տողի համար համապատասխան հանգ: Այսպիսով երկրորդ եռատողն ավարտվում է առաջինի առաջին տողով, իսկ երրորդը՝ դրա երրորդ տողով, չորրորդը՝ դարձյալ առաջինի առաջին տողով, հինգերորդը՝ նորից երրորդով և այսպես շարունակ: Վերջին տունը պետք է ավարտվի առաջինի առաջին տողով, որին հաջորդում է առաջինի երրորդ տողը, այսինքն վերջին տունը դառնում է քառատող: Այսպիսով բանաստեղծությունն ունենում է միայն երկու հանգ, ինչն այս ձևը դարձնում է բավական դժվար»⁸:

Հայ գրականության մեջ վիլանելի օրինակ մեզ անհայտ էր, և ահա բանաստեղծական գրքում գտնում ենք մի նուրբ, լիրիկական բանաստեղծություն՝ վերնագրված Վիլանել.

Ա՜խ, իմ թռչնակը թռավ,

Որ հավիտյան հետ չգա,

Ոսկե քնարս տարավ:

Վիշտը թողեց ինձ գրավ,

Թողեց սրտիս լուռ վկա,

Ա՜խ, իմ թռչնակը թռավ... (85)

⁸ Գ.Ա.Шенгели, նշվ. աշխ., էջ 292:

Բանաստեղծական գրքում հանդիպում ենք գիշերերգի, մահերգի, նաև հեղինակի գրչին ոչ այնքան բնորոշ երգիծական բանաստեղծության, որն անվանել է «Բանաստեղծական հրաժեշտի երգ» կամ պարողիա և փորձել է վերաթևոթել անցած կյանքի և ինչու չէ ստեղծագործական ուղին, մի պահ աշխարհին նայել այլ տեսանկյունից.

Հերիք է, դարձնենք կոնակը
Երգերի հանդեպ սենտիմենտալ,
Հերիք է, արդեն ժամանակն է
Բոլորի հետ ապրել ու խնդալ... (87)

Եվ անշուշտ բանաստեղծությունը նրա համար չի եղել ազատ ժամանակն անցկացնելու գեղեցիկ միջոց կամ պարապ վախտի խաղալիք, այլ կենսակերպ, կյանքի մի մաս, ինչի մասին անկեղծորեն խոստովանել է ինքը՝ մեծ գիտնականը՝ «Եթե կյանքը Ձեզ նորից տրվեր, այսօր նո՞ւյն ճանապարհը կընտրեիք» հարցին պատասխանելով. «Կարծում եմ՝ ո՛չ: Խորհրդային շրջանը մենագաղափարախոսական էր: Եթե ես փիլիսոփայության բնագավառում լինեի, մարքսիզմից բացի ուրիշ ի՞նչ սկզբունքներով պիտի առաջնորդվեի: Հասարակական գիտությունների մեջ նոր խոսք ասել չէի կարող, բացի լեզվաբանությունից, որը համեմատաբար չեզոք բնագավառ է, և որն էլ դարձավ սեփական գաղափարներն ու սկզբունքներն արտահայտելու լավ ճանապարհ: Իսկ ըստ էության ժամանակին մտածում էի գրող կամ բանաստեղծ դառնալ: Ու երևի հենց այդ ճանապարհն էլ ընտրեի»⁹:

Ինչպես կարելի է այս համառոտ քննությունից եզրակացնել, ականավոր լեզվաբան Գևորգ Ջահուկյանը լուրջ հայտ է ներկայացնում որպես բանաստեղծ: Իր բանաստեղծական գրքում նա դիմել է բովանդակության ու ձևի մեծ բազմազանության՝ արժարժեքով միանգամայն տարբեր թեմաներ միանգամայն տարբեր ձևերով ու եղանակներով: Բանաստեղծական սովորական համարվող տեսակների կողքին գրել է քնարերգության պատմության մեջ մշակված կայուն, նաև խիստ հազվադեպ հանդիպող ձևերով՝ կրելով հայ և համաշխարհային մշակույթի, գրականության, փիլիսոփայության ազդեցությունը, երբեք, սակայն, չկրկնելով, չնմանակելով, այլ ստեղծելով իր, ուրույն ջահուկյանական բանաստեղծական աշխարհը:

⁹ Մարդկային ոչինչ խորթ չէ ինձ, «Առաքյալ», Ե., 1997, N 1:

Карине Аракелян – Поэтический мир Геворка Джаукяна. – Выдающийся языковед, академик Геворк Джаукян параллельно с научно-педагогической деятельностью писал стихи начиная с 1935 года. Его сборник стихов был опубликован в 2001 году под названием “Поэтическая книга”. В лирике Джаукяна можно выделить несколько основных тематических направлений – патриотическое, гражданское, философское, однако, по большому счету, основное место в лирике Геворка Джаукяна занимает любовь. Для описания выше сказанных и других тем, автор прибегает к разнообразности формы и наряду со считающимися обычными поэтическими формами пишет в истории поэзии обработанными стабильными, а также изредка встречающимися формами.

Karine Arakelyan – The Poetical World of George Jahookyan. – The outstanding linguist, academician George Jahookyan simultaneously with his scientific and pedagogical practice used to write poems since 1935. The collection of his poems was published in 2001, titled “Poetical Book”. In the poetry of George Jahookyan one can meet several basic directions – patriotic, civil, philosophic, but generally the main theme in the poetry of Jahookyan is love. To describe these and other themes the author used a big variety of forms not only the ordinary considered, but also by constant historically worked up and rarely meeting.

2007 թ. Բեյրութի «Ազդակ» օրաթերթը լույս ընծայեց իր գրական հավելվածը հանդիսացող «Ազդակ գրական – ազդակ արուեստի» անուն պարբերաթերթի առաջին համարը: Բացելով այն «Նոր սկիզբ» հոդվածով՝ թերթը ծանուցեց, որ «Ազդակն» իր ութսունամյակի կապակցությամբ ձեռնամուխ է լինում նոր հավելվածի հրատարակությանը, քանի որ թեև հիմնադրության օրից էջեր է տրամադրել գրականության, սակայն երբեք չի ունեցել առանձին բեմ գրականության և արվեստի համար, ինչի կարիքը շատ էր զգացվում հատկապես վերջին տարիներին:

«Ազդակ գրականը» չափանիշ ընտրեց Բարձր նշաձողը՝ թե՛ բովանդակության, թե՛ ձևի առումով, իսկ անսխալ և գեղեցիկ լեզուն՝ անհրաժեշտ նախապայման տպագրության համար՝ նշելով, որ. «արդեն ծանոթ անունները իրենց ստորագրութեան պատասխանատվությամբ կրնան անարգել գրութիւններ ունենալ այս էջերուն, բայց պարագան նոյնը չէ ու նոյնը չի կրնար ըլլալ գրականութեան նորընծաներուն համար: Շահեկանութենէ զուրկ խորքով եւ անյոյզ ոտանաւորներ սարքողները համարձակութիւն պէտք չէ ունենան այս յաւելուածին դուռը բախելու, եւ ոչ ալ սոսկական գրութեամբ ուրիշ մը փորձէ հոս երեւնալու երագներ հիւսել: Սկսնակները պէտք է բանաստեղծական թէ արձակ շարքերով ներկայանան խմբագրութեան եւ այդ պայմանին հետ անհրաժեշտօրէն մատնած ըլլան խառնուածքային գիծ մը, անսխալ ու գեղեցիկ լեզու մը ու շարունակելու յոյսեր ներշնչող ու գրական այլ բարեմասնութիւններ»¹:

Պարբերաթերթի խմբագիրն էր մինչ այդ «Բագին» ամսագրի բազմամյա ու բազմարդյուն խմբագիր Պողոս Սնապյանը, որը հրապարակախոսի, գրողի, քննադատի իր հարուստ փորձն ու նախանձախնդիր ոգին անմնացորդ ներդրեց նոր պարբերաթերթի հրատարակության գործին: Ի թիվս այլ հարցերի՝ թերթն իր առջև խնդիր դրեց անդրադառնալու հայ լեզվաբաններին և գրականագետներին հուզող որոշ հիմնախնդիրների, հայության երկու հատվածներին նետված մարտահրավերների: Վերջիններից կարելի է

¹ Հոդվածը տպագրվել է «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրում, Ե., 2015, հ.3, էջ 191-197:

առանձնացնել միասնական ուղղագրություն ունենալու, մայրենին՝ թե՛ արևելահայերենը, թե՛ արևմտահայերենը, մաքուր ու անաղարտ պահելու, ընթերցողին ճշմարիտ գեղարվեստական չափանիշներով գրականություն մատուցելու, գաղթօջախների հայկական դպրոցների վիճակի, հայոց լեզվի և գրականության ուսուցիչ-ուսուցչուհիների վերապատրաստման, նոր սերնդի ուսուցիչների պատրաստման և այլ հարցեր, որոնցից յուրաքանչյուրին անդրադառնալիս լայնախոհ խմբագիրը մեջբերում է հայրենի և սփյուռքի տարբեր սերունդների մտավորականների, խնդրին իրազեկ անձանց կարծիքները՝ փորձելով գտնել կամ թերևս հուշել հնարավոր լավագույն լուծումը:

Գաղտնիք չէ, որ հայերենի գրական երկու տարբերակների մերձեցման հարցը տևականորեն եղել և շարունակում է մնալ հայ մտավորականության ուշադրության կենտրոնում: Մերձեցման փորձեր բազմիցս արվել և արվում են: Կարելի է հիշել դեռևս XX դարասկզբին հնչած մտահոգությունները. «Միսալ է դարձեալ, թէ երկու լեզուէ, «երկու ծաղկէ» վնաս չկայ: Տարակոյս չկայ, որ լաւագոյն պիտի ըլլար եթէ հայերը միակ գրական լեզու մ'ունենային այսօր...»²:

Այսօր՝ XXI դարասկզբին, երկու լեզվից բացի կա նաև երկու ուղղագրություն: Մնապայանը խնդրին մոտենում է այլ տեսանկյունից: Նա հիշատակում է մի շարք լեզվաբանների, մտավորականների, հայագետների խորհրդածություններ այս հարցի շուրջ. Նիկողայոս Ադոնց, Լեո Կամսար, Գևորգ Տեր-Վարդանյան, Էդուարդ Տարոնյան, Լևոն Միրիջանյան, Պարյուր Սևակ, Քնար Աբրահամյան, Արփի Թոգոյան... Շարքը կարելի է շարունակել ու շարունակել:

Ի թիվս մյուսների ուղղագրության խնդրին է անդրադարձել լեզվաբան պրոֆեսոր Սիրաք Գյուլբուդադյանն իր «Մեզ անհրաժեշտ է միասնական ուղղագրություն» հոդվածում՝ լույս տեսած «Դպրություն» թերթում անկախության առաջին տարիներին, ցրտի ու մթի պայմաններում և հավանաբար նույն պայմանների պատճառով անարձագանք մնացած կամ գուցե չնկատված ու մոռացված:

Մնապայանը, կարելի է ասել, պեղել է այս հոդվածը՝ այն ամբողջությամբ վերատպելով 2009 թ. իններորդ համարում և հեղինակի հետ կրկնելով. «մեզ անհրաժեշտ միասնական ուղղագրութիւն»: «Հարկաւոր է Սփյուռքի եւ Հայաստանի հայագետներին կլոր սեղանի շուրջ հաւաքել եւ գտնել միասնական ուղղագրութեան ուղին եւ միջոցները»³:

Թերթի էջերում քննադատության թիրախ դարձան գեղարվեստական գրականության լեզու մուտք գործած հայի հոգեմտավոր կերտվածքը խաթարող տարրեր, ինչպես օտարաբանությունները, ժարգոնիզմները, հայհոյանքները, խրթնաբանությունները, սեռագիրների բերած «բառերի ամոթը» և այլն: Խոսելով երկու գրականներում առկա անհարկի փոխառությունների մասին՝ պարբերաբերթը բազմիցս նշել է, որ մեր անկողոպտելի գանձի՝ Մեծասքանչի հանդեպ անտարբերությունն ու անպատասխանատվությունը երբեմն հասնում են մտահոգիչ համեմատությունների: Հաճախ հիշատակում է օտարամուտ բառեր, տալով դրանց հայերեն համարժեքները, և միշտ կրկնում. «ատոնց հայերենը կա...»: Եվ ոչ միայն այսքանը: Գրական Ազդակը չի սահմանափակվում նշումներով ու խորհրդածություններով, ինչպես. «Դեռ քառորդ դար առաջ, տաղանդաւոր եւ հաւանաբար նաեւ նոյն պատճառով սրտցաւ հայրենի մեր մտաւորականները հետեւողական պայքար մը մղեցին օտար բառերու անհարկի գործածութեան դէմ ու զգալիօրէն ազատագրեցին մեր լեզուն այդ կամաւոր գերութենէն: Հակառակ արձանագրուած զգալի յաջողութիւններուն, նախանձախնդիր նոր մտաւորականները կը շարունակէն նոյն պայքարը դեռեւս շարունակուող այդ թուլութեան դէմ, որովհետս որոշ խաւեր, որոնց շարքին գրողներ, ձայնասփիւռի ու պատկերասփիւռի հաղորդավարներ, ինչպէս նաեւ հարցազրույցներու մասնակիցներ կը շարունակէն դիմել օտար բառերուն, երբ մեր լեզուն բնաւ պետք չի զգար այդ խորթութեանց օժանդակութեան: *Որոշակին* կայ ու կայ, բայց մարդ չի գիտեր, թե ո՞ր անհրաժեշտութենէն մղուած *concret*-ը կը շարունակէ մնալ շրթներուն ու գիրքերուն մէջ: Նոյնը ուրիշ բառերու պարագային: Երբ ունինք *բնականը*, *ճաշարանը*, *տարբերակը*, *աւանդութիւնը*, *լրատուութիւնը*, *հաւաքականը*, *գովազդը*, *կայքէջը*, *նիւթը*, *խնդիրը*, ո՞վ կը զգայ անհրաժեշտութիւնը *normalին*, *restaurantին*, *variantին*, *traditionին*, *collectifին*, եւ այլն, եւ այլն, որոնք կը շարունակէն հնչել շրթներէն թէ երեւիլ թուղթերու վրայ»⁴:

Ինչպէս նաև. «Առանց ազգային զգայնութեան, միշտ օտար բառերու անհարկի գործածութեան դէմ ընդվզելու հարկադրանքի մը անսալով, պիտի յիշենք տակաւին լսողութիւն վիրաւորող թուրք-թաթարական բառերուն դիմելու սովորութիւնը, *պարըշէլը*, *փոշմանէլը*, *հաւէսը*, *դարսը*, որոնց հայերէն համագօրները թուրքերէնին ստեղծումէն դարեր առաջ մենք կը գործածէինք, *հաշտիլ*, *զղջալ*, *փափաք*, *հակառակ* բարեհունչ կառոյցներով»⁵:

Մնապյանն ասելիքը ավելի գործնական ու կենդանի է դարձնում հաճախ հայ մեծերի կյանքից կամ գեղարվեստական երկերից հիշելով ու մեջբերելով դրվագներ, որոնք առնչվում են նույն՝ լեզվի մաքրության խնդրին և կրկին անգամ շեշտում դրա կարևորությունն, ինչպես Բանաստեղծուհի Միլվա Կապուտիկյանի նկարագրած հետևյալ դեպքում է. «Եվ ահա մի օր սենյակիս դուռը ուժգին ծեծում են: Բացում եմ:

– Բարև Ձեզ, ես Վահե Ոսկանյանն եմ. լսեցի, որ այստեղ եք, եկա... Ինչպե՞ս եք, գրո՞ւմ եք: Ասել է մուսաներուն փախցուցի... Հոգ չէ, թող աշխարհը քիչ մը սպասե Ձեր նոր Բանաստեղծություններուն,- իրար ետևից վրա է տալիս նորեկը և չսպասելով հրավերի՝ նստում է:

– Ուրեմն դուք եք Վահե Ոսկանյանը,- ժպտում եմ ես,- իսկ ես ձեզ պատկերացնում էի զուսպ, էլեգանտ եվրոպացի...

– Նախ էլեգանտ բառի հայերենը կա՝ կիրթ, նրբակիրթ, նրբագեղ... Եվ հետո, ես անզուսպ բան մը չեմ ըրած, կարծեմ,- նեղը լծեց Վահեն»⁶:

«Ազդակ գրականի» մեկ այլ համարում Պողոս Մնապյանն անդրադառնում է լեզվի մաքրության խնդրի հոգեբանական կողմին՝ մեջբերելով կին ազատամարտիկ Աղավնի Սահակյանի՝ «Նարցիս» ամսագրին ուղղված նամակը, որում ի թիվս այլոց պատմվում է մի չափազանց ուշագրավ դեպք: Խոսքը 1992 թ. մայիսի 13-ի մասին է, երբ հայ ազատամարտիկները հանգիստ քայլում էին նոր ազատագրված Շուշիի փողոցներում՝ վայելելով այս մեծ հաղթանակի անհուն բերկրանքը: Հեղինակը, սակայն, օդի մեջ ինչ-որ ճնշող բան էր զգում, որի պատճառը գտնել չէր կարողանում: «Եւ յանկարծ գտայ,- գրում է նա ու ավելացնում,- ճնշողը դրանց գրերն էին, որ բազմել էին ամենուր ցցուած ցուցանակներին ու տիրաբար զգացնել էին տալիս, որ նրանք այստեղ են եղել, զաւթել են, իշխել ու ապրել: Ասացի. «Արօ՛, արի կոտրենք բոլոր ցուցանակները, թող աչքներս չտեսնի՛ դրանց գրերը»: Յուրախութիւն ինձ, Արոն ոգեւորուած ընդունեց առաջարկս, մէկս միւսից գիժ. ընկանք փողոցներն ու սկսեցինք ատոմատի կոթով, փայտով, քարով անխնայ կոտրել ազրպէյճաներէնով գրուած բոլոր ցուցանակները: Եւ ցաւով գիտակցում էինք նաեւ՝ բոլորը չէ, որ զգում ու հասկանում էին մեր արածի կարեւորութիւնն ու անհրաժեշտութիւնը... Բայց ներքուստ մի զգացում էլ էի ապրում. վիրաւորուած էի, թէ ինչու սրանք կարող են իրենց արհեստական, սրանից-նրանից գողացած ու իւրացրած գրի ու լեզուի կարեւորութիւնը զգալ, գիտակցել, յարգել, իսկ մենք՝ հայերս՝ ո՛չ... Հիմա երանի եմ տալիս այդ օրուան,

բայց եւ ցաւ եմ զգում, որ այդ օրուայ սկզբնական ճնշուածութիւնը զգում եմ նաեւ այսօր, իմ սիրելի Երեւանի՝ ամենայն հայոց մայրաքաղաքի փողոցներով քայլելիս: Ախր, ինչպէս պահում-պահպանում ենք մեր ազգային բանակը, այնպէս էլ պէտք է պահենք-պահպանենք աչքի լոյսի նման, մեր մաշտոցեան 36 զինուորներին: Մեր իսկ գրչով չխոցենք ու չվիրաւորենք փոքրաթիւ, բայց հզօր այդ զինուորներին, քանի որ իւրայինի հասցրած վերքը այնքան խորն է ու ցաւոտ, որ երբեմն ոչ մի սպեղանի չի կարող օգնել»⁷:

Իսկ ի՞նչ գրականություն է ստեղծվում մայրենիով ու ի՞նչ է մատուցվում հայ ընթերցողին հայրենիքում և սփյուռքում: Այս խիստ բազմաբովանդակ ու արդիական հարցերին ևս փորձում է պատասխանել գրական «Ազդակը»՝ իր էջերում տպագրելով հայրենաբնակ ու սփյուռքահայ ստեղծագործողների արձակ ու չափածո գործեր, նաև գրախոսություններ, գրական քննարկումներ ու բանավեճեր: Դեռևս 2007-ին տպագրված իր առաջին համարում Սնապյանը նշում է, որ արձակագիրների, հրապարակախոսների, քրոնիկագիրների, նամակագիրների և այլոց շարքին հատկապես վերջին երկու տասնամյակում ի հայտ են եկել նաև սեռագիրները: Սրանք իրենց վրա են բեռնել հասարակության ուշադրությունը, տարբեր սերնդի մտավորականներ՝ Լևոն Հախվերդյան, Արմեն Մարտիրոսյան, Լիլիթ Արզումանյան, Հուսիկ Արա և այլն, անդրադարձել են այսօրինակ գրական արտադրանքին, դրա բերած բացասական հետևանքներին և դրա դեմն առնելու անհրաժեշտությանը:

«Գրական թերթին» տված իր մի հարցազրույցում գրող Արմեն Մարտիրոսյանը մասնավորապես նշում էր, որ «Վերջին տարիներին դժբախտաբար մեր գրականություն են ներխուժել երոտիկ տեսարաններով, կենցաղային ժարգոնիզմով, հայհոյական կոպիտ արտահայտություններով լեփ-լեցուն գրվածքներ, որոնց հեղինակները մեծ մասամբ երիտասարդներ են և առաջին թոթովանքներն են տպագրում մամուլում և առանձին գրքերով... Ես ուզում եմ մեր օրերի բոլոր ժարգոնագիրներին, հայհոյագիրներին, սեռական հարաբերությունների չափազանց բաց ու վուլգար նկարագիրներին հիշեցնել Գյոթեի հանրահայտ ասույթը, թե՝ «Երիտասարդի կտուցին դեղին համ չի տա երբեք ճշմարիտը հին»...: Ոչինչ չեն բերում իրենց հետ և համառորեն ցուցադրում են հոգու ամլություն և ամայություն: Չէի ցանկանա, որ մեր գրականությունը հետագայում ևս այս ճանապարհով ընթանար՝ նորօրյա դեղնակտուցների որդեգրած ճանապարհով»⁸:

Նույն հարցին անդրադառնալով՝ Հուսիկ Արան նկատում էր. «Շատերը մարդու ներքին և արտաքին աշխարհների ազատություններն ընկալեցին իբրև սեռական ազատություն և այդպես էլ անդրադարձին գրականության մեջ՝ հաճախ այլասերումներով ու շեղումներով, փողոցային հայհոյանքներով ու արտաքնոցային պատկերներով, ինչը արևմուտքը վաղուց մարսել էր: Մենք կայարանում քնած ուղևորի պես սկսեցինք վազել վաղուց հեռացած գնացքի ետևից...»⁹:

Այս առումով դրությունը միխիթարական չէ նաև սփյուռքյան հատվածում և ամենին քաջածանոթ խմբագիրը խոր ցավով ահագանգում է. «Մենք ստուգապես չենք գիտեր ո՞ր գործածուած է եւ առաջին անգամ ո՞վ գործածած է «Բառերուն ամօթը», բայց լաւ կը յիշենք, որ թուրքերուն առիթով ու թրքական բարքերուն առնչութեամբ կիրարկուած բառեր են անոնք: Եւ, իրապէս, թուրքերն են, որ երբեք չեն ամչցած բառերուն ամօթէն, փողոցային, ընտանեկան յարկերուն թէ խորհրդարանի սրահներուն մէջ առատօրէն շաղ տալով նոյն անամօթութիւնները: Անամօթութեան այդ մթերքէն որոշ քանակութեամբ մուտք գործած է նաեւ մեր առօրեային մէջ, բայց երբեք այնքան առատութեամբ չէր փռուած անիկա անմեղ թուղթին վրայ, որքան երեւցաւ վերջին տասնամեակներուն, Հայաստանէն մինչեւ Լոս Անճելըս ու Պէյրութէն մինչեւ Գանատա»¹⁰:

«Ազդակ գրականի» 16 մեծադիր էջերից բաղկացած համարներում տեղ են գտնում նաև հայրենի և սփյուռքի դասական և ժամանակակից բանաստեղծների ու գրողների ստեղծագործություններ, քննադատական հոդվածներ, նոր հրատարակությունների ազդեր, գրական միջոցառումների կազմակերպման ժամանակացույցեր, համառոտ հարցազրույցներ, գրականության և արվեստի լուրեր և այլն:

Պարբերաթերթը բացառիկ ստվար համարներ է նվիրում գրականության վաստակաշատ մշակների կամ առանձին գրական երկերի հոբելյաններին, ինչպես Միսաք Մեծարենցի ծննդյան 125-ամյակին, որը Հայաստանում, ցավոք, գրեթե մոռացության տրվեց, Լեո Կամսարի ծննդյան 125-ամյակին, Զապել Եսայանի «Կեղծ հանճարներ» վեպի հրատարակության 100-ամյակին և այլն:

Ու տակավին բազում-բազմաթիվ կենսական այլ հարցերի և հայագիտությանն ու առհասարակ հայությանը նետված մարտահրավերների է անդրադառնում գրական «Ազդակը»՝ միշտ պատրաստակամ պրպտելու, գտնելու, հուշելու, առաջարկելու հնարավոր լուծումներ՝ միշտ ժողովրդի կողքին ու ժողովրդի համար: Բոլորի մասին խոսել մեկ

հողվածի շրջանակում ցավոք չկարողացանք: Ասվածը բավական է ապացուցելու պարբերաթերթի յոթամյա գործունեության հայրենաշունչ ու հայրենանվեր էությունը, փափագը հայության երկու հատվածներին ամուր կառչած տեսնելու իր արմատներից՝ մերժելով խորթն ու օտարածինը, զատելով ճշմարիտը կեղծ արժեքներից:

2015 թ. հուլիսի 14-ին լրանում է մեկ տարին, ինչ Պողոս Մնայյանը մեզ հետ չէ: Սգալով ու աղոթելով մեծ մտավորականի հոգու խաղաղության համար՝ լիահույս ենք, որ նրա կրթած սերունդները կշարունակեն մեծ ուսուցչի գործը՝ միշտ լինելով առաջապահ հայության առջև ծառացող բոլոր դժվարությունների հաղթահարման գործում:

Կարինե Առաքելյան – «Ազդակ գրականը» արդի մարտահրավերների խաչմերուկում: - Հողվածում քննության է առնվում «Ազդակ» գրական - «Ազդակ» արուեստի» պարբերաթերթի գործունեությունը 2007-2014 թթ.: Թերթը քննում և հնարավոր լուծումներ է առաջարկում հայության երկու հատվածների՝ Հայաստանի և սփյուռքի առջև ծառացած տարբեր մարտահրավերների՝ հատկապես լեզվի ու գրականության ասպարեզում. իսկ անսխալ ու գեղեցիկ լեզուն միշտ պարտադիր նախապայման է տպագրության համար:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Ազդակ» գրական- «Ազդակ» արուեստի», Պէյրութ, 2007, թիւ 1, էջ 1:
2. Ա. Չոպանեան, «Արդի հայերէնը», «Անահիտ», Ե տարի, թիւ 1, յունուար, Փարիզ, 1903, էջ 2:
3. Ս. Գիւլբուղադեան, «Մեզ անհրաժեշտ է միասնական ուղղագրութիւն», «Ազդակ» գրական- «Ազդակ» արուեստի», Պէյրութ, 2009, թիւ 9, էջ 3:
4. «Ազդակ» գրական- «Ազդակ» արուեստի», Պէյրութ, 2012, թիւ 4, էջ 1:
5. Ն. տ.:
6. Սիլվա Կապուտիկյան, Խճանկար հոգու և քարտեզի գույներից, Երևան, 1976, էջ 16:
7. Աղանի Սահակեան, Ազգային սնոբի՞ զմ..., «Ազդակ» գրական- «Ազդակ» արուեստի», Պէյրութ, 2010, թիւ 9, էջ 3:
8. «Գրական թերթ», Երևան, 2002, № 22, էջ 8:
9. «Նարցիս», Երևան, 2006, № 2, էջ 61-62:
10. «Ազդակ» գրական- «Ազդակ» արուեստի», Պէյրութ, 2007, թիւ 1:

Карине Аракелян – “Аздак гракан” на перекрестке современных вызовов. – В статье исследуется деятельность периодического издания “Аздак гракан– аздак арвести” в течении 2007-2014 гг. Газета обсуждает и предлагает возможные решения разным вызовам восставшим перед двумя частями армян (Армения и диаспора), особенно в сфере языка и литературы; а безошибочный и красивый язык всегда является необходимым условием для печати.

Karine Arakelyan – “Azdak grakan” in the cross-roads of the modern challenges. –The article deals with the activity of the periodical “Azdak grakan – azdak arvesty” during 2007-2014. The newspaper discusses and offers possible decisions for various challenges rising against two parts of armenians (Armenia and diaspora), especially in the spheres of language and literature. Beautiful and faultless language is always a necessary condition for press.

**ԵՐԿՆԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ
ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XX ԴԱՐԱՄԿԶԲԻ
ԱՐԵՎՍՏԱՀԱՅ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԵԶ¹**

Առաքելյան Կարինե

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
ավագ գիտաշխատող, Բ.Գ.Թ.

Առանցքային բառեր: Արև, արեգակ, արփի, լուսին, մարդ, քնարերգություն, բնություն:

Ամփոփում: XX դարասկզբի արևմտահայ քնարերգության մեջ երկնային մարմինների, լուսատուների, երևույթների փոխաբերական կիրառությունները չափազանց բազմազան են ու բազմաբնույթ:

Ստեղծագործողները գովերգել են արարչությունը, զմայլվել լուսատուների գեղեցկությամբ, մարդուն ընկալել իբրև բնության մի մասնիկը և անքակտելի կապի մեջ մյուս բոլոր տարրերի հետ:

Նշված միավորները հաճախ ծառայել են իբրև միջոց բացահայտելու մարդու ներաշխարհը, նրա անցած ճանապարհը, գալիքի հույսերն ու սպասումները, բազում անգամ դարձել բանաստեղծական պատկերի միջուկ և ատաղձ, խոսքն օժտել ամենատարբեր նրբերանգներով, գեղեցկությամբ ու ինքնատիպությամբ:

Երկնային մարմինները, լուսատուներն ու երևույթները վաղնջական ժամանակներից եղել են բանաստեղծների ներշնչման անսպառ աղբյուր: Ստեղծագործողները գովերգել են արարչությունը, զմայլվել լուսատուների գեղեցկությամբ, մարդուն ընկալել իբրև բնության մի մասնիկը և անքակտելի կապի մեջ մյուս բոլոր տարրերի հետ: Երկնային մարմիններն ու երևույթները հաճախ ծառայել են իբրև միջոց բացահայտելու մարդու ներաշխարհը, նրա անցած ճանապարհը, գալիքի հույսերն ու սպասումները: Այս իմաստով բացառություն չէ XX դարասկզբի արևմտահայ բանաստեղծությունը: Նշված թեման իր ուշագրավ մեկնաբանություններն է ստացել Սիամանթոյի, Վարուժանի, նամանավանդ բնութենապաշտ Միսաք Մեծարենցի քնարերգության մեջ, ինչին կփորձենք անդրադառնալ մեր զեկուցման մեջ:

¹ Հոդվածը տպագրվել է «Աստղագիտության կապն այլ գիտությունների, մշակույթի և հասարակության հետ» գիտական նստաշրջանի զեկուցումների ժողովածուում, Ե., 2015, էջ 232-237:

Ականավոր քնարերգու Միսաք Մեծարենցի բնութենապաշտ հեղինակ լինելու մասին շատ է խոսվել ու գրվել, և փաստ է, որ նրա բանաստեղծությունների մի ստվար մասը նվիրված է բնության նկարագրությանը: Այս նկարագրություններում իրենց ուրույն տեղն ունեն երկնային լուսատուները, մարմիններն ու երևույթները, և սա պատահական չէ, այլ ունի հստակ նպատակադրում: Քրոջ ամուսնուն՝ Վարդան քահանա Արալանյանին ուղղված նամակում Մեծարենցը, պատասխանելով վերջինիս հարցումին, բացահայտում է այս՝ իր ստեղծագործության մի շատ էական առանձնահատկությունը. ««Ծիածանի» առթիվ գրված նամակը անգամ մըն ալ կը կարդամ զգածվելով. «Ինչո՞ւ տիեզերքի Հոգիի հետ չես խոսակցիր» կը գրեք, բայց դիտելի է, որ իմ գրեթե բոլոր քերթվածներս այդ մեծ խոսակցության կը նկրտին, որքան որ ալ իմնիս չըլլա Աստուծո հետ դեմ հանդիման խոսակցություն, բայց ո՞չ ապաքեն Աստված ամեն տեղ է. Ձմրան Պարզ Գիշերվան մեջ հծծած աղոթքս ու Արևին ուղղած պաղատանքս իրեններուն. Հետևաբար և իրեն համար էր. ի՞նչ երջանկություն, տերևի մը խարշափին մեջեն տեսնել տիեզերական գործության գաղտնիքը ու այդ փոքրիկ մասնավորեն մեկնիլ դեպի ի անհունը» (Մեծարենց, 1981)¹:

Դիմենք փաստերին, որոնք առավել քան խոսուն են: Արև բառը Մեծարենցի քնարերգության մեջ ամենահաճախակի հանդիպող բառերից է՝ 62 կիրառություն ողջ չափածոյում (Առաքելյան, 2008)²: Բացի սրանից առկա են բառիս տարբեր հոմանիշներ՝ *արփի, արեգակ* և այլն՝ օգտագործված թե՛ ուղղակի, թե՛ փոխաբերական իմաստներով, ինչպես նաև սրանցով բաղադրված բազմաթիվ բառեր: Մեծարենցը բանաստեղծությունների վերնագրերում հաճախ է անդրադառնում երկնային մարմիններին, այդ թվում արևին, ինչպես «Աստղեր», «Առտվան արևին մեջ», «Լուսնակ քուրիկիս», «Կ'երթա արևն իր Ջատկին», անգամ ոտանավոր է ձևավորվել տվնջյան լուսատուին՝ այն անվանելով «Արևին», որտեղ արևը ներկայացված է որպես գթառատ քույր, որ պիտի գա ցավերը դարմանելու, բուժիչ ջերմություն պարգևելու մարդուն:

Այս ոտանավորի մասին շատ են խոսել դեռևս ժամանակի քննադատները: Մասնավորապես այն «առիթ էր տվել» «Մասիս» հանդեսի խմբագիր Ենովք Արմենին հերթական թունոտ հարձակումը գործելու հեղինակի վրա: Այս հարցին անդրադառնալով իր «Քննադատություն» հոդվածում՝ Մեծարենցը գրում է. «Տակավին պահեստի դիտողություն մըն ալ ունի Ենովք Արմեն, «Արևին» բանաստեղծության մեջ երկտողը կա.

Թող հոգվույս մեջեն անցնին կարգավ

Մանուկներն ընդարմացած.

Այս տողերն ալ հպելով իր խտրոցին, Ենովք Արմեն պիտի գոչեր. «Բ՞նչ, հոգիին մեջ մանուկ կրնա՞ ըլլալ»: Որովհետև Ենովք Արմենի միտքը ընդհանրապես գրականության ու մասնավորապես բանաստեղծության անընդունակ միտք մըն է: Ու չի կրնար իմաստի պզտիկ կրճատումները լայնել ու հասկնալ անմիջապես, թե, օրինակի համար, մանուկը ամփոփ փոխաբերությունն է հոս մանուկ զգացումներուն, տենչերուն, հույսերուն, բաղձանքներուն, որոնք երկար ատեն ընդարմացած՝ արևին կենսաբաշխ ճառագայթներուն պետք ունին վերսթափելու համար» (258-259):

Մեկ այլ՝ «Իրիկնային» բանաստեղծության մեջ երեկոյի պատկերն ստեղծելու համար Մեծարենցը դիմել է ն՝ փոխաբերության՝ շնչավորելով արևը, ն՝ համեմատության՝ արևի մայրամուտը նշանեցնելով տուն դարձող մշակի. «Ու թիկնադարձ՝ արևն ալ տուն կդառնա Լեռներեն վեր՝ ինչպես մշակն իջավ գյուղ...» (100):

Մեծարենցյան խոսքի բանաստեղծականացմանը շատ են նպաստել *արև* բառի հոմանիշների և սրանցով կազմված բաղադրությունների տեղին և ճաշակով գործածությունը. սրանք խոսքը հարստացրել են զանազան նրբերանգներով, օժտելով հմայքով ու ինքնատիպությամբ: Մի քանի օրինակ. «Բան մը սրտես կ'ըլլա բոցին պատարագ իր աչքերուն՝ ուր կը մոռնամ ես *արփին*...» (74), «Ու տեսլական ձևեր կ'առնե դեմքդ համբուն, Մազերդ՝ անթոշ նարկիս կ'ըլլան. Ճակատդ՝ ձյուն կատարներուն՝ Զոր վարդագնեց *արփին* իրիկվան...» (163), «Կը պարուրե՛ խաղաղությամբն իր թեթև, Հրաշալիո՛վն *արեգակ* ու կապույտի՝ Որ համասփյուռ ամեն բանի կը ժըպտի՛...» (181) և այլն:

Անդրադառնալով *արև*, *արփի* գոյականներով բաղադրություններին պիտի նկատենք, որ սրանք հիմնականում բանաստեղծական ոճի բառեր են, հաճախ էլ հեղինակային նորակազմություններ, թեև ոչ բոլոր գիտնականներն են ընդունում բանաստեղծական բառերի գոյությունը: Օրինակ «Գ.Օ.Վինոկուրը դեմ էր բանաստեղծական և գործնական լեզուների հակադրմանը. «Բանաստեղծական և գործնական բառերի միջև,- գրում է նա,- սկզբունքային տարբերություն դնող տեսությունը ոչ մի քննադատության չի դիմանում: Բանաստեղծական բառը նույնպես գործնական բառ է, միայն թե մատուցված, այսպես ասած, այլ քողի տակ»» (Զագորովսկայա, 1982)³:

Այս բառերի ներկայությունը խոսքին հաղորդում է լրացուցիչ հուզական երանգներ, ինչպես. «Փուշեր նետվեցան օրե օր վերքիս, Ու հոն հեծեծանք մը բերին հովեր, Բայց

սիրո հույս մը *կ'արևե* հոգիս» (47), «Թուրինջ գույներ ջրբանդկար ... ծիրանի հե՛վք *արևմարին...*» (51), «Տունկեր ռեհան ծաթրինի Կը ծըխեն խունկ մը վայրի, Որ կ'ամպանա ու կ'այրի Բուրվառին մեջ *արփենի...*» (83), «Խա՛չ հանեցեք ու ծա՛փ զարկեք, կարմրություններ հինայի Եվ *արփածին* թույրեր հագած՝ առտուն մեզի կը նայի...» (106), «Եվ իր հոգին բուրմունքի հեշտ երգն ուներ, *Արփիացող*, ջերմին ինչպես ծաղկանոց...» (108) և այլն:

Մեծարենցի ամենավաղ շրջանի բանաստեղծություններից մեկը վերնագրված է «Արևագալը». «Հորիզոնեն վար լույսի պար մը կ'իջնե, Ընդելուզված՝ ճաճանչներով ոսկեհյուս. Շուտ կ'անհետի մութն ու խավար կու տա խույս, Աշխարհ *արփվույն* հուր գալուստը կ'ողջունե...» (18):

Խավարը փոխվում է լույսի, բացվում է առավոտը՝ բարին ավետելով մարդկանց: Շնչավորված բնությունը փառաբանում է արարչական լույսը, որը գալիս է ծագելու աշխարհի վրա և մարդու հոգում: Առհասարակ մեր գրականության և իրականության մեջ արևագալը միշտ էլ գովերգվել է առանձնակի սիրով ու ջերմությամբ, վկան մեր եկեղեցու Արևագալի ժամերգությունը, որտեղ Քրիստոսի հարությունը նույնացվում է արևի ծագմանը, Արևագալի չքնաղ շարականները, Շնորհալու «Առավոտ լուսո»-ն և այլն, ինչպես. «Առաւօտ լուսոյ՝ Արեգա՛կն արդար, Առ իս լոյս ծագեա...»⁴:

Ուզում ենք հիշել մի երևույթի մասին, որը ոճագիտության մեջ դիպվածային հոմանշություն անունն է ստացել: «Բանաստեղծական տեքստերում կարելի է հանդիպել ավելի նուրբ և յուրօրինակ երևույթի՝ դիպվածային հոմանշության առաջացմանը: Իմաստների մերձեցումը, որը հանգեցնում է այսպիսի հոմանշության, տեղի է ունենում երկու ճանապարհով՝ իմաստային ենթատեքստի օգնությամբ և բառերի հնչյունական մոտիկության հայտնաբերման ճանապարհով»⁵ (Пелевина, 1980):

Մեծարենցի ստեղծագործություններում *արև* բառն ունի դիպվածային հոմանիշներ՝ ձևավորված վերը նշված առաջին եղանակով, ինչպես. «Անցա՛վ ծովեն *մեծ կույսն հրավարս*, Ու կապույտին եղավ ինք հարս...» (124) կամ «Կ'ընծայվի թանկ ու փառունակ Շողակն *առջի լուսավորին*» (124) և այլն:

«Լուսնակ քուրիկիս» բանաստեղծության մեջ Մեծարենցը գծում է լուսնի կերպարը: Ո՞վ է, ի վերջո, գիշերային լուսատուն, անհաս գեղեցկուհի՞, որի «հեռավոր պերճանքները» բավական են մեծագույն ուրախություն պարգևելու համար, թե՞ բաղձալի քույր,

որին կհասնես նույնիսկ եթե լինի «ամպի ետին ալ պահված»: Լուսնի թեման սերտ առնչվում է ցայգային թեմայի հետ, որին նույնպես հաճախ է անդրադարձել հեղինակը: «Բնքնադատության փորձ մը «Ծիածան»-ին առիթով» հոդվածում Մեծարենցը գրում է. «Գիշերին մեջ չէ՞ ապաքեն, որ երագները ավելի վառ ու արագ վերթնումներ կ'ունենան. Գիշերին մեջ ուր շրջանկարը այնքա՛ն հմայիչ կ'ըլլա, և սպասումը՝ ա՛յնքան քաղցրորեն տաժանագին» (242):

Գիշերվա հմայքը մեծ չափով կապված է լուսնի հետ, ինչպես. «Ու նայեցա հանդիպակաց ծաղկատանին ալ վրբան, Լելակներուն վրա կապույտ, Չքնաղ, պչրոտ ու անփույթ՝ Դաստակդ էիր երկարեր...» (128):

Լուսատուն սառն ու անկենդան չէ, այք շունչ ու հոգի առած, մասնակից մարդու հոգեկան աշխարհի ալեբախումներին: Լուսնի շնչավորման շնորհիվ (ի դեպ՝ ոչ միայն այստեղ, այլև մի քանի այլ բանաստեղծություններում) հեղինակն ստեղծել է կատարյալ պատկերներ: Եվ անշուշտ «Բնությունը... ծառայում է բանաստեղծին իբրև միջոց՝ դրսևորելու մարդկային կյանքի մի պատառիկ, բացելու բնավորության մի գիծ, հոգու մի ծալք»⁶ (Պապոյան, 1970):

Աստղերը հնագույն ժամանակներից ի վեր մարդկային մտածողության մեջ գուգակցվել են սիրո կամ սիրո սպասման հետ: Այս թեման հարատևորեն իր արտահայտությունն է գտել գրականության, հատկապես քնարերգության մեջ, այդ թվում՝ արևմտահայ քնարերգության: Երբեմն բանաստեղծները մեկ ոտանավորի մեջ խտացրել են երկնային զանազան մարմինների անվանումներ՝ ավելի պատկերավոր ներկայացնելով մարդկային՝ հիմնականում սիրահարի հոգեվիճակը, ինչպես Դանիել Վարուժանը «Հունձք կը ժողվեմ...» բանաստեղծության մեջ, որտեղ առկա են *լուսնակ, ասուպ, աստղ* բառերը. «Հասկերուն մեջ, վերենն, - *Ասուպը անցավ*- *Աստղեր* մյուռոն կը ծորեն: - Դեմքը լուսացավ»⁷ (Վարուժան, 1946):

Իր «Սեր» բանաստեղծության մեջ Սիամանթոն զարգացնում է XX դարասկզբի և այսօրվա համար էլ խիստ ցավալի ու արդիական մի թեմա պանդխտության խնդիրը: Երիտասարդների և առհասարակ տղամարդկանց արտագաղթի պատճառով հայրենիքը զրկվում է պաշտպանից, հողը՝ մշակից, ընտանիքը՝ նեցուկից, իսկ աղջիկները մատնվում են միայնության: Հայ օրիորդը արտասովալից հայացքը հառում է երկինք, փորձում է սփռվանք ու վշտակցություն, գուցե նաև հույսի արահետ գտնել աստղերի մեջ, ինչը նրան

այնքան էլ չի հաջողվում: *Աստղ* բառն այստեղ օգտագործված է վեց անգամ՝ ստեղծելով նաև կրկնության հրաշալի օրինակներ և ավելի ընդգծելով ասելիքի կարևորությունը. «Գիշերն ունիմ մորմոքումիս միայն վկա, Երբ *աստղերուն* անդորրությանը տակ նստած՝ Կըսկսիմ ես փնտրել նայվածքներով խելացնոր, Անթիվներու թիվին մեջեն Անոր *աստղն* ինձ անծանոթ, Որ՝ *աստղիս* հետ, ապահով եմ, սրտիս համար է ծներ...»⁸:

Մեծարենցը ևս անդրադարձել է *աստղերին*՝ դրանք դարձնելով բանաստեղծական պատկերի հիմքը: Այսպես է «Աստղերը» ոտանավորում, որտեղ մարող աստղերի և միայնակ սրտերի համեմատությունը հանգեցնում է հոգեբանական բարդ ընդհանրացումների. «*Աստղերը* լուռ կը հալին Մութին մեջ մինչև առտու. Նման ցավոտ սրտերու, Որ թողված են առանձին... (17):

Անշուշտ նշվածներով չեն սահմանափակվում XX դարասկզբի արևմտահայ քնարերգության մեջ երկնային մարմինների, լուսատուների, երևույթների փոխաբերական կիրառությունները: Դրանք խիստ բազմազան են ու բազմաբնույթ, որոնց ցավոք չկարողացանք անդրադառնալ մեկ հոդվածի շրջանակում: Անհերքելի փաստ է, սակայն, որ նշված անվանումները շատ հաճախ դառնում են բանաստեղծական պատկերի միջուկ և ատաղձ, խոսքն օժտում ամենատարբեր նրբերանգներով, գեղեցկությամբ ու ինքնատիպությամբ: Բազմաթիվ անգամներ հենց սրանց շնորհիվ է հանգավոր տողը դառնում բանաստեղծություն, քնարերգությունը՝ ճշմարիտ ու հուզառատ արվեստ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Միսաք Մեծարենց, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1981, էջ 288: Այսուհետև այս գրքից կատարվող մեջբերումների էջերը կնշվեն տեքստում՝ փակագծերի մեջ:
2. Տվյալներն ըստ մեր «Միսաք Մեծարենցի քնարերգության լեզուն և ոճը» աշխատության, Երևան, 2008:
3. Քաղվածքն ըստ Օ.Վ.Զագորովսկայայի, Об эстетической функции языка, в книге “Поэтическая стилистика”, Воронеж, 1982, стр. 9:
4. Հայ հին և միջնադարյան քնարերգություն, Երևան, 1986, էջ 148:

5. Н.А.Пелевина, Стилистический анализ художественного текста, Ленинград, 1980, стр. 49.
6. Արտ. Պապոյան, Պարույր Սևակի չափածոյի լեզվական արվեստը, Երևան, 1970, էջ 252:
7. Դանիել Վարուժան, Երկեր, Երևան, 1946, էջ 314:
8. Յեղիս սիրտը, Արևմտահայ բանաստեղծություն, Երևան, 1991, էջ 280:

Karine Arakelyan - The Metaphorical Applications of Heavenly Bodies and Phenomena in Western rmenian Poetry at the Beginning of the XX Century. - The metaphorical applications of heavenly bodies and phenomena in Western Armenian poetry at the beginning of the XX century are very diverse and of great variety. Art Workers eulogize the creation of God, admire the beauty of stars, perceive the man as a part of nature and in the close connection with all other parts. These units are often used for bringing to light one's inner life, his old gone paths, expectations and hopes, many times they become the heart and the basis of poetical image and create unique beauty.

Keywords: Sun, moon, star, person, poetry, nature

**ԵՐԿՆԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԼՈՒՍԱՏՈՒՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐՆ
ԻԲՐԵՎ ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆ
ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՀԻՄՔ ՄԻՍԱՔ ՄԵԾԱՐԵՆՑԻ
ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԵԶ¹**

Առաքելյան Կարինե

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
ավագ գիտաշխատող, Բ.Գ.Թ.

Մանթրյան Լիանա

Հայաստանի ազգային ազդարային համալսարանի
Ստեփանակերտի մասնաճյուղ
Բ.Գ.Թ., դոցենտ

Ամփոփագիր

Երկնային մարմինների, լուսատուների անվանումների փոխաբերական կիրառությունները արևմտահայ ականավոր քնարերգու Միսաք Մեծարենցի չափածոյում խիստ բազմազան են ու բազմաբնույթ: Լինելով բնութենապաշտ հեղինակ՝ Մեծարենցն իր բանաստեղծությունների մի ստվար մասը նվիրել է բնության նկարագրությանը, որտեղ իրենց ուրույն դերն ունեն երկնային մարմիններն ու երևույթները: Դրանք շատ անգամ օգնում են բացահայտելու մարդկային ներաշխարհը, նրա ալեբախումները, հույզերն ու զգացումները: Այս միավորները հաճախ հիմք են դառնում բառաբարդման, նոր, նաև բանաստեղծական բառերի կազմության՝ խոսքին հաղորդելով յուրօրինակ հմայք ու գեղեցկություն:

Հանգուցաբառեր. երկնային մարմիններ, լուսատուներ, արեգակ, լուսին, աստղ, ասուպ, մարդ, բնություն, քնարերգություն:

Երկնային մարմինները, լուսատուները, երևույթները գրականության մեջ միշտ ունեցել են իրենց արտացոլումը: Հայ գրականությունը բացառություն չէ, և իր գրավոր, նույնիսկ բանավոր ավանդման ամենավաղ շրջանից կարելի է հանդիպել նշված իրողությանը: Պատմահայր Խորենացին հիշատակում է բանավոր կերպով փոխանցված գողթան

¹ Հոդվածը տպագրվել է «Մշակութային աստղագիտությունը հայկական լեռնաշխարհում» երիտասարդական գիտաժողովի նյութերի ժողովածուում, Ե., 2016, էջ 54-60:

երգերը, որոնք պատմիչի վկայությամբ ինքը լսել է իր ականջով, երբ ոմանք երգում էին փանդիոներով (Խորենացի, 1913):

Սրանցից մեկն է Վահագնի ծնունդի մասին առասպելը, որտեղ արդեն ականատես ենք փոխաբերական պատկերի, ինչի հիմքում Վահագնի աչքերի և արևի նմանությունն է. «Նա հուր հեր ուներ, Բոց ուներ մօրուս, Եւ աշկունքն էին արեգակունք» (Խորենացի, 1913):

Այս միավորները եղել են նաև անսպառ աղբյուր բառակազմության համար, ինչը լեզվի հարստացման ամենակենսական աղբյուրներից մեկն է, եթե ոչ ամենակենսականը: Նույն Խորենացին, խոսելով մեր սրբազան լեռան՝ Արարատի մասին, գրում էր. «Այլ հարաւային արեգակնաճեմ լեռոն, սպիտակափառ ունելով գագաթն, ուղղորդ յերկրէ բուսեալ... եւ առ փոքր փոքր ի շէշտումն անկեալ, ծեր ոմն արդարեւ լեռոն ի մէջ երիտասարդացեալ լերանցն...» (Խորենացի, 1913):

Երկնային մարմինները, լուսատուները, ինչպես նաև սրանցով բաղադրված կազմությունները շարունակել են լայնորեն կիրառվել հայ գեղարվեստական գրականության մեջ՝ շատ հաճախ պայմանավորված իրենց փոխաբերական իմաստներով:

Արևագալը մեր իրականության մեջ միշտ գովերգվել է առանձնակի սիրով ու ջերմությամբ. այդ են փաստում մեր եկեղեցու Արևագալի ժամերգությունը, որտեղ Քրիստոսի հարությունը նույնացվում է արևի ծագմանը, Արևագալի հիասքանչ շարականները, Ներսես Շնորհալու «Առավոտ լուսո»-ն և այլն, ինչպես. «Առաւօտ լուսոյ՝ Արեգա՛կն արդար, Առ իս լոյս ծագեա...» (Հայ հին և միջնադարյան քնարերգություն, 1986):

Միջնադարին հատուկ այս երևույթը կենսական մնաց նաև հետագա դարերի գրականության համար: XX դարասկզբի արևմտահայ գրականությունը, մասնավորապես բանաստեղծությունը ներկայացնում էր նորի որոնումների ու բացահայտումների չափազանց եռուն մի շրջան: Այս շրջանի ակնառու ներկայացուցիչներից մեկն է Միսաք Մեծարենցը, որի թողած գեղարվեստական անգնահատելի ժառանգության մասին երկու կարծիք լինել չի կարող:

Լինելով բնութենապաշտ հեղինակ՝ Մեծարենցն իր բանաստեղծությունների մի սովոր մասը նվիրել է բնության նկարագրությանը: Այս նկարագրություններում իրենց ուրույն տեղն ունեն երկնային մարմինները, լուսատուներն ու երևույթները, ինչը պատահական չէ, այլ ունի հստակ նպատակադրում: Քրոջ ամուսնուն՝ Տեր Վարդան քահանա Արսլանյանին ուղղված նամակում Մեծարենցը, պատասխանելով վերջինիս հարցումին,

բացահայտում է այս՝ իր ստեղծագործության մի շատ կարևոր առանձնահատկությունը. ««Ծիածանի» առթիվ գրված նամակը անգամ մըն ալ կը կարդամ զգաժվելով. «Ինչո՞ւ տիեզերքի Հոգիի հետ չես խոսակցիր». կը գրեք, բայց դիտելի է, որ իմ գրեթե բոլոր քերթվածներս այդ մեծ խոսակցության կը նկրտին, որքան որ ալ իմնիս չըլլա Աստուծո հետ դեմ հանդիման խոսակցություն, բայց ո՞չ ապաքեն Աստված ամեն տեղ է. Ձմրան Պարզ Գիշերվան մեջ հծծած աղոթքս ու Արևին ուղղած պաղատանքս իրեններուն, հետևաբար և իրեն համար էր. ի՞նչ երջանկություն, տերևի մը խարշափին մեջեն տեսնել տիեզերական գործության գաղտնիքը ու այդ փոքրիկ մասնավորեն մեկնիլ դեպի ի անհունը» (Մեծարենց, 1981):

Դիմենք փաստերին, որոնք առավել քան խոսուն են: Մեծարենցի բանաստեղծությունների վերնագրերում արդեն հաճախ են հանդիպում երկնային մարմիններ, լուսատուներ, ինչպես «Աստղեր», «Առտվան արևին մեջ», «Լուսնակ քուրիկիս», «Կ'երթա արևն իր Զատիկին» և այլն: *Արև* բառը Մեծարենցի քնարերգության մեջ ամենահաճախակի հանդիպող բառերից է՝ 62 կիրառություն ողջ չափածոյում (Առաքելյան, 2008): Հեղինակն անգամ ոտանավոր է ձոնում տվնջյան լուսատուին՝ այն անվանելով «Արևին», որտեղ արևը ներկայացված է որպես զթառատ քույր, որ պիտի գա ցավերը դարմանելու, բուժիչ ջերմություն պարգևելու մարդուն, և տողերի արանքում միշտ կրկնում է պաղատանքը. «Շողա՛, շողա՛, բարի՛ արև, հիվա՛նդ եմ...» (70):

Մեկ այլ՝ «Իրիկնային» բանաստեղծության մեջ երեկոյի պատկերն ստեղծելու համար Մեծարենցը դիմել է ն՝ փոխաբերություն՝ շնչավորելով արևը, և՛ համեմատության՝ արևի մայրամուտը նմանեցնելով տուն վերադարձող մշակի. «Ու թիկնադարձ՝ արևն ալ տուն կդառնա Լեռներեն վեր՝ ինչպես մշակն իջավ գյուղ...» (100):

Մեծարենցյան խոսքի բանաստեղծականացմանը շատ են նպաստել *արև* բառի, նրա հոմանիշների, ինչպես նաև սրանցով կազմված բաղադրությունների տեղին և ճաշակով գործածությունը, որոնք խոսքը հարստացրել են զանազան նրբերանգներով, օժտել հմայքով ու ինքնատիպությամբ:

Արև բառի հոմանիշներից հեղինակի չափածոյում առկա են *արեգակ* և *արփի* գոյականները: Այս երեքը արդի հայերենում բացարձակ հոմանիշներ են, սակայն պետք է նշել, որ գրաբարում այդպես չի եղել: Համաձայն Հրաչյա Աճառյանի Հայերեն արմատական բառարանի «Ընտիր հայերենի մեջ *արեգակն* և *արև* նշանակութեան կողմից զանազանում

են նրանով, որ *արեգակն* աստղ է, իսկ *արև* նրա լոյսը» (Աճառյան, 1971): Իսկ *արփ* արմատի դիմաց կարդում ենք. ««Եթեր, օդից այնկողմ մինչև հրեղեն երկինքն եղած միջոցը» (ըստ հին աստղաբաշխության) » (Աճառյան, 1971):

Այս և այլ դեպքերում հոմանիշների կիրառությունը ոչ միայն օգնում է խուսափել կրկնություններից, այլև խոսքին հաղորդում է ճկունություն, լրացուցիչ հուզականություն: Մի քանի օրինակ. «Բան մը սրտես կ'ըլլա բոցին պատարագ իր աչքերուն՝ ուր կը մոռնամ ես *արփին...*» (74), «Ու տեսլական ձևեր կ'առնէ դեմքդ համբուն, Մազերդ՝ անթոշ նարկիս կ'ըլլան. Ճակատըդ՝ ձյուն կատարներուն՝ Ձոր վարդագնեց *արփն* իրիկվան...» (163), «Կը պարուրէ՝ խաղաղությամբն իր թերթ, Հրաշալիո՛վն *արեգակ* ու կապույտի՝ Որ համասփյուռ ամեն բանի կը ժպտի՛...» (181) և այլն:

Իր չափածոյում Մեծարենցն օգտագործել է *արև* և *արփ* արմատներով կազմված բազմաթիվ բառեր, որոնցից են. *Արփածին* – նույնն է՝ արևածին, *արփավետ* – արևի շողերով լուսավորված, *արփավոր* – արևոտ, լուսավոր, *արփենի* – արփիին հատուկ, արևային, *արփիացող* – արևի լույսով ցողված, արևաշող, *արևագալ* – արևի ծագելու ժամանակը, արևածագ, *արևաշող* – 1. արևի շողերով ողողված, արևացու, 2. Արևի շողք՝ փայլ ունեցող, արևի պես շողշողուն, *արևել* – 1. Լուսավորել, պայծառացնել, ջերմացնել, 2. Փխբ. Արևոտ, լուսավոր, երջանիկ դարձնել, 3. Արև լինել, արև անել, 4. (բնութ.) արևը ծագել, լուսանալ, 4. Փխբ. Պայծառանալ, լուսավորվել, ուրախության արտահայտություն ստանալ (դեմքը, հայացքը նն) (Աղայան, 1976) և այլն:

Սրանք հիմնականում բանաստեղծական ոճի բառեր են, հաճախ էլ հեղինակային նորակազմություններ, թեև ոչ բոլոր գիտնականներն են ընդունում բանաստեղծական բառերի գոյությունը: Օրինակ Գ.Օ. Վինոկուրը դեմ էր բանաստեղծական և գործնական լեզուների հակադրմանը. «Բանաստեղծական և գործնական բառերի միջև, - գրում էր նա, - սկզբունքային տարբերություն դնող տեսությունը որևէ քննադատության չի դիմանում: Բանաստեղծական բառը նույնպես գործնական բառ է, միայն թե մատուցված, այսպես ասած, այլ քողի տակ»» (Զագորովսկայա, 1982):

Սակայն որ այս բառերի ներկայությունը խոսքին առավել բանաստեղծականություն է հաղորդում, կասկածից վեր է: Այսպես. «Փուշեր նետվեցան օրե օր վերքիս, Ու հոն հեծեճանք մը բերին հովեր, Բայց սիրո հույս մը *կ'արևե* հոգիս» (47), «Թուրինջ գույներ ջրրանըկար... ծիրանի հե՛վք *արևմարին...*» (51), «Տունկեր ուռնան ծաթրինի Կը ծըխեն

խունկ մը վայրի, Որ կ'ամպանա ու կ'այրի Բուրվառին մեջ *արփենի...*» (83), «Խա՛չ հանեցեք ու ծա՛փ գարկեք, կարմրություններ հինայի Եվ *արփածին* թույրեր հագած՝ առտուն մեզի կը նայի...» (106), «Եվ իր հոգին բուրմունքի հեշտ երգն ուներ, *Արփիացող*, ջերմին, ինչպես ծաղկանոց...» (108) և այլն:

Մեծարենցի ստեղծագործություններում *արև* բառն ունի նաև դիպվածային հոմանիշներ՝ *հրավարս մեծ կույս, առջի լուսավոր*, ինչպես. «Անցավ ծովեն *մեծ կույսն հրավարս*, Ու կապույտին եղավ ինք հարս...» (124) կամ «Կ'ընծայվի թանկ ու փառունակ Շողակն *առջի լուսավորին*» (124):

«Լուսնակ քուրիկիս» բանաստեղծության մեջ հեղինակը գծում է լուսնի կերպարը: Ո՞վ է, ի վերջո, գիշերային լուսատուն, անհաս գեղեցկուհի՞, որի «հեռավոր պերճանքները» բավական են մեծագույն ուրախություն պարգևելու համար, թե՞ բաղձալի քույր, որին կհասնես նույնիսկ եթե լինի «ամպի ետին ալ պահված»: Լուսնի թեման սերտ առնչվում է ցայգային թեմայի հետ, որին ևս հաճախ է անդրադարձել բանաստեղծը: «Ինքնադատության փորձ մը «Ծիածան»-ին առիթով» հոդվածում Մեծարենցը գրում է. «Գիշերին մեջ չե՞ ապաքեն, որ երազները ավելի վառ ու արագ վերթնումներ կ'ունենան. Գիշերին մեջ ուր շրջանկարը այնքա՛ն հմայիչ կ'ըլլա, և սպասումը՝ ա՛յնքան քաղցրորեն տաժանագին» (248):

Գիշերվա հմայքը մեծ չափով կապված է լուսնի հետ. «Ու նայեցա հանդիպակաց ծաղկաստանին ալ վրբան, Լեւակներուն վրա կապույտ, Չքնաղ, պչրոտ ու անփույթ՝ Դաստակդ էիր երկարեր...» (128):

Լուսատուն սառն ու անկենդան չէ, այլ շունչ ու հոգի առած, մարդուն մոտ ու մտերիմ, մասնակից նրա հոգեկան աշխարհի ալեբախումներին: Լուսնի շնչավորման շնորհիվ (ի դեպ՝ ոչ միայն այս, այլև մի քանի այլ բանաստեղծություններում) հեղինակն ստեղծել է կատարյալ պատկերներ:

Աստղերը հնագույն ժամանակներից ի վեր մարդկային մտածողության մեջ գու՜գակցվել են սիրո կամ սպասման հետ: Այս թեման հարատևորեն իր արտահայտությունն է գտել գրականության, հատկապես քնարերգության մեջ, այդ թվում՝ արևմտահայ քնարերգության: Ուշագրավ բազմաթիվ օրինակների կարելի է հանդիպել Միամանթոյի, Դանիել Վարուժանի և այլոց ստեղծագործություններում:

Մեծարենցը ևս անդրադարձել է աստղերին՝ դրանք դարձնելով բանաստեղծական պատկերի հիմքը: «Աստղերը» ոտանավորում մարող աստղերի և միայնակ սրտերի համեմատությունը հանգեցնում է հոգեբանական բարդ ընդհանրացումների. «Աստղերը լուռ կը հալին Մութին մեջ մինչև առտու. Նման ցավոտ սրտերու, Որ թողված են առանձին...» (17):

Բացի նշվածներից բանաստեղծի չափածոյում առկա են նաև երկնային այլ մարմիններ ու երևույթներ: Դրանցից մեկն է ասուպը, որ օգտագործված է երկու անգամ՝ երկուսում էլ իբրև համեմատության եզր՝ դարձյալ կապված իր փոխաբերական իմաստների հետ, ինչպես «Ջրտուր» բանաստեղծության մեջ՝ գյուղական մի պարզ թվացող իրադարձության՝ ջրտուրի գեղարվեստական նկարագրության ժամանակ. «Ու կ'երկարի լուսարծաթ ժապավենն այդ բարբառին, Ինչպես փախչող ասուպի կոթունները կաթնավետ...» (94):

Անշուշտ նշվածներով չեն սահմանափակվում XX դարասկզբի արևմտահայ ակադմիկոս բանաստեղծ Միսաք Մեծարենցի քնարերգության մեջ երկնային մարմինների, լուսատուների և դրանցով կազմված բառերի փոխաբերական կիրառությունները: Դրանք խիստ բազմազան են ու բազմաբնույթ: Փաստ է սակայն, որ նշված միավորները շատ հաճախ դառնում են բանաստեղծական պատկերի միջուկ և աստղծ, խոսքն օժտում ամենատարբեր նրբերանգներով, գեղեցկությամբ և ինքնատիպությամբ:

Իսկ սրա պատճառներից մեկն էլ թերևս Մեծարենցի լուսաբաղձությունն էր ու մեծ հակումը դեպի վերերկրային լուսեղեն ոլորտ, ինչը լավագույնս նկատել և գեղարվեստորեն թղթին է հանձնել մեր մեկ այլ հանճարեղ բանաստեղծը՝ Եղիշե Չարենցը՝ գրելով.

Արյուն է եղել աշխարհում: Եղել է եղեռն ու կոիվ:

Լեռնացել են ուժեր վիթխարի՝ ամեհի ելած իրար դեմ:

Աշխարհից հեռու մի գյուղում, եղեգնյա մի սրինգ կտրած,

Արև է երգել ու գարուն, այս հիվանդ, հանճարեղ պատանին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատարակչություն, Ե., 1976:

2. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հատոր I, Երևանի համալսարանի հրատարակչություն, Ե., 1971:

3. Առաքելյան Կ., Միսաք Մեծարենցի քնարերգության լեզուն և ոճը, «Նաիրի» հրատարակչություն, Ե., 2008, էջ 28:

4. Հայ հին և միջնադարյան քնարերգություն, «Լույս» հրատարակչություն, Ե., 1986, էջ 148:

5. Մեծարենց Մ., Երկերի լիակատար ժողովածու, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Ե., 1981, էջ 288: (Այս գրքից կատարվող մեջբերումների էջերը նշվում են խոսքաշարում՝ փակագծերի մեջ):

6. Սրբոյ Հորն մերոյ Մովսէսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիզ, Տպ. Աղանյանի, 1913, էջ 42, 87:

7. Загаровская О.В., Об эстетической функции языка, в книге “Поэтическая стилистика”, Издательство Воронежского университета, Воронеж, 1982, стр. 9.

Abstract

Karine Arakelyan¹, Liana Santryan². - **The Names of Heavenly Bodies and Luminaries as a Basis for Word-building and Metaphorical Application in the Poetry of Misak Metsarents.** - The metaphorical applications of heavenly bodies and luminaries in the poetry of the famous Western Armenian poet Missak Metsarents are very diverse and of great variety. The poet admired the beauty of nature and the greater part of his poems are devoted to representation of nature, where heavenly bodies and phenomena are of special interest. They often help to reveal one's inner life, emotions, expectations, feelings. Many times these units are bases for word-building; new, also poetical words building, and they create unique beauty.

Keywords: Heavenly bodies, Luminaries, Sun, Moon, star, meteorite, person, nature, poetry.

**ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՄԱՆ ԲԱՌԱԿԱՆ
ՄԻՋՈՑՆԵՐԸ ՏԵՔՍՏՈՒՄ¹**

Բարսեղյան Ամալյա

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
ավագ գիտաշխատող, Բ.գ.թ.

Տեքստի լեզվաբանությունը ձևավորվել է XX դ. 60-ական թվականներին: Այն պայմանավորված է լեզվաբանության զարգացման ներքին գործոններով: Սկզբնական շրջանում ուսումնասիրվում էին տեքստը, նրա կառուցվածքը, լեզվական միջոցները, կապակցված տեքստ ստեղծելու օրինաչափությունները: Տեքստաբանության մեջ կան տեքստի ըմբռնման տարբեր կարծիքներ: Միասնական կարծիք չկա նաև տեքստի նվազագույն միավոր ընդունելու և անվանելու հարցում:

Այսպես՝ Մ. Տիցման տեքստը սահմանում է որպես նախադասությունների ցանկացած հաջորդականություն (S_1 ---- S_n), արտահայտված հաղորդակցային իրադրությունում, և նախադասությունից նրա տարբերությունը տեսնում է հետևյալ կերպ.

- 1) տեքստերը կարող են բնութագրվել որպես գեղարվեստական,
 - 2) մի շարք տրամաբանական գործողություններ կարող են կատարվել միայն նախադասություններով (негация),
 - 3) միայն տեքստերն ունեն պատմողական (нарративную) կառուցվածք,
 - 4) շատ իմաստաբանական միկրոկառուցվածքներ հնարավոր են միայն տեքստում:
- Տեքստում լեզվաբանությունն ուսումնասիրում է ընդհանուր իմաստի ստեղծման և վերականգնման միջոցները, որոնք գտնվում են առանձին նախադասությունների շրջանակում²:

Գ. Ջահուկյանը սկզբնապես լեզվի մակարդակները նույնպես սահմանափակում էր նախադասությամբ, գտնելով, որ տեքստին բառիս բուն իմաստով հատուկ չեն այնպիսի կարգեր, որոնք հանդես չեն գալիս նախադասության մակարդակում: Սակայն հայերենի կառուցվածքի բոլոր մակարդակների վերլուծությունը բերեց այն եզրակացության, որ լեզվական կարգերը (կատեգորիաները) տարբեր չափերով հանդես են գալիս բոլոր

¹ Հոդվածը տպագրվել է «Հայերենագիտական միջազգային 10-րդ գիտաժողովի նյութեր» ժողովածուում, Ե., 2015, էջ 32-41:

² 1 Հստ Գ. Ջահուկյանի՝ Прологомены к субстанциональной лингвистике գրքի, М., 1999, էջ 288:

մակարդակներում, և այդ առումով տեքստի մեջ այդ կարգերի արտահայտությունը ավելի լիակատար բնույթ է կրում³:

Գ. Ջահուկյանը (և ոչ միայն) տեքստը հասկանում է որպես բարձր մակարդակի, երկպլանային միավոր՝ անկախ նրանից արտահայտության պլանը ինչ միջոցներով է իրականացվում՝ գրավոր, բանավոր, կինեմատիկական և ինչպիսի գործառական ոլորտի է այն վերաբերում⁴:

Տեքստաբանության ժամանակակից ուղղություններում տրվում է տեքստի հետևյալ սահմանումը.

«Տեքստը համակարգված կառուցվածքային բարձրագույն ձև է, որ բովանդակում է հաղորդում աշխարհի մի հատվածի վերաբերյալ, կազմված է հեղինակի մտահղացումով, ունի կառուցվածքային (կոմպոզիցիոն), իմաստաբանական և գործաբանական (պրագմատիկ) միասնություն, վերամշակված է համապատասխան լեզվի գործառական և ոճական նորմերի»⁵ :

Ինչպես նշեցինք, միակարծություն չկա նաև տեքստի նվազագույն միավորի առանձնացման և անվանման մեջ: Ոմանք անվանում են պարբերություն (ուրիշները, պարբերություն ասելով, ի նկատի ունեն միայն գրավոր արտահայտությունը), մյուսները՝ գերնախադասական (գերֆրագային՝ ՇՓԵ) միասնություն, շարահյուսական բարդ ամբողջություն, միկրոտեքստ, դիսկուրս և այլն:

Գ. Ջահուկյանը տեքստի նվազագույն միավորը համարում է պարբերությունը (հինույթ): «Հինույթի կամ հինույթների մեկ միասնական ամբողջությունը, որը հանդես է գալիս որպես ավարտուն տեքստ (հենք)՝ լիահինույթ»⁶:

«Գերնախադասական (գերֆրագային՝ ՇՓԵ) միասնություն, շարահյուսական բարդ ամբողջություն, միկրոտեքստ, պարբերություն), խոսքի հատված՝ երկու և ավելի ինքնուրույն նախադասությունների հաջորդականությամբ, միացած թեմայի ընդհանրությամբ՝ իմաստային դաշտում: Այն կարող է համընկնել պարբերության հետ, կարող է՝ ոչ»⁷:

³ Գ. Ջահուկյան, Շարահյուսական ուսումնասիրություններ, Ե., 2003, էջ 63:

⁴ Г.Б.Джаукян, Пролегомены к субстанциональной лингвистике, М., 1999, էջ 287:

⁵ В.А.Маслова, Современные направления в лингвистике, М., 2008, էջ 27:

⁶ Գ.Ջահուկյան, Շարահյուսական ուսումնասիրություններ, Ե., 2003, էջ 63:

⁷ Տե՛ս <http://Нарemark-narod.ru/les|435a.html>, Лингвистический энциклопедический словарь, Сверхфразовое единство:

Այժմ արդյունավետ կերպով քննարկվում են կապակցված տեքստի զանազան տեսակներն ու միջոցները (տրամաբանական, զուգորդական և այլն), որոնցում «կապակցման գործառույթ ունեն նաև ավանդական քերականական կապի միջոցները, որոնք առանձին նախադասությունների կապի միջոցներ են: Սրանք կապում են գերնախադասական (գերֆրագային) միասնությունների ավելի մեծ հատվածներ, պարբերություններ և այս պլանով ձեռք են բերում ներտեքստային կապի (կոգեզիայի) կարգավիճակ»⁸:

Նախադասությունների կապակցման բառական միջոցներ են շաղկապները, շաղկապական բառերն ու բառակապակցությունները, որոնք նաև տեքստի բաղկացուցիչների կապակցման միջոցներ են: Այս դերով հանդես են գալիս նաև նյութական իմաստ ունեցող խոսքի մասերից դերանունները, շատ գոյականներ, ածականներ, մակբայներ և այլն, տարբեր նախադասություններում մեկ ընդհանուր անդամը, որոնք, բացի նախադասության մեջ կատարած իրենց շարահյուսական դերից, ունեն կապակցական արժեք՝ հարբերության մեջ մտնելով տեքստ կազմող նախադասությունների հետ (վերջիններիս քննությունը մեր նպատակից դուրս է):

Դրանք են՝

ա) համադասական շաղկապները (և, ու, բայց, սակայն, իսկ և այլն),

բ) ստորադասական շաղկապները (որ, որովհետև, որպեսզի և այլն),

գ) շաղկապական բառերը և կապակցությունները (ինչ վերաբերում է, այսպիսով, այսպես ուրեմն, օրինակ և այլն):

Այս տեսանկյունով դիտարկենք Մերուժան Սիմոնյանի «Հուր-հուր թիթեռի պատմությունը» գրքից հետևյալ հատվածը.

«Անձրևաջուրը սրբել տարել էր բլրակի հողը (1)...

Հուր-հուրի աշխարհի գալուց դեռ շատ առաջ մասրաքոլի մայր արմատը խոր թաղվել, ճյուղավորվել էր բլրի սրտում (2): Ժամանակ անց նրա արմատները հասունացել, ամենքն արդեն ինքն իր հերթին ճյուղավորվել, սնում էին մասրաքոլը (3):

Որ մասրաքոլը գարնան շեմին շղարշաթև, թափանցիկ, ծաղկազօծ է դառնում, մայր արմատի և նրա որդոց շնորհիվ է (4): Սա աշխարհի վրա այնքան հայտնի իրողություն է, որ այս մասին, թվում է, խոսելն անգամ ավելորդ է (5): *Բայց արի ու տես*, որ հայտնի իրողություններից զատ, աշխարհում կա նաև նախախնամություն (6)...

⁸ **И.Р.Гальперин**, Текст как объект лингвистического исследования, М., 1981, էջ 78:

Եվ նրա կամոք՝ անձրևաջուրը սրբել տարել էր բլրակի հողը, եղել էր նրա կամոք՝ և որդի արմատը մատնվել էր ծարավի, տապի, կարծրատո միջատների աղմուկ աղաղակին ու հալածանքին (7): *Նրա կամոք* արդեն որքան ժամանակ էր որդի արմատը լուռ համբերությամբ տանում էր հալածական գոյությունը (8):

Եվ օրը հասավ՝ որդի արմատը տեսավ, որ անձնատուր է լինում ու ձայնեց անգոր (9):

Երրորդ պարբերության 4-րդ նախադասությունը նախորդի հետ կապված է *որ* շաղկապով՝ ստորադասական հարաբերությամբ: 5-րդ նախադասությունը սա ցուցական դերանվամբ՝ փոխարինման բառով է կապակցվում նախորդ նախադասության հետ: 6-րդ նախադասությունը *բայց արի ու տես* ներհակական շարահյուսական կառույցով է կապակցվում նախորդի հետ՝ արտահայտելով հավելական հարաբերություն: Չորրորդ պարբերությունը *և* միավորական շաղկապով և *նրա կամոք* փոխարինման բառով է կապվում երրորդ պարբերության 6-րդ նախադասության հետ, իսկ *անձրևաջուրը սրբել տարել էր բլրակի հողը* կրկնության եղանակով կապակցվել է առաջին պարբերություն-նախադասության հետ: 8-րդ նախադասությունը *նրա կամոք* բառակապակցության կրկնությամբ է կապված 7-րդ նախադասության հետ: Հինգերորդ պարբերությունը *և* միավորական շաղկապով է կապվում չորրորդ պարբերության հետ՝ արտահայտելով համադասական հարաբերություն: Ինչպես տեսնում ենք, պարբերությունը կազմող նախադասությունների կապն ավելի սերտ է, քան պարբերությունները կապակցող կապի միջոցները:

Բերենք ևս մի օրինակ Մերուժան Սիմոնյանի ստեղծագործություններից: «Սև աքլորականչի համաստեղությունը» ժողովածուի մանրապատումներից մեկում գրված է. «*Երբ* եկա այստեղ, ինչ-որ բան առջևում էր, անհայտությամբ լի: Հիմա անցյալ է, հիշողություն, իսկ առջևում կրկին նույն անհայտությունն է: Դեռ որքան մարդ կգա ծովափնյա այս փոքրիկ գյուղը:

Իսկ ծովն օր ու գիշեր շարունակ ջնջելու է կարմիր ավազների հուշերը»:

Պարբերությունը սկսվում է ստորադաս նախադասությամբ, որը ժամանակային հարաբերությամբ կապված է համադաս բաղադրիչներով նախադասությունների հետ: Հակադրությունն ընդգծելու նպատակով պարբերությամբ առանձնացված է *իսկ ծովն օր ու գիշեր շարունակ ջնջելու է կարմիր ավազների հուշերը* համադաս բաղադրիչով

նախադասությունը, որն սկսվում է **իսկ** ներհակական շաղկապով: Այս երկու զուգորդվող պատկերացումները (հիշողություն, անհայտություն) կապվում են հոգեբանական հարաբերությամբ, որին ներհակական հարաբերությամբ կապվում է **իսկ ծովը** համադաս բաղադրիչով նախադասությունը:

Մի հատված էլ բերենք Ս. Աբրահամյանի «Ժամանակակից գրական հայերեն» գրքից:

Շատ ինքնատիպ է թվականների կազմությունը (1): **Եթե** նկատի ունենանք, որ ամեն մի թիվ մի թվական է, ապա կստացվի, որ որքան թիվ է հնարավոր կազմել, այնքան էլ թվական կա (2): Իսկ հնարավոր թվերի քանակն անսահմանափակ է (3): **Եթե** նկատի ունենանք քանակականներից կազմվող մյուս թվականները ևս, ապա պարզ կդառնա, որ սահմանափակ քանակությամբ արմատներով ու ածանցներով կարելի է կազմել անսահմանափակ թվով թվականներ (4): **Այսպիսով**՝ միլիոնավոր ու միլիարդավոր թվականները կազմվում են արմատական թվականների տարբեր դասավորություններով (5): Ուրիշ ոչ մի խոսքի մասի հատուկ չէ այսպիսի ազատ կազմությունը (6):

Երկրորդ նախադասությունը 1-ի հետ կապված է պայմանի հարաբերությամբ՝ **եթե** շաղկապով: 3-րդ նախադասությունը ներհակական հարաբերությամբ է կապված 2-րդ նախադասության հետ՝ **իսկ** շաղկապով, իսկ 4-րդ նախադասությունը պայմանի հարաբերությամբ է կապված 3-րդ նախադասության հետ՝ **եթե** շաղկապով: **Այսպիսով** շաղկապական բառով են կապվում նախորդ նախադասությունների հետ 5-րդ, 6-րդ նախադասությունները՝ արտահայտելով ընդհանրացման կամ հետևության հարաբերություն:

Այս առումով քննենք «Ավանգարդ» թերթից բերված հոդվածներից հետևյալ հատվածները.

«Իրական կոչումը ի վերուստ է տրվում (1): **Ու թե** նվիրյալն ես այդ կոչումի, ու մեծ է վաստակդ՝ գնահատանքը չի ուշանում (2): **Իսկ** ամենաանաչառ գնահատանքը ճանաչումն է, համաժողովրդական սերն ու վստահությունը (3):

Այս ամենի առջև սուկ պայմանական են մյուս տիտղոսները (4) (Ավանգարդ, 11.6.2015):

2-րդ նախադասության **ու թե** բաղադրյալ շաղկապի **թե**-ի պայմանական հարաբերություն արտահայտելը թուլացնում է **ու** շաղկապի միավորական իմաստը: 3-րդ նախադասությունը՝ **իսկ** համադասական շաղկապով, ներհակական հարաբերությամբ է

կապված 2-րդ նախադասության հետ: Երկրորդ պարբերությունն սկսվում է *այս ամենի* դերանվանական (փոխարինման) կապով, որը հանդես է գալիս իր շարահյուսական պաշտոնով, որի բովանդակությունն արտահայտված է նախորդ պարբերությունում: Նրանով կապակցվում են երկու պարբերությունները:

«...Բացակայում են ՀԵ, ՂԲ, ՂԳ դավանաբանական խոշոր գլուխները (1): *Օրինակ՝* Վ. Գևորգյանի թարգմանության մեջ ՂԳ-ի քսանչորս ենթագլուխներից ներառված է երեքը (2): Իսկ ՂԴ և ՂԵ գլուխները ամբողջական չեն ներառվել (3): *Եվ* նույն պատճառով երկու խոշոր թարգմանիչների մոտ էլ դավանաբանական ենթագլուխներ են պակասում ԼԳ և ԼԴ գլուխներից (4):

Եվ նշածս երկու խոշոր թարգմանիչները ստիպված էին տուրք տալ, որպեսզի Մատյանը կարողանային լույս աշխարհի հանել, թեկուզև պակասով, թեկուզև՝ «պոեմ» անվան տակ, ինչը քիչ հարիր է կենդանի աղոթամատյանին (5): *Այս առումով* Խերանյանի թարգմանությունը դավանաբանությամբ առողջ ու լուրջ է և հավատարմատար (6): Գևորգյանը, ցավոք, Մատյանը աղոթամատյան չէր համարում, այլ ընդունում էր միայն՝ որպես հանճարի արտահայտություն (7): *Այնուամենայնիվ*, պիտի խոնարհվել այն քաջության առաջ, որ այս թարգմանիչները գործեցին՝ բանականորեն այդ խանգարված ժամանակներում (8): Թեկուզև՝ ոչ ամբողջականորեն, թեկուզ «պոեմ» անվան տակ՝ լույս աշխարհի հանեցին հավատացյալի բալասան այս սքանչելի հավատի ոսկին (9):

Արդ, ընթերցենք ու վերընթերցենք Նարեկը՝ անկեղծ խոստովանությամբ մաքրելով մեր հոգիները և ուժ գտնենք՝ գեթ այդուհետ զերծ մնալու աշխարհիկ մեղքերից, որոնք մարդու հոգին են սպանում (10) (Ավանգարդ, 11.6.2015):

Տեքստի 2-րդ նախադասությունը *օրինակ* շաղկապական բառով է կապակցվում 1-ին նախադասության հետ՝ արտահայտելով մասնավորման հարաբերություն: 3-րդ և 4-րդ նախադասությունների *իսկ, և* շաղկապների կապակցական դերի մասին նախորդ օրինակներում խոսել ենք:

Եվ նշածս շաղկապական բառով 2-րդ պարբերությունը կապվում է 1-ին պարբերության հետ՝ արտահայտելով միավորական հարաբերություն: 6-րդ նախադասությունը *այս առումով* կապակցությամբ կապ է ստեղծում 5-րդ նախադասության հետ և ցույց տալիս երկու թարգմանիչների թեկուզ պակասով, պոեմ անվան տակ Մատյանի լույս

աշխարհի հանելը, հետևաբար պատճառի պարագա է: 8-րդ նախադասությունը *այնուամենայնիվ* զիջական շաղկապով է կապակցվում 7-րդ նախադասության հետ՝ արտահայտելով զիջական հարաբերություն: *Թեկուզև* զիջական շաղկապով է կապակցվում 9-րդ նախադասությունը 8-րդ նախադասության հետ՝ արտահայտելով նույնպիսի հարաբերություն:

Հոդվածագիրը, այլ հարցի մասին խոսելով, ավելի մեծ անցում է կատարում՝ օգտագործելով *արդ* շաղկապական բառը, որով ներտեքստային կապ է ստեղծվում նախորդ պարբերությունների հետ: Այս շաղկապական բառը հատուկ է գիտական ոճին:

Բերենք մի հատված արտգործնախարար Է. Նալբանդյանի բրազիլական «Էստադաո» թերթին տված հարցազրույցից:

«Մենք կարծում ենք, որ բոլոր հարցերը պետք է կարգավորվեն երկխոսության, բանակցությունների և ոչ թե ուժի կիրառման, այդ թվում՝ տնտեսական հարկադրանքների միջոցով:

Ինչ վերաբերում է սփյուռքին, Ռուսաստանում ունենք մեծ հայկական (փխ.՝ հայկական մեծ) համայնք՝ մոտ 2,5 միլիոն մարդ: *Ինչպես նաև* Ուկրաինայում բնակվող մոտ 500 հազար հայեր ունենք» (ՀՀ, 8.7.2015):

Այստեղ տրամաբանական անցումը մի հարցից մի այլ բնույթի հարցի կատարվում է *ինչ վերաբերում է* շաղկապական բառով, որով երկրորդ պարբերությունը ներտեքստային կապով կապակցվում է նախորդ պարբերության հետ, իսկ *ինչպես նաև* կապակցությունը հավելական հարաբերությամբ է նախադասությունը կապակցում նախորդ նախադասության հետ:

Ներտեքստային կապի միջոց է նաև շաղկապի, շաղկապական բառի ու նախադասության (նախադասությունների) կրկնությունը: Այս առումով քննենք Վ.Դավթյանի «Անկեզ մորենի» բանաստեղծությունների շարքը, որ իր ծննդավայրի և կենսագրության մասին է: Նախերգանքն սկսվում է. «....*Եվ կան ժամեր, կան ժամեր, որ երբ կոպերս եմ փակում*, Իմ ցավի մեջ ու հույսի կապույտ աստղեր են կաթում» և ավարտվում՝ «....*Եվ կան ժամեր, կան ժամեր, որ երբ կոպերս եմ փակում*, Այդ աստղային պատրանքից ցավիս մեջ ցավ է կաթում» տողերով: Այս բարդ նախադասությունը կազմված է երկու համադաս բաղադրիչով նախադասություններից և մեկ բաղադրիչ ստորադաս նախադասությունից, որը ժամանակային հարաբերությամբ է կապված նախորդ նախադասության հետ: Բարդ

նախադասությունը՝ **և** շաղկապով և կրկնությամբ, նախերգանքի վերջը կապում է սկզբի հետ, միայն թե այս անգամ բանաստեղծը «կոպերը փակելիս ցավի ու հույսի մեջ կապույտ աստղեր կաթալու աստղային պատրանքի» փոխարեն նրա «ցավի մեջ ցավ է կաթում»։ Ներտեքստային նույնալիսի կապակցման միջոցի ենք հանդիպում Վ. Դավթյանի «Ծուխ ծխանի» պոեմում, որտեղ պոեմի վերջը և բնաբանը կապված են իրար հետ **և** շաղկապի և բարդ համադասական նախադասության կրկնության եղանակով։ Այն կազմված է երկու համադաս բաղադրիչներով նախադասություններից, որոնք արտահայտում են միավորական հարաբերություն։

Այսպես՝ Եվ ծխի մեջ ճերմակ Արարատն է ցոլում,

Եվ խշշում էր, խշշում Արտաշատի բարդին։

Իսկ Վ. Դավթյանի «Անկեզ մորենի» բանաստեղծությունների շարքում **և**, **ու** շաղկապները կապակցում են նաև առանձին բանաստեղծություններ և բանաստեղծությունների տներ (Ծննդավայր, Եվ մի աշխարհ մնաց այնտեղ, Եփրատը, Փուշը, Կանչ, Մեր ծիծեռնակը, Նուռը և այլն), որոնք բանաստեղծի «կորցրած աշխարհի»՝ որպես մեկ ամբողջության, մասերի բնութագրումներն են՝ միավորական հարաբերությամբ։

Ինչպես՝ **Եվ** մի աշխարհ մնաց այնտեղ.

Եվ մնացին ակնաղբյուրներ

Եվ լճակներ,

Եվ մնացին արահետներ... (Եվ մի աշխարհ մնաց այնտեղ)

Եվ ոլորվում է մեր քարավանը,

Եվ ինչ եմ տեսնում վերջին անգամ... (Եփրատ)

Կամ՝ **ու** մինչև հիմա չգիտեմ հաստատ,

Դեղին տենդ է դա, երազ է, թե՞ հուշ... (Փուշը)

ու ես ասում եմ. – Կանգնիր առավոտ,

Ես էլ եմ գալիս...

ու ես չգիտեմ, դա անլսելի

Ձնգոցն է քարի... (Կանչ)

Բերված օրինակներում ոչ միայն շաղկապներն ու շաղկապական բառերն են տեքստային կապի միջոցներ, այլև կրկնության եղանակը և փոխարինումը (ցուցաբերերը):

Պարզելով տեքստ կազմող նախադասությունների կառուցվածքը, կապակցումը՝ նկատել ենք, որ նրանց միջև առկա են նույն հարաբերությունները, ինչ բարդ նախադասության բաղադրիչների միջև⁹: Սակայն բարդ նախադասության ոչ ինքնուրույն բաղադրիչների կապերը սովորաբար ավելի սերտ են, քան գերնախադասական (գերֆրագային՝ СФЕ) միասնությունը կազմող նախադասությունների կապերը, սրանց կապերն էլ ավելի սերտ են, քան առանձին պարբերությունների կապերը: Վերջիններիս կապերն էլ ավելի սերտ են, քան առանձին հատվածների, գլուխների կապերը:

Այս քննությունը կարևոր է նաև նախադասության և նրա կիրառության ամբողջական պատկերը ցույց տալու առումով: :

Барсегян Амалия - Словесные средства сочетания предложений в тексте.- В статье из словесных средств предложения рассматриваются союзы и союзные слова, как средства внутритекстовой связи, внутри сверхфразовых единств, между абзацами, отдельными частями и главами. Стало заметно, что сходства связей уменьшается, что обуславливается наибольшей самостоятельностью предложений.

Barseghyan Amalya - Verbal Means of a Combination of the Sentences in the Text.- In this article are touched upon the conjunctions and conjunction words of verbal means of the sentences as a means of textual connection, within super-phrasal unity, between paragraphs, parts and chapters. It was noticeable that the similarity of the connections is reduced, which caused by the greatest autonomy of the sentences.

⁹ **Ա. Բարսեղյան**, Բարդ նախադասության բաղադրիչների կապակցման ոչ կանոնական դրսևորումներ ԶԼՄ-ների լեզվում, Լրաբեր հաս. գիտ., 2014, 2, էջ 200-206:

ՆՅՈՒԹԱԿԱՆ ԻՄԱՍՏ ՈՒՆԵՑՈՂ ԲԱՌԵՐԻ
ԿԱՊԱԿՑԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ ՏԵՔՍՏՈՒՄ¹

Բարսեղյան Ամալյա

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
ավագ գիտաշխատող, Բ.գ.թ.

Տեքստը կապակցված ամբողջություն է, որի մեջ լեզվական կարգերի (կատեգորիաների) արտահայտությունը ավելի ամբողջական է:

Տեքստի կապակցվածությունը իրականանում է ներտեքստային կապերի միջոցով:

Տեքստի լեզվաբանությունը ձևավորվել է XX դ. 60-ական թվականներին: Սկզբնական շրջանում ուսումնասիրվում էին տեքստը, նրա կառուցվածքը, լեզվական միջոցները, բաղադրիչների կապակցման օրինաչափությունները:

Այդ շրջանում երևան եկան մի շարք ուղղություններ (տեքստի ընդհանուր լեզվաբանություն, տեքստի պրագմատիկ լեզվաբանություն, իմացաբանական ուղղություն), որոնք տեքստի ուսումնասիրության ժամանակ նոր մոտեցումներ ունեցան (տեքստաբանական, տեքստի մեկնաբանության, հանրահոգելեզվաբանական և նշանահոգելեզվաբանական, լեզվամշակութաբանական, լեզվահոռետորական): Ժամանակակից մոտեցումներում առաջնային է համարվում տեքստի ուսումնասիրության խոսութային (дискурсивный подход) մոտեցումը²:

Տեքստաբանության մեջ կան տեքստի և նրա նվազագույն միավորի ըմբռնման տարբեր կարծիքներ (Մ. Տիցման, Թ. վան Դեյկ, Գ. Ջահուկյան և այլն):

Տեքստաբանության ժամանակակից ուղղություններում տեքստը հիմնականում դիտարկվում է որպես համակարգված կառուցվածքային բարձրագույն միավոր, որ «բովանդակում է հաղորդում աշխարհի մի հատվածի վերաբերյալ, կազմված է հեղինակի մտահղացումով, ունի կառուցվածքային (կոմպոզիցիոն), իմաստաբանական և գործաբանական (պրագմատիկ) միասնություն, վերամշակված է լեզվի գործառական և ոճական նորմերի համապատասխան»³:

¹ Հոդվածը տպագրվել է «Ջահուկյանական ընթերցումներ» գիտական հոդվածների ժողովածուում, Ե., 2016, էջ 14-21:

² **В. А. Маслова**, *Современные направления в лингвистике*, М., 2008, էջ 21-22:

³ Ն. տ., էջ 27:

Տեքստի նվազագույն միավորի՝ պարբերության մեջ նախադասությունների միջև առկա են միևնույն հարաբերությունները, ինչ բարդ նախադասության բաղադրիչների միջև: Մինչդեռ հեղինակի ոճով և արտաքին իրադրությամբ պայմանավորված, այդ հարաբերությունները ավելի քիչ են արտահայտվում հարաբերիչ բառերով: «Սակայն բոլոր դեպքերում էլ մասերի միջև առկա են կարգային (կատեգորիական) և տերմային այն իմաստները, որ խմբավորված են ՀԼԿ-ի և որոշ վերապահությամբ նախադասության անդամների ընդհանուր ավանդական ուսմունքի մեջ»⁴:

Տեքստում պարբերությունները նույնպես կապվում են հատուկ միջոցներով՝ նախաբերիչներով, որի միջոցով հղում է կատարվում նախապես ասվածին (բառեր, բառակապակցություններ, նախադասություններ, ցուցաբառեր) (ներկոնտեքստային): Դրանք են՝ *վերոհիշյալ, վերևում նշվածը* և այլն: Հետաբերիչներով, որի դեպքում հղում է կատարվում ասելիքին (հետևյալը, ստորև բերվող և այլն):

Տեքստում նախադասությունների կապակցման մեջ մեծ է բառական միջոցների դերը:

Դրանք են՝

ա. շաղկապներ և շաղկապական բառեր,

բ. նյութական իմաստ ունեցող բառական միջոցներ (գոյական, ածական, դերանուն, թվական, բայ, մակբայ),

գ. ոչ նյութական իմաստ ունեցող բառական միջոցներ (կապ, եղանակավորող բառեր, ձայնարկություն):

Հոդվածում կանոնադառնանք նյութական իմաստ ունեցող բառերից մի քանիսի (գոյական, ածական, դերանուն) կապակցական արժեքին տեքստում, որոնք, բացի նախադասության մեջ կատարած իրենց շարահյուսական դերից, ունեն կապակցման արժեք՝ հարաբերության մեջ մտնելով տեքստ կազմող նախադասությունների հետ:

Այս նկատառումով դիտարկենք մի հատված Նար-Դոսի «Սպանված աղավնի» վիպակից:

«Հիշում եմ նրա *ծնողներին*: Հայրը խստաբարո և կրոնասեր մարդ էր, թեև տերտերների ատելով աստում էր՝ համարելով նրանց իրենց կոչմանն անարժան մարդիկ, բայց միշտ ժամ էր գնում:

⁴ Գ. Բ. Զահուկյան, *Շարահյուսական ուսումնասիրություններ*, Ե., 2003, էջ 65:

Գարեգինի *մայրը* շատ գեղեցիկ և կենսաթրթիռ մի կին էր, ամուսնուց առնվազն մի քսան տարով փոքր»:

Այստեղ *հայրը, մայրը* գոյականները իմաստային կրկնությամբ կապակցվում են *ծնողներ* գոյականի հետ՝ ստեղծելով ներտեքստային կապեր նախադասությունների և պարբերությունների միջև:

Կարող է հաջորդ նախադասությունում մանրամասն նկարագրվածը կապակցվել նախորդ նախադասության ընդհանուր անվանումով գոյականի հետ՝ դառնալով կապակցման միջոց:

«Ես և իմ ընկեր Անդոն *հաց* ենք տանում նրա հոր՝ բրուտ Ավագի համար: Գունավոր աղլուխի մեջ Անա զիզին փաթաթել է *լավաշ, խորոված սիմինդր, սխտորած լոբի, մի քանի վարունգ և մի քիչ պանիր*» (Բակ., Բրուտի տղան):

Կարող է նաև նախորդ նախադասությունում մանրամասն ասվածը ներկայացվել ընդհանուր անվանումով գոյականով, որը դառնում է կապակցման միջոց նախորդ նախադասության հետ:

«Համաձայն եմ պարոն Ավետիքյանի հետ, որ թերթ քիչ են կարդում, բայց մենք մասամբ թերթ կարդալու ծավալները մեծացնելու ուղղությամբ աշխատանքներ ենք իրականացնում: «Մեր պատանի ժուռնալիստների դպրոցում» երեխաների հավաքագրման գործընթացը նպաստում է *խնդրի* նվազեցման» (ՀՀ, 22.12.2015 թ.):

Հաճախ հատուկ անունով անձը կամ առարկան կարող են բնութագրվել հասարակ անունով՝ շրջապատյամբ դառնալով կապակցման միջոց նախադասությունների միջև:

«Միքայել Շաթիրյանի «Արծաթե դար» պատմավեպը լուրջ և հասուն ստեղծագործություն է: *Հեղինակն* ասելիք ունի, ցավ ունի և ամենակարևորը, պատմության փիլիսոփայական ընկալում: Վեպում *պատմաբանն* ու *գեղագետը* հանդես են գալիս օրգանական միասնությամբ, մեկը լրացնում և ճշտում է մյուսին» (ԳԹ, 18.3.2016 թ.):

Կարող է նաև հասարակ անունով գոյականը շրջապատյամբ բնութագրվել հատուկ անունով՝ կապ ստեղծելով նախադասությունների և պարբերությունների միջև:

«Մայրաքաղաքում ամանորյա միջոցառումները կամփոփվեն հունվարի 13-ին՝ «Իմ հին ու Նոր տարի» ծրագրով.

Նախօրեին տոնական մեծ հանդիսությամբ հանրապետության *երկրորդ քաղաքում* ևս վառվեցին գլխավոր տոնածառի լույսերը: *Գյումրու* գլխավոր տոնածառը այս տարի

ունի 27 մետր բարձրություն ու շքեղ զարդարանք, բայց ամենակարևորը գյումրեցիներին տոնական տրամադրություն պարգևելն է» (ՀՀ, 22.12.2015 թ.):

Կամ՝ «*ԱԺ նախագահը* գտնում էր, որ 2016 թ. ԼՂՀ հռչակման 25-ամյակը նշելը լավ հնարավորություն է՝ Արցախը և արցախյան թեման օրակարգում ներառելու և միջազգային հարթակներում շրջանառելու համար:

Խորհրդարանի ղեկավարը պատասխանեց նաև լրագրողներին հետաքրքրող հարցերին:

Ի պատասխան այն հարցին, թե օրենսդիրն ինչ քայլեր կարող է ձեռնարկել ադրբեջանադարաբաղյան սահմանում տիրող լարվածությունը մեղմելու և միջազգային կառույցների միջոցով Ադրբեջանի վրա հակազդելու համար, *Ա. Ղուլյանը* նշեց, որ չնայած ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդական ջանքերին, Բաքուն շարունակում է ռևանշիստական արկածախնդրությունները՝ լուրջ սպառնալիք հանդիսանալով տարածաշրջանում» (ՀՀ, 25.12.2015 թ.):

Տարբեր կապակցական միջոցներով են կապված «Հայաստանի Հանրապետություն» թերթի հետևյալ հատվածի պարբերությունների նախադասությունները և պարբերությունները:

«*Գործիքները* պատահական երաժիշտների չեն տրամադրում: *Դրանց* արժանանալու համար պետք է որոշ չափով անուն ձեռք բերել (*գործիքները* փոխարինված են *դրանց* դերանունով): *Ամեն անգամ*, երբ կարևոր համերգ եմ ունենում, Լոնդոնի «Ինզլզ և Հեյդեյ» կազմակերպությունն ինձ գործիք է տրամադրում: *Նախորդ անգամ* «*Ստրադիվարիուս*» էին տվել: *Ստրադիվարիուսը* շատ շուտ վաճառվեց («*Ստրադիվարիուս*» գոյականի կրկնությամբ է կապված): *Այս անգամ էլ* հրաշալի «Գվադանինի» են տվել (*ամեն անգամ, նախորդ անգամ, այս անգամ* կապակցությունները թվարկման հարաբերությամբ են կապում նախորդող և հաջորդող նախադասությունները): *Դա* էլ արժեքավոր և հզոր գործիք է»,– ՀՀ-ի հետ զրույցում ասաց նա, («Գվադանինի»-ն փոխարինված է *դա* դերանունով և կապվել նախորդ նախադասության հետ):

Այդ գործիքով Անին նվագեց «*Վերադարձի փառատոնում*» (երկրորդ պարբերությունը *այդ գործիքով* դերանվանական կապակցությամբ կապվում է առաջին պարբերության «*Գվադանինի*» գոյականի հետ՝ փոխարինման գործառնությամբ): *Այդ առիթով նա Հայաստան* էր եկել: Իսկ *Հայաստանից* մեկնել էր կատարելագործման նպատակով (*այդ*

առիթով դերանվանական կապակցությամբ և *նա* դերանվամբ փոխարինման գործառույթով կապված է երկրորդ պարբերության առաջին նախադասության հետ, իսկ *Հայաստան* գոյականը կրկնության միջոցով՝ հաջորդ նախադասության հետ):

Անին առաջինն էր, ով ստացել է Բաժնի Մանուկյանի կրթաթոշակը՝ ուսումը շարունակելու Լոնդոնի թագավորական ակադեմիայում (պարբերության վերջին նախադասությունը *Անի* հատուկ անվան կրկնությամբ կապվում է պարբերության առաջին նախադասության հետ):

Ասուլիսներից մեկի ժամանակ *Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ* Արամ Սաթյանը *հետևյալ* ձևակերպումը հնչեցրեց՝ Եթե հավաքենք *Եվրոպայի մեր երիտասարդ կատարողներին*, կարելի է 3–4 սիմֆոնիկ նվագախումբ կազմել:

Միայն թե *այդ կատարողներից* շատերի մասին այստեղ՝ Հայաստանում ոչ բոլորը գիտեն:

Միության նախագահն ավստոսում է. «*Այդպիսի երիտասարդներն* արտասահմանում դահլիճներ են լցնում, իսկ մեզ մոտ ճանաչված չեն» (ՀՀ, 11.11.2015 թ.):

Վերջին երեք պարբերություններում ասելիքը հղում է կատարվում *հետևյալ* հարաբերիչով՝ կապ ստեղծելով նրանց միջև: Նախավերջին պարբերությունը *այդ կատարողներից* դերանվանական կապակցությամբ փոխարինման գործառույթով է կապված առաջին պարբերության հետ: (*Եվրոպայի մեր երիտասարդ կատարողները* փոխարինված են *այդ կատարողներով*): Վերջին պարբերությունը *միության նախագահը* գեղջման կապակցման միջոցով (հիմքում ընդհանուր անդամն է ընկած) է կապվում առաջին պարբերության *Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ* բառակապակցության հետ՝ կապ ստեղծելով այդ պարբերությունների միջև: Փոխարինման կապ է ստեղծվում *այդպիսի երիտասարդներ* դերանվանական կապակցությամբ (*Եվրոպայի մեր երիտասարդ կատարողները* փոխարինված են *այդպիսի կատարողներ* դերանվանական կապակցությամբ) առաջին պարբերության հետ:

Ածականը նախադասություններ կամ պարբերություններ կապակցելիս սովորաբար հանդես է գալիս գոյականի հետ, և այդ կապակցության միջոցով բնութագրվում է նախորդ նախադասություններում կամ պարբերություններում նկարագրվածը, այլ բաներով տրված իրը, անձը և այլն:

«*Մարկոս աղա Ալիմյանը* ծանր հիվանդ էր:

Յոթ օր առաջ նա իր նոր կառուցվող տասնումեկերորդ տան վրա արհեստավորներին պատվերներ տալիս մարմնի մեջ զգաց անսովոր ցուրտ, եկավ տուն, պառկեց անկողին և այլևս չկարողացավ վեր կենալ: Բժիշկները մարդուն ուշադիր քննեցին և միաձայն հաստատեցին թոքերի բորբոքում:

Լուրը նույն ժամին տարածվեց ամբողջ քաղաքում:

Եվ ահա այսօր մեռնում է *անվանի քաղաքացին, իսելացի մարդը, տոկուն վաճառականը*, որ ամբողջ կյանքն անց էր կացրել անդուլ գործունեությամբ, քրտինքը ճակատին, խիղճը հանձնած երկաթե սնդուկին և հոգին գրպանը դրած» (Շ., Քառս):

Լուրը գոյականն ընդհանուր անվանում է առաջին և երկրորդ պարբերություններում մանրամասն նկարագրվածը՝ կապ ստեղծելով նրանց միջև, իսկ *անվանի քաղաքացին, իսելացի մարդը, տոկուն վաճառականը* ածականի և գոյականի կապակցությունների միջոցով բնութագրվում է Մարկոս աղա Ալիմյանի անձը, և այս եղանակով կապ է ստեղծվում առաջին պարբերության հետ:

Կամ՝ «Երբ ես «Մեր լեզուն, մեր խոսքը» խորագիրն էի ընտրում, ընկերներիցս մեկը ասաց. «Դե, կա՛մ մեր *լեզուն* գրի, կա՛մ *խոսքը*»: Ասացի՝ երկուսն էլ կան, և երկուսն էլ տարբեր երևույթներ են, մեր *գեղեցիկ գրական, մշակված իսահակյանական «Լիլիթի» լեզուն* և մեր *առօրյա՝ աղքատիկ, խեղճ ու կրակ խոսքը*» (ՀՀ, 17.6.2016 թ.):

Նախորդ նախադասության լեզուն բնութագրվում է *գեղեցիկ գրական, մշակված իսահակյանական «Լիլիթի» լեզու*, իսկ խոսքը՝ *առօրյա՝ աղքատիկ, խեղճ ու կրակ խոսք* նույնպես ածականի ու գոյականի կապակցություններով, և այս եղանակով կապ է ստեղծվում նախորդ նախադասությունների հետ:

Եթե գոյականները, ածականները նշանակում են առարկաներ, առարկաների և երևույթների հատկություններ անկախ իրադրությունից, ապա դերանունները դրանք նշանակում են իրադրությունից կախված: «Դերանունը որպես կապակցող բառ երկու գործառույթ ունի:

Առաջինը ըստ էության իրադրական, երկրորդը՝ կոնտեքստային-իրադրական: Առաջին դեպքում նրանց նշանակությունը համապատասխանում է անմիջական ակտին, երկրորդ դեպքում՝ հանդիսանում է նշանների նշան՝ ցույց տալով հարևան միավորի

նշանակությունը, նույնպես կապված իրականության հետ միջնորդավորված ուրիշ լեզվական միավորի միջոցով»⁵:

«*Էդուարդ Բասբեկյանը* ակադեմիայի ստեղծման առաջին օրվանից (այն սկզբում ինստիտուտ էր կոչվում) մինչև իր կյանքի վերջը, մինչև տեսողության կորցնելը, անգամ դրանից հետո էլ ներկա է եղել ակադեմիայի կյանքին: Եվ թվով ամենաշատ ուսանողներ *նա* է ունեցել՝ ուսուցողական աշխատանքին զուգակցելով ստեղծագործական կյանքը, մասնակից դառնալով և՛ մշակութին, և՛ ոչ մշակութային իրողություններին: *Նա* իսկապես լավ դասախոս էր. ամենամեծ առավելությունը, որ *նա* ուներ այն էր, որ ուսանողի մոտ բացահայտում էր նրա ինքնությունը, այլ ոչ թե... սարքում էր իր նմանակը: *Ինքը* ոչ թե պարզապես դասախոս էր, այլ նաև ինքն իրեն չէր պատկերացնում իր ուսանողներից կտրված» (ՀՀ, 4.11.2015 թ.):

Այս դեպքում դերանունները հանդես են գալիս ներկոնտեքստային փոխարինման գործառնությով՝ ցույց տալով հարևան միավորի նշանակությունը:

Էդուարդ Բասբեկյան հատուկ անուն գոյականը փոխարինված է *նա*, *ինքը* դերանուններով, և վերջիններս (նա, ինքը) կապակցում են նախադասությունները:

Կապակցական դեր կատարող դերանունը կարող է գործածվել գոյականաբար:

«Երբ 50-ական թվականներին ես եկա «Հայֆիլմ», նա կինոյի պետերից էր, և ահա այս տողերը գրելիս հայտնաբերում եմ, որ չգիտեմ էլ, թե ինչ պաշտոն էր վարում (հիմա պաշտոնավորների չափը երբեմն երևում է, նույնիսկ երբ իրենք չեն երևում):

Այդպիսին էր Շաթիրյանը՝ ուղղակի մարդ, միայն մարդ, մշտապես մարդ՝ հանդարտ, ինքնավստահ, կիրթ:

Այդպիսին էր նա թե իր վերընթաց ուղու ժամանակ գրական ասպարեզում, թե իր վարչական աշխատանքի տարիներին, թե նախանձելի հաջողությունների և թե աննախանձելի բարդությունների և դժվարությունների օրերին, տարիներին» (ԳԹ, 18.3.2016 թ.):

Պարբերությունները կապակցող գոյականաբար գործածված *այդպիսին* դերանվան բովանդակությունն արտահայտված է առաջին պարբերության մեջ, որը փոխարինման և կրկնության կապակցման միջոցներով ներտեքստային կապեր է ստեղծում:

Նախադասություններ կապակցում է նաև դերանվանական կապակցությունը (դերանունով կամ այլ խոսքի մասերով):

⁵ Г. Б. Джаукян, *Универсальная теория языка*, М., 1999, էջ 203:

«Ֆետրե գլխարկով մարդուն օջախի մոտ նստած կինը, որի երկար զգեստի տակ պարզ երևում էին նրա ծնկները, թվում էր քրմուհի՝ եռոտանու առաջ ծխի շարժումները գուշակող:

Այն կինը երբեք բոբիկ ոտքերով չի՝ քայլել, չի նստել միացող աթարի առաջ: Առավոտյան ծովը բրոնզե հալոցքի պես տարուբեր էր լինում և լիզում ավերի կրաքարերը: Ծովափին *սև թավիշե գլխարկով կինը* հովանոցի ծայրով ավազի վրա նշաններ էր անում և ավերում: Իսկ ինքը ջարդում էր ձեռքի չոր ճյուղերը, մանրիկ փշուրներ անում, և երբ ալիքները կաթիլներ էին ցողում նրանց ոտքերին ու ետ վազում, ալիքներն իրենց հետ տանում էին չոր ճյուղերի փշուրները: *Այն կինը* ծովափին խոստումի բառեր ասաց, աշխարհը թվաց լայնարձակ մի ծով, ու սիրտը ձուլվեց ծովի հետ» (Բակ., Ալպիական մանուշակ):

Ֆետրե գլխարկով մարդու անցյալն ու ներկան իրար մեջ են ձուլվում իբրև հոգեբանական պատկերներ, որոնք կապակցվում են *այն կինը* դերանվանական կապակցության փոխարինման (*սև թավիշե գլխարկով կինը* փոխարինված է *այն կին*-ով) և կրկնության կապակցման միջոցներով՝ ստեղծելով ներտեքստային կապեր նախադասությունների և պարբերությունների միջև:

Կապակցական դեր կատարող դերանունը կարող է դրվել նաև այն բառի վրա, որը նախորդ նախադասությունում կամ նախադասություններում նկարագրվածի ընդհանուր անվանումն է:

Բերենք մի հատված Ա. Բակունցի «Երկերի» առաջաբանից. «Աբովյանին վերագրված բազմաթիվ միջերի կողքին կար նաև նրա դերի ճշմարիտ գնահատությունը, որով նրա *ստեղծագործությունը* և *աշխարհայացքը կապվում էին հայ դեմոկրատիայի արմատական շահերի հետ*:

Նույն ուղղության լույսի տակ էլ Բակունցը անդրադառնում է Աբովյանի ժառանգությանը՝ նրա վրա գցելով պատմական երկու դարաշրջանների լույսը. մեկ՝ Աբովյանի ժամանակի, մեկ իր ժամանակի:

Երկու պարբերությունները կապակցվում են *նույն ուղղության* դերանվանական կապակցությամբ՝ դառնալով ներտեքստային կապի միջոց:

Այսպիսով՝

ա. Գոյականը նախադասություններ, պարբերություններ է կապակցում, եթե այն մասնավորում կամ ընդհանուր անվանում է նախորդ կամ հաջորդ նախադասություններում մանրամասնորեն նկարագրվածը: Գոյականը նախադասություններ, պարբերություններ է կապակցում նաև շրջասությամբ, զեղչումով, կրկնությամբ:

բ. Ածականը նախադասություններ կապակցելիս հիմնականում հանդես է գալիս գոյականի հետ միասին և այդ կապակցության միջոցով բնութագրում է նախորդ նախադասության կամ պարբերության մեջ մանրամասնորեն նկարագրվածը կամ այլ բառերով ասված անձ, առարկա և այլն:

գ. Դերանունը նախադասություններ կամ պարբերություններ կապակցելիս հանդես է գալիս ներհամատեքստային (ներկոնտեքստային) փոխարինման գործառույթով: Փոխարինումը և կրկնությունը պարբերությունների ներքին և արտաքին կապերի հիմնական միջոցներ են, որոնք ընկած են ներտեքստային կապերի հիմքում:

Barseghyan Amalya – A cohesive value of the words having material meaning in text.-

Noun, adjective, pronoun besides their syntactic function in sentence also have connective value in text.

a. The noun serves as internal and external connections in the paragraph, if it generally specifies or names, the described in the preceding or following sentences, as well as by periphrases, ellipsis, repetition.

b. The adjective while connecting characterizes what is described in detail in the preceding sentence or paragraph, or a person, object, etc., presented in other words.

c. The pronoun while connecting represents function of inter-contextual replacement and repetition.

Барсегян Амалия – Соединительное значение слов, имеющих материальный смысл

в тексте.- Существительное, прилагательное, местоимение, в дополнение к синтаксической роли в предложении, в тексте имеют союзное значение.

a. Существительное выполняет внутренние и внешние соединения абзаца, если задаёт общее имя или указывает описываемое в предыдущих или следующих предложениях, а также перифразами, эллипсисом, повторением.

б. Прилагательное, исполняя соединения, характеризует то, что подробно описывается в предыдущем предложении или абзаце, или человека, объекта и т. д., представленные другими словами.

в. Местоимение, исполняя соединения, представляется межконтекстной функцией замены и повторением.

Տեքստի լեզվաբանությունը (ըստ Գ. Ջահուկյանի՝ հենքագիտությունը) ուսումնասիրում է տեքստին ներհատուկ օրինաչափությունները:

Տեքստը (հենքը) կազմված է ոչ սահմանափակ պարբերություններից (հինույթներից), իսկ պարբերությունը՝ մեկ կամ մի քանի նախադասություններից (*հենք, հինույթ* տերմինները Գ. Ջահուկյանինն են): Տեքստի նվազագույն միավորը պարբերությունն է, որը միայնակ կարող է տեքստ կազմել:

«Եթե հինույթը և հենքը միավորներ են և ունեն համապատասխան կառուցվածքային կաղապարներ, ապա նրանք պետք է ունենան միջուկ և առմիջուկային անդամներ և բնութագրվեն համապատասխան հարացույցներով: Պետք է նշել, որ բարձր ենթամակարդակի միջուկի հարաբերիչները քննվում են ստորին ենթամակարդակում՝ որպես ստորին ենթամակարդակի հարացույցի բաղադրիչների ստորին մակարդակի միավորներ»²:

Պարբերությունը կազմող նախադասությունների միջև առկա են միևնույն հարաբերությունները, ինչ բարդ նախադասության (լիասույթի) նախադասությունների միջև: Սակայն այս դեպքում կապը ավելի սերտ է, քան պարբերությունների միջև եղած կապը: Պարբերությունն էլ նախադասության նման ունի իր ներքին և արտաքին կապերի արտահայտման միջոցները: Պարբերության միջուկային անդամ է այն նախադասությունը, որը գուրկ է այլ պարբերությունների հետ տվյալ պարբերության կապն արտահայտող միջոցներից, «ոչ նշակիր» է, ի տարբերություն «նշակիր» նախադասությունների, որոնք պարբերության առմիջուկային անդամներ են: Տեքստի (հենքի) համար որպես միջուկ («բնահենք») առանձնացվում է «այն հինույթը կամ հինույթների ամբողջությունը, որի մեջ բացահայտվում է հենքի (տեքստի) բուն առարկան, նրա թեման»³:

¹ Հոդվածը տպագրվել է «Գիտական հոդվածների ժողովածու»-ում (Հ. Աճառյանի 140-ամյակին նվիրված), Ե., 2016, էջ 56-64:

² Դ. Ժապկյան, Универсальная теория языка, Москва, 1999, с. 201:

³ Գ. Ջահուկյան, Շարահյուսական ուսումնասիրություններ, Ե., 2003, էջ 76:

Տեքստում նյութական իմաստ ունեցող բառերից կապակցական արժեք ունեն նաև թվականը, բայր, մակբայր՝ հարաբերության մեջ մտնելով տեքստ կազմող նախադասությունների հետ: Սրանք, ի տարբերություն շաղկապների, նախադասության մեջ շարահյուսական դեր են կատարում:

Գործառական տարբեր ոճերում՝ կախված կառուցման եղանակներից, թվականով կապակցումները տարբեր արտահայտություն ունեն: Այսպես՝ Ե. Չարենցի ստեղծագործություններում թվականով թվարկումները ունեն տառային, բառային, թվանշանային արտահայտություն, որոնց կապակցական արժեքը նույնն է («Դանթեական առասպել», «Կապուտաչյա հայրենիք», «Վահան Տերյանի հիշատակին», «Չարենց նամե»՝ I, II, III, IV և այլն, «Գիրք ճանապարհի» պոեմների գլուխները՝ այբուբենի տառերով՝ Ա, Բ, Գ և այլն, անտիպ բանաստեղծությունների բացատները նշվում են աստղանիշերով՝ **, արաբական թվանշաններով՝ 1, 2, 3,... են կապակցվում աշնանային բանաստեղծությունները, «Ամենա- պոեմն» սկսվում է նախահենքային *սկիզբ* և ավարտվում վերջահենքային *վերջ* առմիջուկային միավորներով, իսկ մասերը կապակցվում են՝ գլ. Ա, գլ. Բ, գլ. Գ, գլ. Դ, գլ. Ե այբուբենի տառերով և *գլուխ* բառի կապակցությամբ):

Տեքստում թվականով կապակցված նախադասությունները թվարկմանը նախորդող նախադասության նկատմամբ գտնվում են մասնավորման կամ ընդհանրացման հարաբերության մեջ:

Մասնավորման հարաբերության ձևավորման մեջ կարևոր դեր ունեն թվարկման արժեք ունեցող դասական թվականները:

Այսպես՝ «Հանրակրթական ոլորտում մեր տեսլականն է՝ *առաջինը*. պահել ազգային դպրոցի ավանդույթները և ստեղծել ազգային բովանդակությամբ դպրոց: *Երկրորդը*. պահպանել խորհրդային դպրոցի այն ավանդույթները, որոնք դեռ կարող են պիտանի լինել, մասնավորապես, գիտելիք և մանկավարժի արժևորումը, բնագիտական առարկաների կարևորությունը և այլն: Եվ *երրորդը*՝ կրթական համակարգը պիտի լինի նաև ժամանակակից: Այսինքն՝ ազգային, միաժամանակ ժամանակակից դպրոց՝ սա է մեր տեսլականը,- նշեց Արմեն Աշոտյանը» (ՀՀ, 12. 9. 2015 թ.):

Այստեղ թվականները ունեն նաև փոխարինման գործառույթ (առաջինը, երկրորդը): Վերջին նախադասությունը *այսինքն* շաղկապական բառով մեկնական հարաբերությամբ է կապակցված նախորդող նախադասությունների հետ:

Դասական և քանակական թվականները կապակցական դեր կատարելիս կարող են գուգակցվել թվարկման իմաստ ունեցող այլ բառերի հետ: Ինչպես՝ «Կ. Աղամյանը ա-սաց, որ որպես նկարիչ ինքը Իսաբելյանի աշակերտը չի եղել, սակայն շատ բան է նրանից սովորել: Նա առաջին հերթին ի նկատի ուներ նկարչի կոմպոզիցիան, կտավների կառուց-վածքը, ինչպիսի վարպետություն ինքը չի տեսել այլ հեղինակների մոտ: *Ապա*՝ թեմատի-կայի ընդգրկումը՝ գործերի ազգային արմատները և հայրենասիրական թափը: *Այս եր-կուսի համար* ես շնորհակալ եմ Էդուարդ Իսաբելյանին», - ասաց նա» (ՀՀ, 4.11. 2015 թ.):

Բերված նախադասություններում *առաջին հերթին* և *ապա* բառերը միավորական հարաբերություն են ձևավորում, սակայն միաժամանակ այդ բառերից յուրաքանչյուրը մասնավորում է այս երկուսի համար բառակապակցության իմաստը, որը իր հերթին ընդհանրացման հարաբերությամբ է կապված նախորդող նախադասությունների հետ:

Կամ՝ «Դեռ չէինք ծովել մյուս փողոցը, որ այնտեղից դուրս եկան *երեք կին* և գալիս էին մեր կողմը: Մեկը շատ պառավ էր՝ երկուտակված մեջքով և հագիվ էր քայլում ձեռնա-փայտը ձեռքին: *Մյուսը* միջին տարիքի կին էր, իսկ *երրորդը* շատ ջահել, թխադեմ, ժպտուն, կրակոտ աչքերով: *Երեքն* էլ հագնված էին վրացնակ, անխուսափելի չիստիկո-պիով և թշերի վրա կախված կավիքներով» (Նար-Դոս, Տանտիրոջս աղջիկը):

Այս օրինակում *մեկը* (քանակական թվական), *մյուսը* (դերանուն), *երրորդը* (դա-սական թվական)՝ փոխարինման գործառույթով, թվարկում արտահայտող բառերը մաս-նավորում են *երեք կին* բառակապակցության իմաստը, իսկ *երեքն* քանակական թվակա-նը, որը միաժամանակ ունի փոխարինման գործառույթ, ընդհանրացման հարաբերությ-յամբ է կապված նախորդող նախադասությունների հետ:

Տեքստի բնույթով պայմանավորված՝ ծանոթությունները, մեկնությունները, որպես առմիջուկային բաղադրիչներ, գտնվում են տեքստի մեջ կամ վերջում: Սրանք ևս կարող են կապակցվել թվարկման հարաբերությամբ:

Այսպես՝ «Ժամանակակից գրական հայերենում գործառող ժխտական եղանակա-վորիչն է *ոչ*-ը, որը

Ծան. 1 – Որպես ժխտական եղանակավորիչ գործածվում է նաև չէ-ն, որը, սակայն, գրական չէ:

Ծան. 2 – *Բնավ*, *ամենևին* բառերը հատկապես որպես պատասխանական բառեր գործածվելիս հարում են ժխտական եղանակավորիչներին: Օրինակ՝ – Դու սկսում ես

ծաղրե՞լ: – **Բնավ** (ՆԴ) (Ս. Աբրահամյան, Ժամանակակից գրական հայերեն):

Այսպիսով՝ տեքստում թվականով կապակցվող նախադասությունները թվարկմանը նախորդող նախադասության նկատմամբ գտնվում են մասնավորման կամ ընդհանրացման հարաբերության մեջ:

Թվականների տառերով, թվերով, բառերով թվարկումները նույն կապակցական արժեքը ունեն:

Տեքստում բայի դիմավոր ձևերը կապակցական դերով քիչ են հանդիպում: Բայը դիմավոր ձևով կարող է կապակցվել, երբ ընդհանուր երևույթին հաջորդում է մասնավոր գործողությունը կամ հակառակը:

Այսպես՝ «Բուքը **խաղում էր** ձորում: Մրսած գայլերը **իջնում էին** Դրնգանի անտառից, **հոտոտում** մարդկանց հետքերը, **մոտենում** քարայրին» (Բակ., Բրուտի տղան):

«Լուսադեմին քարանձավի մարդիկ մեկ-մեկ ցրվում էին»: Նրանք նեղ առապարներով և այգիների ճանապարհով գնում էին դեպի քաղաքի լուռ փողոցները: **Գնում էին** և հետքերը կորցնում : Չորն իսպառ ամայանում էր» (նույն տեղում):

«Խավար մի ամպ **շղարշում է** գիրքը և նրա պատմությունը: Մի դարու պատմություն: Ոչինչ **չի երևում** ուրիշ» (Դեմիրճյան, Գիրք ծաղկանց):

Կապակցական դերով աչքի են ընկնում բայի դերբայական ձևերը, հատկապես՝ ենթակայական, հարակատար, անորոշ դերբայների գոյականաբար գործածությունը:

«Մի պարզ բեմահարթակ, գետնատարած պատուհան ժուժկալ լուսավորություն՝ առանց տեսանելի գործողության: Միայն մուրճն **է թանձրանում**: Գործողության նպատակը սա է: **Թանձրացող** մուրճն ամենակատարյալ բանն է, որ հայտնաբերել է Լոռություն-Գոյը:Շարժում կամ ձայն և կամ պատկեր՝ մուրճը **կործանել է** բոլոր պատվանդանները: **Փլզումն** այդ կատարյալ է, ինչպես ամենայն անխուսափելին (Մերուժան Սիմոնյան, Մեծ հավատաքննիչի ժամանակը):

Բերենք մի օրինակ էլ Ե. Չարենցի ռուբայաթներից. «**Ծնվում է**, աճում է մի բան յուրաքանչյուր վայրկյան կյանքում. **Մեռնում է**, կորչում է մի բան յուրաքանչյուր վայրկյան կյանքում. Բայց **ծնվողը** ծնվում է պայքարով, պայքարով է մեռնում և **մեռնողը**. Եվ այսպես – կոփվում է ապագան յուրաքանչյուր վայրկյան կյանքում»:

Կամ՝ «Գիրքը **ծախում էին** : **Ծախողը** մի արաբ զինվոր էր, բարեղեմ և անհոգ: Նա ձեռք էր բերել այդ իր արշավանքի ժամանակ և հիմարություն էր արել բերելու մինչև Դա-

մասկոս... (Դեմիրճ., Գիրք ծաղկանց):

Տեքստում մակբայները հաճախ են հանդիպում կապակցական դերով, որով կապ են ստեղծում տվյալ և նախորդող նախադասությունների, պարբերությունների միջև:

Բերենք օրինակներ Ավ.Իսահակյանի ստեղծագործություններից.

–Այո, **հիմա** (ժամ. մակբայ) արդար է և ճշմարիտ քո կամքը,– սրտահոծար ասաց Ուշինարան,– սիրով կտամ ո՛վ անգղ, իմ մարմնից փոխարենը:

Եվ **հանկարծ** (ձևի մակբայ) դահլիճի ձեղունից մի կշիռ կախվեց:

Ուշինարան աղավնուն դրեց մի նժարում, իսկ մյուս նժարում՝ իր մարմնից մի փերթ, բայց աղավնին **դեռ** (ժամ. մակբայ) ծանր էր կշռում: **Նորից** (չափի մակբայ) կտրեց մսի մի փերթ, և աղավնից **նորից** (չափի մակբայ) ծանր էր:

Պարձյալ (չափի մակբայ) նորանոր փերթեր կտրեց դրեց, և սակայն աղավնին ավելի և ավելի ծանր էր կշռում (Իս. Ուշինարա):

«Ուշինարա» գրույցից բերված հատվածը բաղկացած է երեք պարբերություններից. Առաջին պարբերությունը ուրիշի ուղղակի խոսքն է, որին կապակցված է հեղինակի խոսքից առանձնացված պարբերություն–նախադասության **հանկարծակի** մակբայով: Երրորդ պարբերությունն էլ հեղինակի խոսքն է, որը **դեռ**, **նորից**, **դարձյալ** մակբայներով կապակցվում է նախորդող նախադասությունների և պարբերությունների հետ:

Բերենք մի հատված «Լիլիթ» լեգենդից, որտեղ հերոսների ուրիշի ուղղակի խոսքերն սկսվում են նոր պարբերությամբ՝ սկզբից ունենալով անջատման գիծ:

–Օ՛հ, **նորից** (չափի մակբայ) նույն հիանալի պտուղները, որ գտա տաղավարիս առաջ:

–**Միշտ** (ժամ. մակբայ) նույն գեղեցիկ տեղերից եմ բերել: **Հիմա** (ժամ. մակբայ) պիտի գնանք, չէ՞, հոգիս:

–Կերթանք, **դեռ** (ժամ. մակբայ) ժամանակ կա,– ասաց Լիլիթ և նստեց նախաճաշի:

Բերված օրինակում **միշտ** մակբայով երկրորդ և առաջին պարբերություններն են կապակցվում: Երրորդ պարբերությունը **դեռ** մակբայով կապակցվում է երկրորդ պարբերության վերջին նախադասության հետ:

Բերենք մի հատված էլ Դ. Դեմիրճյանի «Դադար» պատմվածքից:

«Մինչև վերջին վայրկյանը, **դեռ** (ժամ. մակբայ) էլի սովորական հոգսի հետ էր, այդ բարերար, մտերիմ հոգսի հետ: **Հանկարծ** (ձևի մակբայ) կտրվեց այդ հոգսի թելը:

Հետո՞ ... (Ժամ. մակբայ) **Հիսի** (Ժամ. մակբայ) ի՞նչ է լինելու իր հոգսը: Առանց հոգսի՞: Տարօրինակ վիճակ:

Հանկարծ մակբայով կապակցվում է առաջին նախադասության հետ, երկրորդ պարբերությունը **հետո** , **հիսի** մակբայներով կապակցվում է առաջին պարբերության հետ, միաժամանակ կապակցումը կատարվում է հոգս բառի կրկնությամբ:

Ինչպես տեսնում ենք, տեքստում կապակցական դերով հաճախ են հանդես գալիս ձևի, չափի, ժամանակի մակբայները:

Амалия Барсегян – Связующее значение имени числительного, глагола, наречия в тексте. – Связывание выполняется:

1. В тексте предложения связанные именем числительным находятся в отношении конкретизации или обобщения касательно предложения предшествующего перечисления.
2. Перечисления с именем числительным имеют буквенные, числовые, лексические выражения, которые имеют одно и то же связующее значение.
3. В тексте редко встречаются личные формы глагола в связующей роли.
4. Связующей ролью отличаются неличные формы глагола, особенно субстантивные употребления субъективного и результативного причастий и инфинитива. В тексте в связующей роли часто выступают наречия образа действия, меры и степени, времени.

Amalya Barseghyan – Value of Connecting of Numeral, Verb and Adverb in the Text- The connection is done by:

1. In the text the clauses connected with a numeral are in specification and generalization correlation with the clause proceeded by the numeral.
2. The enumerations with numerals have letter, word and number expressions which have the same connective value.
3. In the text the verb forms are rarely used as connectives.
4. Participial forms of verbs used as nouns (mainly subjective, indefinite, resultative) are more popular as connectives.
5. In the text the adverbs of manner, degree and time are very often used as connectives.

Դիմավոր բայի և անորոշ դերբայի գուգորդմամբ առաջացող շարահյուսական կառույցը հայերենի շարահյուսության դասագրքերում, զանազան կարգի ուսումնական ու գործնական ձեռնարկներում, հանրամատչելի հրատարակություններում ու հոդվածներում բավական հաճախ է քննարկման առարկա դարձել և այսօր էլ չի դադարում տարակարծիք մեկնաբանությունների առիթ տալ: Տարամիտվող գնահատումները վերաբերում են կառույցի թե՛ շարահյուսական արժեքին, թե՛ դրա՝ ժամանակակից հայերենի կանոնին (նորմին) համապատասխանելու խնդրին: Ստորև կփորձենք ի մի բերել այդ երկու հայեցակետերով կառույցին տրված գնահատականները և կատարել որոշ եզրահանգումներ:

Խոսքը առավելապես վերաբերում է հիշյալ կադապարի հետևյալ երկու կարգի իրացումներին.

ա) անորոշ դերբայը խնդրառական հարաբերությամբ լրացնում է տարբեր արժեքի դիմավոր բայերի (*ուզում է գնալ, սիրում է նկարել, ձգտում է հասնել(ու), հրաժարվում է հանդիպել(ուց)* և այլն) կամ էլ հիմնականում ածական վերադրով բաղադրյալ ստորոգյալների (*պատրաստ եմ գնալ(ու), ուրախ եմ ծանոթանալ(ու)* և այլն):

բ) անորոշ դերբայը գուգորդվում է եղանակային այլևայլ երանգներ արտահայտող (կարելիական, անհրաժեշտական, գնահատողական և այլն) միադիմի կապակցությունների հետ, որոնց կազմում հանդես է գալիս է բայը՝ որպես հանգույց (*պետք է գնալ, անհրաժեշտ է մեկնել, հարկավոր է զգուշացնել, հնարավոր է հասնել, հաճելի է տեսնել, դժվար է հավատալ* և այլն):

Այս երկու կարգի կառույցներում էլ հիմնական գործողությունն արտահայտվում է անորոշ դերբայով, իսկ դիմավոր բայը կամ միադեմ կապակցություններն ունեն եղանակավորիչ կամ կերպավորող արժեք: Սրանց տարբերությունը, Գ. Ջահուկյանի բնորոշմամբ, այն է, «որ առաջին դեպքում ենթական դիտվում է որպես ակտիվ, երկրորդ դեպքում՝ որպես պասիվ կողմ (հմմտ. «Ես ուզում եմ գնալ» և «Ինձ հարկավոր է գնալ», թեև

¹ Հոդվածը տպագրվել է «Բանբեր Երևանի համալսարան» հանդեսում, Ե., 2015, հ. 3, էջ 43-54:

հնարավոր են արտահայտության հակառակ ձևերը *ևս. հմմտ. «Ես պարտավոր եմ գնալ»*)²: Սրանց են հարում նաև այն կառույցները, որոնցում անորոշ դերբայը կապակցված է մի բայական հարադրության հետ և նրա հետ կամ մի ամբողջական կառույց է ձևավորում՝ ուղիղ ձևով դրվելով, կամ էլ ընկալվում է որպես հարադրության անվանական մասի հատկացուցիչ՝ դրվելով սեռական-տրական հոլովով (*կարիք չկա խոսել - կարիք չկա խոսելու, հարկ չկա հիշեցնել - հարկ չկա հիշեցնելու, իրավունք ունես տեղեկանալ - իրավունք ունես տեղեկանալու, ցանկություն չունի գնալ - ցանկություն չունի գնալու, հույս ունես քեզ տեսնել - հույս ունես քեզ տեսնելու* և այլն)³: Առանձին է մնում անորոշ դերբայի և *տալ* բայի դիմավոր ձևերի գուգորդմամբ ստացվող կապակցությունը (*Գրել եմ տալիս*)՝ որպես սեռի քերականական կարգի արտահայտության վերլուծական ձև:

Քննության առարկա առաջին կադապարի իրացումները կարելի է խմբավորել՝ նկատի ունենալով գերադաս (դիմավոր) բայի քերականական և իմաստային հատկանիշները⁴:

1. Դիմավոր բայը ներգործական սեռի է և ուժեղ խնդրառությամբ պահանջում է ուղիղ խնդիր: Անորոշ դերբայն այս դեպքում միշտ ուղիղ ձևով է, գերազանցապես առանց հոդի: Անորոշի դիրքում կարող է հանդես գալ գոյական (կամ դերանուն)՝ ուղղական կամ տրական (հայցական) հոլովով (*սիրում է երգել - սիրում է բանաստեղծություն, սկսեց աշխատել - սկսեց գործը, շարունակում է խոսել - շարունակում է ելույթը, սովորում է կարդալ - սովորում է դասը, մոռացել է զգուշացնել - մոռացել է ընկերոջը* և այլն):

2. Խնդրառու դիմավոր բայը սովորաբար չեզոք սեռի է և բայիմաստով պայմանավորված ուժեղ խնդրառությամբ պահանջում է տրական կամ բացառական հոլովներով ձևավորված խնդիրներ: Գոյական (կամ դերանուն) խնդրի դեպքում նշված հոլովները միակ հնարավոր ձևերն են, մինչդեռ նույն դիրքում անորոշ դերբայը ի հայտ է բերում գործառական երկվություն. այն կարող է դրվել նշված (տրական կամ բացառական) հոլովներով՝ ենթարկվելով խնդրառական կանոնին, կամ էլ դրվել ուղիղ ձևով՝ «չհնազանդվելով» խնդրառու բայի պարտադրանքին: Այսպես. *Պատրաստվում է քննության - պատրաստվում է մեկնելու - պատրաստվում է մեկնել, ձգտում է փառքի - ձգտում է*

² Գ. Զահուկյան, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Ե., 1974, էջ 413:

³ Այս մասին տե՛ս Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, Ե., 1965, էջ 470:

⁴ Հմմտ. Մ. Ասատրյան, *Ժամանակակից հայոց լեզու*, Ե., 1987, էջ 159

հասնելու – ձգտում է հասնել, հակված է զիջումների – հակված է ներելու – հակված է ներել, հրաժարվում է ուտելիքից – հրաժարվում է ուտելուց – հրաժարվում է ուտել, վախենում է հանդիպումից – վախենում է հանդիպելուց – վախենում է հանդիպել և այլն): Գերադաս դիմավոր բայի խնդրառությամբ թելադրվող տրական կամ բացառական հոլովների փոխարեն ուղիղ ձևով դրված անորոշ դերբայը (*ձգտել է պատկերել, ամաչում է պատասխանել և այլն*) քերականական ավանդույթով հաճախ կոչվում է «բացարձակ աներևույթ» կամ «բացարձակ անորոշ»:

3. Խնդրառու բայը գոյական կամ դերանուն խնդիրների հետ չի կապակցվում և ունենում է միայն անորոշ դերբայի ուղիղ ձևով արտահայտված լրացում (*համարձակվում է դիմել, աշխատում է չխանգարել, չի կարողանում քնել և այլն*):

Անորոշի և դիմավոր բայի նշված գույությունների և առանձնապես «բացարձակ աներևույթ» կոչվածի մեկնաբանություններում առկա զանազանությունները հանգում են հետևյալ երկու հարցերին տրվող պատասխանների տարբերություններին.

ա. շարահյուսական ի՞նչ արժեք ունի հիշյալ կառույցը. այն մեկ միասնական գործառույթ է դրսևորում, թե՞ շարահյուսական տարբեր պաշտոններ կատարող միավորների կապակցություն է:

բ. ժամանակակից հայերենի նորմի տեսակետից ընդունելի՞ է «բացարձակ աներևույթ», թե՞ դրա գործածությունը սխալ և մերժելի պետք է համարվի:

Այս հարցերի պատասխանները կարծես թե տարբեր հարթություններում են և չպետք է խաչաձևվեն. դիտումները, սակայն, բերում են այն տպավորության, որ դրանք հաճախ փոխալայմանավորված են լինում. «բացարձակ աներևույթի» գործածությունը մերժելի համարելու «հիմնավորումը» հաճախ դրա շարահյուսական արժեքի գնահատման դժվարությունն է լինում: Փորձենք համառոտ ներկայացնել առաջին հարցի հետ կապված տարբեր տեսակետները:

1. «Դիմավոր բայ +անորոշ դերբայ» կառույցը շարահյուսական մեկ միավոր է՝ բաղադրյալ կամ բարդ ստորոգյալ. Դիմավոր բայը ունի եղանակավորիչ-կերպավորիչ արժեք՝ անկախ սեռից (Ս. Աբրահամյան, Հ. Օհանյան, Վ. Առաքելյան, Գ. Զահուկյան)⁵: Գ. Զահուկյանն ընդամին **բարդ ստորոգյալ** է կոչում ոչ միայն անորոշի ուղիղ ձևի, այլև

⁵ Տե՛ս Ս.Աբրահամյան, Հայոց լեզու. Շարահյուսություն,Ե.,2004, էջ30, Ս.Աբրահամյան, Ն.Պառնասյան, Հ. Օհանյան, Խ.Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ.3, Ե.,1976, էջ 159-162, Վ.Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հ.Ա., Ե1958, էջ139-147, Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 412-415:

դրա տրական և բացառական հոլովների զուգորդումները դիմավոր բայի կամ բաղադրյալ ստորոգյալի հետ՝ *ուզում է գնալ, պարտավոր է գնալ, կարող է գնալ, պատրաստ է գնալու, դադարում է քայլելուց* և այլն, ինչպես նաև *հարկավոր է գրել, անհրաժեշտ է ասել, պետք է նշել* տիպի անդեմ (միադեմ) կապակցությունները:⁶ Վ. Առաքելյանը **բարդ ստորոգյալ** տերմինով կոչում է միայն «անվանական և բայական ստորոգյալների միասնությունից» կազմվածները՝ *կարող եմ, անկարող եմ, ուրախ եմ, մտադիր եմ, պատրաստ եմ, հոժար եմ, անգոր եմ + անորոշ դերբայ*, իսկ դիմավոր բայի և անորոշ դերբայի զուգորդումները անվանում է **բայական բաղադրյալ ստորոգյալ**՝ բացառություն անելով այն դեպքերի համար, որոնցում դիմավոր բայը և անորոշ դերբայն ունեն տարբեր ենթականեր՝ *հրամայում է գնալ, ստիպում է խոսել* և այլն:⁷ «Ժամանակակից հայոց լեզու» աշխատության 3-րդ հատորում անորոշ դերբայի կապակցությունները *պետք է, պիտի, անհրաժեշտ է, կարելի է, անկարելի է, անհնար է, կարող է, դժվար է, հեշտ է, ապարդյուն է* և այս կարգի միադիմի ձևերի հետ համարվում են «բաղադրյալ ստորոգյալ անդեմ նախադասությունների համար»⁸:

2. Ներգործական սեռի բայերին զուգադրվող անորոշ դերբայը (*ուզում է գնալ, սիրում է նկարել, սկսում է աշխատել* և այլն) դիմավոր բայի լրացում է՝ ուղիղ խնդիր (Մ. Ասատրյան, Ս. Գյուլբուդաղյան)⁹: Չեզոք սեռի բայերին լրացնող՝ տրական և բացառական հոլովով անորոշ դերբայները (*պատաստվում է գնալու, խուսափում է հանդիպելուց*) համապատասխանաբար հանգման և անջատման խնդիրներ են, իսկ սրանց՝ անորոշի ուղիղ ձևերով տարբերակները (*պատրաստվում է գնալ, խուսափում է հանդիպել*) մեկ միավոր են՝ բաղադրյալ ստորոգյալ: Այս մոտեցումը հստակորեն ձևակերպված է Ս. Գյուլբուդաղյանի կողմից. Մ. Ասատրյանը շարահյուսության բուհական դասագրքում անորոշի ուղիղ ձևով այս կառույցների շարահյուսական դերի մասին որոշակի դիրքորոշում չի արտահայտում, սակայն ավելի վաղ հրատարակած մի աշխատության մեջ այդ կառույցները միանշանակորեն գնահատում է որպես բաղադրյալ ստորոգյալներ: Նա գրում է. «....«Ձգտում է ընդունվել», «Պատրաստվում է մեկնել», «վախենում է ասել», «Ամաչում է

⁶ Տե՛ս **Գ. Զահուկյան**, նշվ. աշխ., էջ 412-413

⁷ Տե՛ս **Վ. Առաքելյան**, նշվ. աշխ., էջ 139, 146:

⁸ **Ս. Աբրահամյան և ուրիշ.**, նշվ. աշխ., էջ 161:

⁹ **Մ. Ասատրյան**, նշվ. աշխ., էջ 159, **Ս. Գյուլբուդաղյան**, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1988, էջ 110:

ընդունվել» տիպի կապակցությունների մեջ անորոշ դերքայը գուրկ է հոլովի քերականական կարգից և դիմավոր բայի հետ կազմում է մեկ միասնական բաղադրյալ ստորոգյալ¹⁰: Այսպես կոչված պարտավորական, կարելիական, անհրաժեշտական և այս կարգի եղանակային իմաստներ արտահայտող *պետք է, անհրաժեշտ է, կարելի է, հաճելի է, տհաճ է* և նման այլ ձևերի ու անհոդ անորոշ դերքայի կապակցություններում Մ. Ա. սատրյանը, հետևելով Աբեդյանին, դերքայը համարում է ենթակա, միադիմի կապակցությունը՝ ստորոգյալ¹¹:

3. «Դիմավոր բայ + անորոշ դերքայ» կառույցի բոլոր իրացումները շարահյուսորեն վերլուծելի են՝ անկախ դիմավոր բայի սեռից և անորոշի հոլովական ձևավորումից (Ռ. Իշխանյան, Հ. Հարությունյան, Ա. Պապոյան և ուրիշներ)¹²: Բնական է, որ ներգործական սեռի բային լրացնող անորոշը պետք է համարվի ուղիղ խնդիր, տրական և բացառական հոլովներով դրվածները՝ անուղղակի խնդիրներ, իսկ թե ինչ շարահյուսական պաշտոններ են կատարում «բացարձակ աներևույթը» կամ միայն դերքայառու դիմավոր բայերի լրացումները (*կարողանում է գնալ* տիպի), սովորաբար մնում է առկախ (Ռ. Իշխանյանը դրանք *անորոշ խնդիր* է կոչում): Մի բան հստակ է. այս տեսակետին հետևողները բացառում են կառույցը մեկ ամբողջական միավոր՝ ստորոգյալ համարելու վարկածը և փորձում են բերել հակադիր փաստարկներ: «Անորոշ դերքայով խնդիր (լրացում) պահանջող բայերը,-գրում է Հ. Հարությունյանը,-կարող են գործածվել ոչ միայն դիմավոր, այլև անդեմ ձևով, հետևաբար բացառվում է կառույցը բաղադրյալ կամ բարդ ստորոգյալ կոչելու հանգամանքը...., օրինակներ. *Առաջարկելով օգտագործել այն հասարակական նպատակների, Պատրաստվելով ընդունել մոտեցող նավին, Չուզենալով նրա մտորումները խանգարել, Աշխատելով զսպել բարկությունը՝ նա հարցրեց* և այլն»¹³: (Այս դրույթը հետագայում վկայակոչում է նաև Գ.Ներսիսյանը¹⁴): Այս կարգի հիմնավորումը, սակայն, տարակուսանք է հարուցում. չէ՞ որ բերվող դերքայական դարձվածները դիմավոր բայով կառույցների փոխակերպներ են: Նման մոտեցմամբ կարելի է ժխտել բաղադրյալ

¹⁰ Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հ.Բ, Ե., 1973, էջ 243:

¹¹ Մ. Ասատրյան, 1987, էջ 163:

¹² Տե՛ս Ռ. Իշխանյան, Արդի հայերենի շարահյուսություն, Ե., 1986, էջք 120-121, 220-221, Հ. Հարությունյան, Կառավարումը ժամանակակից հայերենում, Ե., 1983, էջ 196, Ա. Պապոյան, Ստորոգյալի ըմբռնումը հայ քերականագիտության մեջ, ԲԵՀ, 1992, հ. 2, էջ 118, Գ. Ներսիսյան, Հայերենի բաղադրյալ ստորոգյալի արդի ըմբռնումը, ԲԵՀ, 2002, հ.2:

¹³ Հ. Հարությունյան, նշվ. աշխ. էջ 193:

¹⁴ Տե՛ս Գ. Ներսիսյան, նշվ. հոդվ., էջ 139:

ստորոգյալի գաղափարն ընդհանրապես, քանի որ դրանց վերադիրները ևս փոխակերպման արդյունքում կարող են դառնալ անդեմ բայի լրացումներ (հմմտ. *Դարձավ ուսուցիչ – ուսուցիչ դառնալը, համարվում է ուսանող – ուսանող համարվող, նշանակվեց տնօրեն – տնօրեն նշանակված* և այլն): Նույնքան տարակուսելի է նաև հետևյալ պնդումը. «....Եթե **բայ + անորոշ դերբայ** կառույցն (°-Լ.Թ.) համարվում է մեկ միասնական բաղադրյալ ստորոգյալ, նախադասության մեկ անդամ, ապա անորոշ դերբայն առանձին հարցի չպետք է պատասխանի»¹⁵: Բայց չէ՞ որ բաղադրյալ ստորոգյալի վերադիրը նույնպես պատասխանում է առանձին հարցի. դարձավ բժիշկ – ի՞նչ դարձավ, աշխատում է որպես տնօրեն – որպես ի՞նչ, նրան ընկեր եմ համարել – ի՞նչ եմ համարել և այլն: Ի դեպ, Վ. Քոսյանը ևս դիմավոր բայի և հաջորդող անհոդ անորոշ դերբայի կապակցությունը շարահյուսական մեկ միավոր է համարում՝ դրանց միջև չտեսնելով խնդրառական հարաբերություն: «....Ուզում է մեռնել, փորձեց աշխատել այլևս սովորական բառակապակցություններ չեն, որտեղ դիմավոր բայն այլևս լրացյալ չի դիտվում, այլ երկուսը միասին շարահյուսական մի ամբողջություն են:Սակայն պետք է նշել, որ մի շարք բայերի մոտ անորոշ դերբայը հայցականաձև չի լինում, և տվյալ բայի մոտ անորոշ դերբայն այլևս բայական բաղադրյալ ստորոգյալի բաղադրիչ չէ, այլ ինքնուրույն խնդիր: Այսպես, գործածվում են մի կողմից՝ *շտապեց* կարծիք *հայտնել*, մյուս կողմից՝ *շտապեց* կարծիք *հայտնելու*, *ձգտում է* բարձր արդյունքների *հասնել* և *ձգտում է* բարձր արդյունքների *հասնելու* և այլն: Երկրորդ դեպքում դրսևորվում է բայական բառակապակցություն, որտեղ լրացյալ բառը հանդես է գալիս իր խնդրառական հատկությամբ (մինչդեռ առաջին տեսակի կառուցվածքում այն խնդրառական հատկություն չունի կամ ինչպես հին քերականներից ոմանք էին ասում՝ խնդիրն արգելվել է)»¹⁶:

Ամփոփելով այս հատվածը՝ ուզում ենք նշել, որ մեզ ավելի համոզիչ ու տրամաբանական և ուսուցողական առումով էլ նպատակահարմար է թվում դիմավոր բայի և դրան հետադասված ուղղականաձև անհոդ անորոշ դերբայի կապակցությունը համարել շարահյուսական մեկ միավոր՝ ստորոգյալ (**բաղադրյալ** կամ **բարդ** անվանումը տվյալ դեպքում սկզբունքային չենք համարում): Այս դիրքում և այսպիսի ձևավորմամբ անորոշ դերբայը, կարծում ենք, դրսևորում է իր բայական բնավորությունը, պետք է ընդունի *ի՞նչ անել*

¹⁵ Հ.Հարությունյան, նշվ. աշխ. էջ 206:

¹⁶ Վ.Քոսյան, Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Ե., 1975, էջ 461:

հարցը: Միայն դերբայի հետ գուգորդվող բայերի դեպքում (*աշխատում է, կարողանում է, դժվարանում է, համաձայնում է, համարձակվում է, խորհուրդ է տալիս, հորդորում է* գնալ) անորոշի հոդով կամ թեքված ձևեր հնարավոր չեն, և կառույցի՝ մեկ ամբողջական միավոր համարելը հավանաբար այլընտրանք չունի: Տրական և բացառական հոլովներով, ինչպես նաև հոդ ունեցող ուղղականաձև անորոշ դերբայների և դիմավոր բայերի կապակցությունները (*սկսում է նվազելը, պարաստվում է մեկնելու, հրաժարվում է խոսելուց, իրավունք ունի արտահայտվելու* և այլն) շարահյուսորեն վերլուծելի են. անորոշ դերբայը խնդրի կամ հատկացուցչի պաշտոն է կատարում, կարող է պատասխանել նաև *ի՞նչ(ը), ի՞նչի(ն), ի՞նչից* հարցերին՝ դրսևորելով իր անվանական բնավորությունը: Սրան կարող է նպաստել նաև անորոշի՝ դիմավոր բային նախորդող դիրքը (*նկարել (ի՞նչ) է սիրում*). շարադասության փոփոխությունը տվյալ դեպքում շարահյուսական նշույթի արժեք ունի: Երևի ճիշտ կլինի նման մոտեցումով գնահատել նաև *պետք է, անհրաժեշտ է, հնարավոր է, կարելի է, հաճելի է, ցանկալի է + անորոշ դերբայ* կապակցությունները՝ դիտարկելով դրանք որպես միակազմ նախադասություններ: Այս դեպքում էլ անորոշ դերբայի հոդով կիրառությունները (*խոսելն անհրաժեշտ է, ինձ պետք է քո գնալը* և այլն) միանշանակորեն ենթակայի պաշտոն են կատարում, մինչդեռ այդպիսիք չեն կարող համարվել դրանց հետադաս անհոդ կիրառությունները. այստեղ ևս անորոշը գերազանցապես իր բայական բնույթն է դրսևորում: Ասվածը կարող է հիմնավորվել թեկուզ և նրանով, որ այս դիրքում հանդես եկող բազմակի անորոշ դերբայները կապվում են եզակի թվով դիմավոր բայերի հետ, ինչը հակասում է ենթակայի և ստորոգյալի թվային համաձայնության կանոնին (հմմտ. *մի կողմից՝ Անհրաժեշտ է տեսնել նրան և վերցնել գրքերը, Կարելի է գնալ և անձամբ համոզվել*, մյուս կողմից՝ *Ինձ անհրաժեշտ են քո ներկայանալը և ելույթ ունենալը, Նրա նվազելը և երգելը հաճելի էին մեզ*):

Ինչնէ: Այժմ ժամանակն է անդրադառնալ քննության առարկա կառույցի գնահատման վերևում արդեն հիշատակված մյուս հայեցակետին, որն ավելի շատ ոճաբանության ոլորտին է առնչվում: Խոսքը վերաբերում է բացարձակ աներևութին տրվող գնահատականներին՝ ժամանակակից հայերենի շարահյուսական նորմի (կանոնի) դիրքերից:

Նախընթաց շարադրանքում վկայակոչված աշխատությունների մեծ մասում, անկախ կառույցի քերականական – կառուցվածքային բնութագրումներից, լռելյայն կամ հատուկ շեշտադրմամբ ընդունվում է հայերեն խոսքի մեջ դրա գործածության մեծ

հաճախականությունը, բերվում են բազմաթիվ օրինակներ հայ դասական և ժամանակակից գրականությունից, նշվում է դիմավոր բայերի հետ անորոշի ուղղականաձև կիրառությունների գնալով ավելի տարածվելու միտումը: Հ.Հարությունյանը բերում է նաև վիճակագրական տեղեկություններ. «Պատրաստվել բայը (նաև նույնարմատ *պատրաստ* ածականը) առնում է տրականով լրացում (քննության, քննելու, ելույթի, ելույթ ունենալու, վազելու, վազքի): Մեր 18 օրինակներում այն հավասարաչափ առել է անորոշ դերբայի ուղղական և տրական հոլովներ: Բայ+անորոշ դերբայ կառույց պարունակող 458 նախադասություններից միայն 56-ում է, որ անորոշ դերբայն առնված է տրական և բացառական հոլովներով, այսինքն՝ հարաբերությունը 402 : 56 է:Տարբերակային ձևեր ունեցող բայերը գոյականով լրացում առնելիս կանոնավորապես պահանջում են տրական և բացառական հոլովներ, սակայն երբ գոյականի փոխարեն գործածվում է անորոշ դերբայ, հոլովառությունը տալիս է տատանումներ՝ հոգուտ ուղղականի: Նշանակում է, սա նկատելի միտում է»¹⁷: Այս միտումը Հ. Հարությունյանը բացատրում է համաբանության գործոնով. «Դա լեզվում գործող մի օրինաչափության արտահայտություն է, այն է՝ միօրինակության ձգտման, նմանակության: Քանի որ անորոշ դերբայի ուղղականով լրացումներ առնող բայերի քանակը բացարձակորեն շատ է տրականով և բացառականով լրացումներ առնող բայերից, ուստի նմանակությամբ ոչ ուղղականով լրացում առնող բայերի լրացումն էլ առնվում է ուղղականով, ուղիղ ձևով»¹⁸: Մա տրամաբանական փաստարկում է, թեև քերականական այլ աշխատանքներում անորոշի ուղղականաձև կիրառությունները (սպասելի տրականի կամ բացառականի փոխարեն) համարում են օտար լեզուների (հիմնականում ռուսերենի) կամ գրաբարի ազդեցության հետևանք: Այս տեսակետը ձևակերպել է Մ. Աբեղյանը անցյալ դարասկզբին և կրկնվել հետագա հեղինակների կողմից. «Անորոշ դերբայն իբրև բայանուն իր հոլովով կախված է խնդրառու բառից. բայց երբ այս դերբայն անհոդ է, հաճախ տրական և հայցական հոլովներն իրար հետ շփոթվում են գրաբարի և օտար լեզուների ազդեցությամբ: Իբրև ընդհանուր կանոն պետք է իմանալ, որ անորոշ դերբայը նույն հոլովով է դրվում, ինչ հոլովով որ դրվում է ոչ-դերբայ խնդիրը....»¹⁹: Մա թերևս ներդաշնակում է Աբեղյանի՝ անորոշ դերբայը գոյական համարելու տեսակետին: Այսօրվա լեզվական վիճակը, այնուամենայնիվ, թույլ է տալիս

¹⁷ Հ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 204:

¹⁸ Նույն տեղը, էջ 206-207:

¹⁹ Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 469::

արձանագրել, որ Աբեղյանի նշած «ընդհանուր կանոնից» շեղումներն այնքան են տարածված, որ հիմք կարող են դառնալ մի այլ օրինաչափության հաստատման: Դա այն է, որ, անկախ օտար ազդեցության գործոնից, անորոշի ուղղականաձև կիրառությունները խորթ չեն հայոց լեզվի ոգուն և կառուցվածքին, դրանցում գերակշռում է անորոշի բայական էությունը, ինչը հատուկ է նաև ռուսերենին և այլ լեզուների: Հայերենի անորոշ դերբայը յուրահատուկ է նրանով, որ հավասար չափով ունի նաև անվանական բնույթ՝ արտահայտված առաջին հերթին հոլովի քերականական կարգի միջոցով: Բացարձակ աներևույթի լեզվական էությունն այս առումով բավական հիմնավոր մեկնաբանության է արժանացել Մ.Ասատրյանի հիշյալ ուսումնասիրության՝ անորոշ դերբային նվիրված հատվածում: Որոշակի թերահավատություն արտահայտելով բացարձակ աներևույթի գոյությունը հայերենում օտար լեզուների ազդեցությամբ բացատրելու արեղյանական դրույթի նկատմամբ՝ լեզվաբանը անորոշի ուղիղ և թեք ձևերով կառույցները համարում է շարահյուսական համանիշներ, բերում է տասնյակ բնագրային օրինակներ և բացարձակ աներևույթի մասին էլ գրում է. «....հենց այն բանը, որ նա (բացարձակ աներևույթը – Լ. Թ.) իր հոլովական ձևով կախված չէ խնդրառու բառից, նշանակում է նրա մեջ սոսկ դրսևորված է գործողության, ընթացքի իմաստ. անորոշ դերբայն այդ դեպքում չի արտահայտում բայանվանական նշանակություն, հետևաբար և նրա մեջ չկա առարկայական իմաստ: Բացարձակ աներևույթը իր այս էության, այսինքն՝ բայական էության համապատասխան՝ պատասխանում է միայն *ի՞նչ անել* հարցին, բայց ոչ երբեք *ի՞նչ* հարցին, օրինակ՝ նա ձգտում է *ի՞նչ անել* – ընդունվել, պաշտպանել, դաստիարակել, հասնել. Ամաչում է *ի՞նչ անել* – ասել, խոստովանել, հանդիպել, տեսնել, և այլն»²⁰: Թե՛ այս և թե՛ բացարձակ աներևույթի՝ շարահյուսագիտական տարբեր աշխատություններում եղած նկարագրությունները, կառույցի համատարած գործածությունը գրողների, մտավորականության խոսքում արդյոք հիմք չե՞ն տալիս ասելու, որ գործ ունենք հայերենի շարահյուսական կանոնի մեջ արդեն իսկ արմատ նետած կառույցի հետ՝ անկախ իր «բնիկ» կամ «օտարածին» լինելուց: Այնուամենայնիվ, մասնագիտական գրականության մեջ արտահայտվել են և շարունակում են արտահայտվել տեսակետներ, թե բացարձակ աներևույթը հայերենին խորթ, սխալ և մերժելի կառույց է: Ստորև ներկայացնենք դրանցից մի երկուսը:

²⁰ Մ.Ասատրյան, նշվ. աշխ., 1973, էջ 242-243:

«Հայ լեզուն և մեր խոսքը» գրքում, որ արևելահայերենի շատ օգտակար գործնական մի ուղեցույց է, Պ. Բեդիրյանը բացարձակ աներևույթի գործածությունը համարում է «մեղանչում հայերենի օրենքի դեմ», և ավելացնում, որ «....մեղանչումներն էլ շատ, շատ են, շատերի բանավոր ու գրավոր խոսքի մեջ»²¹: «Հետաքրքրականն այն է,-գրում է լեզվաբանը,-որ լեզվին անգամ վատ տիրապետող մեկը երբեք «աշխատանք հրաժարվել» կամ «պատասխան խուսափել» և այլն չի ասի: Բայց հենց որ *աշխատանք* գոյականի փոխարեն *աշխատել*-ն է գործածում կամ *պատասխան*-ի փոխարեն՝ *պատասխանել*-ը, հայերենի օրենքի դեմ մեղանչում է»²²: Ահա հայ մամուլից քաղված տասնյակ այդ կարգի օրինակներից մի քանիսը. «*Լիազորված է* երկու համալսարանների գործակցության հարցերով *զբաղվել*», «Նա *համաձայն է* պաղեստինցիներին նաև մի շարք զիջումներ *անել*», «Երբեք *չի վախեցել* ճշմարտությունը խոսակցի երեսին *ասել*», «Սրբապղծություն կլինի...., եթե մենք *հրաժարվենք* մեր խաչը *կրել*» և այլն: Բոլորն էլ միանշանակ սխալ է համարում և այդ կարգի սխալներից խուսափելու գործնական միջոցներ է առաջարկում. «....Եթե բայի հետ *ինչի՞ց* հարցն եք տալիս, ուրեմն նրա կողքին *-ելուց, - ալուց* ձևը (անորոշ դերբայի բացառականը) դրեք», «....Եթե բայի հետ *ինչ՞ի(ն)* հարցն եք տալիս, ուրեմն նրա կողքին *-ելու, -ալու* ձևը (անորոշ դերբայի տրականը) դրեք»²³: Խնդրառական օրինաչափությունն, իհարկե, ստույգ ներկայացված է, բայց հանիրավի անտեսված չէ՞ արդյոք անորոշ դերբայի բայական էությունը (*ի՞նչ անել* հարցն առնող):

Այս մոտեցումը իր արտահայտությունն է գտել նույնիսկ դիմորդներին հասցեագրվող շտեմարանում (բարեբախտաբար քննական թեստեր չի թափանցել). ահա այդպիսի առաջադրանքի օրինակ.

«4. Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա»: Հարցի ճիշտ պատասխան է համարված հետևյալը. «*Մենք խուսափում էինք նրան որևէ հարց տալ, որովհետև համոզված էինք, որ կխաբի*»²⁴:

Խնդրո առարկային նմանատիպ գնահատական է տվել Ա. Պապոյանը: Առարկելով Վ. Առաքելյանի՝ բարդ ստորոգյալի ըմբռնմանը՝ նա գրում է. «....Այսպես՝ «Անգոր էր հասկանալ» և «Ուրախ եմ ծանոթանալ» նախադասությունները համարված են ամբողջովին

²¹ Պ.Բեդիրյան, Հայ լեզուն և մեր խոսքը, Ե., 1999, էջ 131:

²² Նույն տեղը:

²³ Նույն տեղը, էջ էջ 135:

²⁴ Հայոց լեզու և գրականություն, 2012թ. պետական ավարտական և միասնական քննությունների շտեմարան, մաս 4, էջ101:

մեկական բարդ ստորոգյալներ, մինչդեռ սրանք սխալ խնդրառության հետևանք են. պետք է լինեն «Անգոր էր հասկանալու» և «Ուրախ եմ ծանոթանալու», այսինքն՝ սովորական բաղադրյալ ստորոգյալներ (*ուրախ եմ, անգոր էր*)՝ համապատասխան լրացումներով՝ դրված անորոշ դերբայի սեռական-տրական հոլովով:

Ինչ վերաբերում է բերված բնագրային վկայություններին (Շիրվանզադեից ու Շաթիրյանից), թեև դրանք տարածված են, սակայն ակնհայտ օտարաբանություններ են, ուստի սերենից պատճենման արդյունք (рад познакомиться), ուստի և մերժելի են: **Բնավ կարիք չկա դրանք օրինականացնել, վրան էլ տեսություն մշակել** (ընդգծումը մերն է – Լ. Թ.)²⁵: Քաղվածքի վերջին նախադասությունը ընդգծեցինք ուշադրություն հրավիրելու համար այն փաստի վրա, որ հենց այստեղ էլ մեծարգո լեզվաբանն ինքը գործածել է իր իսկ մերժելի համարած «օտարաբան» կապակցությունները (*կարիք չկա....օրինականացնել,.... մշակել*), այնքան սովորական են դրանք հայերեն խոսքում:

Բացարձակ աներևույթի գործածությունը հայերենի համար անթույլատրելի շեղում է համարում նաև հարցին առնչվող ամենաթարմ հրապարակման հեղինակ Դ. Սաքայանը: Կառույցի տարածված լինելը նա բացատրում է մեզանում լեզվաբանական գիտության թերացումով: «Բավական է մի հայացք նետել մեր լեզվում բայերի արժույթների իրացման այսօրվա եղանակներին, և կհամոզվենք, թե որքան ետ է մնացել մեր կիսառական լեզվաբանությունը»,²⁶ – գրում է նա: Հետաքրքիր է, որ իր կողմից եղանակավորող անվանվող բայերի (*ուզում եմ, կարող(անում) եմ, սկսում եմ* և այլն) և անորոշ դերբայի կապակցությունները նա բաղադրյալ ստորոգյալ է համարում. անորոշն այստեղ խնդիր չի համարվում և պատասխանում է միայն *ի՞նչ անել* հարցին, իսկ որպես բացարձակ աներևույթ (ինքն այս տերմինը չի գործածում) հանդես եկող անորոշի ճիշտ ձևը որոշելու համար իբրև ստուգիչ հարց ընդունվում է միայն *ի՞նչ-ը (ինչի՞ց է նա հրաժարվում – նա հրաժարվում է ծխելուց)*. *ի՞նչ անել* հարցն այս դեպքում, չգիտես ինչու, բացառվում է: Համենայն դեպս մենք համաձայն չենք Դ. Սաքայանի այն եզրահանգմանը, թե «....պարզորոշ է, որ այսօր «պատրաստ եմ գնալ» տիպի նախադասությունները հայոց լեզվի տրամաբանության մեջ որևէ հենարան չունեն»²⁷:

²⁵ Ա. Պապոյան, Ստորոգյալի ըմբռնումը հայ քերականագիտության մեջ, ԲԵՀ, 1992, հ. 2, էջ 118:

²⁶ Դ. Սաքայան, Խնդրառության մի քանի հարցեր, Ջահուկյանական ընթերցումներ, 2014, էջ 180:

²⁷ Նույն տեղը, էջ 181-182: Ի դեպ, մենք համամիտ ենք Դ. Սաքայանի հետ, երբ նա նույն հոդվածի երկրորդ մասում անդրադառնում է *որպեսզի* շաղկապի օտարաբան կիրառություններին (*ուզում եմ, որպեսզի...., կարևոր է, որպեսզի...* և նման կառույցներում): Սակայն կարծում ենք, որ սրանք իրենց կիրառության

Կարևոր ենք համարում անդրադառնալ հողվածի հեղինակի ևս մի նկատառման: «Մխալների այս անսանձ տարածումը,-գրում է նա,-ավելի է խորացնում այն անջրպետը, որ առանց այն էլ գոյություն ունի մեր լեզվի երկու ճյուղերի՝ արևելահայերենի և արևմտահայերենի միջև լեզվական որոշ մակարդակներում: Այս անգամ կարծես հերթը հասել է շարահյուսությանը...»²⁸: Բացարձակ աներևույթի կիրառության մասով այսպիսի պնդում անելը հավանաբար ճիշտ չէ. այս կառույցը հավասարապես, գուցե և ավելի մեծ չափով, տարածված է նաև արևմտահայերենում (և այս դեպքում բնականաբար ավելորդ է խոսել ռուսերենի ազդեցության մասին): Ահա մի քանի օրինակ Պարոնյանից. «Խորեն *չուշացավ հայտնել*, թե յուր ծնունդովն բանաստեղծ մ' ալ ավելցավ ազգին և ոչ թե փորձանք» (Երկեր, Ե. 1969. Էջ 22 «Երբեք *նպատակ ունեցած չենք* ո՛չ փափուկ ստամոքսի տեր ընթերցողներուն մարտողությանը *ծառայել* և ո՛չ ալ քիչ կերակուր ուտողներուն ախորժակը *բանալ*» (Էջ 21), «Ինք ամեն *ճիգ կթափեք* դներու գոյությունը *հաստատել* յուր գոյությամբը» (Էջ 49), «Կնքահայրն, որ վարժված էր գավակին տալ ինչ որ ուզեր, չհամարձակեցավ սանին խնդիրքը մերժել» (Էջ 96), «Ըստ քաղաքավարության ոչ որ *իրավունք ունի բողոքել* իրեն ուղղված այն հայհոյությանց դեմ, որք առաջին ձայնով չեն երգվի», «Կիներեն շատերն այն ատեն միայն կհագվին, երբ *դուրս ելնել* կամ *հյուր ընդունիլ հարկ ըլլա*» (Էջ 12), «Եթե երբեմն *բամբասանք ընել պետք ըլլա*՝ խիստ քաղաքավարությամբ կը վարվին» (Էջ 12) և այլն: Ավելորդ չէ նշել նաև, որ արևմտահայերենում տարածում ունի անորոշ դերբայի ուղղականաձև կիրառությունը նպատակի պարագայի պաշտոնով, մի բան, որ արևելահայերենում սակավադեպ է և ոչ նորմատիվ: Օրինակ. «Հռովմեն հոս *ղրկված էր* մոլորյալ և հերետիկոս քրիստոնյաները *համոզել*, որ ս. պապին հողաթափը համբուրեն» (Պար. 49), «Եվ ալիք մը թևը բացած *կը վազե / գրկել* ափունքն իդձիս ոսկե ավազե» (Մեծարենց, 81):

Առարկելի է նաև մի այլ հրապարակման մեջ տեղ գտած այն դիտարկումը, թե անորոշի ուղղականաձև կիրառությունները հատուկ են ռուսական կրթություն ունեցողների խոսքին²⁹: Ուրում ենք բերել ևս մի քանի օրինակներ, որոնց հեղինակների (Հ. Թամրազյան, Վ. Փափազյան) հայոց լեզվին անթերի տիրապետելու փաստը կասկած չի կարող

ուրորտի առումով (տարածված են հատկապես մամուլում և քաղաքական գործիչների խոսքում) համեմատելի չեն բացարձակ աներևույթի հետ, մնում են որպես լեզվական կանոնի կողմից առայժմ գոնե չուրացված և լեզվական ցածր ճաշակի արտահայտություններ են:

²⁸ Նույն տեղը, էջ 185:

²⁹ Տե՛ս Հ. Զաքարյան, Բացարձակ աներևույթի և համանման կառույցների զուգաձևերը հայերենում, Ջահուկյանական ընթերցումներ, 2007, էջ 86:

հարուցել. «Թումանյանը *ձգտել է* բնականի սահմաններում *պահել* երեխայի հոգեբանությունը, հայացքն ու միտքը», «...Նա *ձգտում է* պատկերին *հաղորդել* շարժուն երանգ, տողերին *տալ* կենդանի, ապրող տարերքի շունչը» (Հ.Թամրազյան, «Հովհաննես Թումանյան» Ե.1995, էջ 100, 109), (ընդհանրապես «ձգտել» բային գուգադրվելիս անորոշը գրեթե առանց բացառության ուղղականաձև է կիրառվում)

«Հանդիսատեսը ի բնե *հակամետ է սեփականացնել* իր պաշտամունքի առարկային, որով ցանկալին դառնում է սովորական» (Վ. Փափազյան, «Աֆորիզմներ», Ե., 2003, 85), «Մարդն *անգոր է* կատարվածը *դարձնել* չկատարված» (ն. տ., 44), «Մարդկային անթիվ զգացմունքների շարքում սերն է միայն, որ *ընդունակ է արտահայտվել* առանց խոսքի» (ն. տ., 90), «Երբ տարիների վայրէջքը ոտք դրած մի կին շատ բնական *ցանկություն ունի* ամեն միջոցով *կառչել* իրենից հեռացող երիտասարդության փեշերից, ներելի է», «Եթե բախտի բերմամբ մի Եվայի թոռ *դատապարտված է անհաղորդ մնալ* ամուսնական կյանքին, թող իրեն օրիորդ կարծի...» (ն. տ., 100):

Այս և նմանատիպ բազմաթիվ այլ օրինակները, կարծում ենք, նույնքան բնական են այսօրվա հայերենում, որքան և սրանց՝ անորոշ դերբայի թեքված ձևերով տարբերակները: Երևի մասամբ բացարձակ աներևույթից խուսափելու չափազանցված ճիգի արտահայտություն են այն ոչ սակավաթիվ սխալները, որոնցում անորոշը տրականի ձևով է դրվում՝ ուղղականի փոխարեն (թույլ եմ տալիս գնալու (փխ. գնալ), պարտավորվում եմ ավարտելու (փխ. ավարտել) և այլն: Ահա մի օրինակ գիտական զեկուցումից. «...Նրանց արտոնել են առանց մաքսի առևտուր անելու, վերակացու ընտրելու»: Հետևյալ օրինակներն էլ քաղել ենք Ազգային ժողովի փոխխոսնակի խոսքից. «Պարո՛ն նախարար, շարունակե՛ք պատասխանելու», «Նախագահը խնդրել է վարչապետին շարունակելու իր պաշտոնավարությունը»:

Նման սխալներից, իրոք, պետք է խուսափել:

Telyan Leonid - On Various Interpretations of the Structure “Finite Verb+ Infinitive”.

- The article addresses the various interpretations of the structure “Finite Verb+Infinitive” in contemporary Armenological studies.

All the pros and contras discussed in a wide range of Armenological research works concerning the topic have been analyzed from the perspective of both its syntactic function and its correspondence to the normative usage.

Телян Леонид - К интерпретации конструкции “личный глагол+инфинитив”. - Конструкция “личный глагол+инфинитив” в современном армянском языке неоднозначно оценивается специалистами как с точки зрения ее грамматической природы, так и в аспекте ее соответствия действующей нормы современного армянского языка.

В статье рассматриваются разные подходы к интерпретации данной конструкции и делается попытка некоторых выводов и обобщений.

Ժամանակակից հայերենի շարահյուսական կառուցվածքի ուսումնասիրությունը սովորաբար ավարտվում է նրա եզրային միավորի՝ բարդ նախադասության քննությամբ (եթե զանց առնենք տեքստի (հենքի) մակարդակը): Որպես ելակետային կառույց ընդունվում է բարդ նախադասության երկբաղադրիչ կաղապարը. սրա բաղադրիչ մասերի միջև հնարավոր իմաստային և քերականական կապերի, դրանց դրսևորման տարբեր ձևերի հաշվառումով էլ առանձնացվում են բարդ նախադասության տարբեր տեսակներ՝ համադասական, ստորադասական, զոդվածական (շաղկապավոր), շարահարական (անշաղկապ) և այլն:

Բնական է, որ հայերեն խոսքի տարբեր ոճերում լայնորեն կիրառվում են նաև երկուսից ավելի բաղադրիչ մասերից կազմված բարդ նախադասություններ, որոնք ևս չեն անտեսվել շարահյուսագիտական աշխատություններում՝ անվանվելով բազմաբարդ (Մ.Աբեղյան), բազմաբաղադրիչ (Ս.Աբրահամյան), հարաբարդ (Գ. Ջահուկյան) տերմիններով²:

Երկբաղադրիչ և բազմաբաղադրիչ կառույցների իրացումները մասերի շարահյուսական հարաբերությունների բնույթի և դրանց դրսևորման ձևերի առումներով միմյանցից էապես չեն զանազանվում, ուստի բազմաբաղադրիչ բարդ նախադասությունները հաճախ շարահյուսագիտական աշխատանքներում առանձին քննության չեն էլ արժանանում: Բազմաբաղադրիչ նախադասությունների տարբեր տեսակների առանձնացումը հիմնված է լինում բաղադրիչ մասերի միջև առկա հարաբերությունների տարբեր համակցությունների վրա: Այդ համակցություններն էլ զուգահեռվում են պարզ նախադասու-

¹ Հոդվածը տպագրվել է «Հայագիտության հարցեր» հանդեսում, հ. 1 (17), 2016, Ե., էջ 142-152:

² Գ. Ջահուկյանը *հարաբարդ* տերմինով նշում է միայն ստորադասական կառույցները: Տե՛ս նրա Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 536:

թյունը կազմող բառերի՝ նախադասության անդամների միջև գոյություն ունեցող շարահյուսական հարաբերությունների հետ:³ Մակայն պետք է նկատի ունենալ, որ այդպիսի զուգահեռականությունը բացարձակ չէ. բարդ կառույցներ բաղադրող նախադասությունները, իրենք արդեն իսկ օժտված լինելով առանձին կառուցվածքներով, տարբեր կարգի լրացումներ ստանալու և զուգորդման տարբերակների ավելի մեծ բազմազանություն են ենթադրում: Դրանց նկարագրությունն ու դասակարգումն էլ տեսական և ուսուցողական որոշակի հետաքրքրություն են ներկայացնում:

Մեր շարահյուսագիտության մեջ, ինչպես հայտնի է, բարդ նախադասության տեսական համակարգված քննությունը սկիզբ է առել Մ.Աբեղյանի «Աշխարհաբարի շարահյուսությունից»: Հենց այստեղ էլ «բազմաբարդ խոսքերը» հստակորեն տարաբաժանվում են երկու՝ համադասական և ստորադասական տեսակների, սրանց ներսում էլ առանձնացվում են զուգորդային տարբերակները: Ահա այդ բաժանման ամբողջական պատկերը.

«I. **Համադասությունը** (ընդգծումները բնագրում են- L..Թ.) բազմաբարդ է լինում՝

1. Երբ կազմված է լինում երկուսից ավելի պարզ անկախ խոսքերից....:

2. Երբ համադաս խոսքերից մեկը կամ մի քանիսը կամ ամեն մեկը ինքը բարդ է, կազմված լինելով՝ ա) երկու կամ ավելի համադաս խոսքերից և բ) մի գլխավոր և մի կամ ավելի երկրորդական խոսքերից, որոնք իրենց կողմից նույնպես կարող են երկրորդ կարգի երկրորդական խոսքեր ունենալ....:

II. **Ստորադասությունը** բազմաբարդ է լինում՝

Ա. Երբ գլխավոր խոսքն ունի երկու և ավելի երկրորդական խոսքեր, որոնք կարող են վերաբերել

1. Գլխավոր խոսքի տարբեր մասերին....

2. Գլխավոր խոսքի միևնույն մասին, այն էլ՝

ա) Իբրև տարբեր տեսակի (իմա՝ տարբեր պաշտոններ կատարող-Լ. Թ.) երկրորդական խոսքեր....:

բ) Իբրև նույն տեսակի երկրորդական խոսքեր կամ համաստորադաս խոսքեր....:

³ Հմմտ. Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1987, էջ 32-33:

Բ.Երբ երկրորդական խոսքերն ևս իրենց կողմից, ինչպես մի գլխավոր խոսք, ունին երկրորդական խոսքեր վերևում նշված ձևերով,- երկրորդ կարգի երկրորդական խոսքեր և այլն...»⁴:


Աբեղյանական այս սխեման (ինչպես և նրա շարահյուսագիտական շատ այլ գաղափարներ) իր հիմնական գծերով կրկնվում է հետագա հեղինակների կողմից՝ անշուշտ, որոշ մասնավորումներով կամ հավելումներով, տերմինային համապատասխան հանդերձավորմամբ:

Ակադ. Գ. Սևակն իր հեղինակած շարահյուսության դպրոցական դասագրքում հատուկ անդրադառնում է Աբեղյանի կողմից «համաստորադաս խոսքեր» անվանված նախադասություններին, սահմանում է դրանք և բերում համապատասխան օրինակներ: Բազմաբարդ խոսքերի կառուցվածքային մյուս տարբերակներին առանձին անդրադարձ չկա այս դասագրքում, սակայն «Համաստորադաս նախադասություններ» վերնագրի տակ ներկայացվում են նաև այլ բնույթի կառուցվածքներ, որոնց հեղինակային բնութագրումները սկզբունքային առումով բավական հետաքրքիր են: «Բարդ ստորադասական նախադասության մեջ,- գրում է Գ.Սևակը,- համադաս նախադասություն կարող են ունենալ ոչ միայն երկրորդական, այլև գլխավոր նախադասությունները: Գլխավոր նախադասության համադաս նախադասությունը ինքն էլ դառնում է գլխավոր, եթե երկրորդական նախադասությունը հավասարապես լրացնում է երկու գլխավոր նախադասությունների միտքը. Օրինակ՝ *Երբ զանգը տրվում է, բոլորս մտնում ենք դասարան, և դասն սկսվում է: Շատերը գիտեին, բայց ես վերջերս իմացա, որ ռադիոընդունիչների մեջ լամպերի փոխարեն օգտագործվում են կիսահաղորդիչներ*»:⁵ (Այս կառույցի մասին խոսք կլինի ստորև): Շարունակության մեջ Գ. Սևակը ներկայացնում է մի այլ կառույց ևս, որը, ինչպես երևում է, նախորդի տարբերակն է համարում և նրա հետ միասին էլ հատկացնում է ստորադասական տիպին: «Լինում են սակայն և այնպիսի դեպքեր, երբ գլխավոր նախադասությանը ստորադասված երկրորդական նախադասությունը բոլորովին չի վերաբերում գլխավորին համադաս նախադասությանը: Օրինակ՝ *Ես պատասխանեցի, որ կիսահաղորդիչները փոխարինում են լամպերին, և ուսուցիչը ինձ գովեց: Այստեղ որ կիսահաղորդիչները փո*

⁴ Մ.Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջք 671-673:

⁵ Գ. Սևակ, Հայոց լեզու, Եր., 1982, էջ 111:

խարհնում են լամպերին երկրորդականնախադասությունը լրացնում է միայն *ես պատասխանեցի* նախադասության միտքը (*ի նչ* պատասխանեցի), բայց կապված չէ *ուսուցիչը ինձ գովեց* նախադասության հետ: Հետևաբար, թեև *ուսուցիչը ինձ գովեց* նախադասությունը համագոր է գլխավոր նախադասությանը, բայց գլխավոր չէ երկրորդական նախադասությանը, այլ միայն գերադաս է նրա համեմատությամբ⁶: Սույն օրինակը կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերով.



Բերված երկու կառուցատիպերն էլ Գ. Սևակը ստորադասական է համարում և որպես ընդհանուր եզրահանգում գրում է. «Գլխավոր և երկրորդական նախադասությունների փոխադարձ հարաբերության այս տարբերությունները, ինչպես և համաստորադաս նախադասությունների առկայությունը, բարդ ստորադասական նախադասության կառուցվածքի էական փոփոխություն չեն ստեղծում, ուստի և քերականական տարբերանուններով կոչելը սխալ է:

Կա միայն բարդ ստորադասական նախադասություն՝ անկախ գլխավոր և երկրորդական նախադասությունների քանակից և հարաբերություններից, կան համադաս գլխավոր նախադասություններ, գլխավորին համադասվող գերադաս նախադասություններ, կան համաստորադաս երկրորդական նախադասություններ, բայց չկա բարդ համաստորադասական նախադասություն, բարդ համագերադասական նախադասություն, բարդ համաստորագերադասական նախադասություն:

Շատ ճյուղավորված և բարդ նախադասությունը կարելի է կոչել բազմաբարդ»⁷:

Դժվար է դպրոցական դասագրքի այս հատվածը բազմաբաղադրիչ բարդ նախադասությունների շատ թե քիչ ամբողջական դասակարգում համարել. վերոբերյալ դիտարկումները, ինչպես նշեցինք, արված են համաստորադաս նախադասությունների առնչությամբ և վերաբերում են ստորադասական տիպին: Սակայն Գ. Սևակի բերած օրինակներից գոնե մեկը (*Ես պատասխանեցի, որ կիսահաղորդիչները փոխարինում են լամպերին*,

⁶ Նույն տեղում, էջ 112:

⁷ Գ. Սևակ, նշվ. աշխ., էջ 112:

և ուսուցիչն ինձ գովեց) միանշանակորեն համադասական նախադասություն է (տե՛ս գծապատկերը):

Բազմաբաղադրիչ բարդ նախադասություններին անդրադարձել են նաև հետաքննարկողական շրջանում բարդ նախադասության շարահյուսությունն ուսումնասիրող մյուս հեղինակները:

Այսպես, Գ. Գարեգինյանի և Մ. Աբեղյանի դասակարգումների միջև կարելի է նշել հետևյալ մասնակի անհամապատասխանությունները. ա) Գարեգինյանը գործածում է «խառը տիպ» անվանումը համադասական այն կառույցների համար, որոնց համադասվող բաղադրիչները իրենց հերթին բարդ ստորադասական նախադասություններ են և բ) ստորադասական կառույցների մեջ որպես ինքնուրույն տեսակ նշում է մեկից ավելի գլխավորներով և ընդհանուր երկրորդական(ներ)ով տարբերակը (որը, ինչպես տեսանք, նշվել է նաև Սևակի դասագրքում): Բազմաբաղադրիչ ստորադասական մյուս կառուցատիպերը անվանվում են **համաստորադասում** (երկու տիպի՝ համասեռ և անհամասեռ երկրորդականներով) և **ենթաստորադասություն** կամ **հաջորդական ստորադասություն**⁸:

Ա. Պապոյանը, նույնպես հետևելով Աբեղյանի դասակարգմանը, ավելի մանրամասնում է այն. համադասական կառույցը, օրինակ, ենթատեսակների է բաժանում ըստբաղադրիչ նախադասությունների միջև առկա նույնաբնույթ (ասենք՝ միայն միավորական, միայն ներհակական և այլն) և տարաբնույթ (օրինակ՝ միավորական և ներհակական և այլն) իմաստային հարաբերությունների, նաև ըստ բաղադրիչների «կառուցվածքային արտահայտության» (բաղադրիչներն առանձին պարզ նախադասություններ են կամ էլ բարդացված են ստորադասությամբ): Ստորադասական տիպի ներսում էլ նշվում են նույն տարբերակները, որոնք քննվել են Գարեգինյանի գրքում. այստեղ, սակայն, տերմինային էական նորամուծություն է կատարվում. մեկից ավելի գլխավորներով և ընդհանուր երկրորդական(ներ)ով կապակցությունը կոչվում է **հանրաստորադասություն**⁹:

Բազմաբաղադրիչ նախադասությունների դասակարգման, այլև դրա տեսական հիմնավորման և առանձնացվող տեսակների գիտական տերմինավորման հարցերը ըստ պատշաճի ներկայացված են նաև ակադ. Ս. Աբրահամյանի շարահյուսագիտական աշ-

⁸ Տե՛ս Գ. Գարեգինյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1984, էջ 319-340:

⁹ Տե՛ս Ա. Պապոյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Եր. 2003, էջք 377-406:


խատություններում, առավել ամփոփ ու ամբողջական՝ շարահյուսության բուհական ձեռնարկում: Այստեղ բարդ նախադասությունները նախապես բաժանվում են **համասեռ** և **տարասեռ** տեսակների. «Համադասական և ստորադասական հարաբերությունները բարդ նախադասության կառուցվածքում կարող են հանդես գալ միայնակ և զուգորդված: Ըստ այդմ՝ բարդ նախադասությունները կարելի է բաժանել երկու խմբի՝ **համասեռ** և **տարասեռ**: Սա վերաբերում է բարդ նախադասության երկու տեսակներին՝ թե՛ համադասական, թե՛ ստորադասական: Հասկանալի է, որ երկբաղադրիչ բարդ նախադասությունները կարող են լինել միայն համադասական կամ ստորադասական: Ուրեմն՝ հիշյալ բաժանումը կարող է վերաբերել բազմաբաղադրիչ (երեք և ավելի բաղադրիչ ունեցող) բարդ նախադասություններին»¹⁰: Ի՞նչ սկզբունքով պետք է առաջնորդվել տարասեռ բարդ նախադասությունը համադասական կամ ստորադասական տիպին հատկացնելիս: «Այս հարցում, գրում է Ս.Աբրահամյանը, -մեզ օգնում է նախադասության (կառույցի) **անմիջական բաղադրիչներ** հասկացությունը՝ ի տարբերություն **միջնորդավորված բաղադրիչների**»¹¹: Վերլուծության այս եղանակը, հայտնի է, կիրառելի է լեզվական այլ մակարդակների միավորների նկատմամբ: Համեմատության համար հեղինակը վերլուծում է «անցուդարձ անել» հարադիր բարդ բառը, որի անմիջական բաղադրիչները (**անցուդարձ** և **անել**) կապված են ստորադասական հարաբերությամբ, իսկ դրանք էլ իրենց հերթին վերլուծվում են (**անցուդարձ**՝ համադաս բաղադրիչներով կցական բարդություն, **անել**՝ բայահիմքով և **-ել** ձևությամբ կազմված համադրական բայաձև): Վերլուծության երկրորդ աստիճանում ստացվող բաղադրիչները կառույցի տեսակը որոշելու հիմք չեն ծառայում. «անցուդարձ անել» բարդ բառի բաղադրիչների համար գերակա է ստորադասական հարաբերությունը, որով կապակցվել են դրա անմիջական բաղադրիչները (հմմտ. «հիմնակադապար» և «ենթակադապար» հասկացությունները Գ. Ջահուկյանի տերմինաբանությամբ):

Այսպիսով, տարասեռ բազմաբաղադրիչ կառույցները գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել անմիջական բաղադրիչների միջև առկա հարաբերությունը, որը գերակա է միջնորդավորված բաղադրիչների (ենթակադապարային միավորների) միջև առկա հարաբերության նկատմամբ: «Արամը գնաց գյուղ, որպեսզի մի քանի օր հանգստանա, բայց


¹⁰Ս. Աբրահամյան, Հայոց լեզու: Շարահյուսություն, Եր., 2012, էջ 106:

¹¹Նույն տեղում:

նրան հետ կանչեցին, որպեսզի լուծի անհետաձգելի մի հարց» նախադասությունը ներկայացնում է տարասեռ համադասական կադապար.



«Ես տեսա, որ նա կարդաց այդ նամակը, և նրա աչքերը խոնավացան» նախադասությունը տարասեռ ստորադասական կառույց է ներկայացնում.



«Այսպիսով,- եզրակացնում է Ս. Աբրահամյանը,- բազմաբաղադրիչ նախադասություններում տարբեր հարաբերությունների առկայությունը բնավ չի նշանակում, թե դրանք խառը նախադասություններ են: «Խառն» անվանումը ճիշտ չի արտահայտում այդ նախադասությունների կառուցվածքը: Պարզապես անհրաժեշտ է ճիշտ որոշել տարբեր հարաբերությունների ստորակարգությունը, հարաբերությունների մեջ գերադասն ու ստորադասը և նրանց զուգորդումը: Լեզվի մեջ խառը ոչինչ չկա: Ամեն ինչ օրինաչափական է:

Այս դեպքում պարզապես պետք է ճիշտ որոշել համադասության և ստորադասության ստորակարգությունը և դրանց տարբեր զուգորդումները նույն նախադասության մեջ:

Դրանք կամ ստորադասական են՝ համադասության զուգորդումով (զուգորդումներով), կամ համադասական են՝ ստորադասության զուգորդումով (զուգորդումներով):

Առաջին տեսակը կոչվում է **բարդ համաստորադասական նախադասություն** (հարաբերություն): Թերևս նույն սկզբունքով երկրորդ տեսակը կարելի է կոչել **բարդ**

ստորահամադասական նախադասություն (հարաբերություն) նկարագրական ձևակերպումով՝ բարդ համադասական նախադասություն՝ ստորադասության գուգորդումով»¹²:

Համաստորադասական կապակցությունը այդ տերմինով հայտնի է Աբեղյանի հիշյալ գրքից սկսած, մինչդեռ **ստորահամադասություն** ձևակերպումով առաջին անգամ բնութագրվող կապակցությունը, Ս. Աբրահամյանի կարծիքով, «դեռևս կարիք ունի վերլուծման ու գնահատության»:¹³ Բազմաբաղադրիչ ստորադասական կառույցների համար Աբրահամյանը առանձնացրել է համաստորադաս, ենթաստորադաս, տարաստորադաս (սա վերոհիշյալ հեղինակների կողմից «անհամասեռ ստորադասություն» է կոչվում), երկրորդականներով տարբերակները, որոնցից առաջինը տարասեռ ստորադասական, իսկ երկրորդն ու երրորդը՝ համասեռ ստորադասական կառույցներ են:

Կարծում ենք՝ բազմաբաղադրիչ բարդ նախադասությունների բաղադրիչ մասերի հարաբերությունները նշելու համար **համասեռ** և **տարասեռ** տերմինների՝ այս իմաստով կիրառությունը նպատակահարմար է նախ և առաջ դրանք միանշանակորեն համադասական կամ ստորադասական տիպին հատկացնելու և մասնավորապես «խառը տիպ» որակումից հրաժարվելու առումով: Այս առնչությամբ ավելորդ չենք համարում նշել, որ գործնական-ուսումնական և այլ բնույթի հրատարակություններում սակավադեպ չեն բազմաբաղադրիչ նախադասությունների անճիշտ գնահատումները: Հայոց լեզվի և գրականության պետական ավարտական և միասնական քննության «Շտեմարանում», օրինակ. «Այն, ինչ ամեն օր կար, այդ առավոտ չկար, իսկ այն, ինչ չպետք է լիներ, կար» նախադասությունը ¹⁴ համարված է ստորադասական, մինչդեռ այն համադասական (տարասեռ) կառույցի նմուշ է:


Բազմաբաղադրիչ նախադասությունների՝ ըստ անմիջական կազմիչների գնահատության տեսակետից, կարծում ենք, անհրաժեշտ է անդրադառնալ այն կառույցին, որը որպես առանձին ենթատեսակ Աբեղյանը չի նշել, որի նմուշներ բերել է Գ.Սևակն իր դասագրքում, դրան հատուկ ձևով չի անդրադարձել նաև Ս. Աբրահամյանը, սակայն հանգամանորեն քննել են Գ. Գաբեգիւնյանը և Ա. Պապոյանը: Խոսքը վերաբերում է մեկից ավելի գերադաս նախադասություններին ստորադասվող ընդհանուր երկրորդականով

¹² Ս.Աբրահամյան, նշվ. աշխ.. էջ 107:


¹³ Նույն տեղում, էջ 106:

¹⁴ «Շտեմարան», մաս 1, Եր. 2014, էջ 87:

(կամ երկրորդականներով) կառույցին, որը Գ. Գարեգինյանի գրքում անվանվում է նկարագրորեն՝ «մի քանի գլխավորներով և ընդհանուր երկրորդական(ներ)ով կառույցներ», իսկ Ա. Պապոյանը բաղադրիչների այդ կարգի հարաբերությունը կոչում է «հանրաստորադասություն» տերմինով: Սրա նվազագույն կառուցվածքի գծապատկերն է՝



Սա, ինչպես պարզ երևում է, համաստորադասության «գլխիվայր» շրջված տարբերակն է, ուստի, թվում է, բաղադրիչների հարաբերությունն էլ կարելի է բնորոշել որպես «ստորահամադասություն» և հատկացնել ոչ թե ստորադասական (ինչպես որ վերը նշված գրքերում արվում է), այլ տարասեռ համադասական կառույցներին: Ահա մի օրինակ Հ. Մաթևոսյանի «Մեսրոպ»-ից. «Եթե լսող էր ունենում, մի քիչ հնարում էլ էր, երեկվա պատմածն այսօր սուտ էր համարում, հայոց պատմության սկիզբը մեկ քշում, տանում, չորս հազար տարվա խորք էր իջեցնում, մեկ ծլեցնում էր երեկվա միջից....»:



Նման կառույցները ստորադասական համարելու դեպքում բնական է, որ անմիջական բաղադրիչներ են դիտվում մի կողմից՝ համադասությամբ կապված նախադասությունները, մյուս կողմից՝ սրանց միասնաբար ստորադասված բաղադրիչ(ներ)ը: Կարծում ենք, սակայն, հնարավոր է կառույցի այլ մեկնաբանություն, այն է՝ **ընդհանուր ստորադաս բաղադրիչը առանձին-առանձին լրացնում է գերադաս համադաս բաղադրիչներին, այսինքն բազմաբաղադրիչ տարասեռ կառույցը ըստ էության երկու կամ ավելի բարդ ստորադասական նախադասությունների՝ որպես անմիջական բաղադրիչների համադասական կապակցությունից բաղադրված «խորքային» կառույցի դրսևորում է:** Այսինքն՝



Կառույցի այսպիսի մեկնաբանության հիմնավորում կարող են լինել բազմաթիվ այնպիսի օրինակները (որոնք նաև վերոհիշյալ գրքերում են վկայակոչվում), որոնցում ստորադաս բաղադրիչը միաժամանակ մեկից ավելի շարահյուսական գործառույթ է կատարում՝ տարբեր կարգի լրացական հարաբերություններ արտահայտելով գերադաս համագոր բաղադրիչներից յուրաքանչյուրի նկատմամբ: Սա թերևս կարելի է դիտարկել որպես սինկրետիզմի (միաձուլության) յուրատեսակ դրսևորում շարահյուսական մակարդակում: Ահա օրինակներ. «Լրագրողական հետաքննությունից հայտնի դարձավ, հետո իրավապահ մարմիններն էլ պարզեցին, որ հանցագործին այլ տեղ պետք է փնտրել» (ստորադաս բաղադրիչն առաջին գերադասի համար ենթակա, երկրորդի համար ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունների պաշտոն է կատարում), կամ՝ «Այնպիսի հմայիչ ձայն ուներ, այնպես ներշնչված էր իր արվեստով, այնքան հոգեթով էր երգում, որ դահլիճը քարացած լսում էր նրան» (ստորադաս բաղադրիչը առաջին գերադասի համար որոշիչ է, երկրորդի համար՝ ձևի պարագա, երրորդի համար՝ չափի պարագա): «Ես հավատում եմ, ես հաստատ գիտեմ, որ նա ազնիվ է» (հանգման խնդիր և ուղիղ խնդիր) և այլն:

Մոտավորապես նույն ընթացքով է մեկնաբանում Ա. Պապոյանը Պ. Սևակից առնչված հետևյալ օրինակը. «Ինչքան որ սիրտդ տա, սաղարթի՛ց խոսիր, ու վարդից խոսիր մայիսյան»: Նա գրում է. «Ունենք *Ինչքան որ սիրտդ տա* կախյալ նախադասությունը, որը լրացնում է *Սաղարթից խոսիր* գերադաս եզրին: Երկուսը միասին, առանձին վերցրած, կազմում են ստորադասական կապակցությամբ երկբաղադրիչ նախադասություն՝ *Ինչքան որ սիրտդ տա, սաղարթից խոսիր*: Բայց ընգծված կախյալ եզրը բնագրային վկայության մեջ հավելյալ կերպով լրացնում է նաև (*Ու*) *վարդից խոսիր մայիսյան* նախադասությանը, ինչպես՝ *ինչքան որ սիրտդ տա, վարդի՛ց խոսիր մայիսյան*: Հեղինակային օրինակի և մեր տրոհած տարբերակների իմաստները նույնական են, որպես թե ասվեր՝


Ինչքան որ սիրտդ տա, սաղարթի՛ց խոսիր, և ինչքան որ սիրտդ տա, վարդի՛ց խոսիր մայիսյան: Սակայն միտքը ձևակերպվել է ոչ թե այսպես, ըստ որում՝ ապաշնորհ, այլ շնորհալի արտահայտությամբ, ինչպես որ է՝ բնագրում»:¹⁵ Այսպիսի ստույգ և հանգամանալի վերլուծությունը, թվում է, կառույցի համադասական, ոչ թե ստորադասական բնավորության հիմնավորում կարելի է համարել:

Քննվող կառույցի այսպիսի սկզբունքային գնահատականը վերաբերում է նաև սրա այլ տարբերակային իրացումներին, ասենք՝ մեկից ավելի ընդհանուր ստորադաս եզրերով նախադասություններին, ինչպես՝

Երբ կհոգնես, կգազազես աշխարհից,

Դարձի՛ր ինձ մոտ, վերադարձի՛ր դու նորից (Տերյան):

Գծապատկերն է՝



Կարծում ենք, այս առնչությամբ ավելորդ չի լինի վկայակոչել պարզ նախադասության անդամների և բարդ նախադասության բաղադրիչների գործառական արժեքների զուգահեռականությունը, որի մասին վերևում խոսք եղավ: Այսպես, «Ճանաչում է Գրիգորին և Հակոբին» նախադասության անդամների միջև առկա է համաստորադասական (տարասեռ ստորադասական) հարաբերություն, իսկ «Ճանաչեց և խորապես աւտեց մարդուն» նախադասության մեջ՝ համագործ նախադասությունների (ստորոգյալների) կապակցություն՝ «մարդուն» ընդհանուր լրացմամբ («ստորահամադասական» հարաբերություն): Այլ օրինակ. «Յերեկը բուն քնում է, արծիվը որս է անում» համադաս նախադասությունների համար ընդհանուր անդամ է «ցերեկը» ժամանակի պարագան: Եթե սա արտահայտվի երկրորդական նախադասությամբ, ապա գերադաս նախադասությունների շարահյուսական հարաբերությունը չի փոխվի, այլ կմնա համադասական. «Երբ ցերեկ է լինում, բուն քնում է, իսկ արծիվը որս է անում»: Ընդհանուր անդամի գաղափարի

¹⁵ Ա. Պապոյան, Խ. Բադիկյան, նշվ. աշխ., էջ 397:

կիրառման օրինակ է նաև այսպես կոչված «միավորյալ» նախադասությունների առանձնացումը:

Այսպիսով, կարծում ենք՝ նպատակահարմար կլինի շրջանառության մեջ դնել «ստորահամադասություն» տերմինը՝ դրա մի մասնավոր դրսևորում համարելով վերևում քննված՝ ընդհանուր երկրորդական(ներ)ով կառույցը:

Բանալի բառեր: Համաստորադասություն, ենթաստորադասություն, տարաստորադասություն, հանրաստորադասություն, ստորահամադասություն, համասեռ, տարասեռ, անմիջական բաղադրիչներ:

Ключевые слова. Однородное подчинение /соподчинение/, разнородное подчинение, последовательное подчинение, непосредственно составляющие, общее придаточное.

Леонид Телян - О классификации многосложных предложений. - В армянской синтаксической традиции, начиная с М. Абега, выделялись разные виды многосложных предложений-сочинительные, подчинительные, иногда и смешанные. В числе подчинительных обычно отмечают конструкции с соподчинением /однородным подчинением/, неоднородным /параллельным/ и последовательным подчинением. К подчинительному типу относят также конструкции с некоторыми главными и общим /и/ придаточным/и/. В статье делается попытка обосновать иной подход к оценке данной конструкции, а именно отнести ее к сочинительному типу многосложных предложений.

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՇՈՒՐՁ¹

Թեյյան Լեոնիդ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
ավագ գիտաշխատող, Բ.Գ.Թ., դոցենտ

Բարդ նախադասության՝ որպես շարահյուսական միավորի սահմանումը համաբանորեն զուգահեռվում է լեզվական մյուս բաղադրական միավորների առանձնացմանը սկզբունքային առումով: Բարդ բառը սահմանվում է որպես երկու կամ ավելի միավորների զուգորդում, որոնք բաղադրության մեջ առավել կամ պակաս չափով զրկվում են ինքնուրույնությունից և առաջացնում որակապես նոր միավոր: Պատահական չէ, որ բարդ նախադասությունը ուսումնասիրող հեղինակները հաճախ զուգահեռներ են տանում սրանց և բարդ բառերի կառուցվածքային նկարագրերի միջև: Օրինակ, Գ. Գաբեգինյանը անշաղկապ և շաղկապական բարդ նախադասությունները համեմատում է անիսկական և իսկական բարդությունների հետ, «որտեղ նույնպես մի դեպքում բաղադրիչների շարահյուսական հարաբերությունների բնույթը հստակ է, քանի որ այդ բաղադրիչները ունեն համապատասխան քերականական ձևավորում (*տան + տեր = տանտեր, այս + օր = այսօր*), իսկ մյուս դեպքում նման քերականական ձևավորում չունենանու պատճառով բաղադրիչների շարահյուսական հարաբերությունը սոսկ ենթադրելի է, հստակորեն չձևակերպված (*ջրածին՝ ջրում ծնված, ջուր ծնող, ջրից ծնված*)²»:

Ակադ. Ս. Աբրահամյանը բարդ նախադասությունների բազմաբաղադրիչ կառույցները դասակարգելիս առաջարկում է գործադրել ըստ անմիջական բաղադրիչների վերլուծության եղանակը՝ դարձյալ համեմատելով երկուսից ավելի բաղադրիչներից կազմված բարդ բառերի (*անցուդարձ անել, արմատահան անել* ևն) հետ³: Ընդունված է նաև պարզ նախադասության անդամների և բարդ նախադասության բաղադրիչ մասերի (նախադասությունների) շարահյուսական հարաբերությունների զուգահեռականությունը⁴, որը, սակայն, բացարձակ չի կարող համարվել. Նախադասությունները, արդեն իսկ

¹ Հոդվածը տպագրվել է «Հայերենագիտական միջազգային 10-րդ գիտաժողովի նյութեր» ժողովածուում, Ե., 2015:

² Գ. Գաբեգինյան, *Ժամանակակից հայոց լեզու*, Ե., 1984, էջ 15:

³ Տե՛ս Ս.Գ. Աբրահամյան, *Հայոց լեզու*, Ե., 2004, էջ 106:

⁴ Հմմտ., օր., Ս. Ասատրյան, *Ժամանակակից հայոց լեզու*, Ե., 1987, էջ 32-33:

օժտված լինելով առանձին կառուցվածքներով, միմյանց հետ զուգորդվելու իմաստային ավելի մեծ հնարավորություն են ենթադրում (հմտ.՝ հետևանքի կամ ամբողջ գլխավոր նախադասությանը լրացնող երկրորդականներով կառույցները):

Բարդ նախադասությունների դասակարգության ժամանակ հաճախ առաջանում են երկիմաստ գնահատականների տեղիք տվող խնդիրներ, որոնք հիմնականում վերաբերում են նախադասության կառուցվածքին (պարզ կամ բարդ) կամ էլ բաղադրիչ մասերի հարաբերության բնույթին (համադասություն կամ ստորադասություն): Այս դեպքերում է, որ հաճախ անհրաժեշտություն է ծագում դիմելու ոչ միայն բառակազմության, այլև նախադասությանն անմիջապես նախորդող մակարդակի՝ ձևաբանության՝ նախադասության համար ենթակադապարային կարգերին, որոնք կարող են կողմնորոշիչ դեր կատարել կառույցի շարահյուսական գնահատականը հստակեցնելու հարցում:

Դրանք առաջին հերթին բայ-ստորոգյալին բնորոշ կարգերն են (եղանակը, ժամանակը նն), բայց, ինչպես կտեսնենք ստորև, անվանական կարգերը ևս անմասն չեն բարդ նախադասությունների շարահյուսական նկարագիրը ձևավորելու խնդրին: Նույնպիսի դեր կարող են կատարել նաև մասերի շարադասությունը կամ էլ նախադասության հնչերանգային բնութագիրը:

Անդրադառնանք տարարժեք գնահատությունների առիթ տվող այդպիսի մի քանի դեպքերի:

1) Կան կառույցներ որոնց պարզ կամ բարդ լինելը որոշակի չէ: Գ. Գաբեգինյանը այդպիսի «անցողիկ» կառույցներից նշում է նախ այսպես կոչված «համեմատական դարձվածներով» նախադասությունները⁵: Օրինակ «.... *Դիլան դայու միտքն էլ տարուբեր էր լինում, ինչպես քամիների բերանն ընկած չոր տերև*»: Այս նախադասությունը կարող է բարդ համարվել, եթե «գործությամբ» ենթադրենք համեմատական դարձվածի ստորոգյալը: Կարծում ենք, որ այս կարգի կառույցների գնահատության ժամանակ կարելի է չափանիշ համարել համեմատելի միավորի առկայացական նկարագիրը՝ առկայացման ձևաբանական կարգը: Որոշիչ (կամ այլ կարգի) հոդով օժտված համեմատելին, կարծում ենք, բավարար ցուցիչ է ստորադաս նախադասության ստորոգյալի ոչ բացահայտ (իմպլիցիտ) առկայության: Հմտ.՝ «.... *ինչպես քամու բերանն ընկած չոր տերևը*»: Ստորոգյալի առկայության նշան կարող են համարվել նաև համեմատական դարձվածում նրա լրացումների

⁵ Գ. Գաբեգինյան, նշվ. աշխ., էջ 9:

արտահայտված լինելը. հմմտ. «*Դռան մոտ գրնգացին Սոնայի շալե շապիկի արծաթ սուրմաները, և ներս մտավ, ինչպես միամիտ հավքը վանդակի բաց դռնով*»: Բնականաբար, որոշյալ միավորի հետ, *ինչպես, որպես* բառերը ձևաբանորեն կգնահատվեն որպես հարաբերական դերանուն, անհոդ միավորի կողքին՝ որպես կապ: Իբրև «անցողիկ» կառույցներ Գ. Գաբեգիդյանը նշում է նաև զիջական շաղկապներով ձևավորվածները, ինչպես՝ «*Նա ի վերջո մասնակցեց շինարարական աշխատանքներին, թեև բավական մեծ ուշացումով և ոչ առանձին խանդավառությամբ*»⁶: Կարծում ենք, որ սա միանշանակորեն պետք է համարվի բարդ նախադասություն, քանի որ թեև-ը միայն ստորադասական շաղկապի արժեքով է կիրառվում:⁷

2) Ավանդական շարահյուսագիտության մեջ ընդունված երկիմաստ միավորներից էր այսպես կոչված «միավորյալ» նախադասությունը: Վերջին տասնամյակներում, թվում է, այս հարցը միանշանակ լուծում է ստացել. ընդհանուր ենթակայով և տարբեր ստորոգյալներով նախադասությունները բարդ են համարվում, տարբեր ենթականերով նախադասությունները՝ պարզ: Թեև իր որդեգրած կաղապարային մոտեցման շրջանակներում սրանց երկակի բնույթը հաստատում է Գ. Զահուկյանը. «... Տրամաբանական- իմաստային չափանիշներով առաջնորդվելու դեպքում հարցը լուծվում է հոգուտ համադասության բոլոր եզրերի միասնական գնահատման և իրոք, տրամաբանական հարաբերությունների տարբեր եզրերի դրսևորման առումով ի՞նչ տարբերություն կա «Հակոբը և Պետրոսը գնացին», «Ոչ Հակոբը, ոչ էլ Պետրոսը չգնացին», «Ոչ Հակոբը գնաց, ոչ Պետրոսը», «Հակոբը գնաց, բայց ոչ Պետրոսը», («Պետրոսը չգնաց, այլ Հակոբը»), «Կամ Հակոբը կգնա, կամ Պետրոսը» նախադասությունների միջև: Ինչպես տեսնում ենք, համադաս հարաբերությունների դրսևորման առումով խիստ սահման չկա ասույթի (պարզ նախադասության) և լրասույթի (հիմնականում բարդ նախադասության) միջև. համադաս անդամներ ունեցող նախադասությունները կարող են դիտվել որպես երկու կամ ավելի նախադասությունների միավորումներ, այսինքն՝ դրվել լրասույթների մեջ: Սա երևում է այսպես կոչված միավորյալ նախադասությունների օրինակով, որոնք հավասարապես կարող են դրվել ինչպես պարզ, այնպես էլ բարդ նախադասության մեջ»⁸:

⁶ Գ. Գաբեգիդյան, նշվ. աշխ., էջ 9:

⁷ ԶԼՄ-ներում հանդիպող՝ կապի արժեքով կիրառություններն ակնհայտ սխալներ են. օրինակ՝ «Թեև արտասահմանյան հրավերներին, նա ցուցահանդեսներ է բացում Հայաստանում» («Հայլուր»):

⁸ Գ. Զահուկյան, *Շարահյուսական ուսումնասիրություններ*, Ե., 2003, էջ 48:

3) Հատուկ ուշադրության են արժանի միակազմ նախադասություններից բաղադրված բարդ նախադասությունները: Սրանք հաճախ են կազմում համադասական կառույցներ (օր.՝ *Լինե՞լ, թե՞ չլինել*), ստորադասական կառույցներում էլ որպես կանոն հանդես են գալիս գերադաս նախադասության դերում: Ինչպես միակազմ պարզ, այնպես էլ բարդ նախադասություններում, ինչպես հայտնի է, վճռորոշ դեր ունի հնչերանգը: «*Լռությո՛ւն, լռությո՛ւն, լռությո՛ւն անսահման*». սա եռաբաղադրիչ բարդ համադասական նախադասություն է համարվում՝ կազմված երեք անվանական անդամ նախադասություններից՝ ձևավորված հատուկ հնչերանգի շնորհիվ: Բայց կան դեպքեր, երբ հնչերանգը բավարար ինքնուրույնություն չի հաղորդում անվանական միավորին՝ այն որպես առանձին նախադասություն ընկալելու համար, հետևաբար կառույցը երևի պետք է գնահատվի որպես պարզ (սրանք հանդիպում են խոսակցական ոճում): Օր. *Աշու՛ն, աշու՛ն ցանկալի...* (բարդ նախադասություն) և *Գարուն. ասա էս տարի գարուն է՞նք տեսել...* (պարզ նախադասություն)⁹:

4) Կառույցներ էլ կան, որոնց բարդ լինելը կասկած չի հարուցում, սակայն մասերի հարաբերության համադասական թե ստորադասական բնույթը ստույգ չէ կամ որոշվում է լրացուցիչ չափանիշներով: Ամենից ավելի հայտնի այս կառույցներից են անշաղկապ որոշ տիպի նախադասությունները, որոնք դասակարգվում են համադասական և ստորադասական տիպերից առանձին: Սրանց մի մասի քերականական բնույթը որոշելիս էլ վճռական է հնչերանգը (հմմտ. *Գործդ ավարտեցիր, (՝) գնա՛ խաղալու*):

Միանշանակ չէ նաև այն կառույցների գնահատականը, որոնք ձևավորված են գուգադիր այնպիսի շաղկապներով, որոնց մի եզրը ստորադասական է, մյուսը՝ համադասական: (*Թեև ... , բայց, չնայած ... , բայց (սակայն)* և այլն): Նման դեպքերում, կարծում ենք, գերակա պետք է համարվի ստորադասական շաղկապի իմաստը: Երկակի են գնահատվել նաև *ուստի, ուրեմն* և այս կարգի հետևանքի շաղկապները. սրանց ձևավորած կառույցները համարում են կա՛մ համադասական (Մ. Աբեղյան, Ա. Պապոյան և այլք), կա՛մ ստորադասական (Ս. Աբրահամյան, Ն. Պառնապյան և այլք):

Հաճախ կառույցի մասերի միջև առկա շարահյուսական հարաբերությունը պայմանավորված է լինում մասերի եղանակաժամանակային բնութագրերով. այսպես, *եթե*

⁹ Հմմտ. Վ. Առաքելյան, *Հայերենի շարահյուսություն*, հ. Բ, էջ 46-47:

..., *սպա* գուգադիր շաղկապով արտահայտվում են պայմանի և հետևանքի հարաբերությունն սովորաբար ըղձական-պայմանական գուգորդման դեպքում (*եթե պարապես, կընդունվես*), սահմանական եղանակի բայերի կամ էլ բաղադրյալ ստորոգյալների գուգորդումով էլ կարող է արտահայտվել համադասական (հակադրական) հարաբերություն (*Եթե անցյալ տարի գնաճը աննշան էր, սպա այս տարի զգալի է*):

Բարդ ստորադասական նախադասության բնորոշ կապակցության միջոցներից են հարաբերական դերանունները և հարաբերյալները. այս վերջինները, ինչպես հայտնի է, կիրառվում են գերադաս նախադասության մեջ. դրանք երրորդ դեմքի անձնական (*նա, նրանք*) կամ երրորդ շարքի ցուցական (*այն, այնպիսի, այնքան, այնտեղ* և այլն) դերանուններ են¹⁰: Որոշ դեպքերում ստորադասականների մեջ են դրվում այնպիսի կառույցներ, որոնցում թեև գործածված են ցուցական դերանուններ, սակայն, կարծում ենք, դրանք ստորադասական կապակցություն չեն նշում: Վ. Առաքելյանը, օրինակ, հետևյալ օրինակը համարում է ձևի պարագա երկրորդականով բարդ նախադասություն, մինչդեռ, կարծում ենք, համադասական է.

Քո անկումները եղել են հար

Եղանակի պես փոփոխական,

Այդպես երկինքն է թափում հանկարծ

Թե՛ կարկուտ, թե՛ ձյուն, թե՛ փոթորիկ: (Չարենց)

Բերենք այս կարգի ևս մի օրինակ արդի պոեզիայից.

Ու մենք գտանք իրար,

Այդպես խոսն է գտնում

Այն անիվը, որը պիտի ճզմի իրեն,

Այդպես դեղձն է նայում իրեն պարզված ձեռքին


Համակերպված ու հաշտ, ու հեզորեն...

(Ա. Պարսամյան)

¹⁰ Տե՛ս Ա. Պապոյան, Խ. Բաղիկյան, *Հայոց լեզվի շարահյուսություն*, Ե., 2003, էջ 280:

Շարահյուսական հարաբերության բնույթը երբեմն էլ կարող է պայմանավորված լինել բարդ նախադասության մասերի շարադասությամբ: Որպես սրա օրինակ կարելի է նշել *մինչդեռ* (երբեմն՝ *մինչ*) շաղկապով կապակցվող ստորադասական կառույցը: Հայտնի է այդ շաղկապի կրկնակ իմաստը՝ համադասական և ստորադասական: Որպես կանոն առաջադաս կիրառության դեպքում այդ շաղկապով միացած մասը ժամանակի պարագա երկրորդական նախադասություն է (*Մինչդեռ ժողովում քննարկվում էին նախորդ օրվա դեպքերը, շրջաններում տեղի ունեցան նոր իրադարձություններ*), հետագա կիրառության դեպքում դիտվում է որպես նախորդ բաղադրիչին համադաս (*Համադարձումը ուզում էր որդուն հայտնի երաժիշտ դարձնել, մինչդեռ սա տարված էր համակարգչային խաղերով*):

5) Հայերենագիտության մեջ բազմաբաղադրիչ բարդ նախադասությունների տեսակների առանձնացման խնդրում առանձնապես մեծ տարակարծություններ չեն ծագել: Տարբեր համակցություններով հանդես եկող բազմաբարդ նախադասությունները նկարագրվել և դասակարգվել են Մ. Աբեղյանի կողմից և հիմնական գծերով կրկնվել հետագա ուսումնասիրություններում: Ակադ. Ս. Աբրահամյանը սրանց դասակարգման հարցում, ինչպես նշել ենք, առաջնորդվում է անմիջական բաղադրիչների վերլուծության սկզբունքով՝ դրանք տեսակավորելով համասեռ (միայն համադասությամբ կամ միայն ստորադասությամբ կապված բաղադրիչներով) և տարասեռ (համադասության և ստորադասության զուգորդում (ներ) պարունակող) կառույցների մեջ: Որոշ ուսումնասիրություններում առանձնացվում է բազմաբաղադրիչ բարդ նախադասությունների մի ենթատեսակ, որը կառուցված է մեկից ավելի գերադաս բաղադրիչներից և դրանց ստորադասական ընդհանուր երկրորդական (ներ)ից՝ հետևյալ նվազագույն կադապարով:



Այս կառույցը սովորաբար գնահատվում է որպես ստորադասական, իսկ բաղադրիչների հարաբերությունը անվանվում է հանրաստորադասություն (Ա. Պապոյան):

Երգում էին և պարում, որպեսզի զբաղեցնեն հյուրերին:

Երբեմն ընդհանուր երկրորդականը գերադասների նկատմամբ տարաբժեք հարաբերություն է արտահայտում: Օրինակ՝ *Բոլորին հայտնի էր, և իրավապահներն էլ պարզեցին, որ նա անմեղ է* (երկրորդական նախադասությունը միաժամանակ և՛ ուղիղ խնդիր է, և՛ ենթակա): Ավելի նպատակահարմար է թվում այս կարգի կառույցները հատկացնել համադասությանը՝ հաշվի առնելով գերադաս բաղադրիչների միջև առկա շարահյուսական կապը:

Telyan Leonid - On the Classificaton of Compound and Complex Sentences in Modern Armenian. - The article addresses some Armenian sentence structures which are interpreted differently by Armenologists both from the point of view of structures (simple vs non simple) and the syntactic relationship of the clauses in compound vs complex sentences. Due emphasis is made on morphological and intonational features as well as word order in identifiyng the syntactic function of such structures.

Телян Леонид - Заметки о классификации сложных предложений. - В статье рассматриваются некоторые конструкции предложений, которые неоднозначно оцениваются как с точки зрения структуры (простое-сложное), так и сиктаксической связи частей (сочинение-подчинение). Указывается на роль категорий других уровней (морфологических, интонационных и др.) при уточнении синтаксической пророды данных конструкций.

Բանալի բառեր – հարաբերական դերանուն, իմաստային տեղաշարժ, գործառական տարարժեքություն, անցումային կառույց, շարահյուսական նորմ, կետադրություն:

Շարահյուսական հարաբերությունների արտահայտիչները, ինչպես հայտնի է, լեզվի համակարգում գործառող կապակցության միջոցներն են՝ բառահարաբերական թեքություն, սպասարկու բառեր (կապեր, շաղկապներ, նախդիրներ և այլն), շարադասություն, հնչերանգ և այլն: Հայերեն խոսքում սրանց գործառույթը հիմնականում կապակցության տարբեր եղանակների իրացումն է, շարահյուսական միավորների (բառերի, բառակապակցությունների (շարությունների), նախադասությունների և այլն) միջև կախումնային տարբեր հարաբերությունների՝ համադասության և ստորադասության (և սրանց զանազան համակցությունների) դրսևորումը²:

Շարահյուսագիտական աշխատություններում երբեմն ոչ միանշանակ գնահատականների են արժանանում ինչպես կապակցության եղանակի, այնպես էլ կապակցող միջոցի որոշ դրսևորումներ: Կարելի է նշել, օրինակ, հատկացուցչի և հատկացյալի (նաև գոյական որոշչի և որոշյալի) կապակցությունը առդրական կամ խնդրառական համարելը, որոշ կարգի բարդ նախադասությունների (օրինակ՝ **ուստի**, **ուրեմն** և այլ շաղկապներով կապակցված)՝ ստորադասական կամ համադասական տիպին հատկացնելը, անշաղկապ կառույցների, բազմաբաղադրիչ բարդ նախադասությունների քննության տարբեր հայեցակերպերը և այլն:

Շարահյուսական իրողությունների անմիանշանակ մեկնաբանությունները, ըմբռնումների զուտ տեսական տարբերություններից բացի, հաճախ դրանց գործնական կիրառության, նաև ուսուցման ոլորտներում (մասնավորաբար, ասենք, կետադրության)

¹ Հոդվածը տպագրվել է «Լեզու և լեզվաբանություն» հանդեսում, հ. 2, Ե., 2016, էջ 23-31:

² Նորագույն որոշ ուսումնասիրություններում այս կարգի շարահյուսական հարաբերությունները կոչվում են **դրավորումներ** և բաժանվում են համադասական, միադասական, նույնադասական և տարադասական տիպերի. տե՛ս **Դ. Գյուլգասյան**, Գրական արևելահայերենի քերականության հիմունքներ, Եր., 2016, էջք 194-201:

տարարժեք մոտեցումների պատճառ են դառնում՝ բնականաբար առաջ բերելով կանոնարկման և կոդմոնորոշիչ հանձնարարականների անհրաժեշտություն:

Այս նախնական դիտողություններից հետո փորձենք հանգամանորեն անդրադառնալ որպես վերնագիր ընտրված հարցադրմանը:

Հարցի պատասխանը, իհարկե, հանրահայտ է և միանշանակ. **ոք**-ը և՛ դերանուն է, և՛ շաղկապ. գործ ունենք համանունական գույգի հետ, որն առաջացել է հարաբերական դերանվան խոսքիմասային իմաստի մթագնման և նրանում կապակցական նշանակության գերակայության հաստատման ճանապարհով: Հանրահայտ ճշմարտություն է նաև, որ կապակցական բառերը՝ կապերն ու շաղկապները, համատարած կերպով հենց այդ ճանապարհով էլ առաջանում են՝ լեզվի բառապաշարում մշտապես և շարունակաբար տեղի ունեցող իմաստային տեղաշարժերի ընդհանուր տրամաբանության շրջանակում: Իմաստային փոփոխություններն ու անցումները, սակայն, միևնույն ընթացքը չունեն և մանավանդ միատեսակ վերջնական արդյունքի չեն հանգում: Կապակցական բառերի մեջ այս տեսակետից տարբեր շերտեր կարելի է առանձնացնել: Դրանց մի մասը վաղուց անտի կորցրել է իմաստային կապը իրեն ծնունդ տված նյութական իմաստակիր միավորի հետ, և այդ կապը հնարավորության դեպքում կարող է բացահայտվել ստուգաբանական հատուկ քննությամբ (օրինակ՝ **առ, ի, ըստ, ընդ** և այլ կապերը, **և, ու, բայց** և այլ շաղկապները), մի այլ դեպքում էլ այդ միավորների ստուգաբանական առնչությունը բավական թափանցիկ է, սակայն համաժամանակյա դիտվածքում դրանք գիտակցվում են որպես լիովին ինքնուրույն, այսինքն՝ իմաստային կապը համանունական գույգի անդամների միջև ժամանակի ընթացքում իսպառ վերացել է. համեմատենք, օրինակ՝ «Ծանոթ եմ գրքերի մեծ **մասին**» և «Խոսում էինք նրանց **մասին**», «Թիվ ու **համար** չկար թշնամու գորքին» և «Քեզ **համար** նվեր գնեցի», «Ընտանյոք **հանդերձ** ներգաղթեց» և «Հարսնացուն շքեղ **հանդերձ** էր հագել» և այլն: Գրեթե այս կարգի են նաև բառաձևերից սերող այլ կապակցական բառեր՝ **շնորհիվ, առթիվ, հանձին(ս), վերաբերյալ, որովհետև, ուստի** և այլն: Կապակցական բառերի մի սովոր խումբ էլ կազմում են այսօր որպես լիիմաստ խոսքի մասեր լայնորեն գործածվող բառերի իմաստագործառական տարբերակները. սրանք թերևս կարող են գնահատվել ոչ թե որպես համանունական գույգի տարբեր եզրեր, այլ միևնույն բառի (բառույթի) գործառական տարարժեքության դրսևորումներ: Ընդամին այսպիսի անցումները սովորական են նաև նյութական (օրինակ՝ ածական – գոյական) և

ոչ նյութական խոսքի մասերի ներսում (հմմտ. **մինչև** (կապ) – **մինչև** (շաղկապ), **չնայած** (կապ) – **չնայած** (շաղկապ), **էլ** (վերաբերական) – **էլ** (շաղկապ), **թեկուզ** (վերաբերական) – **թեկուզ** (շաղկապ) և այլն):

Գործառական տարարժեքության առանձնահատուկ դրսևորում պետք է համարել հարցական և հարաբերական կոչվող դերանունները: Սրանք միևնույն բառային իմաստով օժտված բառերի (բառույթների) խումբ են և այս հիմունքով միավորվում են որպես դերանվան մեկ տեսակ³, սակայն իրենց գործառական տարարժեքության հիմունքով էլ հաճախ առանձնացվում են որպես դերանվան առանձին տեսակներ՝ ըստ էության որպես բառային համանուններ:⁴ Այս խմբի բառերն իրենց «հարաբերական»՝ կապակցական կիրառությամբ հայտնվում են ստորադասական շաղկապների գործառական դաշտում, սակայն, ի տարբերություն վերջինների, պահպանում են դերանվան նյութական նշանակությունը՝ պաշտոնակիր անդամի դիրք զբաղեցնելով ստորադաս նախադասության կազմում: Այս խմբի բառերի այսպես կոչված «հարցական» և «հարաբերական» գործառական դրսևորումները դուրսով ճանաչելի են, մանավանդ եթե իմաստային որոշակիությամբ են օժտված (օրինակ՝ **ով** – անձ, **ինչ** – իր, **ինչպես** – ձև, **ինչքան** – քանակ և այլն):

Այս խմբի բառերի մեջ իր իմաստի ընդհանրականությամբ առանձնահատուկ տեղ է գրավում **որ**-ը. նյութական առումով սա արտահայտում է հատկանիշի, փոխանվանաբար նաև՝ առարկայի չտարբերակված հասկացություն, իսկ կապակցական դերով հաճախակի կիրառվելու հետևանքով զրկվելով նյութական իմաստից՝ շաղկապների կարգն է անցնում: Առաջանում է գործառական եռանդամ համանունություն՝ **հարցական դերանուն – հարաբերական դերանուն – շաղկապ** եզրերով: Թե՛ որպես հարաբերական դերանուն և թե՛ որպես շաղկապ **որ** բառը աներկբայորեն արդի հայերենի՝ ստորադասական կառույցներ ձևավորող ամենատարածված և ամենից արդյունավետ միջոցն է: Այն կարելի է բնութագրել որպես ստորադասություն արտահայտող բազմագործառույթ մի նշույթ, որը «կարող է հանդես գալ ստորադասական շաղկապների գրեթե բոլոր նշանակություններով ու երանգներով, բացառությամբ զիջականի»⁵: **Որ** շաղկապի կիրառության ամենից ավելի բնական ոլորտը, որտեղ նրա դերանվանական նախնական իմաստը այլևս չի

³ Տե՛ս, օրինակ, **Ս. Աբրահամյան**, Ժամանակակից գրական հայերեն, Եր., 1981, էջ 183, **Ա. Մարգարյան**, Հայոց լեզվի քերականություն, Եր., 2004, էջ 297:

⁴ Տե՛ս, օրինակ, **Ս. Ասատրյան**, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1983, էջք 192, 196:

⁵ **Գ. Գաբելիսյան**, Շաղկապները ժամանակակից հայերենում, Եր., 1963, էջ 187:

գիտակցվում, հոգեմտավոր կամ կամային (ոչ ֆիզիկական) բնույթի գործողություններ արտահայտող բայերին (**զգալ, հասկանալ, իմանալ, տեսնել, լսել, հավատալ, կասկածել** և այլն) լրացնող ստորադաս նախադասություններ կապակցելն է, սակավադեպ չեն նաև այս շաղկապով կապակցված՝ գոյականով կամ գոյականի արժեքով գործածված բառերին, ինչպես և **այն, այնպիսի, այնքան, այնպես** և այլ հարաբերյալներին փոխարինող երկրորդական նախադասություններով կառույցները: Այս երկրորդականները ըստ իրենց շարահյուսական պաշտոնի բազմազան են՝ ենթակա, ստորոգելի, որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ, խնդիր, պարագա: Կիրառական բազմազանության և հաճախականության տեսակետից **որ**-ի հետ կարող է համեմատվել **թե** շաղկապը. սրա կիրառության ոլորտը մի փոքր սահմանափակվում է լրացյալ գերադաս նախադասությունների երկբայական, հարցական կամ ժխտական նշանակությունների պատճառով (օրինակ՝ **Մտածում էին, թե նա լավ կովող չէ, Հարցրին, թե ինչ է ուզում և այլն**), սակայն իմաստային այդ սահմանափակումը չեզոքանում է ենթաստորադաս կառույցներում (օրինակ՝ **Ընկերը չէր ուզում, որ հրամանատարն իմանա, թե նա լավ կովող չէ**)⁶:

Որ բառի հարաբերական և շաղկապական գործառնությունները, ինչպես նշեցինք, մեծավ մասամբ հեշտությամբ զանազանվում են, սակայն հայերեն խոսքում հանդիպում են այնպիսի «անցումային» բնույթի կառույցներ, որոնցում **որ** բառի դերանվանական իմաստը հայտնապես «նահանջել» է (որի նշաններն են այդ դիրքում սպասելի հոդի կամ թվային վերջավորության բացակայությունը), սակայն, հետագոտողներից շատերի կարծիքով, լիովին չի վերացել: Խոսքը վերաբերում է բարդ նախադասության այն կառույցներին, որոնց ստորադաս բաղադրիչը գոյական անդամի լրացման (առավելապես՝ որոշչի) պաշտոն է կատարում, իսկ կապակցող **որ** միավորը հանդես է գալիս ուղիղ ձևով՝ առանց հոդի: Շարահյուսագիտական ավանդույթով այս միավորը գնահատվում է որպես հարաբերական դերանուն, որը ստորադաս նախադասության մեջ ենթակայի կամ ուղիղ խնդրի պաշտոն է կատարում (օրինակ՝ «Մարդը, **որ** մոռացել է անցյալը...», «Բաժակը, **որ** երեխան կոտրեց...» և այլն): Շարահյուսական այս դիրքերում ենթական կամ խնդիրը կանոնի պահանջով պետք է դրվեն որոշյալ առումով (ինչը սովորական է **որ** հարաբերական դերանվան համար և նրա գոյականական կիրառության հիմնական ցուցիչը), և **որ**-ի անհող կիրառությունն, ինչպես նշվեց, նրա դերանվանական արժեքի մթագնման

⁶ Հմմտ. նույն տեղում, էջ 192:

նշան է, սակայն հավանաբար բավարար հիմք չէ այն շաղկապ համարելու: Նյութական իմաստից հեռացած լինելն ավելի ակնհայտ է որոշչային այն նախադասություններում, որոնցում **որ** բառը ենթակայի դիրքում «անտարբեր» է մնում նաև ստորոգյալի հետ թվով համաձայնելու նորմի հանդեպ: Օրինակներ՝ «Եվ պոետներ, **որ** չեն պղծել իրենց շուրթերն անեծքով» (Հ. Թումանյան), «Մարդիկ, **որ** մարդ չեն, այլ ավելի շուտ մարդակերպ կապիկ» (Պ. Սևակ) և այլն: **Որ**-ի այս կարգի կիրառությունն էլ մասնագետները հիմնականում դերանվանական են համարում. գրեթե համընդհանուր այս գնահատականը, այնուամենայնիվ, չի ընդունում պրոֆ. Ա. Պապոյանը: Ահա **որ**-ի վերոբերյալ գործառությունների նրա մեկնաբանությունը. «**Որ** հարաբերականի եզակի թվի անհոդ ուղղականը արտաքուստ նույնանում է համանուն շաղկապի հետ: Պարզելու համար կապակցության հարաբերակա՛ն թե շաղկապակա՛ն լինելը՝ պետք է նկատի ունենալ հետևյալը: Բոլոր այն կառույցներում, որտեղ գերադաս բաղադրիչի որոշյալը **եզակի թվով** է կիրառված, կապակցությունը **հարաբերական** է, իմա՛ **որ** նշույթը հարաբերական դերանուն է և կատարում է երկու դեր. ա. նախադասության անդամ է (առավելապես՝ ենթակա կամ ուղիղ խնդիր), բ. կապակցում է գերադաս և ստորադաս նախադասությունները:Բոլոր այն կառույցներում, որտեղ գերադաս բաղադրիչի ստորոգյալը **հոգնակի թվով** է կիրառված, **որ**-ը շաղկապ է: Դա կարելի է դիտարկել հետևյալ օրինակում. Եվ **կույսեր**, **որոնց** ծոցի մեջ լուսե Լուսնի լույսն անգամ ծածուկ չէր հոսել, **Որ** երկչոտ էին, ինչպես եղջերուն, **Որ** աննյութ էին, ասես հորինված Մի հովվերգական վեպի էջերում (...), Օֆելյայի պես այժմ ցնորված՝ խելագարվածի իրենց ճիչերում Դարձյալ մոռանալ չէին կարենում այն դժոխքը սև (ՊՍ):

Այստեղ ունենք **կույսեր – որոնք (որոնց)** կաղապարը, որ հարաբերական կապակցություն է, քանի որ որոշյալը և հարաբերականը համաձայնեցված են թվով, իսկ շարունակության մեջ առկա են **կույսեր – որ** կաղապարով երկու կապակցություններ, **որտեղ որ**-ը շաղկապ է՝ որոշյալի հետ թվային անհամաձայնության պատճառով, և կապակցությունը շաղկապական է»⁷ (ընդգծումները բնագրում են):

Գ. Գաբեգինյանը որոշչային երկրորդական նախադասություններում **որ**-ի՝ հարաբերական դերանուն լինելը վերապահությամբ է ընդունում՝ հիմք ընդունելով նրա ուղիղ ձևի կիրառությունը սպասելի այլ հոլովական ձևի փոխարեն: Նա գրում է. «Հաճախ այս **որ**

⁷ Ա. Պապոյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Եր., 2003, էջ 299:

հարաբերականը թվով կամ հոլովով անհամաձայն մնալով, շփոթվում է **որ** շաղկապի հետ: Առավել դժվար է որոշել նրա ինքնությունը, երբ հոլովով է անհամաձայն մնում:Տարբեր մեկնությունների տեղիք կարող է տալ **որ** բառի հետևյալ կիրառությունը՝ Ինչո՞ւ է կյանքը հաճախ այնպիսի չար խաղեր խաղում, **Որ** մտածելիս մարդու սրտի մեջ արյունն է պաղում (ՊՄ)»: Այստեղ այն կարող է դիտվել որպես շաղկապ, կամ կարող է ըմբռնվել որպես հոլովով անհամաձայն մնացած հարաբերական դերանուն՝ «որի մասին» նշանակությամբ: Այլ օրինակ՝ Նա դա ասաց **այնպիսի** եղանակով, **որ** ասես ուզում էր մեղմել նրա վիշտը. այստեղ ևս այն կարելի է դիտել որպես շաղկապ կամ հոլովով անհամաձայն մնացած հարաբերական (**որով**): Նման երկդիմություն կարող է առաջանալ ոչ բոլոր կառույցներում: Պետք է սակայն նշել, որ հոլովով անհամաձայն մնացած **որ** հարաբերականը ճիշտ կլինի շաղկապ համարել»⁸: (Ավելորդ չէ նշել, որ բերված երկու օրինակներում էլ զգալի է երկրորդականների հետևանքային նշանակությունը):

Որ հարաբերականի՝ որոշիչ երկրորդականներում անորոշ առումով (որոշյալի փոխարեն) և եզակի թվով (հոգնակիի փոխարեն) կիրառությունները «Ժամանակակից հայոց լեզու» աշխատության 3-րդ հատորում (բաժնի հեղինակ՝ Ն. Պառնասյան) նույնպես համարվում է նրանում դերանվանական նշանակության մթագնման վկայություն, միա-ժամանակ նշվում է, որ «Այս որոշիչ երկրորդական նախադասությունների ուսումնասիրությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում որ շաղկապի առաջացման պատմության համար»⁹:

Խնդրո առարկա բառի՝ վերնում քննված կիրառության գնահատականն առավել անվերապահ է նորագույն ուսումնասիրություններից մեկում. «Տարածված մի մտայնություն կա, թե «որ» հարաբերիչը եթե հարաբերվում է գերադաս նախադասության գոյականին, անկախ այն բանից՝ հոլովաթվային համաձայնություն ունի նրա հետ թե ոչ, ոչ թե շաղկապ է, այլ հարաբերական դերանուն: Բերենք այսպիսի մի օրինակ՝ **Մեր երկրի տերերն ահա այս սխրագործ պատանիներն են, որ հայրենասիրության դաս են տալիս ավագներին**: Թավ ընդգծված **որ** հարաբերիչը համարում են հարաբերական դերանուն, ինչ է թե տրամաբանորեն գոյականի հետ է կապված: Նկատենք, որ շաղկապները հենց այդպես էլ առաջացել են, ծագել են հարաբերական դերանուններից, և ընդգծված բառի

⁸ Գ. Գաբեգիյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1984, էջ 163:

⁹ Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Եր., 1976, էջ 635:

շաղկապ լինելը այդ կիրառությամբ ավարտուն վիճակ է ներկայացնում»¹⁰: Այս մոտեցումը **որ** բառի գործառական արժեքի գնահատության առումով մեզ համար առավել ընդունելի է:

Շարահյուսագիտական «դասական» աշխատություններում, սակայն, ինչպես վերը տեսանք, նշված կարգի կիրառություններում **որ**-ը առավելապես հարաբերական դերանուն է համարվում. որոշիչ երկրորդական նախադասության մեջ նրան վերագրվում է հիմնականում ենթակայի պաշտոն՝ հանդուրժելի համարելով առկայացման կամ (և) համաձայնության կարգերում շարահյուսական նորմից շեղումները: Այս մոտեցումը, սակայն, բավական երերուն է դառնում, երբ գործադրվում է բացահայտիչ երկրորդական նախադասություններով կառույցների նկատմամբ: Բանն այն է, որ սրանք առավել հաճախ լրացնում են գերադաս նախադասության՝ անձնական դերանվամբ արտահայտված բացահայտյալին, և քանի որ **որ**-ը իր այս կիրառությամբ զրկված է դիմորոշ հոդ ստանալու հատկությունից, ուստի խախտվում է նաև ստորադաս նախադասության ենթակայի և ստորոգյալի դիմային համաձայնության կանոնը: Օրինակներ՝ Ես, **որ** տրտմում եմ մի ծաղկի համար, Ես, **որ** դողում եմ, երբ վարդ են քաղում.... (Հ. Շիրազ), Ես քեզ ներե՞մ... Քեզ, **որ** սերս դագաղեցիր, Վշտիս վրա ծիծաղեցիր.... (Հ. Շիրազ), Դու, **որ** մսեղեն դառն հաճույքով արևը հոգու դարձնում ես խավար (Ա. Իսահակյան) և այլն: Վերը հիշատակված «Ժամանակակից հայոց լեզու» (3-րդ հատոր) գրքում այս կիրառությամբ **որ**-ը միանշանակորեն շաղկապ է համարվում և նշվում է, որ այս դեպքում «ենթական սովորաբար զեղչված է լինում, ենթակայի պաշտոնը կատարում է բացահայտյալը»¹¹: Գ. Գարեգինյանը, թեև որոշակի վերապահումով, **որ**-ի այս կիրառությունը ևս դերանվանական է համարում: «Քննարկվող կառույցներում, - գրում է նա, - **որ**-ը յուրահատուկ փոխանցիչ է դառնում՝ անձնական դերանվամբ արտահայտված բացահայտյալի դեմքը և թիվը պարտադրելով բացահայտիչ երկրորդականի ստորոգյալին: Նկատելի է նաև, որ այս բարդ ստորադասական նախադասություններում բացահայտիչ երկրորդականի ենթական երբեք արտահայտված չի լինում, վերականգնման հնարավորություն չի ունենում հավանաբար այն պատճառով, որ այդ դիրքը զրավված է լինում հենց այդ **որ** բառով: Մնում է եզրակացնել, որ ուղիղ ձևով կիրառվող այս բառը ըստ էության դերանուն է, որը սակայն

¹⁰ Դ. Գյուլգասյան, նշվ. աշխ., էջ 232:

¹¹ Ս. Աբրահամյան և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 647:

անհամաձայն մնալով շաղկապ է ընկալվում»¹²: Հեղինակի այսպիսի մոտեցումը հիմնավորող փաստարկներից ամենաուշագրավը, թերևս, հետևյալն է. «Չպետք է աչքաթող անել նաև այն հանգամանքը, որ փոխակերպման դեպքում շաղկապական երկրորդականների (անկախ նրանց բնույթից) ստորոգյալները վերածվում են **անորոշ** դերբայի, իսկ հարաբերական երկրորդականների ստորոգյալները՝ **հարակատար** կամ **ենթակայական** դերբայների (...): Մեր բերած բոլոր օրինակներում փոխակերպումը կատարվում է հարակատարով կամ ենթակայականով, որ խոսում է այդ բառի դերանուն լինելու մասին»¹³: Այստեղ, անշուշտ, շարահյուսական օրինաչափությունը ստույգ ներկայացված է, այնուամենայնիվ, կարծում ենք, այս վկայակոչումը չի հակասում վերը քննված կառույցներում **որ** բառի դերանվանական նշանակության խիստ թուլացման կամ կորստյան մասին եղած դիտարկումներին: Մեզ թվում է, որ փոխակերպման գործողության ժամանակ ըստ էության գործընթացի մեջ «ներքաշվում» է կառույցի նախնական, խորքային կաղապարը, որի փոփակերպն իր մեջ պահպանում է **որ**-ի դերանվանական իմաստի «հիշողությունը»:

Հարկ ենք համարում անդրադառնալ **որ**-ի մի յուրահատուկ կիրառության ևս, որտեղ թերևս իսպառ ջնջված է դրա դերանվանական նշանակությունը: Խոսքը հարաբերական դերանուններին որպես «թարմատար» շաղկապ կցվող **որ**-ի մասին է (**ինչ որ, երբ որ, ինչպես որ** և այլն): Ուսուցման ժամանակ, ի դեպ, **որ**-ի հետ զուգորդվելու հատկությունը հաճախ օգտագործվում է որպես պարզ մի միջոց հարցական և հարաբերական դերանունները զատորոշելու համար (**որ**-ը, բնականաբար, չի կարող զուգորդվել ոչ կապակցական դերով կիրառվող հարցական դերանուններին): **Որ** շաղկապի այս կիրառությունը նոր երևույթ չէ. այսօր այն բնական է խոսակցական լեզվում, որտեղից հաճախ թափանցում է գրական լեզու: Խրախուսելի չէ թարմատար շաղկապի կցումը **որ** հարաբերականին (**որը որ**), մի բան, որ, ցավոք, այսօրվա պաշտոնական ոճում բավական հաճախադեպ է (ի դեպ նշենք, որ այսպիսի կրկնաբանությունից զգուշացնում էր դեռևս Մ. Աբեղյանը)¹⁴:

Որ-ի որպես թարմատար կիրառությունների ընդհարականացման մեջ հավանաբար դեր է կատարել համաբանության գործոնը: Այս առնչությամբ հետաքրքիր դիտար-

¹² Գ. Գաբեզիսյան, նշվ. աշխ., էջ 187:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Տե՛ս Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 611:

կում է անում Վ. Առաքելյանը: **Ինչ** հարաբերականով կապակցվող ուղիղ խնդիր երկրորդականների առիթով նա գրում է. «...Օրինակներից պարզ երևում է, որ միայն **ինչ** հարաբերականն առանց **որ**-ի հազվագյուտ է: Հավանաբար **ինչ** նախապես մտել է գլխավոր նախադասության կազմը և հանդես է եկել իբրև հարաբերյալ, երբ դեռ ուներ **բան, մի բան** նշանակությունը: Համեմատիր՝ **Ամենայն ինչ, որ դիւրաւ անկանի ի բուն, ընդ արհամարհանս ունիմք**: Ամենահին այս նախադասությունը նույնպես կարելի է անդամահատել, ինչպես հիմա ենք անում. **ամենայն, ինչ որ....** և այլն»¹⁵:

Նախընթաց շարադրանքում արված վերլուծություններն ու վկայակոչված տեսակետները, այսպիսով, հետաքրքրություն են ներկայացնում այնքանով, որ մի բառի օրինակով տեսանելի են դարձնում լեզվական միավորի իմաստային կառուցվածքի մեջ կատարվող տեղաշարժերի, քերականական կարգային փոխանցումների աստիճանական ընթացքը, որոնք անմիջաբար պայմանավորված են տվյալ միավորի խոսքային գործառնությամբ: Արդեն նշել ենք, որ այս կարգի վերլուծությունը տեսական հետաքրքրություն ներկայացնելուց բացի պետք է անհրաժեշտաբար հաշվի առնվի այդ միավորների՝ բառերի, շարահյուսական կառույցների գործառնական արժեքի գնահատման և ուսուցման հարցերում: Խոսքը մասնավորելով մեր քննության առարկայի վրա՝ ուզում ենք նշել, որ մասնավորապես կետադրության կանոնները սահմանելիս վերևում դիտարկված այսպես կոչված «անցումային» կառույցների առնչությամբ հաճախ հանդես է բերվում որոշակիորեն ուղղագիծ մոտեցում՝ դրանք միանշանակորեն հարաբերական տիպին հատկացնելով. փաստորեն անտեսվում է դրանցում **որ** բառի գործառնական երկարժեքության հանգամանքը:

Այսպես, կետադրության գործող կանոններով սահմանվում է, որ բարդ նախադասության կազմում առկա տրոհվող դերբայական դարձվածները կետադրվում են ըստ բաղադրիչ պարզ նախադասության մեջ իրենց գրաված դիրքի: Սրանից հետևում է, որ երկրորդական նախադասության դերբայական դարձվածը, եթե անմիջապես հաջորդում է շաղկապին, համարվում է առաջադաս և տրոհվում է բունով (օրինակ՝ **Պարզվեց, որ գյուղից վերադառնալով՝ աշխատանքի է անցել դպրոցում**), իսկ եթե հաջորդում է հարաբերական դերանվանը, համարվում է միջադաս և տրոհվում է երկու կողմից ստորակետերով (**Ծանոթացանք այդ մարդու հետ, որը, գյուղից վերադառնալով, աշխատանքի է**

¹⁵ Վ. Առաքելյան, նշվ. աշխ., հ. Բ, էջք 164-165:

անցել դպրոցում): Վերջին տիպի նախադասություններում դարձվածի դիրքը միջադաս է համարվում՝ անկախ **որ**-ի՝ հոդով կամ անհոդ (նաև՝ հոգնակիի փոխարեն՝ եզակի) կիրառություններից, և դրա՝ բուրով տրոհումը համարվում է կետադրական սխալ: Պետք է նշել, որ այս կանոնին խստորեն հետևում են և՛ դպրոցական ուսուցման, և՛ հայոց լեզվից տարբեր մակարդակի ավարտական և ընդունելության քննությունների ժամանակ: Ահա մի երկու օրինակ կետադրության վերաբերյալ շտեմարանային առաջադրանքներից. **Նա աչքերը դարձրեց դեպի Սեդան, որ, ձեռքերը կրծքին խաչած, նայում էր հեռուն: Գետը, թվում է, կապույտ գոտի է՝ անադարտ ձյան վրա մոռացված, որ, ջրվեժ առ ջրվեժ խորանալով, գնում – կորչում է երկարաձիգ կիրճի մեջ: Հյուրերը, որ, պատշգամբից հեռանալով, մոտեցել էին սանդուղքին, հետաքրքրությամբ դիտում էին նորեկներին: Բարձունքի վրա ծերուկ հովիվն է, որ, կոթնած իր անբաժան ձեռնափայտին, հետևում է ոչխարների հոտին և այլն, և այլն:**

Ըստ արժանվույն գնահատելով և կարևորելով մեր կետադրության կանոնների մշակման և միօրինակացման հարցերում մասնագետների՝ մանավանդ վերջին շրջանում ծավալած արդյունավետ ջանքերը, այնուամենայնիվ ուզում ենք առաջարկել, որ վերևում բերված կարգի նախադասություններում դերբայական դարձվածների՝ բուրով տրոհումը նույնպես թույլատրելի համարվի (**Հյուրերը, որ պատշգամբից հեռանալով՝ մոտեցել էին սանդուղքին...., Բարձունքին ծերուկ հովիվն է, որ կոթնած իր անբաժան ձեռնափայտին՝, և այլն**): Կետադրական այսպիսի երկակիությունը, կարծում ենք, նախ ունի քերականական հիմնավորում՝ համապատասխանում է **որ** բառի գործառական երկակի արժեքին, ապա և չի հակասում հայերենի կետադրության տրամաբանությանը՝ կառույցի առոգանական նկարագրի տեսակետից:

Ключевые слова – относительное местоимение, семантический сдвиг, функциональная многозначность, переходная конструкция, синтаксическая норма, пунктуация.

Леонид Телян - ՈՐ. союз или местоимение ?. - Слово **որ** (что(бы)) в современном армянском языке составляет трехчленный омонимический ряд: вопросительное местоимение – относительное местоимение – союз. Оно является самым продуктивным средством выражения подчинительного отношения в сложном предложении. Союз **որ** генеалогически восходит к одноименному относительному местоимению, и в некоторых конструкциях сложных предложений вопрос его функциональной принадлежности до сих пор трактуется

неоднозначно. В статье сделана попытка на основе обобщения существующих точек зрения ввести некоторую ясность в оценке этих конструкций и, соответственно, предложены некоторые коррективы в правилах пунктуации современного армянского языка.

Leonid Telyan - Որ (vor): Conjunction or Pronoun?. - The word *որ* (*vor*) in Modern Armenian is a three-member homonymy series: interrogative pronoun, relative pronoun and conjunction. This word is the most productive means to express subordinate relationship in a complex sentence. The conjunction *որ* comes from the homonymous relative pronoun, and its functional value in some structures of the complex sentence has been subject to various interpretations.

Having summed up the existing approaches, an attempt has been made to clarify some points concerning the issue, which in its turn necessitates the introduction of some new punctuation rules in Modern Armenian.

**ԱՌՕՐՅԱ ԽՈՍՔՈՒՄ ԳՈՐԾԱԾՎՈՂ ՕՏԱՐ ԲԱՌԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՅԵՐԵՆ
ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ¹**

Ղաճոյան Լուսինե

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
ավագ գիտաշխատող, Բ.գ.թ.

Հայոց լեզուն աշխարհի հնագույն և հարուստ լեզուներից է, որն արտաքին և ներքին ազդեցությունների պայմաններում ենթարկվել է բազում փոփոխությունների, սակայն ինքնամաքվել ու միաժամանակ հարստացել է ոչ միայն իր սեփական բառարմատների հիման վրա ստեղծված նորակազմ բառերով, այլև տարբեր լեզուներից կատարած փոխառություններով: Իսկ բառապաշարը լեզվի բաղադրիչներից ամենազգայունն է, որն անմիջապես արտացոլում է հասարակական կյանքում տեղի ունեցող յուրաքանչյուր փոփոխություն, հետևաբար այն անընդհատ համալրվում է նորանոր բառերով, փոխառություններով: Փոխառությունը լեզուների բառային կազմի հարստացման արտաքին միջոցներից մեկն է:

Աշխարհի բոլոր լեզուներն էլ այս կամ այն չափով բառեր են վերցնում ցեղակից և ոչ ցեղակից լեզուներից, ինչն անխուսափելի երևույթ է լեզուների համար, և թերևս չի կարելի մատնանշել որևէ լեզու, որի բառապաշարի մեջ օտար բառեր չլինեն: Եվ դա ինքնըստինքյան հասկանալի է, քանի որ ժողովուրդները, գտնվելով զանազան կապերի ու փոխհարաբերությունների մեջ, անմիջաբար կամ միջնորդավորված ձևով նոր հասկացությունների ու երևույթների հետ հաճախ վերցնում են նաև դրանց անվանումները:

Բոլոր լեզուները, սակայն, հավասարաչափ չեն օգտվում այդ միջոցից: Կան լեզուներ, որոնց բառապաշարի մի զգալի մասը փոխառություն է, իսկ որոշ լեզուներում փոխառյալ բառերը համեմատաբար քիչ են, որը չենք կարող ասել հայերենի դեպքում:

Սույն հոդվածում նպատակ ունենք հատուկ քննության նյութ դարձնելու մեր լեզվի բառապաշարում գործածվող փոխառությունները և օտարաբանությունները, անդրադառնալ դրանց՝ հայերեն համարժեքներով փոխարինելու խնդրին:

¹ Հոդվածը տպագրվել է «Հայ գիտական բարբառագիտության 100-ամյակի գիտաժողովի նյութեր» ժողովածուում, Իջևան, 2015, էջ 37-47:

Քանի որ, ինչպես նշեցինք, լեզուն անտարբեր չէ հասարակական երևույթների նկատմամբ, հետևաբար լեզվի զարգացումը, նրա հասարակական գործառնությունը մեծապես պայմանավորվում են հասարակական այն պայմաններով, որոնցում ապրում է նրանով խոսող հասարակությունը: Իհարկե, լեզուն փոփոխվում է նաև մարդու լեզվամտածողության փոփոխության հետևանքով:

Ներկա փուլում, երբ տարբեր երկրների ու ժողովուրդների միջև ստեղծվել են մշակութային, գիտական, տնտեսական բազմաբնույթ կապեր, փոխադարձ այցելություններ ու շփումներ, միջազգային մասշտաբով ձեռնարկվող միջոցառումներ ու համագործակցություն, առևտրական ու քաղաքական կապեր և այլն, բնականաբար ավելի մեծ չափերով են կատարվում բառապաշարային տեղաշարժեր: Օրինակ՝ յուրաքանչյուր հասարակական նոր հարաբերություն նոր ծիլեր է գցում մեր լեզվում, մանավանդ առօրյայում գործածվող խոսակցական հայերենը հասարակական այդ նոր հարաբերությունների պայմաններում օրեցօր հեռանում է գրական հայերենից: Օր օրի խորապես աղճատվում և խաթարվում է բանավոր հայերենը: Մեր առօրյա խոսքում օգտագործվում են բազմաթիվ ու բազմաբնույթ օտար բառեր:

Դեռևս խորհրդային շրջանում հայոց լեզուն համալրվել է բազմաթիվ նոր բառերով և փոխառություններով: Ռուսերենը շատ մեծ ազդեցություն է ունեցել հայերենի հարըստացման գործում: Լինելով ազգամիջյան հաղորդակցման լեզու՝ ռուսերեն շատ բառեր ամրակայվել են հայերենի բառապաշարում, և շատ քչերն են կարողանում ազատվել դրանից: Այդ բառերը մեծ մասամբ կենցաղային են, կազմում են մեր բառապաշարի անբաժանելի մասը, որոնցից հնարավորին չափ պետք է ազատվել, ինչպես՝ *գալստուկ, լիֆտ, մեշոկ, մեքել, շոֆեռ, կռավաթ, պաժառ, պոլ, պատալոգ, սոկ, վեդրո, վեշ, տապոռ* և այլն:

Այսօր առօրյա խոսքում, հայերենը և ռուսերենը շարունակ խառնելով, մեծ վարպետությամբ մի նախադասության մեջ մի քանի անգամ լեզվից լեզու են անցնում: Այստեղ դեր ունի սովորույթի ուժը, սեփական խոսքի նկատմամբ անփութ լինելը, ինչպես նաև խոսքի ինքնահսկման բացակայությունը:

Շատ փոխառյալ բառեր արդեն ունեն իրենց հայերեն համարժեքները, որոնք նորակերտ բառեր են, սակայն շատերը դժվարանում են դրանք գործածել, ինչպես՝ *ալբոմ* (1. նկարանի՝ լուսանկարներ պահելու համար, 2. ծաղկանի՝ նկարելու համար, 3. հնչանի, ձայնանի, մեղեդանի՝ երգերի և երաժշտության հավաքածու), *արիստոն* (հոսնաջեռ),

բամբանենոկա (անուշատուփ), *բասկենտբոլ* (զամբյուղախաղ, զամբյուղագնդակ), *բասկետբոլիստ* (զամբյուղորդ), *գառաժ* (սայլատնակ), *գոսպիտալ* (գինհիվանդանոց) և այլն: Այստեղ արդեն խոսքի արհեստականության հարցն է առաջանում: Ոմանց համար խոսքը դառնում է մի տեսակ անբնական: Երբեմն էլ շատերն ամաչում են օգտագործել հայերեն համարժեքը՝ կարծելով ծիծաղելի կթվան շրջապատի մարդկանց, հետևաբար նախընտրում են առօրյայում գործածել օտար բառը՝ սովորույթի համաձայն: Խոսքը այն մարդկանց մասին չէ, որոնք օգտագործում են օտարաբանություն, քանի որ չգիտեն դրա հայերեն համարժեքը: Պատճառն այն է, որ տարիներ շարունակ լսել են փոխառյալ բառը, երբևէ չեն լսել դրա հայերեն համարժեքը: Նման օտար բառերից են՝ *բասանոշկա* (բոկոտիկ), *բիզուձի* (ծամկալ), *բլոկնոտ* (նոթատետր), *բռա* (որմնաջահ), *բռիլոկ* (մանրագարդ, կախագարդ), *գառշոկ* (1. ծաղկաման, 2. միզաման, նստուկ), *գրաֆինկա* (ջրխմիկ, սափոր, ջրաման), *գռելկա* (ջեռակ), *լամպուշկա* (լուսակ), *խաղունոկ* (քայլասայլակ), *կալորիա* (տերմուժ), *գնդակի կամեռ* (փչուկ), *մոզաիկա* (խճանկար), *շամպուն* (օճառաջուր), *շլանգ* (փողրակ), *շպիլկա* (1. հերակալ, ծամկալ, 2. լվացքակալ), *շվաբր* (լվափայտ), *մանեկենշիցա* (ցուցորդուհի), *պեդալ* (ոտնակ), *պերեդաչի* (փոխանցուկ), *պիժամո* (գիշերազգեստ, ննջազգեստ), *սավոկ* (աղբակալ, գոգաթիակ), *սոսկա* (ծծակ), *թրաշի ստանոկ* (սափրակ), *ստռոշկա* (գծակար), *սուշիկա* (չորանոց), *տաբուրետկա* (աթոռակ), *տյոռկա* (քերիչ), *տումբլկա* (պահարանիկ) և այլն:

Այսպիսով՝ օտարաբանություններ օգտագործում են, առանց բացառության, բոլոր բնագավառներում, տարբեր զբաղմունքի տեր մարդիկ: Բազմաթիվ օտարաբանություններ կան բժշկության ասպարեզում՝ *աբխոդ* (բուժայց), *պրիստուպ* (նոպա), *պրոֆիլակտիկա* (կանխարգելում), *պուլս* (զարկերակ), *ստացիոնար* (հիվանդանոցային, կացիկ), *տաբլետկա* (հաբ), *տամպոն* (վիրախձուժ) և այլն, երաժշտության ոլորտում՝ *բառաբան*, *բառաբանչիկ* (թմբուկ, թմբկահար), *գիտառա*, *գիտառիստ* (կիթառ, կիթառահար), *գաստրոլ* (հյուրախաղ), *գենեռալնի* (գլխավոր), *գվուկ*

(ձայն), *ժյուրի* (հանձնախումբ), *կլիպ* (հոլովակ) և այլն, դպրոցներում, բուհերում՝ *դիրեկտոր*, *ավտոռեֆերատ* (սեղմագիր), *լիկվիդ* (վերաքննություն), *զաչոտ* (ստուգարք), *զաչոտնիկ* (ստուգման գրքույկ), *նեդաբոռ* (թերի, թերլրում) և այլն, տարբեր աշխատավայրերում՝ *դակումենտ* (փաստաթուղթ), *դեկրետ* (հոշակագիր), *կադաստր* (իրարժեք), *պապկա* (թղթապանակ), *պիտիմինուտկա* (թոուցքաժողով), *պտիչկա* (նշագիր), *սկրեպ*

(ամրակ) և այլն: Անհարկի օտարաբանությունների մեծ քանակ հանդիպում ենք արհեստավորների խոսքում՝ *բոլտ* (հեղյուս), *գայկա* (մանեկ), *գակագ* (պատվեր), *գապչաստ* (պահեստամաս), *ժեշտ* (թիթեղ), *կռան* (կռունկ, ամբարձիչ), *կուսաչկա* (կտրիչ), *շլիֆովկա* (հղկում), *շուռուպ* (պտուտակ, պողոսակ), *պալիբովկա* (փայլեցում), *պայալնիկ* (գոդիչ), *պլանկա*, *պլենդուզ* (շերտաձողիկ, շրիշակ), *պռառաբ* (աշխղեկ), *ռեզբա* (պարուրակ), *սմասկա* (յուղում), *ստանոկ* (հաստոց), *քիրպիչ*, *քյարպիչ* (աղյուս) և այլն²:

Օտարաբանության դեմ պայքարը և լեզվի մաքրության հարցը միշտ էլ տարբեր ժամանակաշրջաններում եղել է քննարկման առարկա:

Բայց դա բոլորովին էլ չի նշանակում, թե հայոց լեզվի դոները պետք է ամուր փակել անհրաժեշտ փոխառությունների առաջ, բոլոր օտար ու փոխառյալ բառերը մերժել: Եվ երբեք չի կարելի նույնացնել օտարաբանությունը և փոխառությունները, դրանք տարբեր հասկացություններ են:

Եթե մինչև այսօր հիմնականում մեր առօրյայում գործածում էինք ռուսերեն բառեր, որոնք կամաց-կամաց դուրս են մղվում մեր բառապաշարից, ապա այժմ ավելի մեծ արագությամբ մեծ տարածում են գտնում անգլերեն կամ եվրոպական այլ լեզուներից վերցված բառերը, որոնց տեսակարար կշիռը օրեցօր ավելի է մեծանում: Ամենուր առնչվելով օտար երևույթներին՝ տեսնում և զգում ենք, թե ինչպես է խոսակցական ու առօրյա շփման լեզուն ողողվում օտարահունչ ու օտար ծագման բառերով: Մեր հասարակությունը չի կարողանում պահպանել հայերենն ու հայկականը, ընդհակառակը՝ հայ երիտասարդությունը, օրինակ, քննադատում է այն, ինչ հայկական է, սկսած երաժշտությունից մինչև մտածելակերպ: Այսօր «գարգացած» հայ երիտասարդի շուրթերից տեղի թե անտեղի անընդմեջ լսվում են հետևյալ բառերն ու արտահայտությունները՝ *ok, please, thanks, hy, bye*, «FULL ա», «Մի հատ SILK արա տենամ», «BREND-ովի ա քոնը», «LIKE անել», «Լայքեք և տարածեք», «Ֆոփ քառ ենք անում», «Ֆլեշմոբ ենք անելու», «Քենսլ արա», «Քոմենթել եմ», «Քոփի եմ արել», «Էսօր փարթի ա», «Անցկացվում է քաստինգ», «Մերը իրա մոտ պիկ ա տվել», «Ստատուսդ կբարձրանա» և այլն, ինչպես նաև՝ *աբիդնի, բումաժնիկ, գալուբոյ, գոուբի, դրայվ, էլեմենտարնի, կալենդար, կակոռազ, կամենտարիա, կատաստ-ռոֆա, կարիերա, կարիչնիվի, կաֆե, կլաս, կլասիկ, կոռեկտ, շոպինգ, պրինցիպի, ռոզրվի,*

² Տե՛ս, **Լ. Ղամոյան**, Օտար բառերի գործածությունը խոսքի իրադրային արտահայտություններում, Երիտասարդ լեզվաբանների հանրապետական երկրորդ զիտաժողով, Ե., 2012:

սելվ, սիրենըվի, սուպեն, ստոպ, վուլգար, ունիկալ, ույուտ և այլն: Բայց ինչու՞, միթե մեր լեզուն չունի այդ բառերի համարժեքը, չէ՞ որ նման բառապաշար գործածող անհատը չի կարող ունենալ գրագետ բանավոր խոսք, առավել ևս երեխան, որը փորձելով ընդօրինակել՝ իր բառապաշարը հարստացնում է այս բառակույտերով:

Որտեղի՞ց է գալիս այս երևույթը: Իհարկե, նախ համակարգչից, ԶԼՄ-ներից, հեռուստատեսության տարբեր նախագծերից ու սերիալներից, որոնց բառապաշարը կայծակնային արագությամբ դառնում է մեր երիտասարդության ու փոքրերի սեփականությունը: Շատ բառեր էլ մեր բառապաշար են մտնում խանութների ցուցափեղկերին կամ ճակատային մասերում գրված, ինչպես նաև՝ տաքսիների, սննդի և այլ տիպի սպասարկման կենտրոնների անվանումներից, ինչպես՝ *Երևան սիթի, Երևան Մոլլ, Դալմա Գարդեն*, օտար անվանումներ ունեն բազմաթիվ ֆիրմաներ, միջոցառումներ, մարզառողջական կենտրոններ (Oxigen), խանութներ (Avenue des Fleurs) ու առևտրի բազմաթիվ սրահներ (Klaik), հաղորդումների վերնագրեր (Vitamin, Tatoo art, Telemarket, Deluxe, Desktop, ինչպես նաև՝ Ֆուրոր, Բլեֆ, Էքսկլյուզիվ, Քոփի ռայթ, Սեկտոր PRO), մեքենաների սպասարկումների անվանումներ (GLOBAL LIMO SERVICE), հեռուստաալիքներ (TV, ATV, TV 5, Լայմ, Արմենիա) և այլն, երբեմնի հանրախանութների և սրճարանների փոխարեն հաճախ գործածվում են կաֆեներ-ը, սուպերմարկետներ-ն ու հիպերմարկետներ-ը:

Այսօր բազմաթիվ տերմինների համար ստեղծվում են հայերեն համարժեքներ, դրանց մեջ կան հաջողվածները:

Պահպանելով ճիշտ և ընդունելի սկզբունքներ, առաջարկելով բազմաթիվ հաջող նորակազմություններ՝ պետք է ձգտել հասկանալիին, սակայն վերջին երկու տասնամյակում հիվանդագին մի մտայնություն առաջացավ՝ բոլոր փոխառյալ, այդ թվում վաղուց լայնորեն գործածվող մատչելի բառերը անպայման փոխարինել հայերեն տարբերակներով: Եվ սկսեցին արագ թարգմանել գեղեցիկ ու դյուրահնչյուն այնպիսի բառեր, որոնք ոչ միայն չեն հակասում մեր ազգային լեզվի օրինաչափություններին, այլև արտահայտում են տվյալ բառի կամ հասկացության իմաստը:

Արդյունքում գրավոր ու բանավոր խոսքում տարածում գտան հնարովի, անճաշակ ու դժվարահունչ բառակերտումներ (ինչպես՝ *ժալել*՝ ճերմակուք, սպիտակուք, *թունել*՝ մութել, *լոգոպեդ*՝ խոսաբույժ, *կոտլետ*՝ աղուկ, *կոմիտե*՝ ղեկանի, ղեկախումբ), որոնք օտար բառերի լիակատար համարժեքը չեն: Ահա այդ լեզվական նորություններից մի

քանիսը՝ *դաշնույթ* (սիմֆոնիա), *կերպարարություն* (դիզայն), *կերպարար*, *կերպիկ*, *կերպորդ* (դիզայներ), *եռանդուժ* (էներգիա), *երաժշտանոց* (կոնսերվատորիա), *երթոն* (տրանսպորտ), *թեքնաբանություն* (տեխնոլոգիա), *սպայակույտ* (շտաբ), *սոցիում* (կոլեկտիվ), *սրընթոն* (մոտոցիկլետ), *քարյուղ* (նավթ) և այլն: Կամ՝ *ախտարգել* (կարանտին), *այլագիր* (կոդ), *դերանդամ* (պրոթեզ), *դիտագննում* (մոնիտորինգ), *դիրքաթիվ* (կոորդինատ), *գրուցահանդես* (թոք շոու), *թաղքագրիչ* (ֆլումաստեր), *խափանարարություն* (դիվերսիա), *ծրիչ* (սկաներ), *մրցատյան* (ժյուրի), *ցնցաբուժություն* (շոկային թերապիա), *ցնցանկար* (թրիլեր), *գրոսահանգրվան* (տուր քաղա) և այլն:

Կան բառեր էլ, որոնք շատ երկար ժամանակ օգտագործվել են, այժմ հասարակության կողմից անընդունելի են նման բառերի հայերեն համարժեքները, ինչպես՝ *դպրորդ* (ասպիրանտ), *դպրանոց* (ասպիրանտուրա), *դպրապետ* (գիտությունների դոկտոր), *դպիր* (գիտությունների թեկնածու), *ավարտաճառ* կամ *վկայագիր* (դիպլոմ), *ավարտաճառային* (դիպլոմային), *ուսվար* (դեկան), *ուսվարանոց* (դեկանատ) և այլ նորակազմություններ: Անհաջող բառակերտումներ ենք համարում նաև ճեպ (արագ) բառից սերող նորակազմությունները, ինչպես՝ *ճեպատար*, *ճեպիկ*, *ճեպո* (տաքսի), *ճեպորդ* (տաքսու վարորդ), *ճպերթ* (մետրո):

Նոր բառերի ստեղծման և փոխառնված բառերի հայերենացման մեծ միտումը, անշուշտ, դրական քայլ է, քանի որ տեղի է ունենում նաև լեզվի բառապաշարի հարստացում: Բայց հարց է առաջանում. որքանո՞վ են այս նորաստեղծ բառերը իմաստով ու հնչեղությամբ համարժեք չթարգմանված տարբերակին:

Այսպիսով՝ եթե անհաջող թարգմանենք բոլոր փոխառությունները, ապա մեր լեզուն դրանից կտուժի և ոչ թե կհարստանա:

Կան շատ բառերի թարգմանություններ էլ, որ կարծես արվում են հասարակության կողմից. չես կարող ասել՝ ժարգոնածի՞ն են, գրական հայերենի՞ց, թե՞ առօրյա խոսակցական լեզվից:

Այս բառերն հավանաբար գործածվում են միմիայն ծաղրի նպատակով: Օրինակ՝ պոռառելի՝ *գրգռաճեղք*, ջենթլմեն՝ *օրիորդապանդիչ*, տրոլեյբուս՝ *պոզասայլակ*, շամպայն՝ *փրփրագմփիկ*, մոտոցիկլետ՝ *ուժանիվ*, մակարոն՝ *երկարակլորախմորածակ*, դագաղ՝ *ննջատուփ* և այլն, որոնք ավելի են աղավաղում մեր լեզուն:

Նման երևույթները կանխելու, հետևաբար և մեր լեզուն արհեստական ու անհաջող բառակերտումներով չխճողելու համար հարկավոր է լուրջ մոտեցում ցուցաբերել բառաստեղծման հարցերին, բազմակողմանիորեն քննության ենթարկել ամեն մի բառ, հետո գործածության մեջ դնել: Ընդհանրապես, իբրև կանոն, բառերի գոյատևումը պայմանավորված է խոսքի մեջ նրանց կիրառությամբ, ուստի որքան հաճախադեպ են հանդես գալիս նրանք ու լայն ընդգրկում ստանում, այնքան անհրաժեշտ ու հարազատ են թվում՝ դառնալով սովորական գործածության բառեր, որից հետո դրանց կիրառությունը աստիճանաբար օրինականացվում է: Դժբախտաբար այդպիսի ճակատագիր են ունենում երբեմն նաև արհեստական, անճաշակ ու անհաջող կազմություններ, մի բան, որ հիմնականում պայմանավորվում է առանձին մարդկանց, իսկ երբեմն էլ նաև հասարակության անտարբերությամբ, որոնք լայնորեն գործածում են այդպիսիք՝ առանց հաշվի առնելու դրանց նպատակահարմարությունը:

Միայլ ենք համարում նաև օտարամոլությունը, երբ խրախուսվում է ամեն կարգի փոխառությունների մուտքը հայերեն՝ վերջինիս դոները լայնորեն բացելով օտար բառերի առջև և ոտնահարելով մայրենի լեզվի մաքրության շահերը, նրա դարավոր ավանդույթներն ու բառաստեղծական հնարավորությունները:

Այստեղ հարցն այն է, թե արդյո՞ք բոլոր միջազգային բառերն ու տերմինները անվերապահորեն պետք է ընդունել, թե՞ պետք է օգտվել լեզվի սեփական ներքին հնարավորություններից, դիմել բառակազմությանը: Մեր կարծիքով պետք է հաշվի առնել բառի գործածության անհրաժեշտությունը, նպատակահարմարությունն ու չափը: Փոխառություններին պետք է դիմել միայն անհրաժեշտության դեպքում, երբ լեզվի ներքին միջոցներով հնարավոր չէ արտահայտել փոխառյալ բառի իմաստն ու նշանակությունը: Սա միանգամայն իրավացի պահանջ է, բխում է մեր լեզվի մաքրության շահերից և հաշվի է առնում հայերենի ավանդույթներն ու բառակազմական առանձնահատկությունները:

Այսպիսով՝ լեզուն մեր ժողովրդի մեծագույն հարստությունն է և պետք է պաշտպանված լինի ոտնձգություններից: Յուրաքանչյուր լեզու հարստանում է, եթե օգտվում է փոխառություններից, սակայն անհարկի օտար բառերի ներմուծումը աղավաղում է մեր լեզուն, և դրա դեմ պետք է շարունակական պայքար տարվի: Մեր ժողովուրդը միավորված խոսքի կարիք ունի: Պետք է անել ամեն ինչ՝ օտարաբանություններին քիչ դիմելու համար՝ պահպանելով մեր լեզվի գեղեցկությունը, ճոխությունն ու ճկունությունը: Եթե

ազգային գիտակցության վրա հիմնված կարգախոսը գործի, ապա լեզվի վիճակը հետզհետե կկարգավորվի: Չմոռանանք նաև, որ անհարկի մաքրամոլությունը միայն վնասում է լեզվին:

Лусине Гамоян – Проблема замены варварства и заимствований используемые в ежедневной речи с армянскими эквивалентами. – Словарь более чувствителен из языковых компонентов, который отражает непременно каждое изменение в общественной жизни, поэтому он непрерывно обновляется новыми словами, а также заимствованиями и варварством. Хотя любой язык обогащается, если использует заимствования, но импортирование неуместных иностранных слов искажает наш язык, и необходимо непрерывная борьба против него. Мы не должны забывать также, что неуместный пуризм только вредит языку.

Lusine Gamoyan – The task of replacing barbarism and borrowings used in the daily speech with Armenian equivalents. – Vocabulary is more sensitive of the language components, which is reflecting immediately each alteration in a public life, therefore it is completed continuously with the new words, and also borrowings and barbarism. Though any language is becoming rich, if is making use of borrowings, but the importing of the inappropriate foreign words is distorting our language, and it is necessary a continuous struggle against it. We must not forget also, that inappropriate purism is only harming the language.

Բանալի բառեր: Հայոց լեզու, փոխառություն, օտարաբանություն, նորաբանություն, համարժեք, տերմին, թարգմանություն:

Ключевые слова: Армянский язык заимствование, варваризм, неологизм, эквивалент, термин, перевод.

Key words: Armenian language, borrowing, barbarism, neologism, equivalent, term, translation.

**«ԳԼԽԻ ԾԱԾԿՈՑ» ՀԱՄԿԱՑՈՒԹՅԱՆ ԲԱՌԻՄԱՍՏԱՅԻՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ
ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ¹**

Ղամոյան Լուսինե

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
ավագ գիտաշխատող, Բ.գ.թ.

Հայերենի բարբառների բառապաշարի ուսումնասիրությունն ունի գիտական կարևոր նշանակություն: Այն, լեզվաբանական հետաքրքրությունից բացի, հնարավորություն է տալիս վեր հանել, ամենատարբեր տեսանկյուններից քննել հայ ժողովրդի կենցաղը, հոգևոր ու մտավոր կյանքի առանձին կողմերը: Հոդվածում քննել ենք **«հագուստ»** իմաստային դաշտի բառանվանումներից *«գլխի ծածկոց»* հասկացության բառային դրսևորումները հայերենի բարբառներում: Հայերենում *գլխի ծածկոց* հասկացության անվանումները տարբեր են՝ պայմանավորված ոչ միայն լեզվամտածողության, այլև աշխարհագրական, ժամանակային, կրոնական և այլ գործոններով: Հայերենի բարբառներում, խոսվածքներում և ենթախոսվածքներում առկա են դրանց բազմաթիվ անվանումներ (ավելի քան 140 անվանում):

Այս հասկացության անվանումների շղթայում նախնական բառը *գլխարկ*-ն է, որը Ստ. Մալխասեանցի «Հայերեն բացատրական բառարանում»² ունի *«գլխին դնելու ծածկույթ»* (այժմ գործ է ածվում եւրոպական տարազի գլխի ծածկոյթների համար՝ տղամարդկանց և կանանց)» իմաստը, «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում»³՝ *«1. Գլուխը ծածկելու հագուստ, 2. Մի գլխարկի տարողության չափ»* իմաստները: *Գլխարկ* բառաձևին չենք հանդիպել մեր ձեռքի տակ եղած բարբառային բառարաններում⁴: Հր. Աճառյանի «Հայերեն գալառական բառարանում» կա միայն *«գլխարկ/փոխուկին»* կապակցությունը. հեղինակը նշում է, որ Ակնում ասվում է **գալբագ-փոխուկին** (գալբագ-ը թուրք. փոխառություն է՝ *գլխարկ* իմաստով). «սա խաղ է, որի ժամանակ. սենեկին միջի նստող արք՝ գլխարկին միմեանց հետ կը փոխեն, և կ'սկսին եղեր գլխարկին տիրոջն

¹ Հոդվածը տպագրվել է «Էջմիածին» ամսագրում, Ե., 2016, էջ 129-136:

² Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, (այսուհետև՝ ՀԲԲ), հ. 1, Երևան, 1944, էջ 444:

³ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, (այսուհետև՝ ԺՀԼԲԲ), հ. 1, Երևան, 1969, էջ 411:

⁴ Հր. Աճառյան, Հայերեն գալառական բառարան, (այսուհետև՝ ՀԳԲ), Թիֆլիս, 1913, Հայոց լեզվի բարբառային բառարան, (այսուհետև՝ ՀԼԲԲ), հհ. Ա-Է, Երևան, 2001-2012:

անուամբ զիրար ողջունել....Սխալողն գաւաթ մը գինի ըմպել տալով կը պատժեն եղեր» (Հնութ. Ակնայ)⁵:

Այսպիսով՝ արդի հայերենում հաճախական *գլխարկ*-ը բարբառներում արտահայտվում է այլ բառերով, ինչպես՝ **գաբալուշ** (Առտ.), **գդակ**⁶ (Ազլ., Երև., Զթ., Խրբ., Մշ., Ոզմ., Պլ., Սշ., Վն., Տփ.) *«1. Գլխարկ, 2. Որմ. սյան գլխափայտ. սյան գլխին ավելացված փայտեր», գլխնոց* (Մլթ.), **կութ, գութի** (Գնձ.) *«1. Մագով առատ մորթուց պատրաստած մախաղ, պարկ, 2. Գտակ», կուտլիկ* (Բրչ.), **կտոզ** (Հճն.), **շաբխա** (Պլ. (Պրտ.)), **շափղա** (Եվդ. (Ամս.)) *«1. սովորական գլխարկ, 2. շլապա»* և այլն⁷:

Գլխարկ-ն, իբրև «գլխի ծածկոց» հասկացություն, ունի իր տարատեսակները, որոնք տարբեր դրսևորումներ ունեն հայերենի բարբառներում, ինչպես՝ **գալտոտոզ** *«Թաղիքե սրածայր գդակ», թղիկ* (Զթն.) *«Սպիտակ կտորից կարված գլխարկ՝ առանց եզրամասի, չեպչիկ», խալփախ* (Պլ.) *«Թասակաձև գլխարկ», խոկառ* (Գնձ.) *«1. Մորթե գլխարկ, փափախ, 2. Կավե խոր աման», կարիբաղի* (Գնձ.) *«Թասականման կլոր գդակ», պուզտի* (Ղրբ.) *«1. Սրածայր, 2. Սրածայր գլխարկ, 3. (Ղրբ. (Գնձ.)) Վատ գլխարկ, փոստ», պուպուզտ* (Շմխ.) *«1. Սրածայր գլխարկ, 2. Գմբեթ», փափախ/ընդի. փափաղ* (Ղրբ.) *«Մորթե գլխարկ», ֆաս* (Ար., Մշ. (Բղշ.), Վն.)//**փաս** (Ուրմ.)//**փես** (Պլ., Կր.) *«Մի տեսակ գլխարկ (հողի ձևի, հաճախ նաև փնջավոր)», ֆես¹ (Երզ., Պլ.) *«Թուրքական գլխարկ»* և այլն: Բացի վերոնշյալներից կան նաև մի շարք բառեր, որոնք գլխարկի մաս են, ինչպես՝ **ափրա** (Թբ.) *«Գդակի ներսի կողմը», թեխե* (Արբ., Տրն.) *«Գլխարկի մեջ դրված կտավը՝ քրտինքից պաշտպանելու համար», լըգդը* (Սս.) *«Թասակը գլխին ամուր պահող թել, որ անցնում է վզի տակով և որի մի ծայրը միացվում է մյուսին», լպունք* (Մշ. (Բղշ.)) *«Գլխարկի թելեր, որ կապում են ծնոտի տակ», ինձիկ* (Բլ.) *«1. Գլխարկին կապելու չիթ՝ թաշկինակ, 2. Թաշկինակ, որ հարսներն իբրև զարդ կախում են իրենց աջ կողքը՝ գոտուց ցած», պանտիկ* (Արբ.) *«Աղջիկների ֆեսի երկու կողմերից կարված մետաքսյա ժապավեն, որի ծայրերը կապում են ծնոտի տակ, որպեսզի ֆեսը գլխից չընկնի»* և այլն:*

⁵ Տե՛ս ՀԳԲ, էջ 186:

⁶ Այս բառաձևի համար **Հր. Աճառյանը** «Հայերեն արմատական բառարանում» (այսուհետև՝ ՀԱԲ), նշում է. «Հին մատենագրության մեջ առելի սովորական է **գտակ** ձևը, որից **գտակկարոց** «գլխարկավաճառների շուկայ», Արձ. 1348թ. (Վիմ. տար. 169). կայ և **քդակ** Հ. Կիլիկ., իսկ արդի գրական լեզուի մեջ ընդունուած է **գդակ** ձևը, որից՝ **գդակավաճառ, գդակակար** նոր բառերը», ՀԱԲ, 1971, հ. Ա, էջ 529:

⁷ Բոլոր օրինակներն իրենց բացատրություններով քաղել ենք ՀԼԲԲ-ից՝ համեմատելով այլ բառարանների հետ (ԺՀԼԲԲ, ՀԲԲ, ՀԱԲ, ՀԳԲ և այլն):

Ուսումնասիրելով *գլխարկ* հասկացության բառային տարբեր դրսևորումները հայերենի բարբառներում՝ բառանունները բաժանել ենք խմբերի:

Ա. Հոգևորականի գլխարկ, ինչպես՝ **գելուգա** (Սվդ.)՝ «Քահանայի փակեղ՝ *գլխարկ*», **գուտիկ** (Պպ.)՝ «Հոգևորականի *գլխարկ*», **գումփ** (Ար., Նն., Պպ., Շտխ.)՝ «1. Կնգուղ, աբեղայի *գլխարկ*՝ վեղարով կամ առանց վեղարի, 2. Սրածայր, վեղարաձև», **կուտիկ**՝ «1. Սև բրդից գործած վարդապետի ու քահանայի վեղար, 2. Սաղավարտ, *գլխանոց*», **սևակնգուղ** (Վն.)՝ «Սև կնգուղ կրող, սևագլուխ (կրոնավորների մասին)», **փուփուլիկ** (Նն.)՝ «Վեղար» և այլն:

Բ. Կնոջ գլխարկ, ինչպես՝ **գյուֆ** (Սրշ.)՝ «Կանացի հնաձև *գլխարկ*», **թաղնա** (Ակն.)՝ 1. Քահանայի *գլխարկի* նման, բայց առջևի կողմի վրա թեքված, մեջք բամբակած, իսկ դրսի կողմը գույնզգույն կերպասե *գլխարկ*, որ հնում կրում էին կանայք, 2. Գլխի մեծ փաթույթ՝ փաթթոց), **խասապա** (Ակն.)՝ «Կանացի սաղավարտանման հարսանեկան *գլխարկ*՝ պատրաստված բարակ տախտակից՝ վրան կերպաս պատած և քող քաշած», **կուֆ** (Հճն.)՝ «1. Կանացի *գլխարկ*, 2. աքլորի գլխի կատարը, ցցունք» (Սբ.), **մջուկ** (Թբ.)՝ «Կանացի կոնաձև *գլխարկ*, որ վրայից ծածկված է կերպասով», **պալտի** (Ղրբ. (Գրս.))՝ «Կանացի գլանաձև գդակ», **տնկա** (Տգր.)՝ «Կանացի մի տեսակ *գլխարկ*՝ երկարավուն», **ֆայ փոշի** (Նն.)՝ «Կանացի մետաքսե *գլխարկ*), որտեղ ֆայ-ը նշ. է մի տեսակ մետաքսե գործվածք», **ֆինո** (Սս.)՝ «Կանացի *գլխարկ*, քոֆի, ֆես» և այլն:

Գ. Տղամարդու գլխարկ, ինչպես՝ **չամչուկ** (Շիր.)՝ «Հասարակ թելից գործած տղամարդու *գլխարկ*»:

Դ. Մանկական գլխարկ, ինչպես՝ **դեգրկ** (Սվ.)՝ «Փոքր *գլխարկ* (երեխայի)», **շպակ** (Նկմ.)՝ «Նորածին երեխայի *գլխի* գդակ», **շփոլիկ** (Եվդ.)՝ «Երեխայի *գլխարկ*», **տաղա**, **տաղիղ** (Քսբ.)՝ «Նորածին երեխայի *գլխարկ*», **քուքվա**՝ «Գդակ (մանկ.)» և այլն:

Թեև Լ. Հովհաննիսյանն իր աշխատություններից մեկում⁸ նշում է, որ զգեստների անվանումներում այնպիսի հիմնական տարաբաժանում, ինչպես տղամարդու զգեստկնոջ զգեստ, հստակորեն չի արտահայտվում, այսինքն՝ բազմաթիվ անվանումներ, ինչպիսիք են՝ *թագ*, *գոտի*, *կոշիկ*, *վերարկու* և այլն, վերաբերում են թե՛ տղամարդու, թե՛ կնոջ հագուստին, սակայն, ինչպես նկատեցինք, բարբառներում որոշ տարանջատումներ կան՝ ի տարբերություն գրական լեզվի:

⁸ Լ. Հովհաննիսյան, *Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն*, 2-րդ մաս, Երևան, 2012, էջ 23:

«Գլխի ծածկոց» հասկացության մեջ առանձնացրել ենք նաև **գլխաշոր** «գլուխը կապելու շոր, գլխի թաշկինակ (առավելապես կանանց)» հասկացությունն իր տարատեսակներով:

Նախ՝ **գլխաշոր** հասկացությունը նույնպես տարբեր բարբառներում տարբեր բառանուններով է հանդես գալիս, ինչպես՝ **գլխափաթաթ**, **գլուխկապ** (Նն.), **կնջիկ** (Ղրբ., Ազլ.), **շավաղ** (Ար.), **շարա** (Քսբ.), **պվունկ** (Ակն.), **փաթնակ** (Կսր.), **մանդիլ** (Թբ., Կրճ., Հմշ., Նն.) և այլն:

Գլխաշորի տեսակներ կան, որոնք տարբեր բարբառներում կարող են հանդես գալ տարբերություններով, ինչպես՝ **յաշմախ** (Պլ. Կր.(Շիր.) Եվդ. (Սրգ.))//**յաշմաղ** (Ղրբ., Հվր., Պլ., Ամս., Կր., Մշ.)՝ «1. Կանանց երեսի քող, 2. լաչակ, 3. քողի կամ գլխաշորի փաթեցի այն մասը, որը դեմքի վրա բերելով բերան ու քիթը ծածկում են», **մումի** (Մշ. (Բղշ.))՝ «1. Կանացի գլխաշոր, 2. Տղամարդկանց գլուխը կապելու թաշկինակ» (Սս.) և այլն: Տեսակներ կան, որոնք առանձնանում են որևէ հատկանիշով, ինչպես՝ **էիրամ** (Կր.)//**էիրամ** (Ախց.)՝ «Բրդե շատ բարակ թելից գործած քառանկյունի գլխաշոր», **հեյրաթի** (Հվր., Ղրբ. (Գնձ.), (Քնդ.))՝ «Գլխի մետաքսե մեծ թաշկինակ», **մումի** (Սս.)՝ «Գլխին կապելու դեղին գույնի լաչակ», **յազմա** (Ուրմ. (Սլմ.), Պլ., Եվդ. (Սրգ.), Ամս., Կր. (Շիր. Ջվխ.), Երզ., Խրբ. (Բլ.), Մշ., Վն.)՝ «1. Ծաղկավոր գլխաշոր, 2. Նուրբ ծաղկավոր գործվածք, 3. Փխբ. բազմերանգ ծաղիկների ու խոտերի ծածկոց», **շալովնի** (Ար. (Լ.))՝ «Կանացի բրդյա գլխաշոր» և այլն:

Գլխաշորի տեսակներ կան, որոնք նախատեսված են բացառապես **կանանց** համար, ինչպես՝ **դնչկապ** (Դրս. (Քդ.))՝ «Սպիտակ գլխաշոր, որ կանայք, իրենց ծնոտի տակից անցկացնելով, կապում էին գլխի վրա», **երեսլաթ**՝ «Լաչակ, որի մի մասով կանայք ծածկում են իրենց երեսը», **ճուրդի** (Սբ., Շմխ.)՝ «Գլխի կանացի ծածկոց», **շղա** (Տգր.)՝ «Կանանց գլխի ծածկոց», կան **երեխայի գլխաշորեր**՝ **շիվիք** (Կսր.)՝ «Երեխայի գլխի կապ», **պարալաչիկ** (Ար. (Երև.))՝ «Փոքր երեխաների գլխի լաչակ», **տղամարդկանց** գլխաշորերից են՝ **բաշլըղ**՝ «Տղամարդու գլխի փաթաթան», **չալմա**՝ «Տղամարդու գլխի փաթաթան» և այլն:

«Գլխի ծածկոց» հասկացության մեջ առանձնացրել ենք նաև **քող**, **շղարշ** իմաստն արտահայտող մի շարք բառեր, ինչպես՝ **թոզ**//**թոզի**//**թոզի** (կ)՝ «Երեսը ծածկելու շատ բարակ քող», **ծամքող**՝ «Մազերին գցելու քող, շղարշ», **յաշմախ** (Պլ., Կր. (Շիր.), Եվդ., (Սրգ.))՝ «1. Կանանց երեսի քող, 2. (Ամս.) Լաչակ, 3. Քողի կամ գլխաշորի փաթեցի այն մասը, որը դեմքի վրա բերելով բերան ու քիթը ծածկում են», **չավրա** (Բս.)՝ «1. Շղարշ, քող,

2. Թաշկինակ), սեհենտեզ (ՀՃՆ.)՝ «Գլխի շղարշ», տուվոխ (Կլկ. (Մրշ.))՝ «կանացի քող», քողը՝ «Երեսի քող» և այլն:

Կան գլխաշորի տեսակներ, որոնք նախատեսված են միայն հարսանեկան արարողության համար՝ մերտակ (Մշ., Բղշ.)՝ «Պսակի գիշերը հարսի գլխին գցվող մետաքսյա քողը», յափուղ (Կր. (Ջվխ., Բս.))՝ «Հարսի երեսի քող», ռուփակ (Ղրբ.)՝ «Ոսկեթելով կարված քող, որով հարսները ծածկում էին իրենց գլուխը», քողք՝ «Հարսանեկան քող, որ տղայի տանից բերում են հարսի երեսին ձգելու» և այլն:

Լեզվական իրողություններն անընդհատ փոփոխություններ են կրում. այդ պատճառով էլ ոչ մի վայրի խոսվածք ամբողջությամբ նույնական չէ մեկ այլ վայրի խոսվածքի հետ «որով կարելի լիներ առանձնացնել նրանք մի անվան տակ»⁹, դրա համար էլ միևնույն բառանունը կարող է տարբեր բարբառներում կամ խոսվածքներում ունենալ բոլորովին այլ նշանակություն, այստեղից էլ առաջանում են բազմաթիվ համանունական շարքեր, ինչպես՝

կուր¹ «1. Կարի մեջ թելած ասեղի մեկ քայլ, ասեղի մի զարկ (Ար., Բղշ., Բլ., Խիզ., Քղ.), 2. Ասեղով կարի վերջին ամրապնդող հատվածը, 3. Գուլպա գործելիս ամեն մի աչքը կամ հատը (Խրբ.), 4. Մի քիչ, մի փոքր» (Բլ.),

կուր² «Գլխարկ»,

կուր³ «1. Կաթիլ (Սվ.), 2. Պաշար, ուտելիք, ապրուստ» (Բղշ., Մկս.),

կուտիկ¹ «Փոքր շուն (Ախց.), իբր նախատական կոչական» (Ղրբ.),

կուտիկ² «Ռուսական 20 կոպեկանոց (հմմտ. կուտ «դրամ»)» (Ազլ.),

կուտիկ³ «1. Սև բրդից գործած վարդապետի ու քահանայի վեղար, 2. Սաղավարտ, գլխանոց»,

շպակ¹ «Նորածին երեխայի գլխի գդակ» (Նկմ.),

շպակ² «Տան ներսում պատի մեջ թողնված պատռուհան, պատրիհան» (Խրբ., Սս.),

չամչուկ¹ «Հասարակ թելից գործած տղամարդու գլխարկ» (Շիր.),

չամչուկ² «1. Ողկույզի վրա չորացած խաղող, բնական չամիչ (Բլ.), 2. Խաղողի մի տեսակ, որից չամիչ են պատրաստում» (Մլթ., Բլ.),

չամչուկ³ «Մի տեսակ խոտ, վայրի դաշտային ծաղիկ» (Խրբ.),

⁹ Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Երևան, 2013, էջ 325:

փոստալ¹ (Ար., Հմշ.)//**փոստի** (Ղրբ.)//**փոսթոլ** (Կլկ. (Մրշ.)) «1. Մորթե հնամաշ գլխարկ, 2. Հասարակ կաշուց կարված հողաթափ, 3. Ճտքավոր կոշիկ (Կր. (Շիր.), Հճն., Խտջ.), 4. Մորթե մուշտակ (Նն.), 5. Խիտ մազեր ունեցող փռչոտ շուն» (Հմշ., Վն.),

փոստալ² «Վատ վարքի տեր, անբարոյական (կին)» (Պլ., Եվդ. (Ամս.)),

փուփուլիկ¹ «Վեղար» (Նն.),

փուփուլիկ² «Փափուկ, կակուղ» (Պլ. (մնկ.)),

շարա¹ «Ճերմակ կամ գունավոր գեղեցիկ կերպաս, որ գործածում են իբրև գլխի ծածկոց» (Քսբ., Սվ.),

շարա² «Հաճար» (Ղրբ.),

փաթթոց¹ «1. Մահմեդական կրոնավորների գլխին փաթաթած շորը (Պլ., Արբ.), 2. Ոտքի փաթաթան» (Նն.),

փաթթոց² «Տոլմա (հատկապես թփով)» (Կսր., Արբ. (Տրն.)),

յափուլ¹ «Հարսի երեսի քող» (Կր. (Ջվխ., Բս.)),

յափուլ² «Եղջուրները դեպի ետ աճած (կենդանիների մասին)» (Հմշ.) և այլն:

Հաճախ միևնույն բառը տարբեր բարբառներում գործածվում է հնչյունական տարբերակներով, որոնք թեև ունեն նույն իմաստը, բայց տարբերվում են հնչարտասանությամբ, ինչպես՝ «թասակ, գունավոր թելերով գործված գլխարկ» հասկացությունն արտահայտող **արախճին բառը** բարբառներում (Ամս., Ար., Կր., Ղրբ., Մլթ., Մշ., Սս.) արտաբերվում է՝ **արախճին, արախչի(ն), արաղչին, արախջի**, լաչակ բառը՝ **լեչակ** (Ղրբ.)//**լեչաք** (Թբ.)//**լաչիկ** (Բղշ., Վն., Շտխ., Ախց.), կամ՝ **սևալաչակ** (Ար.) // **սըվըլաչա** (Մղր. (Կքվ.))//**սըվըլաչակ** (Ղրբ. (Գնձ.), Մղր.)//**սըվլոչակ** (Մղր. (Կրճ.))՝ «1. Գլխին սև լաչակ կապած, 2. փխր. Ամուսնուն կորցրած, ամուսինը մահացած, որբնայրի), **յայլուղ** (Ար., Ղրբ., Շմխ., Կր., Մշ.)//**յայլղ** (Ուրմ.)//**յալուխ** (Հվր., Շմխ.)//**յաղլըխ** (Ամս.)//**յալլախ** (Մղր. (Կրճ.))//**յալլուխ** (Ղրբ.)//**յաղլախ, յըլլեխ** (Ղրբ.)//**յաղլուխ** (Ղրբ., Ար. (Լ.), (Ջվխ.))//**յլախ** (Ագլ.)//**յալլեխ** (Ղրբ.)՝ «1. Գլխաշոր, 2. Ձեռքի թաշկինակ, 3. Երեսսրբիչ (Հմշ.), նվեր, ընծա (Ղրբ.), 5. կաշառք (Ղրբ.) և այլն:

Շատ բառանուններ էլ տարբեր վայրերում ունեն նույն արտասանությունը, բայց տարբեր իմաստներով են հանդես գալիս, ինչպես՝ **թառլիկ** (Շիր., Խրբ. (Բլ.), Մշ.)՝ «1. Թառլակ, Թասակ (Կլկ. (Մրշ.)), 2. Բաճկոն (Սս.), 3. Ձիու վրա թամբի տակից գցվող ծածկոց, որ սովորաբար պատրաստված է թաղիքից, թամբակալ, քրտնակալ (Ղրբ., Գնձ.,

Զնգ., Ար. (Կոտ.), **4. Ասեղնագործած», սավան/սավոն՝ «1. Մավան, 2. Շորեղեն՝ շապիկ՝** գլխարկ և այլն, որ կնքահայրը նվիրում է ծննդկանին՝ նորածին երեխայի համար, **3. Մի տեսակ հաստ կտավ, որ գործում են լեռնցիները բամբակե թելից, 4. Նորահարսի քող, 5. Բրդյա սփռոց, 6. Վերմակի պաստառ, 7. Բամբակի թելից գործած հատուկ չափի ու նրբությամբ գլխաշոր, որով կանայք ծածկում էին իրենց գլխի քոֆին, 8. Նորածինը կնքելուց հետո մեջը փաթաթելու անվա սպիտակ կտոր, 9. Կանացի գլխաշոր, 10. Ճերմակ ծածկոց, որի մեջ փաթաթվում էին կանայք՝ տանից դուրս գալիս», փոստալ (Ար., Հմշ.)//փոստի (Ղրբ.)//փոսթոլ (Կլկ. (Մրշ.))՝ **«1. Մորթե հնամաշ գլխարկ (Ար., Հմշ.), 2. Հասարակ կաշուց կարված հողաթափ (Կր. (Շիր.), Հճն., Խտջ.), 3. Ճաքավոր կոշիկ (Կլկ. (Մրշ.)), 4. Մորթե մուշտակ (Նն.), 5. Խիտ մազեր ունեցող փռչոտ շուն (Հմշ., Վն.), վալա՝ «1. Մետաքսյա նուրբ քող (Կր. (Ախց., Ախք.)), 2. Շորի կտոր, որով ծածկում են խմորի երեսը (Նկմ., Մբ., Կր. (Ախց., Ախք.)), 3. Մազե հաստ ու կոպիտ գործվածք, որի վրա խմոր են գնդում (Մբ.), 4. Բրդյա մի տեսակ կտոր, որ գործում են տնային պայմաններում (Խտջ., Հմշ.), 5. Գոգնոց (Պլ.), 6. Մավան, որ օգտագործվում է զանազան նպատակներով (թուրթափ տալու համար) (Կր. (Ախց.)), ներքնակ (Խրբ., Ակն, Առտ., Զթն., Սշ. (Բղշ.))//ներքինակ (Խրբ. (Բլ.))//ներքվուկ՝ «1. Ներքնքար, 2. Բարակ կտավ, որ կանայք գլխի թաշկինակի տակից կապում են գլխին (Ակն), 3. Ոստայնակի գլանաձև գործիք (Խրբ., Զթն., Վն.), 4. Կին, ամուսին (Առտ., Սշ.), 5. Տակից հագնելու բաճկոնակ, տակի բաճկոն» (Առտ.) և այլն:****

Ուսումնասիրությունից պարզվում է, որ այս բառանունների մեծ մասը փոխառություն է, մի քանիսը՝ թուրքերենից¹⁰, ինչպես՝ **արախճին/արախչին/արաղչին/արախջի, բաշլըդ, խալփախ, շափղա//շապկա, շուպառա, փափախ/փափաղ, ֆես, յազմա, յաշմախ, շալ, չալմա** և այլն, իսկ որոշ բառեր էլ հանդիպում են այլ իմաստներով, ինչպես՝ **ֆինտ «Տան շուն», ապլախ «Կլոր երեսով» (ապլախ սուռաթլը (թրք.)), խավուն «1. Մեխ, 2. Փխբ. «տխմար», թոզ «1. փոշի, 2. շատ քիչ քանակությամբ ալյուր»** և այլն:

Այսպիսով՝ հայերենի բարբառների բառապաշարային տարբերությունները պայմանավորված են տարբեր հանգամանքներով, որոնցից մեկն էլ օտար լեզուների ազդեցությունն է:

¹⁰ Հմմտ. **Հր. Աճառյան**, «Թուրքերենէ փոխառեալ բառեր հայերէնի մէջ», Կ. Սոսկուա-Վաղարշապատ, 1902. **Ս. Բաղդասարյան-Թափալցյան**, «Արարատյան բարբառի խոսվածքները Հոկտեմբերյանի շրջանում», Երևան, 1973:

Համառոտագրություններ (բարբառախոս վայրեր)

Ագլ.-Ագուլիս
 Ախց.-Ախալցխա
 Ախք.-Ախալքալաք
 Ակն.-Ակն
 Ամս.-Ամասիա
 Առտ.-Առտիալ
 Ար.-Արարատյան
 Արբ.-Արաբկիր
 Բլ.-Բալու
 Բղշ.-Բաղեշ
 Բս.-Բասեն
 Բրչ.-Բորչալու
 Գնձ.-Գանձակ
 Գրս.-Գորիս
 Դրս.-Դերսիմ
 Եվդ.-Եվդոկիա
 Երև.-Երևան
 Երզ.-Երզնկա
 Զթ.-Զեյթուն
 Զթն.-Զեյթուն
 Զնգ.-Զանգեզուր
 Թբ.- Թբիլիսի
 Լ.-Լոռի
 Խիզ.-Խիզան
 Խտջ.-Խոտուրջուր
 Խրբ.-Խարբերդ
 Կլկ.-Կիլիկիա
 Կոտ.-Կոտայք
 Կսր.-Կեսարիա
 Կր.- Կարին
 Կրճ.-Կարճևան
 Կքվ.-Կաքավաբերդ
 Հճն.-Հաճն
 Հմշ.-Համշեն

Հվր.-Հավարիկ
 Ղրբ.-Ղարաբաղ
 Մլթ.-Մալաթիա
 Մկս.-Մոկս
 Մղր.- Մեղրի
 Մշ.- Մուշ
 Մրզ.-Մանազկերտ
 Մրշ.-Մարաշ
 Նկմ.-Նիկոմեդիա
 Նն.-Նոր Նախիջևան
 Շիր.-Շիրակ
 Շմխ.-Շամախի
 Շտխ.-Շատախ
 Ոզմ.-Ոզմ
 Ուրմ.-Ուրմիա
 Պլ.-Պոլիս
 Պպ.-Պապեն
 Պրտ.-Պարտիզակ
 Ջվխ.-Ջավախք
 Մբ.-Մեքաստիա
 Սլմ.-Սալամաստ
 Մշ.-Մուշավա
 Մս.-Մասուն
 Սվ.-Սվեդիա
 Սվդ.-Սվեդիա
 Վն.-Վան
 Տգր.-Տիգրանակերտ
 Տրն.-Տարոն
 Տփ.-Տիփղիս
 Ուրմ.- Ուրմիա
 Քդ.-Քդի
 Քնդ.-Քանդակ
 Քսր.-Քեսար

Резюме

Гамоян Лусине - Смысловые проявления концепции "головной убор" в армянских диалектах. - Армянские диалекты различаются не только фонетическими и грамматическими, а также особенностями словарного запаса. Исследуя смысловые проявления понятия "головной убор" в армянских диалектах, мы заметили, что имена понятия разные, что связано не только языкомышлением, но и географическими, временными, религиозными и другими факторами. Есть различные имена (более 140 наименований), большинство из которых поддерживали свою жизнеспособность в течение долгого времени, а также пополнялись и обогащались словами, заимствованных из других языков.

Summary

Lusine Ghamoyan - Semantic Manifestations of the Concept "Head covers" in the Dialects of Armenian Language. - The dialects of Armenian language differ from each other not only by their phonetic and grammatical characteristic features but also by their lexical peculiarities. Studying the semantic manifestations of the concept "Head covers" in Armenian dialects we notice that the names of those concepts differ connected with not only the mentality of people but also with the geographical, time, religious and many other factors. There are various names for those concepts (more than 140 names), many of which are still widely used as well as they become greater in their amount by borrowings from other languages. They can be presented in synonymic sets. Some of them are absolute synonyms while the others gain new semantic and functional peculiarities.

Մեր ուսումնասիրության նյութը հազուստ իմաստային դաշտն է, որին նվիրված աշխատություններ գրեթե չկան, այսինքն նշված ոլորտը դեռևս բավարար չափով ուսումնասիրված չէ, հետևաբար դրա ուսումնասիրությունը համարում ենք արդիական: Սույն զեկուցման մեջ մենք անդրադառնալու ենք հազուստ իմաստային դաշտի քննությանը առած-ասացվածքներում: Հազուստ իմաստային դաշտը դիտարկելիս հաշվի ենք առել նաև այն հանգամանքը, որ յուրաքանչյուր մշակույթի մեջ այն կարող է ներկայանալ յուրովի և ունենալ իր խորհրդանշական դերը, որը տվյալ մշակույթից դուրս կարող է գոյություն չունենալ:

Առած-ասացվածքների կառույցները, ինչպես հայտնի է, կարող են իրենց կազմի մեջ ընդգրկել տարբեր իմաստային դաշտեր, որոնց բաղադրիչների միջոցով էլ հենց կարող են արտահայտել ժողովրդի աշխարհայացքն ու հոգեբանությունը: Հազուստ իմաստն արատա-հայտող բառերով էլ ժողովուրդը առած-ասացվածքների մեջ կարողանում է խտացնել ու արտահայտել մեծ ու խորը մտքեր, զգացումներ ու խրատներ, կենցաղային հարաբերություններ ու հասկացություններ: Այսպես՝ *շտապելը վնաս է՝ Յորդանիդ գյորա ոտդ մեկնի:*» (Ա 139), *«Էրեսն աստառից չեն կտրի:*» (Ա 173), *եքազանք՝ «Տկլորի մտքից օրը տասնհինգ գազ կտավ է անց կենում:*» (Ա 80), *խաբուսիկ արտաքին՝ «Ամեն սև հագնող տերտեր չէ:*» (Ա 71), *եսամոլ և շահասեր՝ «Ձատիկն եկավ, չունիմ կապա, ո՛վ որ ընե ինձի կապա, անոր կըսեմ՝ հաճի պապա:*» (Ա 24), *ծույլ, անբան՝ «Տարին տասներկու ամիս, գուլպեն կենիմ մեկ տոտիս:*» (Ա 34), *ձրիակեր, պատրաստին վայելող՝ «Մուֆթա պատանք կուզե, որ ոտները մեկնե:*» (Ա 36), *մարդկային զգացումներ, ճաշակ, սեռ, տարիք՝ «Ալ էլ հագնի կը սազի, շալ էլ հագնի կը սազի:*» (Ա 64), *գաղտնիք, գաղտնապահություն՝ «Աչքովդ տես, փեշովդ ծածկե:*» (Ա 282) և այլն:

¹ Հոդվածը տպագրվել է «Գիտական հոդվածների ժողովածու»-ում (Հ. Աճառյանի 140-ամյակին նվիրված), Ե., 2016, էջ 202-217:

Առած-ասացվածքները, որոնք ունեն ճանաչողական և իմացական արժեք, ուսումնասիրելով «հագուստ» իմաստային դաշտում՝ պայմանականորեն բաժանել ենք ենթադաստերի.

1. Հագուստ և հագուստի մաս արտահայտող բառերով կազմված առած-ասացվածքներ:

Հագուստ: Ստ. Մալխասեանցը *հագուստ* բառի համար տալիս է հետևյալ բացատրությունը՝ «Հագնելու իր, զգեստ, վրայի շոր: (Սպիտակեղենը, կօշիկը, գլխարկը հագուստ չեն կոչվում):»²: Էդ. Աղայանը նշում է՝ «1. Վրան միաժամանակ կրելու շորերի ամբողջությունը, 2. Ջգեստների ամբողջությունը, հագուստեղեն, 3. Հագած զգեստը»³, Միջին հայերենի բառարանում⁴՝ «Հագնելու իր, զգեստ»: *Հագուստ բառը* առաձևերում հազվադեպ է հանդիպում («Մարդուս կարողությունը հագուստովը կու իմացվի:»⁵), հիմնականում այն հանդես է գալիս հոմանշային այլ տարբերակներով՝ *շոր, դըլըդ, հալավ* և այլն:

Շոր «շոր, հագուստ»: Ըստ Գ. Զահուկյանի՝ «հազվ թե հնդեվրոպական՝ *skhor-՝ *(s)ker- «կտրել» արմատից. հմմտ. հ. իսլ. horr «վշյա հագուստ», լատ. corium «կաշի, մորթ»»⁶: Բազմաթիվ են այս բառով կազմված առաձևերը՝ «*Շոր տուր՝ շնորհք տալ, հաց տուր՝ ռանգ (գույն) տալ:*» (Ա 288), «*Հարստի հաքին շոր տեհան, ասեցին՝ շնորհավոր. Աղքատի հաքին որ տեհան, հարցրին՝ ո՞ր տեղից ա:*» (Ա 220), «*Մարդին մարդ շինողը շորն է:*» (Ա 288), «*Չծնած էրեխին շոր մի՛ կարի:*» (Ա 136), «*Շորն ասաց.- Դու ինձ պահի բողջամիջին (կապոցի մեջ), ես քեզ պահեմ մարդամիջին:*» (Ա 288), «*Շալաշ շորն ինքն իրան կու մաշի:*» (Ա 593), «*Ձուկ բռնողի շորերը թաց կլնի:*» (Ա 237), «*Թաժա շորը հնի վրա կը ձենն:*» (Ա 174), «*Շոր չունի հագնելու, ֆայտոնով կերթա.....*» (Ա 20), «*Դրսից պսպղա շորըս, սովից դըռդոա փորս:*» (Ա 71), «*Շուրով տկլորը լավ է, քանզ փուրով տկլորը:*» (Ա 217), «*Շորերս հին ա, խոսքս անգին ա:*» (Ա 72), «*Կնկա իրեք բաժինը լաց է, մեկն էլ շորեղեն:*» (Ա 67), «*Ման եկողը յա շորին կը ճարի, յա՛ փորին:*» (Ա 191), «*Խրատ ունիս գլխիդ տուր, սապոն ունիս՝ շորիդ*» (Ա 44) և այլն:

² Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան (այսուհետ՝ ՀԲԲ), հ. 3, Ե., 1944, էջ 8:

³ Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան (այսուհետ՝ ԱՀԲԲ), հ. 1, Ե., 1976, էջ 787:

⁴ Լ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան (այսուհետ՝ ՄՀԲ), Ե., 2009, էջ 394:

⁵ Ա. Ղանալանյան, Առածանի (այսուհետ՝ Ա), Ե., 1960, էջ 288:

⁶ Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան (այսուհետ՝ ՀՍԲ), Ե., 2010, էջ 288:

Ղըլըղ (հագուստ): Գործածվում է հիմնականում Խոտուրջուրի, Կարինի և Կեսարիայի բարբառներում, նշանակում է՝ «1. Հագնելու ձև, տարագ, 2. Զգեստ, հագուստ»⁷. «Օրը նոր, ղըլըղը (հագուստ) նոր:» (Ս 117):

Հալալ (շոր): Հայերեն գաւառական բառարանում⁸ կա հետևյալ բացատրությունը՝ Ղրբ., Շմ. շապիկ. 2. Հմշ. շապիկ, բայց ավելի ընդարձակ մտքով «ճերմակեղեն». օր. հալալ լուանալ՝ լուացք ընել. 3. Ախց., Ախք., Բլ., Բղ., Խ., Խն., Խրբ., Կր., Մկ., Ննխ., Չրս., Վն., Տր., զգեստ, հանդերձ, հագուստ. 4. Ղրբ. մանելու ճախարակին վրայ ձգուած լաթը՝ ծածկոցը: Հ. Աճառյանը փոխառություն է համարում «կամ հին ասուրականից և կամ ասորի գվռ. մի ձևից, որ ավանդված չէ. հմմտ. ասուր. halâpu, halâbu «ծածկել», որից «կերպաս, հագուստ, զգեստ» և այլն⁹: ՀԼԲԲ-ում նշվում է՝ «1. Ընդհ. Զգեստ, շոր, հագուստ: 2. Ղրբ. Շմխ. Հմշ. Շապիկ: 3. Հմշ. Սալիտակեղեն, ներքնաշոր: 4. Ղրբ. Մանելու ճախարակի վրա ձգված ծածկոցը» (հ. 3, էջ 229): «Էրիկը սով տարին, հալավը (շոր) ցուրտ ամսին:» (Ս 268), «Յաթաղ (անկողին) մտնողը հալավները (շոր) հանե կու:» (Ս 195), «Էշին փալան, մարդուն հալավ:» (Ս 288):

Շապիկ (շաբիկ, շապիք) «շապիկ, վերարկու, պատմունճան»: Փոխառություն՝ մ. պ. šapīk:-H. AG 211: Աճ. ՀԱԲ 3, 495: (ՀՄԲ, 581): Այն բազմաթիվ կիրառություն ունի առած-ասացվածքներում, ինչպես՝ «Անառակին տասերկու շապիկ ունի:» (Ս 40), «Անձին շապիկ չունի, գլուխը վարդ կը դնե:» (Ս 20), «Ամեն մարդու շապիկն իրան ջանին մոտիկ է:» (Ս 156), «Օձն իրան շապիկը կը փոխե, բնությունը չի փոխե» (Ս 55), «Ազապ աղջիկ ա՛ն, որ շապիկդ ի մտնի:» (Ս 66), «Ո՛չ տոն է, ո՛չ Զատիկ, խեն է հագել շալե շապիկ:» (Ս 107), «Ողորմությունն էնպես տուր, որ շապիկդ չիմանա:» (Ս 198):

Դեյրա: Խոսակցական բառ է՝ «կանացի շրջագգեստ»¹⁰, ՀԼԲԲ-ում արձանագրված չէ, ԱՀԲԲ-ում՝ դերիա//դեյրա՝ «Կանացի զգեստ, որի վերին մասը և շրջագգեստը մի ամբողջություն են կազմում» (հ. 1, էջ 292). «Դեյրաղ (շրջագգեստ) օր էրկան ըլլի՝ շորորալու ի՛նչ կա, տեղդ հեռու ըլլի՝ պարծենալու ի՛նչ կա» (Ս 311):

⁷ Հայոց լեզվի բարբառային բառարան (այսուհետև՝ ՀԼԲԲ), հ. 3, Ե., 2004, էջ 351:

⁸ Հր. Աճառյան, Հայերեն գաւառական բառարան (այսուհետև՝ ՀԳԲ), Ե., 1913, էջ 630:

⁹ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 3, Ե., 1926, էջ 10:

¹⁰ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (այսուհետև՝ ԺՀԼԲԲ), հ. 1, Ե., 1980, էջ 496, **Գնէլ արքեպիսկոպոս Ճերէճեան, Փարամագ Կ. Տոնիկեան և Արտաշէս Տէր Խաչատուրեան**, Հայոց լեզուի նոր բառարան, հ. 2, Պէյրուք, 1992, էջ 887:

Կապա «1. Կանացի երկար զգեստ: 2. Տղամարդու զգեստ: 3. Կրոնավորի զգեստ, պարեգոտ...» (ԱՀԲԲ, հ. 1, 691): **Կապայ** (կովա) «մի տեսակ զգեստ»: Փոխառություն՝ արաբ. qabā: -Աճ. ՀԱԲ 2, 521 (ՀՄԲ, 384). «Աշխարհը «Կապա՛, հաց կեր» ա:» (Ա 84):

Վարտիք «վարտիք»՝ «1. Տղամարդկանց և կանանց ներքին զգեստ, որ հագնում են անմիջապես մարմնի վրա, 2. (հզվդ.) Անդրավարտիք, շավար, տաբատ»: (ԺՀԼԲԲ, հ. 4, 383): Փոխառություն իրանական աղբյուրից՝ *varti (var-«ծածկել» արմատից):-Աճ. ՀԱԲ 4, 325: (ՀՄԲ, 708): Այսպես՝ «Քանի պիտեր՝ վարտիք չկեր, որ մեռավ՝ քյումբեթ շինեցին:» (Ա 115), «Շունն ամենա նե՛ վարտիք կը հագնի:» (Ա 39):

Գոտի: Ըստ Հր. Աճառյանի բարդված է *գաւ+տի* բառերից, երկրորդ արմատը՝ *տի*-ն է, որ նշանակում է «կապ»: Այն հնիս. dē- «կապել» արմատից է.....«անծանոթ է **գաւ**, որ պիտի նշանակեր «մեջք». հմմտ. գոռ. **մեջկապ** «գոտի»» (ՀԱԲ, հ. 1, 608) «մեջքի գոտի, միջկապ», ՄՀԲ-ում՝ **գոտեկ** «գոտի, մեջկապ» (Էջ 155), ՀԼԲԲ-ում՝ **գոտի, գոտիկ** (բազմիմաստ բառ). «Որ հազա՛ գոտին կը կտրի:» (Ա 216):

Ղայիշ: Ստ. Մալխասեանցը նշում է՝ «(տաճկ. kayış) 1. Կաշու բարակ շերտ: 2. Կաշիե բարակ գոտի» (ՀԲԲ, հ. 3, 184): «Ընդհ. Կաշվե գոտի» (ՀԼԲԲ, հ. 3, 347): «Գոտի» (ԱՀԲԲ, հ. 2, 930): ԺՀԼԲԲ-ում արձանագրված չէ. «Լավ թիվանգին (հրացան) նախշուն դայիշ (գոտի) ա հարկավոր:» (Ա 315):

Փեշ: «Փեշ ^{ն. վ.}, Փեշք ^{ր.} «քղանցք. pan» պրս. peš»¹¹: Բազմիմաստ բառ է՝ «1. Զգեստի ներքևի վերջամասերը, քղանցք, 2. Գոգ, 3. (հզվդ.) Կանացի հագուստ՝ զգեստ, որ ծածկում է գոտկատեղից մինչև ներքև» և այլն (ԺՀԼԲԲ, հ. 4, 645). «Մեկ ջաղցի փեշ կը լիզե, մեկեւը՝ ջաղցապընին:» (Ա 65), «Զոռով փեշդ գոմշի պոզին ես քցում:» (Ա 91), «Զոր աղբը մարդու փեշ չկանի:» (Ա 200):

Փողք: «Վարտիքի՝ անդրավարտիքի ներքևի այն մասը, որ հագնում են ոտքերին» (ԺՀԼԲԲ, հ. 4, 670). «Զրին չը հասած՝ փոխկերքդ (փեշեր) ետ մի քաշիլ:» (Ա 136):

Ջեբ: «Գրպան» (ՀԼԲԲ, հ. 5, 168): Գործածվում է բազմաթիվ բարբառախոս վայրերում, ինչպես՝ **ջեբ** (Ար., ՆԲ., Ղրբ. (Զնգ.), Հվր. (Քնդ.), Սրմ., Ուրմ., ՆՆ., Հմշ., Մշ., Մկս.), **ջիբ** (Ար., Թբ., Ղրբ., Սրմ.), **ջոբ** (Ուրմ., Վն.), **ջիպ** (Կր., (Կ.)), **ջեպ** (Կր. (Զվխ.)), **ջոպ** (Վն.), **ջուպ** (Ղրբ.,

¹¹ **Հ. Աճառեան**, Թուրքերենի ազդեցությունը հայերենի վրայ եւ թուրքերենէ փոխառեալ բառերը Պօլսի հայ ժողովրդական լեզուին մէջ համեմատութեամբ Վանի, Ղարաբաղի եւ Նոր-Նախիջեւանի բարբառներուն (այսուհետ՝ ՀԱ ԹՓԲ), Լազարեան Ճեմարան Արեւելեան Լեզուաց, Մոսկուա-Վաղարշապատ, հ. Գ, 1902, էջ 349:

Ազլ.): Այսպես՝ «Տղա ունենամ ջիբավոր, աղջիկ կու ճարիմ ջիդավոր (զլխազարդով):» (Ա 67), «Գողի ջեբը ծակ կը լինի:» (Ա 241), «Գլոխը տաքցավ՝ ճեպը (գրպան) կը պաղի, ճեպն որ տաքցավ՝ գլոխը կը պաղի:» (Ա 287), «Չեմ ուզում, ջեբս գցի:» (Ա 52):

2. Կտորեղեն և կարի պարագաներ արտահայտող բառերով կազմված առած-ասացվածքներ.

Կտոր: Հ. Աճառյանի ՀԳԲ-ում՝ 1. Կտոր, մաս, 2. Ղրբ. որ և իցե կերպասեղեն կամ այլ գործուած իր (տպածոյ, չիթ նն), 3. Այն. դրամ. փարա. «Էրկանը կիւրնտա պոյին, կարճը՝ կըտորին:» (Ա 77):

Ապր(ի)շում (արևել. գր. *աբրիշում, աբրեշում*) «մետաքս» (*ապրիշում* ձևով՝ «մետաքսանման մամուռ»): Փոխառություն իրանական աղբյուրից. հմմտ. պ. *abrēšum*: -H. AG 107 (ՀՄԲ, 71). «Ապրըշում (մետաքս) բրդի տեղ չի ծախվի» (Ա 159), «Կտավ գործողը ապրեշում գործողին չի հավնի:» (Ա 18):

Մով (մետաքս): Գործածվում է Ար., Թբ., Ղրբ. (Գնձ.) բարբառներում, նշանակում է «Մետաքսե նուրբ գործվածք», ունի նաև համանուններ, ինչպես՝ **մով (2)** «խաղողի մի տեսակ, որի հատիկներն ունեն սպիտակ գույն, ձվաձև տեսք և բարակ մաշկ», **մով (3)** «Բաց կապույտ» (ՀԼԲԲ, հ. 4, 77): Առածում հասկանալի է գործածվող իմաստը, քանի որ հեղինակը փակագծերում նշում է բացատրությունը. «Ո՛չ կը տամ կով, ո՛չ կը հագնեմ մով (մետաքս):» (Ա 107):

Աթլաս: Ըստ Հր. Աճառյանի՝ «Աթլազ ^ա, աթլաս ^{ն. վ. Ղ.} «սնդուս, տեսակ մը ընտիր կերպաս. satin».=արաբ. *atlas*. Ասկէ է նաև ռուս. *атласъ* նոյն նշ.» (ՀԱ ԹՓԲ, 61). «Հազար հագնիս աթլաս ու խաս, կենա կըսեն ծըրտոտի հարս:» (Ա 71), «Անճարակը խասն (մետաքս) է հագեր, գիտցեր որ խասն (վատորակ կտոր) է հատեր:» (Ա 83): **Խաս**-ը նույն մետաքսն է: Ըստ Հ. Աճառյանի «Վ. Ն. Ղ. «զուտ (արծաթ, ոսկի ևլն.). *pure* (or, argent, etc.). 2. Ազնիւ՝ անխառն տեսակ (մետաքս, ներկ, զգեստ ևլն.). *veritable, de bonne qualité*».=արաբ.*xass*.» (ՀԱ ԹՓԲ, 170):

Ասեղ: Գ. Զահուկյանի մոտ հանդիպում ենք «ստուեր» իմաստով, որը համարում է անստույգ բառ: Կա **ասեղն** (ասիղն, ասեղ, ասեխ) «ասեղ» նշանակությամբ. «Մի ասեղ պտի առնի, երկաթի փուրն է հարցնում:» (Ա 18), «Հերանց տան ասեղ որ չեղնի, չկրնա կարե:» (Ա 78), «Ծակ ասեղը գետին չի մնա:» (Ա 127), «Առաջ ասեղը քեզի խրե, նոր ուրիշին:» (Ա 160):

Մախաթ: «Վերմակ կամ քուրք կարելու խիստ մեծ ասեղ» (ՀԱ ՀԳԲ, 743): Ստ. Մալխասեանցը համարում է փոխառություն ասորերենից (հ. 3, 235). «Մախաթը մաշի՝ ասեղի չափ

կը մնա, ասեղը որ մաշի՝ ի նչ պիտի մնա:» (Ա 102), «Ասեղ խեթողը՝ մախաթ կը ստանա:» (Ա 124), «Առաջ ասեղը քեզ խրե, ետո մախաթը ընկերիդ:» (Ա 159):

Աստառ («աստառ, զգեստի ներքնակողմ»): Փոխառություն իրանական աղբյուրից հմմտ. պ. āstar: - Հ. AG 110: Աճ. ՀԱԲ 1, 277 (ՀԱԲ, 80). «Վունց աստառ ունե, ջունց էրեսկ» (Թք. Անամոթ է) (Ա), «Աստառն էրեսկի վրա թանգ ածէ (Թք. Աղախինը տիրուհուց գեղեցիկ է)», «Աստառն էլ իրեսն (երես) ածի:» (Ա 85), «Էրեսն աստառից չեն կտրի:» (Ա 173), «Էրես տվինք, աստառ ուզեց:» (Ա 21) և այլն:

Մկրատ «մկրատ, կտրոց»: Փոխառություն՝ արաբ. miqrād: - Հ. AG 271: Աճ. ՀԱԲ 3, 330-331: (ՀԱԲ, 529). «Ձնել չի գիտեր, մկրատը ձեռքեն չի ձգեր:» (Ա 18):

Թել «թել, դերձան»: Թերևս բնիկ հնդեվրոպական՝ *tek-lo-՝ *tek- «գործել, հյուսել» արմատից. հմմտ. ou. an-dax «թել», հ.վ. գերմ. that «պատրույգ, քուղ, թել»: Տե՛ս նաև *թեքեմ*: Ըստ Աճառյանի (ՀԱԲ 2, 169-170), հայերենից են փոխառված պրսկ. tēla «լար, առասան» և թրք. tel «թել, լար, առասան» բառերը (ՀԱԲ, 263). «Մեկ թել քաշես՝ հազար կարկտան կը թափի:» (Ա 216), «Թելը որ շատ բարակեց կը կտրվի:» (Ա 138):

Լաթ «շոր, շորի կտոր, պատառ»: Փոխառություն՝ պ. lat: - Աճ. ՀԱԲ 2, 257 (ՀԱԲ, 289). «Ոչ կոնակդ էրկու լաթի սորվեցուր, ոչ փորդ էրկու հացի:» (Ա 285), «Ամեն օր սյուսլի (պճնված) քալողը, կիրակի օրը լաթ չի գտներ հագնելու:» (Ա 50), «Լաթը պահե պողչան, որ տանի քեզ պաղչան:» (Ա 288):

Չուլ: Փխռ. թուրք.՝ «քուրձ, խորգ» (ՀԱ ԹՓԲ, 278). «Չուլի (ցնցոտի) տակ էլ մարդ կրլնի:» (Ա 219), «Թազին էն թազին է, մենակ չուլն է փոխել:» (Ա 71):

3. Գլխի ծածկոց իմաստ արտահայտող բառերով կազմված առած-ասացվածքներ.

Գլխարկ: *Գլխարկ*-ը բնիկ հայերեն գլուխ բառի ածանցավոր կազմությունն է, հնդեվրոպական նախալեզվի *ghōlu-kho- «գլուխ» արմատից. հմմտ. լիտվ. galvą, հ. u. glava «գլուխ» (հայ-բայթիկ-սլավոնական զուգաբանություն): -Աճ. ՀԱԲ 1, 565 (կասկածով) (ՀԱԲ, 163): Ի տարբերություն *գլխարկ* բառի («Ամեն մարդ իրեն գլխարկը թող բռնե, օր չընկնի:» (Ա 156)՝ դրա հոմանշային ձևերը առածներ կազմելու և փոխաբերական իմաստներով գործածվելու մեծ հնարավորություններ ունեն:

Գդակ (գտակ, քդակ) «գլխարկ»: Փոխառություն իրանական աղբյուրից՝ *goudak (իրան. goud «ծածկել», որտեղից նաև՝ վրաց., ճան., մեգր. kudi, այլն՝ հայ. գուտի (տե՛ս): -Աճ. ՀԱԲ 1, 529-530:) (ՀԱԲ, 154). «Ալու գդակը Վալու գլխին ա դնում, Վալունը՝ Ալու:» (Ա 49), «Գդակս

թոգոտ տեսար ջաղացպա՛ն գիտեիր:» (Ա 72), «Գլուխը սաղ ըլի, գդակ շատ կու ճարվի:» (Ա 167), «Որ գեղն էթաս, էն տեղի գդակը դիր:» (Ա 234), «Գտակը մենծ, տակը դարտակ:» (Ա 13):

Փափախ (տաճկ. papak) (ՀԲԲ, հ. 4, 493), «պարսկական գլխարկ» (ՀԱ ԹՓԲ, 349). «Քաշալը ուրան (իր) փփախին (գդակ) թարիփ կանի (գովել):» (Ա 330):

Լաչակ: Հր. Աճառյանը նշում է՝ **լաչակ** (Արբ., Երև., Եվդ., Խն., Հմշ., Ղզ., Ռ.), **լաչիկ** (Ախց., Դվ., Վն., **լաչի** (Վն.), **լեչաք** (Տփ.) սպիտակ ծածկոց կամ գլխանոց. որով կանայք գլուխնին կը կապեն, դեմքը կիսածածկ պահելու համար: =Պրս. ... lačak քոլ, պաստառ գլխոյ, որոյ ծայրն իցէ ոսկեթել և նկարակերտ, գոր կանայք փաթութեն ի գլուխս իւրեանց. արև. թրք. lačak լաչակ, չադաթ leček պսակ ծաղկանց հարսին. Եւդոկիոյ թուրքերը (ինչպէս և հայերը) կը հնչեն լէչէք (ըստ Կ. Գազանճեանի). քրդ. lačik, ուտ. Լաչան, լակ, լաչոկ, վրաց. լեչաքա. Ամենուն արմատն է Պրս. որ կը ծագի lač «այտ» բառէն: Այսպէս՝ «Անառակ կնգա գլխին հարիր լաչագ կա:» (Ա 40), «Լաչառին (անզգամ) օխտը լեչակ կինի (կլինի):» (Ա 315), «Անառակ կնգանը լչակավը խափվես վեչ:» (Ա 308), «Մարդի նամուսը գտակն ա, կնկանը՝ լաչակը:» (Ա 60):

Յագմա (գվռ.): 1. Գլխի ծաղկանկար թաշկինակ: 2. Զանազան գույնի նուրբ գործվածք (ԱՀԲԲ, հ.2, էջ 1040). «Ամեն մարդու քթի տակ որ մագ էլնի՝ կելնի՞ մարդ, ամեն կնկրն գլխի որ յագմա (մետաքսե գլխաշոր) էլնի՝ կելնի՞ կնիկ» (Ա 308):

Շալ: «Բրդյա թելի գործվածք, որ կանայք երկտակած գցում են ուսներին կամ գլուխներին» և այլն (ԱՀԲԲ, հ. 2, 1092, ԺՀԼԲԲ, հ. 4, 55): Փոխառյալ բառ է թուրքերենից. Վ., Ղ. Ն. «ցփսի, շալ. châle».=թրք. šal= ֆրանս. châle (ՀԱ ԹՓԲ, 257), Ղարաբաղի բարբառում ունի «խաղողի ճյուղ» իմաստը (ՀԳԲ, 818). «Պաղտատի (ընտիր կտոր) նման շալ, աղբոր պէս կոնակ չը գտնվի:» (Ա 267):

Արախճին/արախչի/արախչին: Ստ. Մալխասեանցի մոտ նշված է որպէս փոխառութիւն պարսկերէն arakšin բառից՝ «քրտինք ժողովող» (ՀԲԲ, հ. 1, 253): Այն ունի «1. Թեթև՝ բարակ գլխարկ, որի վրայից երբեմն փափախ են դնում, գիշերվա գլխարկ: 2. Ասեղնագործված գլխարկ» իմաստը (ԱՀԲԲ, հ. 1, 125). «Ագռավին արախճին (թասակ) տվին, որ սիրուն գթնի, գլխին դնի, պտըտեց-պտըտեց, բերեց իրա ճուտի գլխին դրեց:» (Ա 262), «Քաչալ էս՝ արախչիդ (գլխարկ) գլուխդ պահի:» (Ա 139):

Քող/քողք: Հիմնական իմաստն է «Բարակ՝ թափանցիկ ու նուրբ գործվածք, որ գցում են երեսին, շղարշ:» (ԱՀԲԲ, հ. 2, 1574). «Չը տեսա քողքն երեսին, կը տեսնեմ կուծն ի թնին:» (Ա 108):

Քոլոզ (զվռ.): Թաղիքե կամ բրդյա բոլորածն քրդական գլխարկ (ԱՀԲԲ, հ. 2, 1574). «Ամեն քոլոզի տակ մի գլուխ կա:» (Ա 156): ՀԳԲ-ում՝ Վն. տեսակ մը սալոր:

4. Ոսնաման իմաստ արտահայտող բառերով կազմված առածներ.

Կոշիկ: «Կաշվից կամ այլ նյութերից կարվող ոտքին հագնելու հարմարանք, ոտնաման» (ԱՀԲԲ, հ. 1, 757). «Երեսին կաշին կոշիկ շինես՝ մինչև Պաղտատ երթաս չի կտրիր (Խրք. անպատկառ է, անամոթ է)», «Չի խաղա կամիր կոշիկը, կը խաղա՝ կուշտափորիկը:» (Ա 76):

Չմուշկ «հողաթափ, մաշիկ, չմուշկ»: Փոխառություն՝ պ. čamšak (կոշիկ) (ՀԱԲ 3, 629): ԱՀԲԲ-ում՝ «1. Պողպատյա շեղբածն սահուկ, որ ամրացնում են կոշիկների տակ՝ սառույցի վրա սահելու համար, 2. (զվռ.) Պայտած կրունկներով սրաքիթ կոշիկ» (հ. 2, 1162). «Բաշմախչուն (կոշկակար) չմուշկ (կոշիկ) չինիլ, դամյուրչուն՝ տենակ:» (Ա 246):

Մուճակ (կոշիկ) «(կանացի) կոշիկ»: Փոխառություն իրանական աղբյուրից. հմմտ. մ. պ. mōčak: -H. AG 196 (ՀԱԲ 3, 357). «Կոշկակարին մուճակ (կոշիկ) չեղնի, ջուլհակին՝ պատանք:» (Ա 246):

Ճրզմա: Կր., Ջվի., Ախց. բարբառներում գործածվում է «հողաթափ, փափուշ» իմաստով (ՀԼԲԲ, հ. 3, 381). «Ծուռ տոտոխին՝ ճրզմա (կոշիկ), խնլոտ քթին՝ խզմա (քթկալ):» (Ա 183):

Մաշիկ: 1. Բարձրակրունկ սրաքիթ ոտնաման: 2. Նույնն է՝ Չմշկածաղիկ (ԱՀԲԲ, 2, 969), ԺՀԼԲԲ-ում միայն առաջին իմաստով է (հ. 3, 480): ՀԼԲԲ-ում կա նաև **մաշիկ (2)** «ունելի» իմաստով: ՀԳԲ-ում (753)՝ «կրունկով մուճակ» բացատրությունը (Երև., Ղզ., Սր.) «(կրունկով) կոշիկ» (սխալ ստուգաբանությամբ՝ մաշ «մաշված կոշիկ»): «Վրաց. mašia «կանացի կրունկով կոշիկ» բառի հետ միասին փոխառություն է ինչ-որ աղբյուրից (իրանական՝ն. հմմտ. -իկ): Չուբինաշվիլին վրացական բառը համարում է արաբական, բայց այն չի հավաստվում՝ ըստ Աճ. ՀԱԲ 3, 260-ի» (ՀՍԲ, 510): Որպես բաղադրություն Գ. Ջահուկյանը բերում է *մաշկար* և *մաշկակար* բառերը: Առածներում հանդիպում ենք *մաշակար* ձևը, որը գալիս է բարբառներից: ՀԼԲԲ-ում նշվում է՝ «Մաշակար, Ար. Ուրմ., Սուկար, Մշ. Ալշ. Մաշիկ կարող, հողաթափ՝ ոտնաման կարող» (ՀԼԲԲ 4, 27): Հր. Աճառյանի մոտ հանդիպում ենք նաև *մաշեկար* և *մաշկակար* ձևերը (ՀԳԲ, 753): Այսպես՝ «Մաշակարին (կոշկակար) մաշիկ չի քլնի:» (Ա 246),

«Մաշակարի մաշիկը ծակ կըլնի:» (Ա 246), *«Բոքիկ ոտը օրական մաշակարի (կոշկակարի) դռանն ա:»* (Ա 162), *«Օտարին մաշակար, ինքը բոքիկ»* (Ա 44):

Տրեխ: «Կաշվե կոշիկ, տրեխ» (ՀՄԲ, 736): Գ. Ջահուկյանը այն թերևս փոխառություն է համարում իրանական աղբյուրից, որի բուն աղբյուրը չի հավաստված: Աճառյանը (ՀՄԲ 4, 435) հիշատակում է արաբ. *tirāq* «կոշիկի կաշի, փապուճից կազմված կաշվաթերթ, վահանապատված կաշի» բառը, բայց հարբերությունը չի պարզում: Ստ. Մալխասեանցի մոտ՝ «Փափուկ՝ կիսամշակ կաշուց ոտքի ազանելիք առանց կրունկների և երեսը բաց, չարքիս, չարուխ» (ՀԲԲ, հ. 4, 447), նույնը ԱՀԲԲ-ում՝ հավելումով՝ «2. (գվռ.) Երկաթե կարկատան արորի կամ գութանի վրա, 3. Ընդհանրապես՝ ոտնաման» (հ. 2, 1460). «Վետին տըրեխ չունի, կըլիսին վարթ ա շարում:» (Ա 327):

Սապոկ: Տղամարդու երկարաճիտ կոշիկներ (հատկապես զինվորական) (ՀԼԲԲ, 5, 268): Կա նաև **սապոգ** ձևը՝ «Ճիտքավոր՝ երկարաճիտ կոշիկ» նշանակությամբ (ԱՀԲԲ, 2, 1278, ԺՀԼԲԲ, 4, 272՝ (բրբ.) նշումով): Այստեղ կարելի է ասել իմաստի ընդլայնում է տեղի ունեցել, այժմ սապոկ հազնում են ոչ միայն տղամարդիկ, այլև կանայք. *«Տրեխ կեց, վեր սապոկի հասնես:»* (Ա 329):

Չարոխ/չարուխ: Բազմիմաստ բառ է՝ 1. Փափուկ կիսամշակ կաշուց տանը կարած ոտնաման՝ երեսը բաց և առանց կրունկի, որ ոտքին են ամրացնում կաշվե թելերով» (Ար., Գրս., Պրտ., Մրգ., Կր., Կսր., Ակն, Սշ., Վն., **Չարըխ**՝ Պրտ., Մրշ.), 2. Վն. Սայլի անիվների երկաթե օղերն ամրացնող երկաթներ, 3. Վն. Գութանի մաս (ՀԼԲԲ, հ. 4, 392). *«Ոտքը չարուխ չկա, գլուխը վարդ կը շարե:»* (Ա 20), *«Մատանի չարուխը (տրեխ) մեկ օր կը մաշի:»* (Ա 283), *«Մատանին չարոխ կը հազցնե, կատվին՝ վարտիք:»* (Ա 49), *«Չարոխը քղակեն պանցրցավ, ալամ-աշխարք (ողջ աշխարհը) զարմացավ:»* (Ա 108), *«Մատանին չարուխ կը կարե:»* (Ա 9) և այլն:

Չաքմա (երկարաճիտ կոշիկ): Էդ. Աղայանը (գվռ.) նշումով բացատրում է՝ երկարաճիտ կոշիկ (ԱՀԲԲ, հ. 2, 1160), ՀԼԲԲ-ում հանդիպում ենք հետևյալ իմաստներով՝ «1. Երկարաճիտ կոշիկ, 2. ՆԲ. Տրեխ, 3. Հվր. Ցանց՝ ձուկ որսալու համար, որի մեջ մեկ ձուկ ընկնելու դեպքում դուրս է քաշվում:» (ՀԼԲԲ, 4, 398), ԺՀԼԲԲ-ում (հ. 4, 135)՝ «(բրբ.) բարձրաճիտ հատուկ կոշիկ». *«Տրեխ կեց (հազիր), մինչև չաքմի (երկարաճիտ կոշիկ) հասնես:»* (Ա 329):

Պատույճ: Ստ. Մալխասեանցը նշում է՝ «**փապուճ** (տաճկ. pabug), գ. Ուտքի ազանելիք, հողաթափ» (ՀԲԲ, հ. 4, 487), «տան մեջ հագնելու փափուկ ոտնաման» (ԱՀԲԲ, հ. 2, 1516), **փապուճ/փափուճ** «(խսկց.) Տանը հագնելու փափուկ՝ թեթև՝ ոտնաման, 2. (բրբ.) Կրծքի երեխայի կոշիկ՝ ոտնաման, որ սովորաբար շատ թեթև ու փափուկ է լինում:» (ԺՀԼԲԲ, հ. 4, 645), **փափուջ** Ղարաբաղի բարբառում համարվում է *մանկական կոշիկ* (ՀԼԲԲ, հ. 6, 359), իսկ **պապուճ**-ը ՆՆ., Եվդ. (Ամս.), Կր. (Ջվիս.)-ում՝ *հողաթափ*. «*Երկու ոտքը մեկ պապուճի (կոշիկ) մեջ խոթել:*» (Ա 74), «*Մատանեն հարսնիք չերթար, ըմմա փապուճները (հողաթափ) կը դրկե:*» (Ա 110):

Ինչպես նկատեցինք վերոնշյալ օրինակներից, հայկական առած-ասացվածքների լեզուն բազմաթիվ ու բազմազան բարբառների ու ենթաբարբառների ընդհանրություն է: Ամենից շատ Արարատյան դաշտավայրի (Երևան, Էջմիածին, Աշտարակ, Օշական և այլն) բնակիչների կենդանի խոսակցական բարբառն է, ապա նաև Արևմտյան Հայաստանի (Մուշ, Ալաշկերտ, Սասուն, Վան, Մոկս և այլն) և մի շարք ուրիշ վայրերում ապրող հայերի բարբառները:

Քիչ չեն այնպիսի առած-ասացվածքները, որոնք վերցված են ժողովրդական բանահյուսության այլ ստեղծագործություններից՝ կենդանական զրույցներից կամ առակներից: Ժողովուրդը գրականությունից է վերցրել նաև այնպիսի ասույթներ ու թևավոր արտահայտություններ, որոնք համահունչ են եղել իր աշխարհայացքին ու հոգեբանությանը:

Վերոնշյալ առած-ասացվածքներն իրենց կայունությամբ և քերականական հատկանիշներով պատրաստի, վերարտադրելի կառույցներ են, որոնք ամենից առաջ հանդես են գալիս ստորոգական ձևավորվածությամբ, հետևաբար ունեն միայն հաղորդակցական արժեք¹²: Դրանց մեջ կան նաև այնպիսիները, որոնք ունեն անվանողական արժեք, ինչպես՝ «*Շորե մարդ, կրակե շապիկ:*» (Ա 106), «*Տանը հաց, մարդուն շոր:*» (Ա 285), «*Հալխին քապիկ (փող), որքին շապիկ:*» (Ա 266) և այլն:

Իբրև արտահայտչական ներգործուն միջոց՝ չափազանց նշանակալից դեր է խաղում հնչյունանմանությունը: Այստեղ ամենից առաջ հանդիպում ենք ձայնավոր ու բաղաձայն հնչյունների նմանությամբ ստեղծված ռիթմական միավորների, ինչպես՝ «*Էդ հալով՝ ընկար էդ շալով:*» (Ա 171), «*Պարտքը հազար, վարտիքը պազար:*» (Ա 250), «*Մանր տրեխով՝ մեծ ռեխով:*» (Ա 18), «*Մախաթ եմ ու յախատ (օձիք):*» (Ա 102) և այլն:

¹² **Խ. Բաղդկյան**, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Ե., 1986, էջ 85:

Պատկերավորությունը, որպես լեզվական երևույթ, մեծ դեր է կատարում առած-ասացվածքներում: Պարզության և քիչ խոսքով շատ բան ասելու իրենց հիմնական հատկության հետ միասին դրանք աչքի են ընկնում նաև իրենց տեսանելիությամբ, բնութագրումների իրենց դիպուկությամբ: Այսպես, օրինակ, հակադրություն-սիմվոլները ստեղծում են մի գեղեցիկ մետաֆոր, որի հիմքում ընկած նմանության գուգորդման միջոցով բացահայտվում է հարուստի և աղքատի ունեցած իրավունքների միջև եղած մեծ տարբերությունը, ինչպես՝ «Շատ անողին՝ շալ շապիկ, քիչ անողին՝ ալ շապիկ:» (Ա 214), «Շատ դատողին՝ շալ շապիկ, քիչ դատողին՝ զառ (ոսկեզօծ թելերով):» (Ա 215), «Շատ մանողին՝ շալ շապիկ, քիչ մանողին՝ մով շապիկ:» (Ա 215), «Որը սամուր քյուրք կը հագնի, որը՝ մագե շապիկ:» (Ա 213) և այլն:

Վերոհիշյալ օրինակների հակադրության եզրերում, իբրև բաղադրիչներ, հանդես են գալիս այնպիսի հականիշ բառեր, որոնք խոսքից դուրս հականիշներ չեն, այլ իրենց արտահայտած փոխաբերական, կամ էլ տվյալ կապակցության մեջ ու նրա շնորհիվ ձեռք բերած նշանակություններով են հայտնվել հակադիր իմաստային բևեռներում:

Այսպիսով, հագուստ իմաստն արտահայտող բառերով է ժողովուրդը առած-ասացվածքների մեջ կարողանում է խտացնել ու արտահայտել մեծ ու խորը մտքեր, զգացումներ ու խրատներ, իսկ առած-ասացվածքները ժողովրդական բանահյուսության ամենաերկարակյաց ու կենսունակ ստեղծագործություններն են, որոնք գալիս են խորը հնությունից, շարունակում են ապրել նաև նոր ժամանակներում՝ երբեմն վերաիմաստավորվելով ու նոր բովանդակություն ստանալով:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԼԵԶՈՒՆԵՐ

ասուր.-ասուրերեն
արաբ.-արաբերեն
գերմ.-գերմաներեն
թրք.(թուրք.)-թուրքերեն
իսլ.-իսլանդերեն
իրան.-իրանական

լատ.-լատիներեն
լիտվ.-լիտվերեն
հայ.-հայերեն
ճան.-ճաներեն
մեգր.-մեգրելերեն
ուս.-ուտիերեն

պ(րսկ).-պարսկերեն
պրս.-պարսկերեն
ռուս.-ռուսերեն
վրաց.-վրացերեն
տաճկ.-տաճկերեն
քրդ.-քրդերեն

ԱՅԼ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

արև.(արևել.)-արևելյան
գր.-գրական
բրբ.-բարբառային
գ.-գոյական
գւռ.(գվռ.)-գավառական
նն(նլն)-և այլն

Ընդհ.-ընդհանուր
հ.-հին
հ.-հատոր
հ.-հին
հզվդ.-հազվադեպ
հմմտ.-համեմատել

հնլս.-
մ.-միջին
նշ.-նշանակությամբ
վ.-վերին
փխռ.-փոխառություն

ԲԱՐԲԱՌԱԽՈՍ ՎԱՅՐԵՐ

Ագլ.-Ագուլիս	Զնգ.-Զանգեզուր	ՆԲ.-Նոր Բայազետ
Այշ.-Ալաշկերտ	Թբ.-Թբիլիսի	Ն.//ՆՆ.//Ննիս.- Նոր Նախիջևան
Ախց.-Ախալցխա	Խն.-Խիսան	Շմ.//Շմիս.-Շամախի
Ախք.-Ախալքալաք	Խրբ.-Խարբերդ	Ուրմ.- Ուրմիա
Ամս.-Ամասիա	Կ.-Կարս	Չրս.-Չարսանճազ
Այն.-Այնթապ	Կսր.-Կեսարիա	Պ.-Պոլիս
Ար.-Արարատյան	Կր.-Կարին	Պրտ.-Պարտիզակ
Արբ.- Արարկիբ	Հմշ.-Համշեն	Ջվիս.-Ջավախք
Բլ.-Բալու	Հվր.-Հավարիկ	Ռ.-Ռոդոսթո
Բղ.-Բաղեշ	Ղ.//Ղրբ.-Ղարաբաղ	Սր.//Սրմ.- Սուրմալու
Գնձ.-Գանձակ	Ղզ.-Ղազախ	Վ.//Վն.-Վան
Գրս.-Գորիս	Մկ.-Մոկք	Տր.-Տրապիզոն
Դվ.-Դավրեժ	Մկս.-Մոկս	Տփ.-Տփղիս
Եվդ.-Եվդոկիա	ՄՇ.-Մուշ	Քնդ.-Քանդակ
Երև.-Երևան	Մրգ.-Մարգվան	
	Մրշ.-Մարաշ	

Лусине Гамоян - Лексический пласт семантического поля “одежда” в народных поговорках и пословицах: этимологический анализ. - Структуры пословиц и поговорок могут включать различные семантические поля, посредством чьих компонентов могут быть выражены мировоззрение и психология народа. Словами, выражающие понятие “одежда”, люди в пословицах и поговорках могут выразить мудрые и глубокие мысли, чувства и наставления. Эти слова, выделяясь своей простотой, образностью, точностью и красочностью характеристик, выражают бытовые отношения и концепции.

Lusine Ghamoyan - The Semantic Field of “Clothing” in National Saying-Proverbs: etymological analyses.- The proverb constructions may include in their structure different semantic fields, the components of which may express the worldview and psychology of the nation. With the help of proverbs including words expressing the meaning of clothes the nation is expressing deep and great ideas, emotions and moralities. They, with their simplicity, imaginativeness, accurate characteristics and colourfulness express social relationships and concepts.

**ՀԱԳՈՒՍՏ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ
ՄԻԱՎՈՐՆԵՐՈՒՄ¹**

Ղափոյան Լուսինե

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
ավագ գիտաշխատող, Բ.գ.թ.

Ժամանակակից լեզվաբանության մեջ մեծ տեղ է հատկացվում բառային միավորների իմաստային քննությանը: Կատարելով նմանատիպ աշխատանք և ուսումնասիրելով «հագուստ» իմաստային դաշտը՝ սույն աշխատության մեջ անդրադարձել ենք այդ ոլորտում ներառված այն բառերի քննությանը, որոնք դարձել են դարձվածային միավորների կամ առանձին կառույցների անբաժանելի մաս²:

Ինչպես ամեն մի լեզվի, այնպես էլ հայերենի համար դարձվածային միավորների (այսուհետ՝ ԴՄ-ներ) առաջացման անսպառ աղբյուրը կենդանի ընդհանուր լեզուն է՝ իր կիրառության բոլոր ոլորտներով (տնտեսություն, գիտություն, տեխնիկա, հեռուստատեսություն ու մամուլ, գրականություն ու արվեստ և այլն): Այդ ոլորտներից յուրաքանչյուրին հատուկ արտահայտությունը կամ տերմինը, դուրս գալով տվյալ ոլորտից և ստանալով փոխաբերական իմաստավորում ու հնարավորություն՝ կարող է վերածվել ԴՄ-ի, թեև սովորաբար դարձվածները համարվում են պատրաստի միավորներ: Հագուստի անվանումներով բաղադրված դարձվածները կարող են ընդգրկել բաղադրիչների տարբեր կազմ և ենթարկվել տարբեր աստիճանի վերաիմաստավորման և փոխաբերացման: Այս գործընթացում կարևոր դեր ունեն դրանց վերաբերյալ հասարակության մեջ ձևավորված պատկերացումներն ու արտալեզվական գուգորդումները, որոնք հաճախ տարաբնույթ են լինում:

Ելնելով դարձվածի ընդհանուր իմաստի և դարձված կազմող հագուստ իմաստային դաշտի բառ-բաղադրիչների իմաստների սերտության աստիճանից՝ առանձնացնում ենք հետևյալ խմբերը.

1. ԴՄ-ներ, որոնց մեջ մտնող բոլոր բաղադրիչներն էլ իմաստափոխվում են, այսինքն՝ կապակցության ընդհանուր իմաստը չի համընկնում բաղադրիչների իմաստին և չի բխում նրանց իմաստների գումարից (դարձվածային սերտաճում³), ինչպես՝

¹ Հոդվածը տպագրվել է «Լեզու և լեզվաբանություն» հանդեսում, Ե., 2016 (2), էջ 74-80:

² «Հագուստ» իմաստային դաշտի մեջ ներառել ենք նաև կոշկեղենը, կտորեղենը (կարի պարագաներով), պայուսակը (կամ՝ տոպրակ) և այլն:

³ Տե՛ս **Խ. Բաղիկյան**, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Ե., 1986, էջ 56-61:

ձեռքի թաշկինակ, ասեղ մաշկել «ժլատ լինել», **փողի տոպրակ, խելքի տոպրակ** և այլն⁴:

2. ԴՄ-ներ, որոնց կազմող մասերը թեև իմաստաբանորեն անբաժան են, սա-
կայն բաղադրիչներից մեկը (սովորաբար գերադաս անդամը) որոշակիորեն պահում է
իր իմաստը, իսկ ընդհանուր կապակցությունը վերաիմաստավորվում է (դարձվածա-
յին միասնություն), ինչպես՝ **փեշը քաշել** «զգուշացնել մեկին, նրա խոսքերը կամ
արարքները չափավորել, զսպել», **փեշը վրան պահել** (խսկց.) «մեկին հովանավորել,
աչքը վրան պահել» և այլն:

3. ԴՄ-ներ, որոնց բաղադրիչները հիմնականում պահում են իրենց իմաս-
տային ինքնությունությունը (դարձվածային կապակցություն), ինչպես՝ **լաչակ կապել**
«արհամարհական, նախատական արտահայտություն տղամարդուն ուղղված, կին
դառնալ, կնաբարո լինել», **գրպանը անցնել (մեկի)** «մեկի սեփականությունը դառնալ,
մեկի կողմից յուրացվել» և այլն:

4. ԴՄ-ներ, որոնց ընդհանուր իմաստն ամբողջովին բխում է բաղադրիչների
իմաստների գումարից (դարձվածային արտահայտություն), ինչպես՝ **կարմիր թելի պես
անցնել** «ցայտուն կերպով երևալ, պատկերանալ, պատկերացնել», **ասեղների վրա
նստել** «խիստ անհանգիստ լինել, անհարմար դրության, վիճակի մեջ գտնվել,
անհանգստանալ, հուզվել, նյարդայնանալ», **մատին թել կապել կամ փաթաթել** «ճիգ
անել չմոռանալու որևէ հանձնարարություն, խնդիրք և այլն (բուն իմաստով՝ մատին
թել կապել, որ տեսնի կապածը և հիշի)» և այլն⁵:

ԴՄ-ները ունեն կառուցվածքային բազմազանություն: Կազմի տեսակետից
ամենատարածվածները երկբաղադրիչներն են ու եռաբաղադրիչները:

Գոյականական երկանդամ կառույցները ժամանակակից հայերենի ամենա-
գործուն ու տարածված տեսակներից են: Դիտարկենք մի քանի կաղապարներ.
գոյական (եզակի սեռական)+գոյական, որի բաղադրիչները հիմնականում իրար
նկատմամբ գտնվում են որոշիչ-որոշյալ հարաբերության մեջ՝ **ասեղի ծայր** «շատ փոքր,

⁴ Բոլոր ԴՄ-ների օրինակները վերցրել ենք *Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան*-ից, Պ. Բեդիրյան, Ե., 2011, *Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան*-ից, Ա. Սուքիասյան, Ս. Գալստյան, Ե., 1975 և *Հայոց լեզվի բարբառային բառարան*-ից, Ե., 2001:

⁵ Այս խումբն առանձնացրել է պրոֆ. Ն. Շանսկին, որի մեջ ներառել է նաև բոլոր տեսակի առաձներն ու
ասացվածքները (որոնց կանդրադառնանք առանձին հոդվածով), անեծքներն ու օրհնանքները, սպառ-
նալիքներն ու փաղաքշական արտահայտությունները: Տե՛ս, **Н. Шанский**, Фразеология современного
русского языка, М., 1985, стр. 87-88.

բարակ», **գրպանի դրամ** «մանր ծախսերի համար նախատեսվող քիչ քանակությամբ փող», **գրպանի ծախս** «առօրյա կարիքների համար կատարվող ծախսեր», **ծիրանի գոտի** (ժողովրդ.) «ծիածան», **ձեռքի թաշկինակ** «խաղալիք, գործիք (մեկի ձեռքին)», **օձի շապիկ** «շատ բարակ, նուրբ», **շփոթի տոպրակ** «շատ շփոթվող մարդ», **ստի տոպրակ** «սուտասան, սուտ խոսող» և այլն:

Ածական+գոյական կառուցվածքային տիպ, որի գերադաս անդամը գոյականն է, իսկ լրացումը որակական ածականը՝ **ծակ գրպան** «դրամը շոայլող, վատնող (մարդ)», **կանաչ գոտի** «բուսականությամբ կանաչապատված շերտ բնակավայրերում», **կարմիր գոգնոց** «կին» և այլն:

Հայերենում մեծ թիվ են կազմում այնպիսի բայական **երկանդամ** ԴՄ-ները, որոնց կազմում հանդես են գալիս տարբեր հոլովով դրված գոյականներ և անորոշ դերբայ, ինչպես՝ **գդակ դնել//ծածկել** «տղամարդ լինել, տղամարդկային հատկություններով օժտված լինել», **գրպանը կտրել** «գրպանը մտնել՝ գրպանահատությամբ զբաղվել», **փեշին դիպչել** «չնչին, աննշան չափով վնասել մեկին», **փալաս դառնալ** «անպետքանալ, ոչնչի պետք չգալ», **փեշերը լիզել** «ստորանալ, քծնել», **ասեղը թելել** «մեկի օգտին խոսել, մեկի գործին նպաստել», կա նաև՝ **փեշից բռնել//փեշն ընկնել** «1. չբաժանվել, անբաժան՝ միշտ միասին լինել և այլն:

Եռանդամ կառույցներից են՝ **գոյ.+գոյ.+գոյ.** կաղապարով, ինչպես՝ **գույգ կոշիկի թայեր** (բրբ.) «իրար շատ նման (մի խնձոր՝ երկու կես արած)», **գոյ.+գոյ.+անորոշ դերբայ՝ հագի շապիկը չինայել** «պատրաստ լինել մեկին նյութապես (ինչով կարող է) օգնելու», **կյանքի թելը խզել//կարճել//կտրել** «սպանել, մեռցնել», **Աստծու փեշերը կտրտել** (խսկց.) «աղաչել, աղոթել», **լեզուն գրպանը դնել** (հեգն.) «այլևս չխոսել, լռել, ձայնը կտրել», **մազերը քաթան դառնալ** «բոլորովին ճերմակել», **գոյ.+գոյ.+ենթակայական դերբայ՝ մոր կոճակը կտրող** «ազահ՝ անկուշտ գող, գողության մեջ խտրություն չդնող», **թվ.+գոյ.+գոյ.**՝ **յոթ տան վարտիք** (բրբ., գոհկ.) «թափառաշրջիկ, փողոցային», **թվ.+գոյ.+անորոշ դերբայ՝ մի շապկով մնալ** «անանկանալ, ընչազրկվել, աղքատանալ», **օխտը պատան մաշել** (բրբ.) «վաղուց մեռած լինել», **կապական կառույց+անորոշ դերբայ՝ փեշի տակ առնել** «հովանի լինել մեկին, պահել, խնամել» և այլն:

Հանդիպում ենք նաև քառանդամ բաղադրիչներով ԴՄ-ներ, ինչպես՝ **իրար օձիք բաց չթողնել** «իրար կաշել, իրար հետ կռվելու վիճակի մեջ լինել», **օրհնանքի տոպրակը**

թափ տալ «երկար օրհնել», **գլուխը կոշիկներից վեր բարձրացնել** «մինչ ոտքերը խոնարհվել, ի նշան խորին հարգանքի և հնազանդության», **ձեռքը գրպանից խոռով լինել** «չքավոր լինել, փող չունենալ» և այլն:

Ինչպես նկատեցինք, ԴՄ-ների ճնշող մեծամասնության մեջ բաղադրիչներն իրար հետ կապված են գերադաս+ստորադաս անդամ հարաբերությամբ, ուր նրանց կապակցումն իրականացվում է քերականական (ձևաբանական ու շարահյուսական) միջոցների (թեքում, համաձայնություն, շարադասություն և այլն) օգնությամբ:

Որպես ամբողջություն՝ դրանք նորիմաստավորված կապակցություններ են, և դրանց ձևաբանական արժեքն ըստ այդ նոր նշանակության է որոշվում, այնպես որ կապակցության գլխավոր բաղադրիչի և ամբողջի այդ արժեքի համընկնումը պարտադիր չէ: ԴՄ-ը կարող է, ասենք, գոյականներից կազմված լինել, բայց ամբողջության մեջ ածականի արժեք ունենալ, ինչպես՝ **խելքի տոպրակ, մեղքի տոպրակ, փողի տոպրակ, արաղի՝ գինու տոպրակ** (սաստիկ հարբեցող), կամ ձևավորմամբ նախադասություն լինել, իսկ ձևաբանական արժեքով՝ եղանակավորող արտահայտություն, ինչպես՝ **վարտիքդ կապե** (անկարող է այդ բանն անելու (ասվում է մեծ-մեծ խոսողներին)) և այլն:

Հագուստ իմաստն արտահայտող բառերը կարող են հանդես գալ **ածականի արժեք ունեցող ԴՄ-ներում**, որոնց մեջ, իբրև գլխավոր բաղադրիչ (և լրացյալ), հանդես են գալիս ածականները, ինչպես՝ **գրպանը հաստ** «գրպանը լիքը», **փեշը կեղտոտ** (խսկց.) «անազնիվ, վատ վարք ու բարքի տեր», **շապիկը կարճ** և այլն:

Ածականի արժեքով հանդես են գալիս նաև դերբայ գլխավոր բաղադրիչ ունեցող ԴՄ-ներ, ինչպես՝ **մոր կոճակ կտրող//աչքի սուրմա թոցնող, ասեղ կուլ տված** «1. սաստիկ նիհար, 2. վիզը ձգված (մարդու մասին)», **ասեղ մաշկոդ** «ծայրահեղ խաբեբա, ստահակ, ազահ» և այլն:

Որոշ ԴՄ-ներ **մակբայի արժեք** ունեն, ինչպես՝ **մի շապկով մեծ** «հասակը մի չափսով ավելի, հասակով, տարիքով մեծ», **փեշի տակից** «թաքուն, գաղտնի. այնպես, որ մյուսները չիմանան (մի բան տալ)» և այլն:

Բառային կտրվածքում ԴՄ-ի կայունությունը պայմանավորվում է նրա բաղադրիչների կայունության աստիճանով. այսինքն՝ փոխարինելի^օ են արդյոք այդ բաղադրիչները իրենց հոմանիշով կամ հոմանիշներով, թե՞ ոչ: Այս առումով կարևոր նշանակություն ունի նաև այն հանգամանքը, թե ԴՄ-ի այս կամ այն բաղադրիչը լեզվի

ոճական ո՛ր շերտին է պատկանում՝ ընդհանուր գրական, փոխառյալ, թե՛ բարբառային:

Հայերենի բարբառները (խոսվածքները) ևս հարուստ են նման բաղադրիչային կազմ ունեցող դարձվածներով, որոնց զգալի մասը ընդհանուր է գրական հայերենի և այլ բարբառների դարձվածների հետ, իսկ մի մասն էլ ձևով, պատկերային հիմքով կամ իմաստով յուրահատուկ է և հանդիպում է միայն խոսվածքներում: Սովորաբար «հագուստ» իմաստային դաշտից ԴՄ-ներ են կազմվում ոչ բոլոր բառերով. դրանց մեջ կան այնպիսիները, որոնք հաճախակի գործածվող բառեր են: Միևնույն բաղադրիչը (այդ թվում՝ փոխառյալ) հաճախ կարող է բազմաթիվ ԴՄ-ների հիմք լինել: Նկատել ենք, որ ԴՄ-ների կազմությանը (ինչպես գրական հայերենում, այնպես էլ հայերենի բարբառներում ու խոսվածքներում) ավելի շատ մասնակցում են *գդակ, գրպան, շապիկ, փեշ, ջեք, յախա* բառերը և այլն: Այսպես՝ *գդակ բառով՝ գլխին գդակ դնել՝ ունենալ, գդակը բարձր դնել, գդակը գետնովը տալ, գդակը ծուռ դնել* և այլն, *գրպան* բառով՝ *գրպանը անցնել, գրպանը դատարկել, գրպանը դեմ անել, գրպանը լիքը, գրպանը լցնել կամ հաստացնել, գրպանի ծախս, գրպանին դիպչել/գրպանին վնաս հասցնել, գրպանի օգնությանը դիմել, գրպանը տոգացնել* և այլն, *շապիկ* բառով՝ *մեկ շապիկ մեջ քնել, մի շապիկ ավելի հագնել (խսկց.)//մի քանի շապիկ ավելի կտրել* «շատ անգամ մեծ, փորձառու, տարիքով լինել», *մի շապիկ մեջ մեծանալ, մի շապկով մեծ, մի շապկով մնալ*, բարբառներում՝ *շապկեն էլլել* «սաստիկ զայրանալ, իրենից դուրս գալ», *շապիկը մտնել* «համոզելով ուղիղ ճանապարհից շեղել, մոլորեցնել», *շապիկ հանել* «շողոքորթել» և այլն, *փեշ* (զգեստի քղանցք) բառով կան մոտ 2 տասնյակից ավելի ԴՄ-ներ, ինչպես՝ *փեշը համբուրել, փեշը ընկնել, փեշը կեղտոտ, փեշը վրին պահել, փեշը քաշել, փեշի տակ առնել, փեշի տակ մտնել, փեշի տակին կառավարել, փեշի տակովն անել, փեշի քարերը թափել՝ վեր ածել, փեշն ընկնել, փեշովը ջուր կրել* և այլն, *ջեք* բառով՝ շուրջ 2 տասնյակ ԴՄ, ինչպես՝ *ջեք կտրել, ջեքը թափ տալ, ջեքը լղար, ջեքը ծակ, ջեքը մտնել, ջեքը տոգացնել, ջեքի բերանը ետ բաց անել, ջեքերը լցնել, ջիբին գոռ տալ, ձեռները ջեքը դրած ման գալ* և այլն, *յախա* (օձիք) բառով՝ 1 տասնյակից ավելի ԴՄ-ներ, ինչպես՝ *յախա ազատել, յախա բողազ* (1. միմյանց օձիք՝ կոկորդ բռնելով կռիվ, 2. լեզվակոխիվ) *անել, յախա թափ տալ, յախա թափել, յախա տալ, յախեա պրծացնել, յախան բաց թողնել* և այլն:

Խոսելով դարձվածային միավորների մասին՝ պետք է նաև նշել, որ պատկերավորման բազմազան միջոցներ են ընկած հայերեն հարյուրավոր դարձվածների հիմքում, և դա բնական է. եթե դարձվածն ստացվում է կապակցության մեջ բառերի վերախմաստավորումից, ապա պատկերավորումն ինքը հենց բառերի վերախմաստավորումն է⁶: Բավական մեծ թիվ են կազմում այն ԴՄ-ները, որոնք ամբողջությամբ վերցրած փոխաբերաբար առնված կապակցություններ են:

Հագուստ իմաստն արտահայտող բառերի բազմազան նշանակություններն ու փոխաբերական իմաստները լայն հնարավորություն են ստեղծում բազմաբնույթ դարձվածների առաջացման համար, ինչպես՝ *պասսի տրեխները ծակվել* «պահեցողության ժամկետը լրանալ, պասը վերջանալ», *աբրեշում դառնալ* «հեզահամբույր՝ զիջող դառնալ, բարկությունը իջնել», *կրակե շապիկ հագցնել* «սատիկ նեղել, չարչարել», *հոգին գրպանը դնել* «1. անխիղճ, անգութ լինել, 2. ժլատ, գծուծ լինել, ժլատություն անել», *պատանքը պատռել* «խիստ ծանր, մահամերձ դրությունից փրկվել, առողջանալ», *աչքից քողն ընկնել* «աչքերը բացվել», *գրպանը դեմ անել* «դրամ տրամադրել (մեկին), փող տալ», *գրպանը լայն բանալ/բաց անել* «մի բանի համար ոչինչ չխնայել, շռայլորեն ծախսել, *գրպանը ծակ* «1. առատորեն՝ շռայլորեն ծախսող, վատնող, 2. դրամ չունեցող, չքավոր, քսակը ծակ», *գոտին ձգել* «կիսաքաղց, աղքատ ապրել, սակավապետ լինել», *սրտի թելը կտրվել* «1. մեռնել, 2. սաստիկ վախենալ» և այլն ԴՄ-ներում: Բառերի *փոխանվանական* իմաստի վրա է հիմնված *կանաչ-կարմիրը՝ կապել* (բրբ.) «1. տղային կամ աղջկան ամուսնացնել, 2. ծիածանել» ԴՄ-ը:

Գրպանում մկներ խաղալ «աղքատ լինել», *զիվորական համազգեստ հագնել, մեկին պատանք կարել, Ադամի զգեստ* «մերկություն, մերկանդամություն, տկլորություն», *Եվայի զգեստով/հագուստով* «մերկ, մերկանդամ», *Ստոլիպյան փողկապ* (գրք.)⁸ և այլ ԴՄ-ները կազմված են *շրջասության* հիման վրա:

⁶ Պ. Բեդիրյան, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Ե., 1973, էջ 99:

⁷ Սա *կոսպանդ/կոսքանդ*-ն է (կարմիր և կանաչ գույնի մետաքսյա թաշկինակներ, որ հարսանիքի ժամանակ կապում են փեսայի աջ և ձախ ուսերից (կարմիրը՝ աջից դեպի ձախ կապում է քավորի կինը կամ աղջիկը, իսկ կանաչը՝ ձախ ուսից դեպի աջ կապում է հարսի մայրը կամ քույրը)), *Հայոց լեզվի բարբառային բառարան*, հ., Ե., 2001-2012, էջ 153:

⁸ «Կախաղան (պետական դումայում կաղետ Ռոդիչևի ճառից): Ցարական մինիստր Ստոլիպինը ստացավ «կախող» մականունը, իսկ կախաղանները, որոնցով նա ծածկեց երկիրը, ժողովուրդը մկրտեց «ստոլիպինյան փողկապներ» անունով (Թարգմ.), Ա. Սուրիասյան, Ս. Գալստյան, Ե., 1975, էջ 536:

Անպետք թաշկինակի պես դեն նետել «ավելորդ համարելով լքել», *թաշկինակի//շապիկի//ներքնաշորի պես (շուտ-շուտ) փոխել* և այլ ԴՄ-ներ կազմված են *համեմատության* սկզբունքով, որոնք իմաստային տեսակետից շատ ավելի կուռ են, երբ ամբողջության մեջ են վերաիմաստավորված:

Ասեղի ծակից Հնդկաստան կնայի «շատ խորամանկ է», *ասեղ գցելու տեղ չլինել* «շատ խուռն բազմություն հավաքվել», *ասեղ գցես գետին չի ընկնի* «բոլորովին ազատ տեղ չլինել», *ասեղ մաշկել* «ժլատ լինել» ԴՄ-ներում առկա է *չափազանցությունը*, իսկ *ասեղի ծակից կանցնի* «չափազանց նիհար է» ԴՄ-ում՝ *նվազաբերությունը*:

Հեզնանքն ու հուժմորը նույնպես կարող են դրսևորվել ԴՄ-ների միջոցով, որոնք մեծ մասամբ հանդիպում են խոսակցական լեզվի մեջ, ինչպես՝ *փոխանք ոտներն ընկնել* (գոհկ.) «տնտեսական դրությունը վատանալ», *փոխանք կատու ընկնել* (գոհկ.) «սաստիկ վախենալ», *վարտիք կապել չգիտենալ* (գոհկ.) «անփորձ՝ խամ՝ անհմուտ՝ խիստ անշնորհք լինել», *լուռ մեկի վարտիքը (թումբանը) ընկնել* (գոհկ.) «որևէ պատճառից մեկը խիստ անհանգստացած լինել, շտապել», *վարտիքը լցնել* «սաստիկ վախենալ» և այլն: Սրանք հիմնականում կոչված են պարզապես ոճավորելու՝ հեզնանքի կամ կատակի երանգ տալու խոսքին, այդպես նաև՝ *կոճակ տղա* (կարճահասակ ու լիքը մարմնով տղա), *շորով գիծ, չարոխ բերան* (բրբ.) և այլն:

Մի փոքր այլ են ծածկախոսությունները, որոնցից են՝ *մոր կոճակը կտրող* «ազահ՝ անկուշտ գող, գողության մեջ խտրություն չդնող», *կոճակը կարե* «ուշադիր եղիր», *կոճակ անել* «սկսած խոսակցությունն ընդհատել կամ գրույցի թեման փոխել, որպեսզի նոր եկողը չիմանա բանի էությունը» և այլն: Այստեղ իմաստազատիչ դեր է կատարում խոսքային միջավայրը:

Բազմաթիվ են այն եղանակավորող ԴՄ-ները, որոնք, մանավանդ տարածված են խոսակցական լեզվում ու բարբառներում, հատուկ են հասարակաբանությանը և սրանցից էլ անցնում են գրավոր խոսքին: Նման ԴՄ-ների իմաստների և գործառության հարցերում հնչերանգն ու խոսքային միջավայրը ավելի մեծ դեր են խաղում: Դրանք հիմնականում օրհնանքի ու մաղթանքի, անեծքի ու հեզնանքի խոսքեր են: Այսպես՝ *բարով մաշես* «Բարեմաղթություն մեկին, որը նոր հագուստ է հագել կամ մի նոր բան գնել, որպեսզի գործածի այն մինչև մաշվելը», կարող է նաև՝ *բարով վայելես, փապուճիս թե...* (արհամարհ.) «հոգս չէ, գլուխը քարը», *վարտիքը կապե* (գոհկ.) «քո բանը չէ,

անկարող ես այդ անել (ասում են մեծ-մեծ խոսողներին)», սևալաչակ լինիս (անեծք՝ «մարդդ մեռնի» նշ.-մք) և այլն:

Յուրաքանչյուր ենթադաշտի ԴՄ-ները լայն առումով միմյանց հետ գտնվում են իմաստային որոշակի հարաբերության մեջ.

1. Հոմանիշ ԴՄ-ներ՝ գողացած աքլորի պոչը փեշի տակից երևալ «կեղծիքը, խաբեբայությունը, գողությունը և այլն հնարավոր չէ թաքցնել» - **մախաթը պարկում չես թաքցնի, գոտին լայն կապել** «բարեկեցիկ կյանք վարել, շոայլ ապրել» - **գոտին (գոտիկը) հաստացնել** «1. հարստանալ, հարստություն դիզել, 2. գիրանալ, չաղանալ»,

գրպանը մտնել «1. գրպանից գողություն անել, գողանալ, ուրիշի ունեցածը յուրացնել, 2. շահ ստանալ, բաժին հանել, օգտվել» - **գրպանը սրբել** «մեկի փողերին տիրանալ, գրպանները դատարկել» - **գրպանը քամել** «ունեցածը յուրացնելով, ծախսել տալով՝ սնանկացնել, գրպանը մինչև վերջին կոպեկը դատարկել», **գրպանը տոգացնել** (խսկց.) «հարստություն դիզել, մեծ քանակությամբ դրամ կուտակել» - **գրպանը հաստանալ** «հարստանալ, մեծ գումարի տեր դառնալ», **նիհար գրպան** (փխբ.) «աղքատ, քիչ փող ծախսող» - **դատարկ գրպան** «անփող, անդրամ, աղքատ» կամ դատարկ գրպանով, **մեկ շապկի մեջ քնել/Մի շապկում կամ շապկի մեջ քնել** «մտերիմ, սրտակից ընկերներ լինել» - **մի շապկի մեջ մեծանալ** «անբաժան, միշտ միասին լինել», **փափախը աղբի մեջ գլորել կամ գետնով տալ** (խսկց.) «անպատվել, անունը կոտրել» - **փափախը ցեխի մեջ ընկնել** «պատվազուրկ լինել, անունը կոտրվել»:

2. Հականիշ ԴՄ-ներ՝ փեշերը վեր քաշել (խսկց.) «պատրաստվել մի բան անելու» - **փեշը թափ տալ** «հետ կանգնել, հրաժարվել», **գոտին (գոտիկը) պնդացնել** «կուշտ ուտել, կշտանալ» - **գոտին թուլացնել** «մի տեղ երկար նստելու տրամադիր լինել», **գրպանը դատարկ** «դրամ չունեցող, անդրամ, դրամից զուրկ, աղքատ» - **գրպանը լիքը** «շատ դրամ, փող ունեցող, հարուստ», **գրպանը դատարկել** «մեկին ծախսի տակ գցել, ծախսել ամբողջ դրամը» - **գրպանը լցնել կամ հաստացնել** «1. փող դիզել, հարստանալ, 2. հարստացնել մեկին», **դատարկ գրպան** «անփող, անդրամ, աղքատ» կամ դատարկ գրպանով - **լիքը գրպանով** «շատ դրամով, հարստությամբ», **նիհար գրպան** (փխբ.) «աղքատ, քիչ փող ծախսող» - **հաստ գրպան** «հարուստ, ունևոր, շատ փող, մեծ հարստություն ունեցող»:

3. Համանուն ԴՄ-ներ՝ *գրպանը դնել* (1) (մեկին) «1. մեկին գերազանցել, մեկի նկատմամբ բացահայտ առավելություններ ունենալ» և *գրպանը դնել* (2) (կոխել) «գրպանել, յուրացնել, սեփականել» և այլն:

4. Հատկանշանական է նկատել նաև, որ մեր լեզվի շատ բառեր, որոնք ազատ կապակցություններում մենիմաստ են, հենց իբրև ԴՄ-ների բաղադրիչներ հանդես գալիս և դրա շնորհիվ են դառնում **բազմիմաստ**: Այսպիսիներից են՝ բուրդ- «վատ. օրհասական» (բանը բուրդ լինել) և արևմտահայերենում ունենք *բուրդ ու փապուճ փախիլ* «մազապուրծ լինել, ճողոպրել» ԴՄ-ը, որի մեջ դժվար է նույնիսկ առանձին բանաձևել *բուրդ*-ի իմաստը: Ամեն մի խոսքային միջավայրի մեջ տվյալ ԴՄ-ը մուծվում է հասարակայնորեն գիտակցված իր համապատասխան իմաստով, ինչպես՝ *կանաչ-կարմիրը կապել* (բրբ.) «1. տղային կամ աղջկան ամուսնացնել, 2. ծիածանել» բազմիմաստ ԴՄ-ը և այլն:

Ինչպես հայտնի է, միևնույն իմաստն արտահայտող ԴՄ-ները կարող են հանդես գալ որոշակի փոփոխություններով, այսինքն՝ տարբերակներով, ինչպես՝

ա) բաղադրիչների՝ հոմանիշներով փոխարինման ճանապարհով, ինչպես՝ *փոխանը//շալվարը* կատու ընկնել (1. խիստ վախենալ, 2. անհամբեր, անհանգիստ լինել), *փափախը թեք դնել//փափախը ծուռ դնել* «անհոգ, առանց վախենալու, ապահով, համարձակորեն (ապրել, գործել և այլն)», *գոտիկ գոտիկ տալ//գարկել* (բրբ.) «խոսքով իրար հետ մրցել», *գրպանը խոթել//գրպանը կոխել* «գրպանը դնել», *գրպանից փող//դրամ կորչել* «խաբեբայությամբ մեկի դրամը յուրացնել», *սրտի թելերը կտրել//սրտի թելը փրթել* (բրբ.) «1. սպանել, 2. վախեցնել», *վարդագույն ակնոցով դիտել//նայել* «ամեն բան լավ տեսնել, լավատես լինել» և այլն,

բ) բաղադրիչների քերականական տարբեր ձևավորումով, ինչպես՝ *աչքի սուրմա թոցնել//թոցնող* «շատ ճարպիկ», *պատան կարել (մեկին)//պատանքը կարել//ձնել* «անեծք՝ մեռնել, թաղվել», *փեշի քարերը թափել//քարը փեշից թափել* «չհամատել, զիջել, հետ կանգնել անմիտ, աննպատակ պնդումից» և այլն,

գ) տարբեր շարադասությամբ, ինչպես՝ *յորդանի չափով ոտը մեկնել//ոտքը վերմակի չափով մեկնել* «չափը ճանաչել, ունեցած միջոցների համաձայն ապրել»,

զ) բաղադրիչների հավելումով կամ համառոտումով, ինչպես՝ *սև հագնել* «սգի շոր հագնել, սուգ պահել, սգալ, որպես անեծք՝ սգվոր դառնալ» և *սև շոր հագնել* «սգի

մեջ լինել», *փեշից կախվել* և *փեշից կախ ընկնել* «1. աղաչել, պաղատել, օգնություն խնդրել, 2. մի բանով կաշկանդվել, կառչած, հակված լինել մի բանի», *յորդանի չափով ոտը մեկնել/ոտքը իք* *յորդանի չափով (գյորա) մեկնել* «չափը ճանաչել, ունեցած միջոցների համաձայն ապրել» *փեշի քարերը թափել/վեր թափել (խսկց.)//քարը փեշից թափել/վեր ածել* «չհամառել, զիջել, հետ կանգնել անմիտ, աննպատակ պնդումից», *գրպանում մկները ջիրիդ են խաղում//գրպանում մկներ խաղալ* «ծախսելու դրամ չունենալ, աղքատ լինել, փող չունենալ», *զլխին լաչակ ծածկել/զլուխը լաչակ* և այլն:

Որոշ դարձվածքների համարժեքներ կարելի է գտնել մեկ այլ լեզվում: Այսպես՝ հայերենն ունի ռուսերենից՝ պատճենումներ, ինչպես՝ *գոտին ձգել* (ռուս.՝ натягивать пояс): Հանդիպում են նաև միևնույն իմաստն արտահայտող, բայց տարբեր բաղադրիչներ ունեցող ԴՄ-ներ, ինչպես՝ *ոտքը վերմակին համեմատ/համապատասխան մեկնել/պարզել* (ռուս.՝ по одежке ножку), *մեկի փեշերին փարվել/փեշից կախ ընկնել* (ռուս.՝ кланяться//поклоняться в ноги//в ножки), *ասեղ գցելու տեղ չկա* (ռուս.՝ яблоку негде было упасть, գերմաներենում նույնպես՝ «խնձոր գցելու» (es konnte kein Apfel zur Erde) և այլն: Բերված օրինակները տարբեր ժողովուրդների լեզվական մտածողության ընդհանրությունների վկայություններն են: Լեզվամտածողության փոքրիկ տարբերություններ կարելի է գտնել անգամ միևնույն լեզվի շրջանակներում, նրա զանազան բարբառների ու խոսվածքների միջև:

Այսպիսով՝ «հագուստ» իմաստն արտահայտող բառերը, դառնալով դարձվածային միավորների բաղադրիչներ, երբեմն զրկվելով իրենց բառային նշանակություններից, երբեմն էլ պահպանելով իրենց բառային իմաստը, ձեռք են բերում հուզարտահայտչականություն և ծառայում են խոսքի արտահայտչականությանը և ոճավորմանը: Գործածվելով առօրյա խոսքում, բարբառներում, ինչպես նաև գեղարվեստական գրականության մեջ՝ վերջիններս արտացոլում են ժողովրդի լեզվամտածողությունը: Դրանց բացահայտումը հարստացնում է մեր ժողովրդի կենցաղի մասին վառ պատկերացումները և հնարավորություն տալիս պահպանել տվյալ տարածքին հատուկ լեզվամտածողության յուրահատկությունները:

⁹ Տե՛ս Ռ. Մելքումյան, Պ. Պողոսյան, Ռուս-հայերեն դարձվածաբանական բառարան, Ե., 1975.

Л. А. Гамоян - Выражение семантической группы “одежда” во фразеологизмах современного армянского языка. - В современной лингвистике важное место занимает семантическое исследование слова. Смысловые разнообразия и метафорические значения слов, выражающие одежду, лежат в основе образования различных фразеологизмов. Семантическая группа “одежда” получает еще метафорические значения. Диалекты армянского языка также богаты соответствующими идиомами, содержащие такие компоненты, большинство из которых являются общими литературного языка и его диалектов.

L. A. Ghamoyan - Expression of the Semantic Group “Clothing” in Phraseological Units of modern Armenian. - In modern linguistics the semantic analysis of word units is still of current relevance. The variety of senses and metaphorical meanings of words expressing meanings related to “clothing” opens up a vast variety of phraseological units. Our explorations into the semantic field of “clothing” in phraseological units have shown that idioms with the names connected with clothing may gain various new and metaphorical meanings. The dialects of Armenian are also rich in idioms containing such components, the majority of which is quite recurrent in literary Armenian and other dialects.

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
ավագ գիտաշխատող, բ.գ.թ., դոցենտ

Արևմտահայերենի և արևելահայերենի տարբերություններին անդրադարձել են շատերը: Հ. Աճառյանը նշում է բառամթերքի հետևյալ տարբերությունները՝ 1. բառեր, որոնց միջավանկի *ա*-ն կրճատված է արևմտահայերենում՝ *աշակերտ* - *աշկերտ*, 2. մի երկու տառով միմյանցից տարբերվող բառեր՝ *ամաչել* - *ամչնալ*, *թքել* - *թքնել*, *ասեկոսե* - *ըսի-ըսալ* և այլն, 3. միևնույն բառը երկու տարբերակներում տարբեր իմաստ ունի՝ *հայտնի* - *նշանավոր*, *ակներև*, *իմանալ* - *գիտենալ*, *լսել* և այլն, 4. միայն արևելահայերենին հատուկ բառեր՝ *լուսամուտ*, *խունանալ*, *կածան*, *շոգ*, *տկլոր*, *քորոց*, 5. միայն արևմտահայերենին բնորոշ բառեր՝ *ակոսայ*, *աղեկ*, *ատեն*, *գէշ*, *քով* և այլն, 6. երկու տարբերակներում նույն իմաստն արտահայտող, սակայն տարբեր բառեր՝ *այժմ* - *հիմա*, *կուլ տալ* - *կլլել*, *կծել* - *խածնել* և այլն: Նշվում են նաև այլ տարբերություններ²:

Արևմտահայերենի հարցերին են նվիրված Յու. Ավետիսյանի «Արևմտահայ բանաստեղծության լեզուն»³, «Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական քերականություն»⁴, Ռ. Սաքապետոյանի «Արևելահայերեն-արևմտահայերեն ուղղախոսական-բացատրական բառարան»⁵ Ա. Սարգսյանի «Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ»⁶, և բազմաթիվ այլ աշխատանքներ:

Արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարի տարբերությունների քննությանն է նվիրված Ռ. Սաքապետոյանի «Արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային առանձնահատկությունները»⁷ աշխատությունը: Ինչպես հայտնի է, արևմտահայերենը և արևելահայերենը տարբերություններ ունեն ինչպես հնչյունական, ուղղագրական, քերականական իրողություններում, այնպես էլ բառապաշարում:

¹ Հոդվածը տպագրվել է «Գիտական հոդվածների ժողովածու»-ում, Ե., 2015, էջ 272-279:

² Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ.2, Ե., 1951, էջ 562- 568:

³ Յու. Ավետիսյան, Արևմտահայ բանաստեղծության լեզուն, Ե., 2002:

⁴ Յու. Ավետիսյան, Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական քերականություն, Ե., 2007:

⁵ Ռ. Սաքապետոյան, Արևելահայերեն-արևմտահայերեն ուղղախոսական-բացատրական բառարան, Ե., 2000:

⁶ Ա. Սարգսյան, Արևմտահայ և արևելահայ գրական լեզուներ, Ե., 1985:

⁷ Ռ. Սաքապետոյան, Արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային առանձնահատկությունները, Ե., 2004:

Սույն հոդվածում մենք կանդրադառնանք արևմտահայերենին բնորոշ կրոնակեղեցական տերմիններին⁸: Ռ. Սաքապետոյանը գրում է. «Նման բառերը, թվում է, պետք է ընդհանուր լինեին հայերենի բոլոր փուլերի և շերտերի համար, մանավանդ որ իրենց արմատներով գալիս են մեր պատմության հնագույն շրջաններից, և դրանց մի մասը սրբագործված է եկեղեցու նվիրապետական կանոններով: Սակայն այս դեպքում դեր են խաղացել նաև հասարակականքաղաքական տարբեր միջավայրերը, որոնցում 20-րդ դարում հայտնվեցին մեր ժողովրդի երկու հատվածները, հետևաբար և մեր լեզվի երկու ճյուղերը»⁹: Հեղինակը նշում է նաև, որ Սփյուռքում, որի գերնպատակը հայապահպանության գործն էր, բացառիկ դերակատարություն ունեցավ եկեղեցին, որով և պայմանավորված է այս ոլորտի բառերի հաճախականությունը արևմտահայերենում¹⁰:

Հայտնի է, որ խորհրդային աստվածամերժության տարիներին կրոնի, եկեղեցու գործառույթը նվազագույնի էր հասցվել, ուստի և կրոնական բնույթի շատ բառեր, բնականաբար, չէին գործառում:

Հետխորհրդային տարիներին Հայաստանում մեծացել է հետաքրքրությունը կրոնի նկատմամբ, և արևմտահայերենի կրոնական բնույթի բառերի մի մասը սկսել է գործածվել նաև արևելահայերենում: Արևմտահայերենից արևելահայերենին անցած բառերի մեջ կան միայն արևմտահայերենին բնորոշ բառեր կամ այնպիսի բառեր, որոնք ավելի գործածական են արևմտահայերենում, ինչպես՝ *բանկալ* (տեղ, ուր մոմ են վաճառում), *գերեզմանօրհնողէք*, *եղամ* (գավիթ), *գոմբ* (աբեղայի կնգուղ), *ընծայանոց* (պահարան, ուր պահվում են պատարագի նշխարը և գինին), *ժամանոց* (պատարագի գինու սրվակ), *ժամավոր* (եկեղեցի գնացող), *ժամարար* (պատարագիչ քահանա), *ժամոց* (պատարագիչին տրվող նվեր), *խոռել* (եկեղեցական կարգուկանոնը խախտել), *խոստուկ* (խոստովանող), *ծխատեր* (հոգևոր հովիվ), *ծխատուն* (1. քահանա ունեցող ընտանիք, 2. քահանայատուն), *ծֆուլ* (վեղար), *կեռոն* (վրան մոմ կրող հատուկ գավազան), *կորբան* (1. զոհ, մատաղ, 2. կամավոր նվերների գանձանակ), *հոգեբաժին* (տուրք քահանային՝ ննջեցյալի տիրոջից), *ձեռքպագ*, *ձոնարան*, *ճաշակ* (հաղորդություն), *մատրնապետ* (մատուռի պատասխանատու), *նվիրանոց* (սկիհ), *շաբաթանալ* (հանգստանալ), *շուշտակ* (կնոջ մահից հետո կուսակրոն դարձած մարդ),

⁸ Օգտվել ենք Ռ. Սաքապետոյանի «Արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային առանձնահատկությունները» աշխատանքից, Ե., 2004, էջ 38-45:

⁹ Նույն տեղում, էջ 39:

¹⁰ Նույն տեղում, էջ 39:

պահքեր (պահքը խախտող), *տափանակ* (գանձանակ), *տեր պապա* (քահանա), *փակակալ* (եկեղեցու բանալիները պահող մարդ), *փոխանորդ* (կաթողիկոսի բացակայության ժամանակ նրան փոխարինող անձ՝ տեղապահ) և այլն:

Վերոնշյալ բառերը հիմնականում բաղադրյալ են. արմատական բառերը համեմատաբար քիչ են՝ *եղամ*, *զովի/բ*, *ծֆուլ*, *մաղզմա/յ*, *ճաշակ*, *շուշտակ*, *շուշփա/յ* և այլն¹¹:

Եղամ (*էղամ*) բառը (տաճարի մուտքի առաջի սրահ) իմաստով, մեկ անգամ գործածված է Աստվածաշնչում. ըստ Աճառյանի՝ եբրայերենից տառադարձված է հունարեն, սրանից էլ՝ հայերեն (ՀԱԲ¹², 2,15): Հին կտակարանում՝ «Եւ *էղամ* դէմ յանդիման տանն, երկայնութիւնն առաջին՝ եւ լայնութիւն՝ տանն կանգնոց քսանից....» (Երկ.Մն. Գ.4), աշխարհաբար՝ «Տան ճակատի արտաքին *զավթի* նախկին երկարութիւնն ու լայնութիւնը քսան կանգուն էին....» (Աստուածաշունչ, 1999): Ինչպես տեսնում ենք, *էղամ*-ը թարգմանված է զավթ: Արևմտահայերենը պահպանել է գրաբարյան բառը: ՀԲԲ-ն¹³ *էղամ* բառը բացատրում է «սրահ, կամարակապ» (ՀԲԲ, 1,556): ԱՀԲԲ-ում վկայված չէ:

Զովի բառը ՀԱԲ-ում չկա: Վկայված է ՀԲԲ-ում՝ «աբեղայի գդակ կամ կնգուղ՝ վեղարով կամ առանց վեղարի» (ՀԲԲ, 2,30): Ինչպես նշում է Ռ. Սաքապետոյանը, հատուկ է արևմտահայերենին:

Ծֆուլ բառն էլ ստուգաբանված չէ: Ըստ Աճառյանի՝ երկու անգամ ունի Գ. Տաթևացին՝ «կրօնաւորի գլխանոց» իմաստով՝ «Մոնոզոնն ունի.... նախ քուսիթայն ի գլուխն, որ է ծֆուլն» (ՀԱԲ, 2,476):

Ճաշակ բառը փոխառություն է միջին պարսկերենից (ՀԱԲ, 3, 185-186): Բազմիմաստ է: ՀԲԲ-ում ունի 11 իմաստ, որոնցից մեկը կրոնական է՝ *հաղորդություն*. «Քահանային կանչեցին, որ հիւանդին *ճաշակ* տա» (ՀԲԲ, 3,198): ԱՀԲԲ-ում ճաշակ գլխաբառի 7-րդ իմաստն է կրոնական՝ *հաղորդություն*: *Հաղորդությունը* եկեղեցու յոթ խորհուրդներից մեկն է:

Մաղզմայ բառի ծագումը պարզ չէ: Աճառյանը հավանական է համարում բառի ասորական ծագումը (ՀԱԲ, 3, 238). արծաթյա փոքր ափսե է, որի վրա դնում են հաղորդության նշխարը և որով ծածկում են սկիհի բերանը (ՀԲԲ, 3, 244):

Շուշտակ բառը գործածվում է այրիանալուց հետո կուսակրոն դարձած հոգևորականի համար: ՀԲԲ-ում բառի առաջնային իմաստն է՝ «Լաթ, որով կանայք կապում են իրենց

¹¹ Արևմտահայերենին բնորոշ կրոնական բնույթի բաղադրյալ բառերին կանոնադաշտանք առանձին:

¹² **Հ. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հհ.1-4, Ե., 1971-1979:

¹³ **Ս. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ ՀԲԲ), հհ.1-4, Ե., 1944-1945:

գլուխները»: Փոխաբերաբար գործածվում է թեթևամիտ կանանց համար: Կրոնական է բառի 5-րդ իմաստը՝ «Քահանայ, որ այրիանալուց յետոյ կուսակրօն հոգևորական է դառնում» (ՀԲԲ, 3, 536):

Բառի վերջին իմաստը կապվում է կա՛մ *շուշտել* բայի հետ, որ նշանակում է «տաքա-կուսել», կա՛մ *շուշտակ*-ի՝ «թեթևամիտ կին» նշանակությունից՝ իբրև կասկածելի հոգևորա-կան (ՀԱԲ). Մալխասյանցը բառի ծագումը հնարավոր է համարում նաև *շուշտակ* վարդա-պետների գլխարկի ձևից, որ նման էր կանանց գլխի *շուշտակին*: Ավելի հավանական է թվում Մալխասյանցի տեսակետը:

Շուշփայ (շուշպայ) ասորական փոխառություն է (ՀԱԲ, 3, 537): Ունի «սկիհը մաքրելու շոր, սրբոց, մասունքների պատանք» իմաստները: ՆՀԲ-ում՝ «Մաքուր կտաւ որպէս սնդոն սուրբ սեղանոյ, և որպէս մաքրիչ սկիոյ. շուշփայք, որ են գորփօրայքն»՝ «Առցեն զշիշս ծածկեալ պրիսմեղեն շուշփայիւքն» (օրինակը՝ ըստ ՆՀԲ-ի): Միջին հայերենում բառն ունի *շուշփէ* տարբերակը՝ «սրբերի մասունքներ, խաչ կամ ավետարան փաթաթելու շոր» իմաստը, ինչպես՝ «Ետուն ի դուռն Ս. Խաչին... և ոսկէթել շուշփէ մի վառի խաչին» (ՄՀԲ, 2, 224): ՀԲԲ-ն ունի *շուշփայական, շուշփայել, շուշփացու* բառերը (ՀԲԲ, 3, 536):

Շուշփա/յ բառը առավելապես գործածական է արևմտահայերենում: Մաքուր կտոր է, որ դրվում է սկիհի տակ կամ ծառայում է այն մաքրելուն:

Հայերենի մի քանի բարբառներում ունի «սավան» իմաստը: Վանի բարբառում կա «շուշփայել» բայը՝ «մասունքը, խաչը շուշփայի մեջ փաթաթել» և «շուշփացու» գոյականը՝ «կտոր, որից սկիհի համար շուշփայ են պատրաստում» (ՀԱԲ): Հետաքրքիր է արևմտահա-յերեն *տեր պապա (տերպապա)* բառը: *Պապա* բառը արևելահայերենում ունի *հայր* գոյակա-նական, արևմտահայերենում՝ *պատկառելի, հարգարժան* ածականական իմաստը. հմմտ. *պապա մարդ*¹⁴: *Տերպապայություն*-ն ունի «տերպապա լինելը, տերտերություն, տերպապա-յի կոչումը և զբաղմունքը» իմաստները (ԱՀԲԲ¹⁵, 1439): Տեր պապա-ն *տեր հայրն* է՝ հարգա-կան տիտղոս, որով կոչում են քահանային:

Բառն առաջնային նշանակությամբ *քահանա* իմաստն ունի, սակայն փոխաբերաբար ձեռք է բերել նոր իմաստ՝ *միջնորդ, կալատ*: Հիշենք Ե. Օտյանի «Միջնորդ տեր պապան» երգիծական վեպը:

¹⁴ Ռ.Մաքապետյան, նշվ. աշխ., էջ 78:

¹⁵ Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան (այսուհետև՝ ԱՀԲԲ), Ե., 1976:

Ա. Սարգսյանի «Արևմտահայերենի բառարանում»¹⁶ վերոբերյալ բառերից վկայված են՝

Ժամուց– 1. Դրամական նվեր, որ տրվում էր ժամ ասող կամ պատարագիչ քահանային:

2. Առհասարակ՝ նվեր հոգևորականին:

Օխամատյան – ծխական քահանայի մատյան, որ մեջ արձանագրվում են ծնունդը, մահը, ամուսնությունը:

Ձեռքպագ – ձեռնահամբույր:

Ճաշակ - 1. Գաղափար, նմուշներ: 2. Եկղց. Հաղորդություն: Օր.՝ Ծով պիտի բռնեմ, ճաշակ պիտի առնեմ (Ա.Արփիարյան): Տեր պապա /բաբա 1. Տերտեր: 2. փխբ. միջնորդ, կավատ (հատկապես հոգևորական):

Ա. Սարգսյանի և Ռ. Սաքապետոյանի բառարանների կրոնական բնույթի բառերի համեմատությունը ցույց է տալիս, որ ընդհանուր բառերը երկու աշխատանքներում քիչ են՝ *Ժամուց, ձեռքպագ, ճաշակ, տեր պապա* և այլն:

Ա. Սարգսյանի «Արևմտահայերենի բառարանում» կրոնական բնույթի բառերի քիչ լինելը, թերևս, պայմանավորված է խորհրդային տարիների՝ կրոնի նկատմամբ ունեցած վերաբերմունքով: Գիրքը լույս է տեսել 1991 թ., սակայն նյութը, բնականաբար, հավաքվել է ավելի վաղ:

Ռ. Սաքապետոյանի բառացանկի և ՀԲԲ-ի կրոնական բնույթի բառերի համեմատությունը ցույց է տալիս, որ դրանց մի մասը վկայված է ՀԲԲ-ում, մի մասը՝ ոչ, ինչպես՝ *Ժամավոր, նվիրանոց, տափանակ, խոռել* գլխաբառի 5-րդ իմաստն է կրոնական՝ «ուխտը խախտել» և այլն:

Ստ. Մալխասյանցի ՀԲԲ-ում կրոնական բնույթի բառերը համեմատաբար շատ են: Բառարանի առաջաբանում հեղինակը գրում է. «Ինչպես յայտնի է՝ շատ բառեր ոչ միայն փոխել են իրենց սկզբնական նշանակությունները, այլև բոլորովին յեղափոխուել, կերպարանափոխուել, մանաւանդ կրօնական նշանակութիւն ունեցողները: Այս հարցում իմ սկզբունքը այս է եղել. թէ բառարանագիրը պետք է հաւատարիմ մնայ իւր կոչմանը – տայ բառերի ճիշտ նշանակութիւնները, ինչ որ նրանք ունեցել են ստեղծուելիս և այնուհետև շատ դարերի ընթացքում, անկախ այն բանից, թէ ինքը հեղինակը հաւատում կամ չի հաւատում այդ նշանակութիւններին, կամ նրանք ներկայումս ընդունելի են թէ ոչ» (ՀԲԲ, Առաջաբան, ԺԵ):

¹⁶ Ա. Սարգսյան, Արևմտահայերենի բառարան, Ե., 1991:

Նկատենք, որ բառարանը կազմվել է ստալինյան հալածանքների տարիներին, և մեծ համարձակություն էր կրոնական բնույթի այդքան բառեր գետեղելը բառարանում:

Էդ. Աղայանի ԱՀԲԲ-ում, ընդհակառակը, կրոնական բնույթի բառերը քիչ են, և ինչպես հեղինակն է նշում բառարանի առաջաբանում՝ բառարան չեն մուծվել «կրոնական և եկեղեցական բառերի մեծագույն մասը, որոնց իմացումը, հեղինակի կարծիքով, այսօրվա մասսայական ընթերցողին անհրաժեշտ չէ» (ԱՀԲԲ, Առաջաբան, 13-րդ կետ): Խոսքը խորհրդային տարիների ընթերցողի մասին է:

Сильва Папикян - О некоторых западноармянских религиозноцерковных словах. -

Различиями западно- и восточноармянских языков занимались многие арменоведы. Различия религиозноцерковных слов в двух ветвях армянского языка результат исторических и общественно-политических обстоятельств. Для объединения народа в Диаспоре большую роль сыграла Армянская церковь. После распада СССР в Армении возрасла заинтересованность к религии и многие западноармянские слова стали употребляться в восточноармянском. Основная часть 297 этих слов- производные. Из корневых слов можно отметить ełam, zomb, cful, małzmay, čašak, šuštak, šušp'ay и т.д.

Silva Papikyan - About some Western Armenian words of religious character. -

To the differences between Western and Eastern Armenian many linguists have addressed. In two branches of Armenian the differences among religious-ecclesiastical words are result of historical, social-political conditions. In diaspora the church had an important role in preservation of Armenian identity. In postSoviet years in Armenia the interest towards religion has grown and some terms characteristic of Western Armenian have begun to use in Eastern Armenian. The majority of these terms are compound, there are few root words: yegham, zomp/b, tsful, maghzma/y/, chashak, shushtak.

**ԿԱԽԱՐԴ – ՀՄԱՅՔ – ԶԱՏՈՒԿ- ՎՀՈՒԿ ՀԱՄԱՆԻՇԱՅԻՆ
ՇԱՐՔԻ ՄԱՍԻՆ¹**

Պապիկյան Միլվա

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
ավագ գիտաշխատող, բ.գ.թ., դոցենտ

Կախարդ – հմայք- ջատուկ – վհուկ համանիշային շարքում առկա են իմաստաբանական տարբերություններ, որոնք հիմնականում հասկացական են, այն է՝ դրանք արտահայտում են միևնույն առարկան, երեւոյթը, հատկանիշը ցույց տվող հոմանիշների ներքին, հասկացական տարբեր հիմունքները կամ տեսանկյունները²:

Դիտարկենք այդ բառերը:

Հմայ(ք) (միջ. պարսկ *humāy*. հմմտ. ավեստ. *humaya* «օրհնեալ», սանսկրիտ *sumāya* «հրաշալի գոբութին, հնարագիտութին, խորամանկութին», պարսկերեն *humāyūn* «բախտավոր, երջանիկ», *humāy* «բախտի թոչուն», որոնց բոլորի արմատն է *māyā* «օրհնութին, երջանկութին»)(ՀԱԲ³, 3, 103, ՀՄԲ⁴, 460): *Հմայք* բառն անեզական է:

Հին հայերենում *հմայք*-ն ուներ «սուտ գուշակութին, ըղձութին, ըղձապատումն լինել» իմաստները (ՆՀԲ⁵, 2, 102): Աստվածաշնչում վկայված են *հմայել* եւ *հմայք բառերը, երկուսն էլ*՝ հինկտակարանյան: *Հմայք*-ը հիմնականում թարգմանվել է «կախարդություն»՝ «զի *հմայք* մեղք են...»՝ «Կախարդութին անելը մեղք է...» (Ա Թագ. ԺԵ. 23), «... զի ոչ գոն հմայք ի Յակոբ...»՝ «Յակոբի յետնորդների մէջ կախարդութին անող չկայ» (Թիւք ԻԳ. 23, Աստուածաշունչ, 1999) և այլն:

Գրաբարում *հմայ* բաղադրիչով կազմված են *հմայական, հմայահաւ, հմայեակ* «կախարդական թղթեր», *հմայել, հմայահաւանութիւն* «հմայությանը հավանելը կամ հավատալը», *գաւազանահմայութիւն, դիւահմայութիւն, լերդահմայ, կիւսահմայ, հաւհմայ, հաւահմայութիւն* և այլն: Այս բառաշղթայում նկատելի են բառերի գործածության, ժամանակագրության առանձնահատկություններ: Այսպես, վերոգրյալ բառերից Ս.Գրքում վկայված են *լերդահմայ լինել* (մեկ անգամ)՝ «հմայս հմայել, գաւազանս

¹ Հոդվածը տպագրվել է «Էջմիածին» ամսագրում, Ս. Էջմիածին, 2016, ԺԲ, էջ 131-137:

² Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, էջ 70:

³ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հհ. 1-4. Երևան, 1971-1979:

⁴ Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան (այսուհետև՝ ՀՄԲ), Երևան, 2010:

⁵ Նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ), Վենետիկ, 1836- 1837:

ընկենուլ...*լերդահմայ* լինել (Եզեկ. ԻԱ. 21), *հաւահմայ* (մեկ անգամ)՝ «Եւ դուք մի՛ լսէք... երազոց եւ կիւսոց ձերոց եւ *հաւահմայից* ձերոց եւ կախարդաց ձերոց» (Երեմ. ԻԷ. 9):

Վերոգրյալ հատվածում *կախարդ* բառին հոմանիշ է *կհւս*-ը, որով էլ կազմված է *կհւսահմայ* բառը՝ «...դու եւ մերձաւորք քո, որ նստին առաջի քո. զի արք *կհւսահմայք* են, զի ահաւասիկ ես ածեմ զծառայ իմ» (Զաք. Գ.8)՝ «...որ նստած են քո առաջ, քանզի նրանք զիտակ, *կանխատես* մարդիկ են» (Աստուածաշունչ, 1999), ռուսերեն՝ «...сидящие пред тобою мужи знаменательные»:

ՆՀԲ-ն *կհւս*-ը մեկնում է. «Հմայօղ. Կախարդ. եւ հմայք, կախարդութիւն, որ եւ Վիուկ», *կհւսակերտող*՝ «կախարդ, որ կերտէ կիւսս կամ հմայս» (ՆՀԲ, 1, 1001): Եզակի վկայությունն է Գր. Մագիստրոսից: Երբեմն *կհւս*-ը շփոթվել է *կէս* բառի հետ՝ *կհսահմայութիւն* (ՀԱԲ, 2, 598): ՀԱԲ-ում բառն ստուգաբանված չէ: Գ.Զահուկյանը հնարավոր է համարում բառի իրանական ծագումը (թերևս հ.-ե.**keu*- «ուշադրություն դարձնել, նկատել, լսել» արմատից (ՀՄԲ, 408):

Հմայ-ով կազմված *գաւազանահմայութիւն*, *ղիւահմայութիւն* բառերը եզակի վկայություններ են հետհինգերորդարյան շրջանից:

Ղ.Ալիշանը *հմայք*-ը բացատրում է. «...*հմայք* կամ *հմայություն* բառի հատուկ նշանակությունը սնոտի ջանքերն ու գործերն են՝ իմանալու իբր կրոնական սկզբով մի բան, մանավանդ շատերի չիմացածը»⁶:

Հմայությունն ավելի ընդհանուր է, ու սրա զանազան տեսակները անվանվում են՝ *հմայ* բառին ավելացնելով որևէ այլ բառ՝ *լերդահմայություն* (գոհաբերված կենդանու լյարդը զննելը եւ գուշակություններ անելը), *հավահմայություն* (թռչունների թռիչքով եւ ձայներով գուշակություններ անելը – սա կոչվում նաեւ *հավահարցություն* կամ *հավաթոխք*), *ջրահմայություն*, *օրահմայք* (շաբաթվա օրերից չորեքշաբթին կամ շաբաթը չար համարելը), *լուսնահմայ* և այլն:

Հմայությունների տարբեր տեսակների մասին հիշատակում է Հ.Մանդակունին (Ճառ ԻԶ): Նա խստորեն դատապարտում է դրանք եւ համարում քրիստոնյային անհարիր գործեր:

Օրինակներ մեր մատենագրությունից. «Իսկ սպարապետն Պարսից եկեալ ի Հայս... առնու զամուրն Անի, եւ գերէ զամենայն գանձս արքունի որ ի նմա, այլ եւ

⁶ Ղ. Ալիշան, Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Երևան, 2002, էջ 184:

զոսկերս թագաւորացն. ոչ գիտեմ, թէ վասն նախատի՞նսն առնելոյ Արշակայ, եթէ վասն *հմայից* ինչ հեթանոսականաց»⁷: «Քանզի ձօնեալ էր ըստ պաշտամանց ի սօսիսն Արամանեկայ, որ յԱրմավիր. զորոց զսաղարթոցն սօսաւին, ըստ հանդարտ եւ կամ սաստիկ շնչելոյ օդոյն, եւ թէ ուստի շարժումն՝ սովորեցան ի *հմայս* յաշխարհիս Հայկազանց, եւ այս ցրագում ժամանակս»⁸: «Յաղագս թէ որպէս դարձեալ զդիւթսն եւ զքաւդեայսն եւ զկախարդսն հարցեալ Շապիոյ *հմայիւք*՝ փորձէր զմիտսն Արշակայ»⁹:

Հմայությունը հատուկ է եղել հեթանոսությանը, սակայն, ինչպէս գրում է Ղ. Ալիշանը «...այսպիսի աղճատանքն ու ստությունները հայերի մեջ մտել են ոչ որպէս օտարների դիրք ու կուռք, այլ շատը իրենց հնարածն է, եւ օտարներից էլ վկայված են հայկական հմայություններ: Եւ չարագույնն է, որ մեծ եռանդով ու համառությամբ են պահված, թեեւ մեր շատ հայրեր ու վարդապետներ հակառակվել ու մեղադրել են՝ սկսած Լուսավորչից, Եզնիկից, Խորենացուց ու Մանդակունուց.... Եւ ավելի ցավալի է ասելը, որ անջնջելի են թվում»¹⁰:

Լ. Հովհաննիսյանի «Գրաբարի բառարանում»¹¹ վկայված են *հմայանալ* «տեսիլքով հայտնվել», *հմայութիւն* «հավատո հանգանակ», *հմայաչարք* «չարքերով հմայող» բառերը:

Հետագայում *հմայ(ք)* իր առաջնային, կրօնական «1. Հմայություն: 2. Հմայված իր, հմայակ» իմաստներից զատ ձեռք է բերել նոր, փոխաբերական իմաստ՝ «հոգեկան կամ ֆիզիկական գերող հատկություն, հրապույր» (ԱՀԲԲ¹², 876, ԺՀԼԲԲ¹³, 3, 356), կազմվել են նոր բառեր՝ *հմայաբեր*, *հմայիչ*, *հմայչություն*, *հմայքոտ* եւ այլն:

Կախարդ: Իրանական փոխառություն. հմմտ. ավեստ. *kaxvarəda՝ «կախարդ». պարսկերեն ձեւն ավանդված չէ (ՀԱԲ, 2, 486-487, ՀՍԲ, 373): Հին հայերենում ուներ «դիւթ, կիւս, վիուկ, մոգ. սուտ եւ խարդախ մարգարէ. դեղատու. թովիչ. խաբող լսելեաց

⁷ Մովսիսի Խորենացույ Պատմութիւն հայոց, Տիփլիս, 1913, էջ 288:

⁸ Նույն տեղում, էջ 64:

⁹ Փաւստոսի Բուզանդացույ Պատմութիւն հայոց, Ս.Պետերբուրգ, 1883, էջ 54:

¹⁰ Ղ. Ալիշան, նշվ. աշխ. էջ 184:

¹¹ Լ. Հովհաննիսյան, Գրաբարի բառարան. Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր, Երևան, 2010, էջ 171:

¹² Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան (այսուհետև՝ ԱՀԲԲ), Երևան, 1976:

¹³ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (այսուհետև՝ ԺՀԼԲԲ), հհ.1-4, Երևան, 1969-1981:

եւ աչաց դիւական գործակցութեամբ» իմաստները (ՆՀԲ, 1, 1034): Ս.Գրքում ունի 10 վկայություն:

Օրինակ՝ «Եւ դուք մի՛ լսեք մարգարէից ձերոց եւ ըղձութեանց ձերոց եւ երազոց ձերոց եւ կիւսից ձերոց եւ հաւահմայից ձերոց եւ *կախարդաց* ձերոց...» (Երեմ. 3Է. 9), «Եւ ծուլացն եւ անհաւատից, եւ սպանողաց եւ պոռնկաց եւ *կախարդաց* եւ կռապաշտից եւ դեղատուաց եւ ամենայն սոռոց ամպարշտաց...» (Յայտ. ԻԱ. 87):

Կախարդ-ով վկայված են *կախարդաբար*, *կախարդագիտութիւն*, *կախարդական*, *կախարդանք*, *կախարդասար*, *կախարդեմ*, *կախարդութիւն* (ՆՀԲ) բառերը:

ՀԲԲ-ում¹⁴ ավելացված են *կախարդիչ*, *կախարդակից* «կախարդի ընկեր», *կախարդուհի* բառերը: Թերեւս պետք է ենթադրել, որ *կախարդուհի* բառը ավիլի հնից է գալիս. հիշենք մեր հեքիաթները, որոնցում հատկապէս կանայք են կախարդությամբ զբաղվողները (հայկական հեքիաթներում կախարդուհիները խնոցու վրա նստած թռչում էին, այստեղից էլ՝ *ձձուժ հեծնող պառավ* արտահայտությունը):

Կախարդեմ բայը, «կախարդանքի ենթարկել» իմաստից բացի, ունէր «հրապուրել, դիւթել» իմաստները՝ «Կախարդէ զնա ձայնիւ տասնադեացն» (ՆՀԲ): Ժամանակակից հայերենում նույնպէս այդ իմաստը գիտակցվում է:

Ըստ ժողովրդական սնահավատության՝ *կախարդ-ը* կապունի չար ուժերի հետ, որոնց օգնությամբ էլ կատարում է չար գործեր կամ մարդկային ուժերից վեր բաներ:

Կախարդ բառը նմանությամբ ունի «հնարագետ, թովիչ, ճարպիկ» իմաստները: Երբեմն էլ գործածում են «գլուխը կախ գցած» իմաստի համար՝ «Ի՞նչ ես նստել *կախարդ-կախարդ*» (ՀԲԲ): Ինչպէս տեսնում ենք, *կախարդ* բառը ձեռք է բերել նոր իմաստներ. տեղի է ունեցել բառիմաստի ընդլայնում:

Կախարդասար բառը, ըստ Հ.Աճառյանի, «կախարդ, կախարդական» իմաստով ամբողջական փոխառություն է (ՀԱԲ, 2, 487): Գ. Ջահուկյանը բացատրում է. «կախարդների գլուխ, կախարդապետ». հմմտ. *kaxvarəda* (հայ. կախարդ) եւ ավեստ. *sarah*, միջ. պրսկ. *s ar* «գլուխ»¹⁵:

¹⁴ Ս. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան (այսուհետեւ՝ ՀԲԲ), Երեւան, 1944-1945 թթ.

¹⁵ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Երեւան, 1987, էջ 527:

Աստվածաշնչում *կախարդասար* բառը վկայված է մեկ անգամ. «Եւ բազումք ի կախարդասարացն բերէին զգիրս, այրէին առաջի ամենեցուն» (Գործք. ԺԹ.19), աշխարհաբար՝ «Եւ կախարդութեամբ զբաղվողներից շատերը բերում էին իրենց գրքերը եւ բոլորի առաջ այրում» (Աստուածաշունչ, 1999), ռուսերեն՝ «А из занимавшихся чародейством довольно многие, собравши книги свои, сожгли перед всеми» (Деян.19.19, Библия, 1998):

Ինչպէս երևում է վերոբերյալ օրինակներից, ռուսերենում և աշխարհաբարում «կախարդապետ» իմաստը չի զգացվում: Այդպէս է նաև մեր մատենագիրների երկերում՝ «Տեսէք ասէ *զկախարդասար* աղանդ ազգիդ քրիստոնէից¹⁶», «Լուեալ է մեր զամենայն գործս եւ *զկախարդասար* վարդապետութիւն դորա»¹⁷:

Ըստ Լ. Հովհաննիսյանի՝ բառի երկրորդ բաղադրիչը իրանյան *sar* «զլուխ» բառը չէ, այլ *h.-ե. ker-*ը՝ հայ. *սար(p), սար(ել)* բառն է, այսինքն՝ բառը կունենա «կախարդություն սարքող, կախարդություն անող» իմաստը¹⁸, որն էլ երևում է վերոհիշյալ օրինակներում:

Ջատուկ (միջ. պրսկ. *jātūk*՝ «կախարդ, վիուկ». համեմատաբար նոր ձևեր են պրսկ.*jādu*, որից էլ քրդ. *jadu* եւ թուրք. *Jāde* «չար պառավ» (ՀԱԲ, ՀՄԲ)՝ «կախարդ, դիւթ, վիուկ, խաբեպատիր (այր կամ կին) (ՆՀԲ, 2, 671), «կիւս, խաբեբայ՝ կախարդի պէս, եւ կախարդ»¹⁹:

Օրինակ՝ «...դու այնպիսոյ անյարիր ջտուկ Մահու ծնգեցեալ չարաշուք առն ողորմեցար»²⁰:

ՆՀԲ-ն *ջատուկ*-ից կազմված բառեր չի վկայում:

ՀԲԲ-ում բառն ունի երկրորդ իմաստ՝ «կախարդանք, կախարդելու գործը» (հմմտ. *Նրան ջատու են արել*), ԱՀԲԲ-ում եւ ԺՀԼԲԲ-ում *ջատուկ* գլխաբառի բացատրությունը հղված է *ջադու* գլխաբառին՝ «կախարդ, կախարդություն. փխբ. Ճիվաղաբարո կին» (ԱՀԲԲ, 1235), «բրբ. «կախարդ», 2. փխբ. «կախարդանման, չար » (ԺՀԼԲԲ, 4, 224):

¹⁶ **Ագաթանգեղոս**, պատմություն հայոց, Տիֆլիս, 1909, էջ 109:

¹⁷ Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն հայոց, Տիֆլիս, 1904, էջ 81:

¹⁸ Լ. Հովհաննիսյան, Հայերենի իրանական փոխառությունները, Երևան, 1990, էջ 226:

¹⁹ Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1865, էջ 704:

²⁰ Գ. Նարեկացի, Մատենան ողբերգութեան, Պուլկոս Այրէս, 1948, էջ 144:

Բառը ժողովրդախոսակցական լեզվում եւ բարբառներում *ջաղու* տարբերակով է, Կարնո բարբառում՝ *ջաղի դառե* «կախարդ կին»: Բարբառներում այս արմատով հանդիպում են *ջաղուբազ* (ջաղոբազ, ջատուպազ ջատըպազ)՝ «կախարդ, վիուկ», *ջաղուբազություն* (ջաղոբազություն)՝ «կախարդություն», *ջաղուվանալ* «խորամանկանալ» (Ղարաբաղի բարբառ), *ջաղուքար*, *ջաղուքյար* (ջատուքար)՝ «1. կախարդ, վիուկ, 2. հրապուրող, թովիչ կին, 3. անզգամ, կապը կտրած կին»²¹ բառերը: Ժողովրդախոսակցական լեզվում ունի վիրավորական, անարգական երանգ:

Վիուկ: Բառն ստուգաբանված չէ: Գ. Ջահուկյանը հավանական է համարում փոխառություն իրանական աղբյուրից²²: Բաղադրություններ՝ *վիկահարցուկ*, *վիկություն*: ՆՀԲ-ն մեկնում է. «Կախարդ՝ այր կամ կին. հարցուկ. հմայոթ, որովայնակոչ» (ՆՀԲ, 2, 827): ՀԲԲ-ում վկայված է նաև *վիկուհի* բառը: Աստվածաշնչում բառն ունի 17 վկայություն: Օրինակ՝ «Ձեռտ վիկաց մի երթայցեք» (Ղևտ. ԺԹ. 31), «...վիուկ եւ նշանագետ լինիցի առ զմեռեալս հարցանելոյ... » (Բ Օր. ԺԸ. 11):

Ժամանակակից հայերենում բառն ունեցել է բառիմաստի ընդլայնում. ձեռք է բերել նոր իմաստներ, փոխաբերաբար՝ *ծայրահեղորեն չար՝ հրեշավոր մարդ* (առավելապես՝ կանանց մասին) (ԱՀԲԲ, 1395): Բաղադրվել են նոր բառեր՝ *վիուկանման*, *վիուկորդի*: Ընդ որում, *վիուկորդի*-ն իր հիմնական իմաստին զուգահեռ ունի փոխաբերական գործածություն՝ «վիուկի ծնունդ, չարի մարմնացում» (ն.տ.):

ՀԼԲԲ-ում բառն արձանագրված չէ:

Կախարդ- հմայք- ջատուկ- վիուկ համանիշային շարքում հիմնաբառը *կախարդ*-ն է: *Կախարդ*-ով ժամանակակից հայերենում կազմված է 30, *հմայք*-ով՝ 22, *ջատուկ*-ով՝ 4, *վիուկ*-ով 3 բառ (ԱՀԲԲ):

²¹ Հայոց լեզվի բարբառային բառարան (այսուհետև՝ ՀԼԲԲ), հ. Ե, Երևան, 2005, էջ 144-145:

²² Տե՛ս ՀՄԲ, էջ 713:

Հիմնաբառեր: զրադաշտականություն, փոխառություն, միջին պարսկերեն, իմաստափոխություն, գրաբար, աշխարհաբար, բարբառ:

Հին շրջանում հայերենը ամենաշատ փոխառություններ կատարել է իրանական լեզուներից, որոնց ստվար մասը՝ միջին իրանական փուլում՝ մ.թ.ա. 4-3-ից մինչև մ.թ. 10-րդ դդ., հատկապես՝ մ.թ.ա. 1-ից - մ.թ. 1-ին դդ.: Իրանական 1400-ից ավելի փոխառություններից կրոնին վերաբերող բառերը կազմում են դրանց մոտավորապես 4,3 տոկոսը՝ մոտավորապես 60 բառ. ընդ որում, դրանցից 18-ը վերաբերում են իրանական հին կրոնին՝ զրադաշտականությանը:

Իրանական լեզուներից փոխառյալ կրոնական բնույթի բառերի մի մասը ենթարկվել է իմաստափոխության, մյուս մասը դուրս է եկել գործածությունից և դարձել հնաբանություն, մի մասն էլ ամրակայվել է հայերնում և դարձել բառապաշարի գործուն անդամ:

Անդրադառնանք իրանական լեզուներից փոխառյալ «նուէր» և «պաշտել» բառերին:

Նուէր: Միջին պարսկերեն *nivēd* բառն է, որ Ավեստայի²⁴ միջին պարսկերեն (պահլավերեն) թարգմանության մեջ գործածված է *nivedēnēm* ձևով «ձօնեմ, սրբագործեմ, նուիրագորեմ (զոհ կամ աղօթք)»: Ծագում է *ni* մասնիկով և *vaēd* «զիտենալ, ճանաչել» բայից (ՀԱԲ²⁵, 3, 470, ՀՄԲ²⁶, 573): Ուներ «ընծա, տաճարին ընծայված որևէ բան, երախայրիք, պտուղ, զոհ, ձոն, գինու բաժակ կամ իբրև Աստծուն ձոնելու համար կաթեցրած գինի» իմաստները: Վերոնշյալ իմաստերը հատկապես հինկտակարանյան են: Օրինակներ՝ «Եւ առին ի Մովսիսէ զամենայն նուէրսն զոր բերին որդիքն Իսրայելի

²³ Հոդվածը տպագրվել է «Էջմիածին» ամսագրում, Ս. Էջմիածին, 2015, էջ 49-54:

²⁴ Ավեստան զրադաշտականության սուրբ գիրքն է: Այն սկզբնապես եղել է բանավոր ձևով. գրավոր ավանդված է մ.թ.ա. 7-6-րդ դդ. հին իրանական մի լեզվով, որ պայմանականորեն անվանվում է Ավեստայի լեզու (ավեստերեն): Մասանյանների օրոք (3—7-րդ դդ) օրինականացվել է Ավեստայի միջին պարսկերեն (պահլավերեն) տեքստը:

²⁵ Հ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հհ.1-4, Ե., 1971-1979:

²⁶ Գ.Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան (Վ.Մարգարյանի խմբագրությամբ և առաջաբանով) (այսուհետև՝ ՀՄԲ), Ե., 2010:

յամենայն գործ տարագու սրբութեանն առնել զայն», աշխարհաբար՝ «Նրանք Մովսէսից ստացան այն բոլոր նուէրները, որ իսրայէլացիները բերել էին սրբարանը հանդերձաւորելու համար» (Ելք. ԼԶ. 3)²⁷, «Եւ արծաթոյ նուէրք, յանցելոց արանց ժողովրդեանն ի հանդիսի, հարել տաղանդ...», աշխարհաբար՝ «Մարդկանցից հաւաքուած արծաթէ նուէրները կշռում էին հարյուր տաղանդ...» (Ելք. ԼԸ. 25) :

Նուէր արմատից ՆՀԲ-ն²⁸ ունի հետևյալ բառերը՝ *նուիրագործեմ* (օրհնել զնուիրեալն, սրբազանել), *նուիրագործութիւն* (գործ քահանայական), *նուիրակ* (դեսպան հոգևոր), *նուիրական* (սրբազան), *նուիրապետ*, *նուիրակատար*, *նուիրաձիր* («Եկն էհասաւետաւորս տառ՝ տարրական իմն նուիրաձիր» (օրինակը՝ ըստ ՆՀԲ-ի), այսինքն՝ «սրբազան պարզևաց տվող», *նուիրամսակ* (ամսագլուխ), *նուիրան* (տեղի նուիրաց), *նուիրանոց* (անօթ մատուցանելոյ զնուէրս հեղման), *նուիրապետ* (նուիրակապետ), *նուիրատու*, *նուիրատրութիւն*, *նուիրեմ*, *նուիրողական*, *նուիրումն* (ՆՀԲ, 2, 451-452):

Ինչպես տեսնում ենք, հին հայերենում *նուէր* արմատը կենսունակ էր, որի վկայությունը նրանից բաղադրված բառերի քանակն է: Միայն Ասվածաշունչ մատյանում այն ունի 119 կիրառություն²⁹ :

ԱԲ-ն³⁰ *նուէր*-ը բացատրում է որպես «ընծայ Աստուծոյ, նոր պտուղ, սրբազան բան մը, զոհ, յիշատակ» (ԱԲ, 625), Ռ.Ղազարյանի «Գրաբարի բառարանում»³¹՝ նաև «զոհաբերութեան գինարբութիւն» (ԳԲ, 298):

Հին հայերենում *նուէր* բառը համանիշային շարք էր կազմում *ընծայ - ձօն - զոհ - յագ - յաշտ - ողջակէզ - պատարագ* բառերի հետ³²: Այս բառերն ունեին իմաստային-ոճական տարբերություններ, որոնք հետագայում ավելի են խորանում:

Սկզբնապես *նուէր* բառի հիմնական իմաստները առնչվում էին կրոնին և կրոնական տերմինահամակարգի մեջ էին մտնում. հմմտ. զոհ, պատարագ, որ մատուցում

²⁷ Աստուածաշունչ, Ս.Էջմիածին, 1999:

²⁸ Նոր բառգրիք հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ), հհ.1-2, Վենետիկ, 1836-1837:

²⁹ Տե՛ս Համաբարբառ գրաբար Աստվածաշնչի, Հայաստանի աստվածաշնչային ընկերություն, Ս.Էջմիածին, 2012, էջ 1364:

³⁰ Առձեռն բառարան հայկազեան լեզուի (այսուհետև՝ ԱԲ), Վենետիկ, 1865:

³¹ Ռ.Ղազարեան, Գրաբարի բառարան (այսուհետև՝ ԳԲ), Անթիլիաս-Լիբանան, 2004:

³² Գ.Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 397:

էին աստվածներին գինով և յուղով, ինչպէս նաև նվերը մատուցելու ծիսակատարությունը, ինչպէս՝ «Հարկ է և գնոսա ողորբել զոհիւք և նուիրօք»³³ :

Այնուհետև միայն աստվածներին ձոնված *նուէր* բառը կորցնում է իր հիմնական նշանակությունը և պահպանում «ընծա» իմաստը, որն էլ հետագայում դառնում է նրա առաջնային իմաստը՝ «նվիրված իր, առարկա, այն, որ նվիրվում է» (ԱՀԲԲ, 1087): ԱՀԲԲ³⁴-ում *նվէր*–ից կազմված է 45 բառ:

Բարբառներում հանդիպում է *նուէրք* բառը: Ակնի բարբառում ունի «չար աչքից, հիվանդություններից ազատվելու համար եղած կախարդական միջոցները» իմաստը. ըստ Մալխասյանցի՝ «աղջիկներ և տղաներ, որ հեթանոսական տոների ժամանակ իրենց նվիրում էին աստվածներին և անձնատուր էին լինում խառնակ անատակության» (ՀԲԲ³⁵, 3, 483)

Հետևելով *նուէր* (նվեր) բառի պատմական զարգացմանը՝ տեսնում ենք, որ այն իմաստափոխվել է. նրա նախկին՝ հինհայերենյան իմաստները, որոնք վերաբերում էին կրոնին, դուրս են եկել գործածությունից: Նույն գործընթացն է տեղի ունեցել *նուէր* բառից ածանցված *նուիրական* (նվիրական) բառի հետ: Այս բառի իմաստներն էին՝ «1.Տաճարին կամ Աստծուն նվիրված: 2. Նվիրագործված: 3.Սուրբ ավանդ, որ մեկը թողնում է իր հաջորդներին» (ՀԲԲ): Այժմ այդ բոլոր իմաստները հնացած են: Բառը ժամանակակից հայերենում ունի «թանկագին, հարազատ, բաղձալի» իմաստները (ԱՀԲԲ), որոնք պատկանում են չեզոք կամ համագործածական բառերի շերտին: *Նուէր* (նվեր)-ից բաղադրված *նվիրապետություն* բառը «սրբազնագործ եկեղեցականների դասը, հոգևորականություն» իմաստին զուգահեռ ստացել է նոր իմաստ՝ «կրոնական հիերարխիա» :

Նուիրակ (նվիրակ) բառը բառացի նշանակում էր «ծանուցիչ, ազդարարող» (ՆՀԲ): Ինչպէս *նուէր* (նվեր), այնպէս էլ *նուիրակ* բառում գործառական հիմունքով տեղի է ունեցել իմաստափոխություն: *Նուիրակ* բառում առաջնայինը համարվել է «ազդարարելու, հայտնելու» իմաստը: ՀԲԲ-ն այդպէս էլ բացատրում է. «Պաշտօնատար անձ,

³³ Եզնկայ Կողբացոյ Բագրևանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց, Վենետիկ, Ս.Ղազար, էջ 12 (այսուհետև՝ Եզնիկ):

³⁴ Է.Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան (այսուհետև՝ ԱՀԲԲ), Ե., 1976:

³⁵ Ս.Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան (այսուհետև՝ ՀԲԲ), հհ.1-4, Ե., 1944-1945:

որ բարձրաստիճան անձի առջևից գնալով՝ ազդարարում էր նրա գալուստը և ճանապարհի բաց անում» (ՀԲԲ, 3, 483): Ավելի ուշ՝ «պաշտօնեայն եկեղեցական, դեսպան հոգևոր՝ «Ի գալ նուիրակի կաթողիկոսին՝ Կոստանդեայ եպիսկոպոսի» (օրինակը՝ ըստ ՆՀԲ-ի): Այժմ *նվիրակ*-ը բարձրաստիճան հոգևորական է, որ կաթողիկոսի կողմից ուղարկվում է իբրև պատգամավոր օտար երկիր՝ նրա հանձնարարությունները կատարելու, ինչպես նաև դրամական նվերներ հավաքելու համար:

Նվիրակ անվանում են նաև որևէ պետության մեջ Հոռմի պապի դեսպանին (լեզատ):

Նվիրյալ (նվիրեալ)բառը, ժամանակակից հայերենում «որևէ գործի անձնագոհորեն նվիրված մարդ» իմաստից բացի, ունի կրոնական «որևէ ուխտի՝ դավանանքի նվիրված մարդ» իմաստը (ԱՀԲԲ):

Միջին պարսկերենից փոխառյալ *նուէր* բառի հինհայերենյան առաջնային (դոմինանտ) կրոնական նշանակությունը այժմ չի գիտակցվում, մինչդեռ նրանից բաղադրված որոշ բառերում պահպանվել է կրոնական իմաստը, ինչպես՝ *նվիրաբերություն*՝ «գոհաբերություն», *նվիրագործել*՝ «աղոթքով օրհնել», *նվիրապետ*՝ «քահանայապետ», *նվիրապետություն*՝ «հոգևորականություն, կրոնական հերարխիա» և այլն:

Ժամանակակից պարսկերենում «նվեր» իմաստով գործածվում են այլ բառեր՝ *հադիյէ*(hadiyē), *թոհվէ*(tohvē) , *բախշէ*(baxšēš) բառերը :

Պաշտ(եմ): Այս արմատը իրանական *pari-štā՝ «պաշտամունք»-ից է, որ բառացի նշանակում է «շուրջը կանգնել». սրանից է պրսկ. Parastīdan «պաշտել» բայը (ՀԱԲ, 4, 24, ՀՄԲ, 621): *Պաշտ* արմատի նախնական ձևը *պարիշտ*-ն է, որ կա մի շարք բառերում՝ *ամբարիշտ* (ան-պարիշտ՝ պաշտամունք, կրոն չունեցող), *բարեպարիշտ*, *բերանպարիշտ* (մատովակ)՝ (Բ Մնաց. Թ. 4), *դժպարիշտ*, *գրապարիշտ*, *կռապարիշտ*, *մարդապարիշտ*. հմմտ. «Թէպետ և կանխաւ գիտէ Աստուած՝ թէ ոմն կռապարիշտ լինելոց է... ոչ արգելու...» (Եզնիկ, 12):

Պարիշտ>պաշտ անցումը կատարվել է հետևյալ ձևով. *պարիշտել* բայի անշեշտ *ի* -ն դուրս է ընկել՝ դառնալով *պարշտել*, ապա *ր* -ի անկումով՝ *պաշտ* (ՀԱԲ), որից էլ կազմվել են *դիւապաշտ* (Եզնիկ), *լուսնապաշտ* (Եզնիկ), *հեշմակապաշտ* (Եզնիկ), *ուրուապաշտ* (Ագաթ.) բառերը և այլն:

Հայերենը պահպանել է *պաշտ* բառի իրանյան հին ձևը *š/ž* բաղաձայնով, մինչդեռ նոր պարսկերենում տեղի է ունեցել *š-s* անցում, որ տարածված երևույթ է պարսկերենում՝ *parastīdan* «պաշտել»³⁶ :

Պաշտեմ բայի առաջնային իմաստներն էին «կրօնասիրութեամբ մեծարել զԱստուած, յարգել զնա երկրպագութեամբ, պատարագօք, պաղատանօք, և մանաւանդ հաւատարիմ և վայելչական ծառայութեամբ»՝ «Եւ է պաշտելն ծառայութեան անուն» (ՆՀԲ, 2, 597): Երբեմն ասում են «սպաս տանել ի տանն Աստուծոյ, առնել զգործս կրօնի» (ն. տ.): ՀԲԲ-ում բառի առաջնային իմաստը «սպասաւորել, ծառայել»-ն է, ունի նաև «կրօնական պարտականություններ կատարել, Աստծուն ծառայել» (ՀԲԲ, 4, 49), ԱՀԲԲ-ում՝ «երկրագել, կրօնական պաշտամունք կատարել», նաև փոխաբերական «անչափ սիրել, մեծարել, աստվածացնել» իմաստները (ԱՀԲԲ, 1180):

Պաշտ արմատից է ածանցված *պաշտօն(պաշտոն)* բառը, որի հիմնական իմաստները հին հայերենում կրոնական էին՝ «բարեկրօն ծառայութիւն, կրօնք, կարգ» և այլն (ՆՀԲ, 2, 598): Այս բառի գրաբարյան հոգնակի ուղղական հոլովը «պաշտամունք»-ն է՝ «աստուածապաշտութեան կարգ, որ կատարվում է եկեղեցում», «կրօնական յարգանք, երկրպագութիւն» (ՀԲԲ, 4, 49), միջին հայերենում՝ «պաշտմունք» (ՄՀԲ³⁷, 2, 263):

ՆՀԲ-ում «պաշտամունք» գլխաբառի բացատրությունը հղվում է «պաշտօն» բառին (տե՛ս ՆՀԲ, 2, 597):

Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ում կան *պաշտօն առեալ, պաշտօն հարկանել, պաշտօն մատուցանել, պաշտօն տանել* կապակցությունները, բոլորն էլ՝ կրոնական նշանակությամբ, ինչպես՝ «Ի պաշտօն առեալ երկիր պագանիցէ իբր Աստուծոյ» (Եզնիկ, 39), «Արարածոց պաշտօն մատուցանւոյ վարդապետ այլ ոք չէր, բայց միայն սատանայ» (Եզնիկ, 109):

Միջին հայերենում կար *պաշտօներգութիւն* բառը՝ «ժամերգություն» (ՄՀԲ, 2, 263):

³⁶ Տե՛ս Հայերենից պարսկերեն բառարան, Թեհրան, 1972, էջ 530. կազմեց՝ Վարդան Յարութիւնեան:

³⁷ Ռ.Ղազարյան., Հ.Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, հհ.1-2, Ե., 1987-1992:

Լ.Հովհաննիսյանի «Գրաբարի բառարանում»³⁸ *պաշտօն*-ից են *պաշտօնատեղ*՝ «սպասավորելու, կրոնական արարողությունների տեղ», *պաշտօնիկ*՝ «ծառայող, սպասվորող» բառերը, Ս.Էլոյանի «Նորաբանությունների բառարանում»՝ *պաշտոնաբաղձ*, *պաշտոնաբեմ*, *պաշտոնասանդուղք*, *պաշտոնավաճառություն*³⁹ և այլն :

Բարբառներում կան *պաշտոն-պատարագ* (Արարատյան, Մուշ) և *պաշտում-պատարագ* (Թբիլիսի, Ղարաբաղ, Կարին) բառերը՝ «ժամերգություն, պատարագ» իմաստով, *պաշտումահաց* բառը Արարատյան և Ղարաբաղի բարբառներում ունի «հոգեհաց, հուղարկավորությունից հետո ննջեցյալի հոգու համար տրվող հացկերույթ» իմաստը՝ «Իրիկույ ժամը որ դուս էկալ....էկան ննջեցելատիրոջ տունը, պաշտումահաց կերան». *պաշտումեց* (պաշտումեց) բառը Արարատյան բարբառում ունի «պատարագիչ քահանային տրվող դրամական նվեր» իմաստը՝ «Իրիկունը որ մթնանում ա, հայր սուրբն էրկու տերտերի ձեռ բռշխաբ (ափսե) ա տալի...որ պաշտումեց հավաքեն»⁴⁰ :

Արդի հայերենում *պաշտոն* բառն ունի բոլորովին այլ իմաստներ, այն է՝ «ծառայություն որևէ հիմնարկում, աշխատանք, պարտականություն, գործառույթ, հաստիք» (ԱՀԲԲ): Ժամանակակից հայերենում *պաշտոն*-ից բաղադրված բառերից ոչ մեկը կրոնական չէ՝ *պաշտոնաբաշխություն*, *պաշտոնագիր*, *պաշտոնագգեստ*, *պաշտոնաթերթ*, *պաշտոնաթող*, *պաշտոնակալ*, *պաշտոնակատար*, *պաշտոնապես*, *պաշտոնավայր*, *պաշտոնավարել* և այլն:

Պաշտոն (*պաշտօն*) բառի «պաշտամունք» իմաստը հնացած է:

Պարսկերենում *պաշտել* (*parastidan*)-ից կազմված են բազմաթիվ բառեր՝ *xodaparast-աստվածապաշտ*, *bodparast-կռապաշտ*, *atešparast-կրակապաշտ*, *dinparast-կրոնասեր* և այլն:

³⁸ Լ. Հովհաննիսյան, Գրաբարի բառարան. Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր, Ե., 2010, էջ 238:

³⁹ Ս. Էլոյան, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Ե., 2002, էջ 390-391:

⁴⁰ Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ե, Ե., 2008, էջ 25:

Միհր-ը կենսատու լույսի, մաքրության, բարության, ավելի ուշ՝ Արեգակի աստվածն է հին արիական ժողովուրդների կրոններում: Ըստ առասպելի՝ ծնվել է ժայռից (գրադաշտականության մեջ համարվում է Արամազդի որդին), կատարել է բազմաթիվ սխրագործություններ՝ հաղթել է Ոսկե ցլին, կռվել չար ոգիների դեմ: Հետո նա համբարձվել է երկինք և այնտեղից վեց հազար աչքերով և նույնքան ականջներով դիտել ու լսել երկրային բարի արարածներին: Ավելի ուշ համարվել է ազատարար և փրկիչ (մեսիա), որն իր երկրորդ գալստյամբ երկիրն ազատելու է չարից և հրով ու կրակով մաքրագործված երկրում Միհրի ահեղ դատաստանին են արժանանալու բոլոր ննջեցյալները: Մ.թ.ա. 4-2-րդ դդ. ձևավորվել է միհրականությունը: Հռոմեական կայսրության մեջ *Միհրի* ծննդյան օրը դեկտեմբերի 25-ն էր՝ ձմեռային արևադարձի օրը (4-րդ դարում փոխվեց Քրիստոսի ծննդյան տոնի)²: *Միհրին* նվիրված տոները կրել են միստերիաների բնույթ, կատարվել են այրային տաճարներում՝ *միթրեաներում*: Ընդ որում, այդ միստերիաներին կարող էին մասնակցել զանազան փորձություններով անցած նվիրյալները. նրանք անցնում են նվիրվելու 7 աստիճան՝ ըստ մոլորակների թվի:

Միհրը հուր երկնայինի՝ արևի ու լույսի և հուր երկրայինի՝ կրակի ու ջերմության աստվածն էր, և ինչպես մյուս արևային աստվածները հնում՝ արդարության և դաշինքի հովանավորը, նաև՝ կրակարանի, ընտանեկան օջախի պահապանը: Ըստ ՆՀԲ-ի³՝ «Միթրոս (Միւթրոս), որ և Միհր՝ Արեգակն, և սէր, օր ուրախութեան» (ՆՀԲ, 2, 275): *Միհր*-ը բացատրվում է՝ <<Արեգակն՝ չաստուած պարսից>: Միհրը, ինչպես նշեցինք, արդարության հովանավորն է, դրա համար երդվում, ուխտ⁴ են անում նրա

¹ Հոդվածը տպագրվել է «Հայերենագիտական 10-րդ միջազգային գիտաժողովի նյութեր» ժողովածուում, Ե., 2015, էջ 272-279:

² Հայկական սովետական հանրագիտարան (այսուհետև՝ ՀՍՀ), հ. 7, Ե., 1981, էջ 550, Գ.Վարդումյան, Ե. Մարգարյան, Կրոնների պատմություն, պրակ Ա, Հին կրոններ, Ե., 2006, էջ 55-56:

³ Նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ), Վենետիկ, 1836-1837:

⁴ Ուխտ բառն ունի «Հաստատուն խօսք, խոստումն երդումով կամ առանց երդման, որ մարդ տալիս է իրեն՝ մի բան կատարելու համար, նաև՝ Աստծու դաշն մարդու հետ (այստեղից՝ Հին ուխտ, Նոր ուխտ),

անունով: Նրա անունով երգվելը, ինչպես երևում է մեր մատենագրական տվյալներից, թերևս Միհր-Արեգակի արդար և արդարադատ լինելու հետ է կապված, որ մինչև հիմա պահպանված է . հմմտ. *հորս արև, մորս արև* և այլն, այն է՝ «Ճիշտ է, ճիշտ եմ ասում»: Հմմտ. նաև Ն. Շնորհալու «Առաւօտ լուսոյ, *արեգակն արդար*, առ իս լոյս ծագեա.. »:

Միհր-ով էին երգվում զրադաշտ պարսիկները, որի մասին բազմիցս վկայում է Եղիշեն՝ «....վասն հասարակաբաշխ առատութեանն և անաչառ մատակարարութեանն անուանեցաւ Միհր աստուած, զի չիք ի նմա նենգութիւն եւ անիմաստութիւն», աշխարհաբար՝ «...և ընդհանուրին բաշխող առատության և անաչառ մատակարարության համար կոչվեց Միհր աստված, որովհետև նրա մեջ չկա նենգություն և անիմաստություն»⁵, «Ի Միհր աստուած երդուալ իմ, խստագոյն ևս խօսիս քան վարդապետսն քո»՝ «Միհր աստուծով եմ երդվում, որ դու ավելի խիստ ես խոսում, քան թե քո ուսուցիչները»⁶, «Եւ քում թագաւորութեանդ ոչ ինչ վնասեսցուք, երդուեալ ի Միհր մեծ աստուած»⁷:

Հայաստանում տարածված է եղել Միհրի պաշտամունքը⁸: Միհրին է նվիրված մեհեկան (միհրական) ամսին (այժմ՝ փետրվարի 14) նշվող տոնակատարությունը, որը համապատասխանեցվել է Տեառնընդառաջին (Տրնդեզ): Տոնի խորհուրդը կրակով սրբազործվելն է, իսկ տոնական խարույկը կոչված է գետինը կրակով ջերմացնելու և տաք օրերի գալուստն արագացնելու: Միհրին է նվիրված Գառնու հեթանոսական Արևի տաճարը (կառուցվել է մ.թ.ա. 1-ին դարում և վարակառուցվել մ.թ. առաջին դարում Տրդատ Առաջին թագավորի օրոք): Տաճարի 24 սյուները խորհրդանշում են օրվա ժամերը:

վանք, մենաստան, սրբի տոն» և այլն (տե՛ս Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ ՀԲԲ), հ.3, էջ 593):

⁵ Եղիշեն, Վարդանի և հայոց պտերագմի մասին, Ե., 1958, էջ 147:

⁶ Ն.տ., էջ 373-374:

⁷ Մովսիսի Խորենացույ Պատմութիւն հայոց, Տփղիս, 1913, էջ 276:

⁸ Կարծում ենք՝ նախքան իրանական Միհրի պաշտամունքի տարածումը Հայաստանում եղել է արևի պաշտամունք, որի մասին վկայում են բանահյուսական տվյալները: Այսպես, Վանում և շրջակայքում տարածված այն սովորությունը, երբ նորապսակները ամուսնության հաջորդ օրը բարձրանում էին տան կտուրը և ողջունում արևին՝ *էգ, բարև, այ էգ բարև, էգն արևուն տանք բարև*. (Էքպարեվ (ՎՆ.)՝ «այգբարև՝ ամուսնության հաջորդ առավոտյան նորապսակ գույգի կտուր բարձրանալը և նվագածուների ուղեկցությամբ արևին ողջունելը» (ՀԱԲ, 1, 166), նաև՝ մինչև 12-րդ դ. Հայաստանում գոյատևած *արևորդիներ* կոչված աղանդը, որը հեթանոսական արևապաշտության մնացուկ էր:

Մ.թ.ա. 9-7-րդ դդ. Վանի կամ Արարատյան թագավորության դիցարանը մեզ է հասել *Մհերի դուռ* ժայռախորշի սեպագիր արձանագրությունից՝ ավելի քան 70 դիցանվան և զոհակենդանիների (այծ, ցուլ, կով, ոչխար) նշումով:

Միհրականությունը 4-րդ դարից իր տեղը զիջում է քրիստոնեությանը: Վերջինս ներառում է միհրականության որոշ տարրեր:

Հայերենում Միհր անվան տարբերակներն են *Միթեր, Միթր, Միրհ, Միր, Մեհեր, Մհեր: Միհր* անվանն են աղերսվում հայկական էպոսի հերոսներ *Մեծ Մհերի* և *Փոքր Մհերի անունները*: Նրանք իրենց սխրանքներում նմանվում են Միհրին, ինչպես՝ Մեծ Մհերը սպանում է առյուծին (զրադաշտականության մեջ առյուծը հզորության և սրբազան կրակի խորհրդանիշն է), Փոքր Մհերը դուրս է գալու Վանա Ագռավաքարից (ագռավը կրակը պաշտպանող սրբազան թռչունն է (հմմտ. «Բոլ է ման գաս վեր աշխարքին. Քո տեղ Ագռավու քարն է»)⁹: Հայկական էպոսում Փոքր Մհերի՝ Ագռավաքարում փակվելու հանգամանքը թերևս ինչ-որ չափով աղերսվում է միհրական ծեսերի՝ ժայռախորշերում կամ քարանձավներում կատարելու սովորույթին, իսկ այն, որ նա տարին մեկ դուրս է գալիս Ագռավաքարից, թերևս, մեռնող և հարություն առնող բնության հետ.

«Կ'ասեն՝ տարին էրկու անգամ

Էդ քար իրարուց կը բացվի.

Մեկ անգամ Վարդևորին,

Մեկ անգամ՝ Համբարձման:

Որ քար կը բացվի, Մհեր՝

Քառսուն ավուր ճամփա մեկ ժամվա կ'երթա.

Քառսուն օր վեր քարերին կ'երթա,

Ինչ հողի վերան ընկնի՝ ձին կը խանդկի,

Չը կարնա քելի, ետ կը դառնա»¹⁰:

Միհր¹¹ աստծու անունից է *մեհեան* բառը. ծագում է. հս.. պահլ. meh ձևից (իրական գրականության մեջ անվանվում է «դար ի միհր՝ Միհրի դուռ». հմմտ. Վանի *Մհերի դուռ* կոչված քարաժայռը, որտեղ փակված է Փոքր Մհերը): Գ. Զահուկյանը

⁹ Սասունցի Դավիթ, Հայկական ժողովրդական էպոս, Ե., 1939, էջ 556:

¹⁰ Ն.տ., էջ 558:

¹¹ Հմմտ. միջին պարսկերեն մեհեկան ամսի անվանումը (հայկական տոմարի 7-ր ամիսը), երբ կատարվում է էր մեծ տոն ի պատիվ Միհրի, և ամիսն էլ կրում էր նրա անունը:

բառը համարում է իրանական փոխառություն՝ *mehyān* (< **mihrakān*) միհրական, միհր աստծուն նվիրված» (ՀՄԲ¹², 521, Ջահուկյան¹³, 1987, 534): Դ.Ալիշանը բառի ծագման համար ավելի հավանական է համարում պարսկ. *մահ, լուսնի մահիկ* բառերը¹⁴: *Մեհեան*-ն ուներ «Տուն կռոց, տաճար հեթանոսաց, տեղի՝ դից նուիրական» (ՆՀԲ, 2, 245), ըստ ԱԲ-¹⁵ի՝ «Կռատուն, կռուքի սեղան, ճշմարիտ Աստուծոյ սեղան», նեղ իմաստով՝ «բազին, զոհարան» իմաստները: ՀԲԲ-ում բառը բազմիմաստ է՝ «1. Սկզբնապես՝ Միհրի պաշտամունքին նուիրված տաճար, ատրուշան, կրակատուն: 2. Ընդհանրապես՝ հեթանոսների կրոնական պաշտամունքի տաճար: 3. Կռուք, հեթանոսական աստծու արձան զանազան նյութերից: 5. Փոքրիկ արծաթե արձանիկ, որ ներկայացնում էր Արտեմիս աստվածուհին, և որը կրում էին գլխարկների վրայ կամ կախում էին վզերից»¹⁶ (ՀԲԲ, 3, 298):

Մեհյան սկզբնապես անվանվել են *Միհր* աստծուն նվիրված տաճարները, սակայն հետագայում բառիմաստի ընդլայնմամբ բառը ձեռք է բերել «հեթանոսական տաճար» ընդհանուր անվանումը: *Մեհյան-ով են բաղադրված հետևյալ տեղանունները՝ Մեհենագյուղ, որ, ըստ ՏԲ-ի, գտնվել է Մեծ Հայքի Տարոն գավառում (հիշատակում է Մ.Անեցին՝ 12-րդ դ.), Մեհենակերտ՝ Մեծ Հայքի Գուգարք աշխարհի Տաշիր գավառում (հիշատակում է Ուխտանես Պատմիչը՝ 10-րդ դ.)*¹⁷: Արդի հայերենում *մեհյան* բառն ունի «հեթանոսական տաճար, կրակատուն» իմաստները (ԱՀԲԲ¹⁸, 992, ԺՀԼԲԲ¹⁹, 3, 511):

Ժողովրդին հարազատ է եղել *մեհեան բառը*, որի վկայությունը դրանից կազմված հինհայերենյան բազմաթիվ բառերն են՝ *մեհենաբարձ, մեհենագիրք, մեհենագարդ, մեհենագերծ, մեհենակապուտ* (մեհյանի նվիրական իրերը գողացող) *մեհենակալ* (մեհյանի վերակացու), *մեհենաշէն, մեհենատեղի* (ՆՀԲ): Օրինակ՝ «...ուր նշանօքն եղելօք կործանեցան բազինք *մեհենիցն* յայնժամ»²⁰, «Եւ յաճախ ակն աղբերն ի ներքոյ սարաբարձր *մեհենատեղւոյն* Հերակլայ»²¹: Միհր-ով են կազմված հետևյալ արական՝

¹² Գ.Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան (այսուհետև՝ ՀՄԲ), Ե., 2010:

¹³ Գ.Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987:

¹⁴ Դ.Ալիշան, Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Ե., 2002, էջ 214:

¹⁵ Առձեռն բառարան հայկազեան լեզուի, Վենետիկ, 1865:

¹⁶ Ս. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 3, Ե., 1944-1945, էջ 298:

¹⁷ Տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան (այսուհետև՝ ՏԲ), հ.4, էջ 777:

¹⁸ Էդ.Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976:

¹⁹ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Ե., 1969-1981:

²⁰ Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն հայոց, Ս.Պետերբուրգ, 1883, էջ 7:

²¹ Նույն տեղում, էջ 33:

Միհրան, Միհրբարզան (ըստ Միհրի գործող), *Միհրդատ* (Միհրի տված, հմմտ. Աստվածատուր), *Միհրիար* (Միհրի բարեկամը), *Միհրշապուհ, Միհրու* և իգական՝ *Միհրիբան, Միհրանյշ* անձնանունները²²:

Միհր-ով բաղադրված է *Վաստմիհր* բառը:

Վաստմիհր-ը, ըստ ՀԱԲ²³-ի, «վատշուէր, գէշ» իմաստով, գործածված է Թովմա Արծրունու «Պատմութիւն»-ում (Պետերբուրգ, 1887, էջ 244): Օրինակը հետևյալն է. «Նորումն Նաբուգարդան կամ Զամբի յայտնեալ ի յաղանդոյն Նեստորի, երեքշվառեան վատաշուէր, *վաստմիհր*»:

Թ.Արծրունու «Պատմութեան» մեջ պատմվում է մի սովորական խաչագողության մասին: Մի նեստորական մտնում է Ոստանի եկեղեցին, գողանում խաչը և փախչում. Ճանապարհին նա այսահարվում է, գլորվում գառիվայրից և մեռնում: Պատմագիրը հայհոյում է նրան՝ համեմատելով հինկտակարանյան չարագործների հետ, այլև որպես ամենագազրելի պիտակ և խիստ վիրավորական ու նախատական բառ՝ գործածում է *վաստմիհր բառը* (հմմտ. չարյուլիանոս): Խոսքը հռոմեական կայսր Հուլիանոս Ուրացողի մասին է, որ հայտնի է քրիստոնյաների նկատմամբ դաժան հալածանքներով. նա փորձել է վերականգնել հեթանոսությունը, իշխանությունից հեռացրել է քրիստոնյաներին: Քրիստոնեական եկեղեցին նրան անվանել է «Ուրացող»²⁴: Հայ ժողովուրդը Հուլիանոս անվանը ավելացնելով *չար* որոշիչը, ստեղծել է *չարյուլիանոս* բառը, որ հայերենի մի քանի բարբառներում կանայք գործածում էին իրենց չար երեխաներին նախատելու համար²⁵: Նույն գործընթացն է տեղի ունեցել *վաստմիհր* բառի դեպքում: Քրիստոնեության մուտքով Միհր Արեգակ-աստվածը ստանում է «վատ» որոշիչը և գործածվում որպես անարգական, վիրավորական բառ: Աճառյանը համարում է նորագյուտ բառ: Կազմված է *վատ + Միհր* աստծու անունից: Միհրը արևի, լույսի, կրակի աստվածն էր միհրապաշտների մոտ: Սակայն այդպես չէր կարող լինել քրիստոնեության ժամանակ: Գաղափարախոսության փոփոխության հետևանքով հին աստվածները նսեմանում են: Նույնը տեսնում ենք հայկական էպոսում: Մեծ Միհրը դիվացման հետևանքով դառնում է անիծված Փոքր Միհր: Նրան անիծում է հայրը՝

²² **Հ.Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հ.3, Ե., 1942, էջ 332-334:

²³ **Հ.Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, հ. 4, Ե., 1979, էջ 312:

²⁴ ՀՄՀ, հ. 6, էջ 636:

²⁵ «Էս տղեն ընենց չար յուլիանոսն ա, որ էլ չէլած»: Տե՛ս Սահակ վրդ. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 540:

Դավիթը. «Մհեր, դու ինձի հետ կռիվ արիր, Ինձի ամաչեցրիր, կանչեր եմ քաղցրիկ աստված, անմահ ըլնիս, անժառանգ»²⁶: Իմաստային անցումը կատարվել է այդպես: Ինչպես նկատել է Մ.Աբեղյանը, Առյուծաձև Մհերի և Փոքր Մհերի զրույցները միևնույն զրույցի տարբեր գլուխներն են: Մեծ Մհերը բարի է. նա չունի դիվական գծեր, սակայն Փոքր Մհերն արդեն բնավորության երկվորյուն ունի. կռվում է հոր հետ, նախանձում նրան, հայրը՝ Դավիթը, անիծում է նրան, և Մհերը փակվում է քարայրի մեջ՝ Ագռավաքարում (Ակոփու քար, Վանա քար), և հուր-արև Միհր-Մհերը այնտեղ պետք է մնա մինչև աշխարհի վերջը. «Որ աշխարք ավերվի, մեկ էլ շինվի, Եբոր ցորեն էղավ քանց մասուր մի, Ու գարին էղավ քանց ընկուզ մի, Էն ժամանակ հրամանք կա, որ էլենք էդտեղեն»²⁷:

Բառիմաստների փոփոխությունը կատարվում է դանդաղ և աստիճանաբար: Սակայն գաղափարախոսության փոփոխության հետևանքով կատարված իմաստափոխությունները կատարվում են համեմատաբար արագ, մանավանդ եթե նպատակաուղղված են հին գաղափարախոսությունը մոռացության տալուն: Բառին ավելացնելով որևէ բաղադրիչ կամ ժխտական մասնիկ՝ կազմվում է նոր բառ, որն ազդում են ոչ միայն մարդու գիտակցության, այլև ենթագիտակցության վրա. հմմտ. *չարյուլիանոս, վատմիհր, չ ժխտական մասնիկով կազմված՝ չքահանա, չաստված, խաբեղա* (այսինքն՝ խաբող աբեղա) և այլն:

²⁶ Սասունցի Դավիթ, Հայկական ժողովրդական էպոս, էջ 517:

²⁷ Ն.Տ., էջ 318:

**ԼԵԶՎԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ՄԻ ՔԱՆԻ ԱՐԴԻԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ¹**

Մարգարյան Նվեր

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
ավագ գիտաշխատող, բ.գ.թ.

Լեզվի և այն կրող հանրության միջև գոյություն ունեցող փոխհարաբերություններն առնչվում են տեսական ու գործնական նշանակության տարատեսակ, տարաբնույթ մի շարք հարցերի ու ոլորտների, որոնցից ժամանակակից լեզվաբանությունն առանձնացնում է հատկապես լեզվաքաղաքականությունը, լեզվի կանոնարկումն ու լեզվաշինությունը (այս վերջին տերմինը գիտական լայն շրջանառության մեջ է դրվել խորհրդային լեզվաբանության կողմից, և շատերը, չգիտես ինչու, անպայման ուզում են փոխած լինել, բայց դեռևս ավելի հարմար մի տարբերակ չի առաջադրվել):

Այս բնագավառներից յուրաքանչյուրը սահմանազատվում է, տարբերվում է մյուսներից, ունի իր կոնկրետ խնդիրներն ու նպատակները, ուղղվածությունն ու մեթոդները: Բայց դրանք անջրպետված չեն, բավականաչափ շատ են նաև ընդհանրություններն ու նմանությունները, հաճախ նրանք գործում են համակցված, պայմանավորված են միմյանցով և միասնաբար են ապահովում հասարակության կողմից լեզվի կառուցվածքի ու գործառության, նրա զարգացման, ձևավորվող դրական ու բացասական միտումների, ուսուցման, կատարելագործման ու հարստացման, այլ լեզուների հետ ունեցած հարաբերությունների, լեզվի գործառությոնների ընդարձակման կամ նվազեցման և բազմաթիվ ուրիշ երևույթների նկատմամբ հսկողությունը, նրա ընթացքին միջամտելը կամ ներգործելը: Ընդ որում, հասարակության կողմից լեզվի վրա ունեցած ազդեցության չափն էլ լեզվի կառուցվածքի տարբեր մակարդակներում կարող է տարբեր լինել. օրինակ, բնական է, որ բառապաշարում, հատկապես տերմինաբանության մեջ, այն բավականաչափ զգալի է, մեծ շրջանակներ է ընդգրկում, իսկ որոշ դեպքերում նույնիսկ «պարտադրված» անհրաժեշտություն կարող է դառնալ, մինչդեռ հնչյունաբանության, քերականության մեջ այդքան գործուն չէ, համեմատաբար քիչ նշանակություն ու արժեք ունի: Այդ ազդեցությունը կարող է տարբեր ուղղվածություն ունենալ ոչ միայն

¹ Հոդվածը տպագրվել է «Գիտական հոդվածների ժողովածու»-ում (Հ. Աճառյանի 140-ամյակին նվիրված), Ե., 2016, էջ 314-327:

լեզվի գոյության տարբեր փուլերում, այլև նույն փուլի տարբեր ժամանակահատվածներում, տարբեր ենթափուլերում: Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում մեր հասարակական, քաղաքական, տնտեսական, գիտական, մշակութային կյանքում և այլ ոլորտներում տեղի ունեցած կտրուկ փոփոխությունների ու տեղաշարժերի արդյունքում ձևավորվել են նաև լեզվական տարատեսակ ազդեցություններ, որոնք ոչ միայն նկատելի են, այլև կարող են առաջացնել բացասական շատ հետևանքներ: Ուստի դրանք չի կարելի թողնել անվերահսկելի, որն էլ այդ բնագավառում եղած կամ նոր ծագած խնդիրների հիմնավոր ուսումնասիրության, քննության պահանջ է դնում: Այդ է պատճառը, որ վերջին տարիներին լեզվական հարցերում բավականաչափ մեծ ակտիվություն են դրսևորում ինչպես մասնագետները, այնպես էլ շահագրգիռ շատ անձինք, կազմակերպություններ, գերատեսչություններ, կուսակցություններ ու պետական առանձին հիմնարկություններ: Այս հարցում թերևս հարկ կա պետական համապատասխան մարմինների կողքին նշելու Սփյուռքի նախարարության խրախուսելի գործունեության մասին, որը ոչ միայն հանդես եկավ ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ փետրվարի 21-ը Մայրենի լեզվի միջազգային օր հայտարարելու նախաձեռնությունը մեզանում ևս իրականություն դարձնելու առաջարկությամբ, այլև պարբերաբար կազմակերպում է քննարկումներ, գիտաժողովներ, զանազան միջոցառումներ, դրամաշնորհներ հատկացնելով՝ նպաստում է գրքերի, ժողովածուների տպագրությանը: ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հետ հրատարակած ժողովածուն, օրինակ, առայժմ իր տեսակի մեջ մնում է ամենից ավելի բազմաբնույթն ու ընդգրկունը², որի երկու տասնյակից ավելի հեղինակները տարբեր կողմերից դիտարկում են արդի լեզվաքաղաքականության բազմաթիվ խնդիրներ ու հարցեր:

Եվ ընդհանրապես, ամեննին չի կարելի ասել կամ պնդել, թե մեզանում լեզվաքաղաքականության, լեզվաշինության, կանոնարկման, լեզվի և հասարակության հարաբերության, ինչպես նաև այլ հարցեր ուշադրությունից դուրս են մնացել կամ դրանց ուղղությամբ աշխատանքներ չեն տարվում. կան համապատասխան մարմիններ, օրենքներ ու օրենսդրական ակտեր, կատարվում են տարաբնույթ աշխատանքներ, կազմակերպվում են տարբեր նշանակության միջոցառումներ, իրականացվում են զանազան նախագծեր, գրվում են հոդվածներ ու ատենախոսություններ, տպագրվում

² Տե՛ս «Արդի լեզվաքաղաքականության խնդիրներ» ժողովածուն, Ե., 2013:

մենագրություններ³ և այլն: Ամբողջ հարցն այն է, թե արվածը որքանով է նպատակա-
ւալաց ու արդյունավետ և բավարար է արդյոք:

Միանգամայն դիպուկ է Ա. Սարգսյանի բնորոշումը, որ արդի հասարակությունը
լեզվաքաղաքականության գիտական մակարդակով մշակման սուր պահանջ է զգում
լեզվաշինության հստակ սկզբունքների որդեգրմամբ առաջնահերթ այնպիսի խնդիր-
ների լուծման համար, որոնք կարևոր են ինչպես լեզվաբանության, այնպես էլ ուրիշ
գիտությունների դիտակետից⁴:

Իր հոդվածներից մեկում, վերլուծելով միջազգային լեզվական քաղաքականու-
թյան սկզբունքներն ու հիմնական ուղղությունները, գործառույթների և խնդիրների ողջ
բազմազանության պայմաններում առանձնացնելով արդի պետությունների կողմից
իրականացվող լեզվաքաղաքականության երեք հիմնական ոլորտները (պետական
լեզու, կրթության լեզու, ազգային փոքրամասնությունների լեզուներ), Ս. Զոլյանը
փաստում է, որ լեզվի գործառույթը այս կամ այն աստիճանով չի կարող կախված չլինել
վարվող ընդհանուր քաղաքականությունից, ավելին՝ «լեզուն սոցիալական փոխազդե-
ցության, ուստի և ցանկացած քաղաքական գործընթացի լեզվաբանական բաղադրիչ է,
անգամ նույնիսկ չգիտակցված»⁵: Իսկ նույն գրքում տպագրած «Հայաստանի լեզվական
իրավիճակը և ՀՀ լեզվական քաղաքականությունը» հոդվածում կատարում է հետևյալ
ամփոփումը. «ՀՀ լեզվական քաղաքականության ռազմավարական նպատակն է՝
ստեղծել հասարակություն, որտեղ ապահովված լինի հայերենի բնականոն զարգա-
ցումը և համընդհանուր լիարժեք իմացությունը, պահպանվեն և զարգանան ազգային
փոքրամասնությունների լեզուները, և քաղաքացիները տիրապետեն առնվազն երկու
օտար լեզուների: Լինելով միալեզու պետություն՝ Հայաստանը ձգտում է դրա հետ
մեկտեղ լինել բազմալեզու հասարակություն»⁶:

Ինչ վերաբերում է կանոնարկմանը՝ այն նույնպես լեզվի և հասարակության
հարաբերությունների ընդարձակ մի դաշտ է գիտական ու գործնական-կազմակերպ-

³ Նշենք միայն մի քանիսը. **Ե. Գևորգյան, Ս. Գևորգյան**, Հեռուստատաղիոթեր. լեզվական մեղանչում-
ներից մինչև անաղարտություն, Ե., 2010, Խ. Բաղիկյան, Ճիշտ խոսենք հայերեն, Ե., 2012, **Վ. Միրզոյան**,
Հայերենը՝ անաղարտ, Ե., 2013, **Գ. Գևորգյան**, Լեզվագործածության սխալներ գրական արևելահայերե-
նում, Ե., 2015:

⁴ **Ա. Ե. Սարգսյան**, Հանրալեզվաբանության դասընթաց, Ա պրակ, Ե., 2002, էջ 6:

⁵ Ա. Ե. Սարգսյան, Հանրալեզվաբանության դասընթաց, Ա պրակ, Ե., 2002, էջ 6:

⁶ Նշվ. աշխ., էջ 49:

չական աշխատանքների, դրանցից բխող գործառույթների իրականացման բաղկացուցիչներով: Ինչպես նշում է Ս. Աբրահամյանը՝ «Կանոնարկումն ունի երկակի խոշոր դեր. այն ա) կարգավորում է հասարակության անդամների ճիշտ ու միասնական հարողակցումը գրական լեզվով, բ) նպաստում է լեզվի կատարելագործմանը, միասնականացմանը, զարգացմանը»⁷: Թվում է, թե այս դեպքում գործ ունենք հարաբերությունների ավելի նեղ շրջանակների հետ, որովհետև կանոնարկումը կատարվում է հիմնականում մասնագետների կողմից, իսկ նրանք հասարակության ընդամենը մի մասն են: Բայց այդ թվացյալ ենթադրությունն իսկույն չքանում է, երբ նկատի ենք ունենում նպատակն ու արդյունքները. կանոնարկումը վերաբերում է ինչպես լեզվին ամբողջությամբ, նրա կառուցվածքի բոլոր օղակներին, այնպես էլ ամբողջ հասարակությանը, նրա բոլոր խավերին ու անհատներին՝ առանց բացառության:

Անկախ ամեն ինչից, որքան էլ փաստենք լեզվաքաղաքականության, լեզվաշինության և կանոնարկման ոլորտներում արվածը, անելիքների պակասություն նույնպես չկա. լեզվի պահպանմանը, զարգացմանը, կատարելագործմանը, լիաժամանակ գործառությանը միտված աշխատանքները պետք է լինեն նույնքան համահունչ, համարժեք ու անընդհատական, որքան բնական ընթացքն ու պայմաններն են, ոչ միայն ետ չպիտի մնալ, այլև ուղղորդել, ճիշտ և նպաստավոր հունի մեջ դնել: Այս առումով է, որ հասարակական գիտակցությունը, զարգացածության ընդհանուր մակադակը, հասարակության կամքը կարող են վճռորոշ դեր ունենալ, այսինքն՝ լեզուն կրող հանրությունն ինչ է ուզում և ինչպես է ուզում, թեև անհարկի, սխալ ու անբնական շատ միջամտությունների հանդեպ լեզուն կարող է որոշակի կայունություն դրսևորել, հլուհնազանդ կամակատար չլինել:

Այնուամենայնիվ փաստն այն է, որ մեր օրերում լեզուհասարակություն փոխհարաբերությունը ներդաշնակ չէ: Տարբեր պատճառներ և դրսևորման տարբեր ձևեր ունեցող այլազան շեղումները պարունակում են թաքուցյալ և անթաքույց վտանգներ, որոնք հղի են անցանկալի խաթարումներով, անդառնալի կորուստներով ու բացասական շատ հետևանքներով: Այդ մասին տարբեր առիթներով իրենց մտաճանապարհներն են հայտնել մերօրյա շատ լեզվաբաններ, գրականագետներ, գրողներ, ուսուցիչներ և

⁷ Ս. Աբրահամյան, Հայոց լեզվի կանոնարկման համակարգի ու ելակետային սկզբունքների մասին, ժող. «Տերմինաբանության և խոսքի մշակույթի հարցեր» 3, Ե., 1988, էջ 5:

մտավորականության այլ ներկայացուցիչներ (Ա. Սարգսյան, Լ. Հովհաննիսյան, Լ. Հովսեփյան, Վ. Համբարձումյան, Ռ. Սաքապետոյան, Յ. Ավետիսյան, Յ. Դավթյան, Լ. Խաչատրյան, Ա. Աբաջյան, Վ. Կատվայան, Դ. Գյուրջինյան, Հ. Զաքարյան, Հ. Չոլաքյան, Ն. Սարգսյան և այլք): Լեզվի և հասարակության փոխհարաբերությանը վերաբերող բազմաթիվ ու բազմատեսակ իրողություններից ընտրենք և համառոտ անդրադառնանք մի քանի արդիական խնդիրների: Հատկապես ուզում ենք առանձնացնել այնպիսիները, որոնք համեմատաբար ավելի սերտ են կապված հասարակության՝ լեզվի նկատմամբ ունեցած վերաբերմունքի հետ:

Իսկ այդ հարցում մեր հասարակությունը տարաշերտ է ու տարափեղկված. մի մասը չգիտի, մի մասը անհրաժեշտ չափով չի տիրապետում լեզվին, մի մասը շատ է կարևորում այն, մի մասը բացարձակ անտարբեր է կամ առնվազն անփույթ և այլն: Բոլոր դեպքերում ակնհայտ է, որ լեզվի դերին ու նշանակությանն առնչվող հայտնի ու պարզ մի շարք ճշմարտությունների հասարակայնորեն գիտակցման մեջ առկա թյուր-ընկալումներն ու թերըմբռնումները մի շարք էլ սխալների ու խեղաթյուրումների տեղիք են տալիս: Դրա լավագույն նմուշ կարող է լինել այն թյուր պատկերացումը, թե իբրև մարդու լեզուն կապ չունի նրա մտավոր կարողությունների, գիտելիքների, զարգացածության ընդհանուր մակարդակի հետ: Սա մոլորություն է, որի պատճառով շատ մասնագետներ տարիներ շարունակ խոսում են, զրույցում, նույնիսկ դասագրքեր կազմում՝ առանց անհրաժեշտ ուշադրություն դարձնելու լեզվական կողմին: Բայց լեզուն կենդանի մարմին է, որի կենսունակությունն ու զարգացումը մեծ չափով պայմանավորված են լիարժեք ու լիաժամանակ գործառությամբ. լեզվի կառուցվածքի որևէ հատվածով չգործառել այն, տվյալ ոլորտում չկիրառել կամ, հարկ եղած դեպքում, չստեղծել համապատասխան լեզվամիջոցները՝ նշանակում է այդ հատվածի չափով արգելակել լեզվի զարգացումը, հիվանդացնել այն: Կարծում ենք՝ հարկ չկա դիմելու լեզվի և մտածողության անանջատ միասնականության մասին գիտական հատուկ բացատրություններին, լեզվի մասին եղած ժողովրդական առածներին ու ասացվածքներին, նշանավոր մարդկանց ասույթներին, պարզապես պետք է ամրակայել հասարակական այն գիտակցությունը, որ ցածր լեզվամշակույթը ամենևին էլ բարձրակարգ մտավոր կարողությունների չափանիշ ու ցուցիչ չէ: Նման մոտեցումն ամրապնդելը պակաս կարևոր չէ, քան լեզվական որևէ նորմի ուսուցումը:

Զանազան կարգի թերըմբռնումներ կան նաև գրական և խոսակցական լեզուները գնահատելու, դրանցից մեկնումեկը որպես հաղորդակցության միջոց ընտրելու հարցում: Ոչ ճիշտ ընկալելով գրական լեզվին տրվող բնութագրություններից մեկը («արհեստական» լեզու է), այդ բառի իմաստն էլ «արհեստական վարդ», «արհեստական մոտեցում» և նմանատիպ այլ կառույցների համաբանությամբ մեկնաբանելով «վատ, շինծու, կեղծ» նշանակությամբ՝ շատ ռադիոհեռուստատեսային ալիքներ հաղորդումները «կենդանի, բնական, աշխույժ ու հետաքրքիր» դարձնելու նպատակով նույնիսկ այն դեպքերում, երբ տվյալ հաղորդման բնույթը պահանջում է ընտրել գրական լեզու, կիրառում են իբր թե «խոսակցական» լեզու՝ մոռանալով, որ «արհեստական»-ը այս դեպքում պարզապես նշանակում է, որ այն մշակված է, կատարելագործված, ու գրական լեզուն էլ որևէ ազգային լեզվի զարգացման ամենաբարձր աստիճանն է: Ցավոք, այս մոտեցումը գործում է նաև թատրոնում, կինոնկարներում, գրականության աշխարհ մտած առանձին հեղինակների ստեղծագործություններում, մերօրյա երգերի տեքստերում, տարբեր պաշտոնյաների խոսքում և այլուր: Ակամա այն տպավորությունն էս ստանում, որ մեր կյանքի համապատասխան ոլորտները նվաճել են ինչ-որ օտարներ և միտումնավոր ոչնչացնում են մեր ոսկեդենիկ լեզուն՝ թուլացնելով մեզ: Նաև ակամա մտահոգվում ես, թե այդպես վարվողները արդյոք, լեզվի դեմ մեղանչելուց բացի, գիտակցում են իրենց տեղն ու դերը, հասկանում են, որ առաջին հերթին հենց իրենք պետք է փայլեցնեն մեր լեզվի նման հզոր գենքը: Տեղին է շեշտել, որ խժալեզուն, ցածր լեզվամշակույթը, անճարակությունն ու անճաշակությունը երբեք էլ չեն եղել և չեն կարող լինել բարձրակարգ գիտություն, մեծ արվեստ, մեծ գրականություն, մեծ մշակույթ ստեղծելու միջոց ու հիմք: Իհարկե, այսօր էլ խիստ տեսանելի է այն խզումը, որ կա մեր բանավոր և գրավոր խոսքի, գրական և խոսակցական լեզուների միջև, որի պատճառներից մեկն այն է, որ «կենդանի լեզվում առկա տեղաշարժերը ոչ բավարար չափով են արձանագրվում գրական լեզվի համակարգում⁸: Մասնագետների կողմից առաջադրված այս առողջ մոտեցումով պետք է լուծել նշված հարցը, ոչ թե մեր ժողովրդին անհարիր, հասարակաբանություններով, գոեհկաբանություններով, բար-

⁸ Թ. Ավետիսյան, Տեղաշարժեր ժամանակակից հայերենի բայի խոնարհման համակարգում, Բանբեր, Հայագիտություն և զուգադրական լեզվաբանություն, 2, Ե., 2012, էջ 33:

բառաբանություններով ու օտարաբանություններով խճողված խժալեզվի տարածումով: Բայց այդ ուղղությամբ էլ աշխատանքները դանդաղ են ընթանում: Շատ նկատված ու բացատրված տեղաշարժեր կան, որոնք այդպես էլ գրական լեզվի համապատասխան օղակներում չեն արձանագրվում⁹:

Գրական հայերենի երկու տարբերակների՝ արևելահայերենի ու արևմտահայերենի փոխհարաբերությունների հարցերը ևս հրատապ են ու ճիշտ լուծումներ պահանջող: Գաղտնիք չէ, որ այսօր էականորեն փոխվել են մեր ժողովրդի քաղաքական ճակատագրի անդրադարձումով առաջացած նույն լեզվի երկու գրական դրսևորումների ոչ միայն գործառության պայմաններն ու հարաբերակցությունը, այլև պահպանության հեռանկարներն ու խնդիրները: Միանգամայն հասկանալի են բարձրաձայնվող մտահոգությունները, կատարվող գիտական մշակումները, արվող գործնական քայլերը: Այդ ընդհանուր հոգածության արտահայտությունն ու առաջնեկներից մեկը պիտի համարել «Արևմտահայերենի արդի վիճակը Սիրիայի հայ համայնքում» ժողովածուն, որում զետեղված են թեման տարբեր կողմերով ներկայացնող հեղինակների (Ռ.Թոխմախյան, Պ.Վարդապետյան, Ս.Տիոյան, Տ.Սաֆարյան, Ա. Քարտաշյան, Հ.Մարաշլյան) ուսումնասիրությունները: Իսկ գրքի համահեղինակ, ԳԱԱ լեզվի ինստիտուտի տնօրեն Վ.Կատվալյանը իր հոդվածում ընդգծում է. «ՀՀ Սփյուռքի նախարարության առաջարկով և ԳԱԱ նախագահության աջակցությամբ 2013թ. ապրիլի հայի Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում ձևավորվեց արևմտահայերենի բաժին, որն իր առջև խնդիր է դրել ձեռնարկել Սփյուռքի լեզվավիճակի համալիր ուսումնասիրություն ու վերլուծություն, նպաստել գրական արևմտահայերենի կանոնարկմանը, ստեղծել արևմտահայերենի ամբողջական բառարան և ալֆաբետիկական քերականություն, կատարել գրական լեզվի երկու ճյուղերի տերմինաբանության և ուղղագրության հարցերի գիտական կանոնարկում, արևելահայերենի և արևմտահայերենի փոխադարձ հարբստացման ուղիների մշակում, նաև իր նպաստը բերել սփյուռքի հետ գիտակրթական կապերի ամրապնդմանը»¹⁰:

⁹ Տե՛ս, օրինակ, Ռ. Սաքապետյան, 2 սոսկածանցավոր բայերը հայերի զարգացման արդի փուլում, Բանբեր, 2, Ե., 1989, Ա. Աբաջյան, Տեղաշարժեր արևելահայերենի սոսկածանցավոր բայերի համակարգում, Զեկուցումների ժողովածու (Հայերենագիտական միջազգային տասներորդ գիտաժողով), Ե., 2015:

¹⁰ Տե՛ս՝ «Արևմտահայերենի արդի վիճակը Սիրիայի հայ համայնքում» ժող., Ե., 2015, էջ 6:

Այս խնդիրների իրականացումը, անշուշտ, կարող է նոր, նպաստավոր պայմաններ ստեղծել, միայն թե արևելահայերենի ու արևմտահայերենի «մերձեցման, միասնականացման» հարցում եղած տարակարծություններն ու տարբերումները չպետք է դառնան խաթարիչ հանգամանք, մոռացության մատնեն հիմնական նպատակը: Շատերը «մերձեցումն» ու «միասնականացումը» համարում են ոչ իրականանալի կամ ընկալում որպես տարբերակներից մեկնումեկի արհեստականորեն դուրս մղում: Սակայն դա չպետք է դարձնել անգործության պատրվակ, ընդհակառակը, պետք է գործել և այսօր իսկ սկսել անել այն, ինչ անհրաժեշտ է, իրատեսական ու հնարավոր: Այդ դեպքում, ինչպես նշում է Դ.Գյուրջինյանը, «Մասնագիտական մոտեցումներից զատ կարևոր են նաև հոգեբանական գործոնների հաշվառումը, լայնախոհությունը, հայության երկու հատվածների ներկայացուցիչների փոխըմբռնումն ու փոխզիջումը: Միայն այս գործոնների հաշվառման հիման վրա կարելի է շոշափելի արդյունքի հասնել»¹¹:

Ավելացնենք, որ միասնականացման հարցի լուծումը պետք է որոնել ու գտնել ոչ միայն եղած նույնություններում ու նմանություններում (նույն լեզվին են պատկանում վերջապես), բառապաշարում ու տերմինահամակարգերում, այլև քերականական, ոճական նորմերին առնչվող տարատեսակ իրողություններում: Արևելահայի ու արևմտահայի ազատ, անկաշկանդ շփումները, տնտեսական, գիտական, մշակութային և այլ հարաբերությունները, փոխադարձ հասկանալիությունը չպետք է շրջափակվեն լեզվական անջրպետով: Ազգապահպանությունը, հայապահպանությունը այսօր առաջին հերթին պետք է դրսևորվեն որպես հայերենապահպանություն:

Հակիրճ դիտարկված թերընկալումներից, թյուրըմբռնումներից բացի՝ այսօր էլ զարմանալիորեն կարիք է զգացվում խոսելու առանձին ծայրահեղ մոտեցումների մասին, որոնք նույնպես վերաբերում են լեզու-հասարակություն, լեզուանհատ, մայրենի լեզու-օտար լեզու փոխհարաբերություններում առկա արդիական խնդիրներին: Խոսքը հայտնի մոլությունների մասին է (մաքրամոլություն, օտարամոլություն): Միթե մեր հասարակության մի խումբ անհատների կամ խավերի վարքի ու գիտակցության մեջ այդպես էլ անհնար է ամրակայել, որ օտարի ամեն ինչը չէ, որ սիրելի է, հարգելի ու

¹¹ Դ. Գյուրջինյան, Արևելահայերենի և արևմտահայերենի տերմինաբանության միասնականացման հիմնահարցը, Բանբեր, Հայագիտություն և զուգադրական լեզվաբանություն, 2, Ե., 2012, էջ 5:

պաշտելի է, արժանի է անպայման ընդօրինակման՝ լինի ավանդույթ, սովորույթ, թե որևէ լեզվական իրողություն: Պիտի մայրենիին տիրապետել, հրաժարվել անհարկի փոխառություններից, օտարաբանություններից, արտաքին անցանկալի ազդեցություններով հագեցած խոսք հնչեցնելուց կամ գրելուց, մանավանդ երբ առկա են նույն միտքը ձևակերպելու հայեցի միջոցները: Մյուս կողմից բոլոր մաքրամոլներին պիտի հորդորել, որ պահանջներում լինեն չափավոր, որ արդի աշխարհում հայերենը չի կարող շրջանցել լեզուների զարգացման արտաքին ուղին ընդհանրապես, այն ունի աղերսներ «պատմության, մշակույթի և ընդհանրապես հասարակության զարգացման հետ՝ նպաստելով նաև ոչ լեզվաբանական խնդիրների լուծմանը»¹²:

Պիտի խոսել նաև այն դեպքերի մասին, երբ մեր նորմերին չհամապատասխանող շեղումի, սխալի հայտնվելը խոսքում փորձում են պատճառաբանել այսինչ կամ այնինչ բառարանում, այս կամ այն նշանավոր, հայտնի անձի լեզվում դրանց կիրառված լինելու փաստով: Այդպես չէ: Հիշենք Թումանյանի նման մեծությանը, որի ստեղծագործություններում հանդիպում ենք մի շարք օտար և բարբառային ձևերի (գյուլլա, ջիգյար, ճոն, վուրդիան վուրդի, գիտեմ ոչ և այլն), հիշենք նրբակերտ Տերյանին, որ բոլորովին էլ համաձայն չէր առանձին բառերի հայերեն թարգմանություններին) կուլտուրա, պեչ, պալտո և այլն), նաև օգտագործում էր մարդոց, իրա և այլ ձևեր, հիշենք մեծ Բաֆֆուն, որի համար նախնորելի էին մարդիկներ, մարդիկներից, մարդիկներով և այլ ձևերը: Կարող ենք հիշել նաև ուրիշների, ուղղակի պիտի կարողանալ տարբերել անհատական, ոճական, ստեղծագործական և այլ նկատառումներով տեղ գտածը ընդհանուր սկզբունքից: Ուղղակի պիտի հիշել, որ անհատի խոսքը (նույնիսկ արդի հայերենի ամրակայման ու զարգացման գործում մեծ դեր կատարած անհատի) հասարակական արժեք է ստանում, խոսքի փաստից լեզվական փաստ է դառնում այն ժամանակ, երբ հանրայնանում է, համընդհանրանում, բարձրանում է կանոնականի աստիճանի: Այս առումով առաջնային անհրաժեշտության են վերածվում ինչպես մի շարք տեսական մշակումների հստակեցումն ու համակարգումը, այնպես էլ գործնական քայլերի կատարումը: Առանց անտեղի զգուշավորության՝ պետք է կատարել լեզու-գիտակցություն, խոսքմտածողություն, նորմ-կանոն, կառուցվածք-կիրառություն

¹² Լ. Հովհաննիսյան, Հայերենի իրանական փոխառությունները, Ե., 1990, էջ 34:

և այս կարգի այլ փոխհարաբերություններին վերաբերող եղած կանոնների, սահմանումների, ձևակերպումների համալրումներ, շտկումներ, համապատասխանեցումներ (հոլովական հերթագայությունների ոչ ճիշտ, ոչ ամբողջական բացատրելը, որոշ միավանկ կամ ոչ միավանկ բառերի հոգնակիի ձևերը բացառություն կամ միակ կանոնական ձև համարելը, առանձին բաղաձայնների ու երկհնչյունների գրային արտասանության դեպքերը հստակ չառանձնացնելը, մի շարք օտար բառերի, հատուկ անունների միայն թեքված ձևերում հայերենի շեշտադրությամբ արտասանելը և այլ հարցեր): Մյուս կողմից էլ պետք է արդյունավետ զբաղվել համապատասխան բառարաններում, բառացանկերում, դասագրքերում, տեղեկատու ուղեցույցներում գրական լեզվում կատարված տեղաշարժերն ու փոփոխությունները, խոսակցական լեզվում հաստատված և գրական նորմի պահանջները բավարարող իրողությունների արտացոլումով, կանոնարկումով, ինչպես նաև գրական լեզվի երկու տարբերակների, բարբառների հնարավորությունների ճիշտ օգտագործմամբ դրանց փոխհարստացումն ապահովելու աշխատանքներով:

Нвер Саргсян - Актуальные проблемы взаимодействия языка и общества.-

Выделяя три основных направления: языковая политика, языкотворчество, нормирование, автор анализирует целый ряд проблем теоретического и практического характера, связанных со структурным и функциональным развитием языка, сближением литературного и разговорного языков, взаимным обогащением Западноармянского и Восточноармянского языков, проявлением разнообразного отношения индивида, общества к языку, сформированными позитивными или негативными тенденциями, обучением, взаимодействием с другими языками, а также с другими вопросами.

Nver Sargsyan - Current Issues of Language and Society Correlation. Separating three main spheres. – Linguo - politics, language creation, regulations - the author analyzes a number of theoretical and practical issues related to the structural and functional development of the language, the convergence of literary and colloquial language, the mutual enrichment of Western and Eastern Armenian languages, the manifestation of various relations of the individual and society to language, created from positive or negative trends, the study, interaction with other languages and other issues.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ	3
<i>Առաքելյան Կարինե</i> , Գևորգ Զահուկյանի բանաստեղծական աշխարհը.....	4
<i>Առաքելյան Կարինե</i> , «Ազդակ գրական»-ը արդի մարտահրավերների խաչմերուկում	14
Երկնային մարմինների և երևույթների փոխաբերական կիրառությունները XX դարասկզբի արևմտահայ քնարերգության մեջ.....	22
<i>Առաքելյան Կարինե, Մանթրյան Լիանա</i> , Երկնային մարմինների, լուսատուների անվանումներն իբրև բառակազմության և փոխաբերական կիրառության հիմք Միսաք Մեծարենցի քնարերգության մեջ.....	29
<i>Բարսեղյան Ամալյա</i> , Նախադասությունների կապակցման բառական միջոցները տեքստում.....	36
<i>Բարսեղյան Ամալյա</i> , Նյութական իմաստ ունեցող բառերի կապակցական արժեքը տեքստում.....	45
<i>Բարսեղյան Ամալյա</i> , Թվականի, բայի, մակբայի կապակցական արժեքը տեքստում.....	55
<i>Թեյյան Լեոնիդ</i> , «Բացարձակ աներևույթի» գնահատման շուրջ	61
<i>Թեյյան Լեոնիդ</i> , Բազմաբաղադրիչ բարդ նախադասությունների դասակարգման շուրջ.....	75
<i>Թեյյան Լեոնիդ</i> , Դիտարկումներ բարդ նախադասությունների դասակարգման շուրջ.....	87
<i>Թեյյան Լեոնիդ</i> , Որ. շաղկապ, թե՞ դերանուն.....	94
<i>Ղամոյան Լուսինե</i> , Առօրյա խոսքում գործածվող օտար բառերի և դրանց հայերեն համարժեքների խնդիրը.....	105
<i>Ղամոյան Լուսինե</i> , «Գլխի ծածկոց» հասկացության բառիմաստային դրսևորումները հայերենի բարբառներում.....	113
<i>Ղամոյան Լուսինե</i> , Հազուստ իմաստային դաշտը առած-ասացվածքներում..	122
<i>Ղամոյան Լուսինե</i> , Հազուստ իմաստային դաշտի դրսևորումը դարձվածային միավորներում.....	134
<i>Պապիկյան Միլվա</i> , Արևմտահայերենի կրոնական բնույթի որոշ բառերի մասին.....	145
<i>Պապիկյան Միլվա</i> , Կախարդ – հմայք –ջատուկ- վհուկ համանիշային շարքի մասին.....	151
<i>Պապիկյան Միլվա</i> , «Նուէր» և «պաշտել » բառերի մասին.....	157
<i>Պապիկյան Միլվա</i> , Միհր - Մհեր- Վատմիհր բառերի մասին.....	163
<i>Սարգսյան Նվեր</i> , Լեզվի և հասարակության փոխհարաբերության մի քանի արդիական խնդիրներ.....	169

ՀՀ ԳԱԱ ՀԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
Առաքելյան Կ., Բարսեղյան Ա., Թելյան Լ., Ղամոյան Լ.,
Պապիկյան Ս., Սարգսյան Ն.

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(գիտական հոդվածների ժողովածու)

ՊՐԱԿ Բ

Զնավորումը և էջադրումը՝ Մ. Հ. Խառատյանի
Կազմը՝ Ս. Ս. Արևշատյանի